Երեխաների խումբ 1

Ես Աստծո զավակն եմ
Մսուրային խումբ և 3 տարեկան երեխաներ

Երեխաների Խումբ 1

Ես Աստծո զավակն եմ

18 ամսականից մինչև 3 տարեկան երեխաներին ուսուցանելու համար, ներառյալ առաջարկություններ մսուրային խմբում ձեռնարկը օգտագործելու համար:

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

© 1994, 2000 Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Printed in the United States of America

English approval: 5/00
Translation approval: 5/00
Translation of *Primary 1: I Am a Child of God*- թարգմանությունը
Armenian
34969 201

Բովանդակություն

Օգնություն ուսուցչին	էջ
Այս ձեռնարկով դասավանդումը	vi
Երեք տարեկանների դասարան	vi
Դասերը պատրաստելը	viii
Դասերի ուսուցանումը	ix
Երաժշտությունը դասարանում	ix
Ցուցադրական նյութեր	x
Հատուկ ուղեցույցներ հաշմանդամ երեխաներին ներգրավվելու համար	x
Ինչպես հարմարեցնել ձեռնարկը մսուրային խմբում օգտագործելու համար	xii
Մսուրային դասարան	xii
Պատրաստել երեխաներին մսուրային խմբին	xiv
Ծնողների ստուգաթերթիկ	xv
Փոքր երեխաների Առանձնահատուկ Գծերը	xvi
Մսուրային խմբում հնարավոր խնդիրները և լուծումները	xvii
Վարժություններ և խաղեր մսուրային խմբի համար	xviii
Երաժշտությունը մսուրային դասարանում	xviii
Հարմարեցված դասերի օրինակներ	xxvi

Դասի համար և վերնագիր	էջ
1 Ես Աստծո զավակն եմ	1
2 Երկնային Հայրը մարմին ունի	6
3 Երկնային Հոր ծրագիրը մեզ համար	10
4 Ես կարող եմ աղոթել Երկնային Հորը	15
5 Հիսուս Քրիստոսը Երկնային Հոր որդին է	20
6 Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են ինձ	23
7 Սուրբ Հոգին օգնում է ինձ	29
8 Ես շնորհակալ եմ օրվա և գիշերվա համար	33
9 Ես շնորհակալ եմ ջրի համար	38
10 Ես շնորհակալ եմ ծառերի, բույսերի և ծաղիկների համար	42
11 Ես շնորհակալ եմ ձկների համար	46

12 Ես շնորհակալ եմ կենդանիների համար 52
13 Ես շնորհակալ եմ թռչունների և միջատների համար 56
14 Ադամն ու Եվան ստեղծվեցին Երկնային Հոր պատկերով 62
15 Կիրակին երկրպագության օր է 66
16 Ես մարմին ունեմ 71
17 Ես շնորհակալ եմ ձեռքերի համար 76
18 Ես շնորհակալ եմ իմ ականջների համար 82
19 Ես շնորհակալ եմ իմ աչքերի համար 87
20 Ես շնորհակալ եմ իմ հոտառության և համի զգացողության համար 91
21 Ես զգացմունքներ ունեմ 95
22 Ես կարող եմ շատ բաներ անել 101
23 Ես պատկանում եմ ընտանիքի 105
24 Ես սիրում եմ իմ եղբայրներին և քույրերին 110
25 Ես սիրում եմ իմ ողջ ընտանիքին 114
26 Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել 118
27 Մենք կարող ենք աղոթել որպես ընտանիք 124
28 Ես կարող եմ հնազանդ լինել 128
29 Ես կարող եմ ներողություն խնդրել 133
30 Ես կարող եմ ներել մյուսներին 137
31 Ես շնորհակալ եմ իմ տան համար 141
32 Ես շնորհակալ եմ ուտելիքի և հագուստի համար 145
33 Ես կարող եմ ընկեր լինել 149
34 Ես կարող եմ սիրել մյուսներին 154
35 Ես կարող եմ բարի լինել կենդանիների հանդեպ 159
36 Ես կարող եմ լավ օրինակ լինել 164
37 Ես կարող եմ ազնիվ լինել 169
38 Ես կարող եմ ակնածալից լինել 173
39 Երգն ինձ ուրախություն է պարգևում 178
40 Հաղորդությունն օգնում է ինձ Հիսուսի մասին մտածել 182
41 Երկնային Հայրը և Հիսուսը մեզ տվել են սուրբ գրություններ 186
42 Ես պատկանում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն 191
43 Մենք ունենք կենդանի մարգարե 196
44 Մենք բոլորս կարող ենք օգնել Եկեղեցում 200

45 Հիսուս Քրիստոսի Հարությունը (Զատիկ) 204

46 Հիսուս Քրիստոսի Ծնունդը (Սուրբ Ծնունդ) 209

Ցուցիչ *Երեխաների Խումբ 1*-ում ոտանավորների
և շարժումներով երգերի համար 213

Մսուրային խմբի երգեր *Children's Songbook*-ից 214

Այս ձեռնարկով դասավանդումը

Այս ձեռնարկը պարունակում է դասեր այն երեխաների համար, ովքեր երեք տարեկան կդառնան մինչև հունվարի է 1-ը: Ուսուցիչները կարող են ձեռնարկը հարմարեցնել 18 ամսականից մինչև 3 տարեկան երեխաների համար: Երեք տարեկանից ցածր երեխաները պետք է հաճախեն մսուրային խումբ, որի դասերը երեք տարեկանների խմբից առանձին է տարվում, եթե ծուխը կամ ճյուղը շատ փոքր չէ: Եթե ծխում կամ ճյուղում նույն տարիքի ութից կամ տասից ավել երեխաներ կան, դասարանը կարելի է բաժանել:

Մսուրային խմբի ուսուցիչները պետք է դիտարկեն «Ինչպես հարմարեցնել ձեռնարկը մսուրային խմբում օգտագործելու համար», էջ xii,, ի լրումն այս բաժնի:

Ղեկավարներն ու ուսուցիչները պետք է աղոթքով որոշեն ինչպես կարող են լավագույնս կազմակերպել դասերը, և այս ձեռնարկի դասերն ու վարժությունները օգտագործել այնպես, որ բավարարեն իրենց ծխի կամ ճյուղի երեխաների կարիքները:

ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԴԱՍԱՐԱՆ

Երեխաները, ովքեր մինչև հունվարի մեկը երեք տարեկան են, հաճախում են երեք տարեկանների դասարան:

Նպատակ

Երեք տարեկանների դասարանի նպատակն է օգնել՝ երեխաներին հասկացողություն զարգացնել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի վերաբերյալ և սեր՝ նրանց հանդեպ, ներգրավվել Երեխաների Խմբի դրական փորձառությունների մեջ և մեծացնել իրենց ինքնագնահատականը:

Աղոթք

Յուրաքանչյուր դաս պետք է բացվի և փակվի մի երեխայի աղոթքով: Սովորաբար բացման աղոթքը ասվում է դասի սկզբում, իսկ փակման աղոթքը՝ դասի վերջում: Սովորեցրեք երեխաներին ասել պարզ, կարճ աղոթքներ: Անհրաժեշտության դեպքում օգնեք նրանց:

Դասացուցակ

Այս դասընթացը աստիճանական անցում է ապահովում մսուրային դասարանից դեպի Երեխաների հիմնական Խումբ: Տարվա առաջին կեսում ցանկալի է, որ երեք տարեկաններն իրենց դասարանում անցկացնեն միացյալ ժամերը և խաղերը: Տարվա մնացած ժամանակահատվածում միացյալ ժամին նրանք կարող են միանալ Երեխաների Խմբի մյուս երեխաներին: Դասարանի երեխաների հասունությամբ կորոշվի, երբ է դասարանը փոխվում: Հետևեք երեխաներին, որպեսզի համոզվեք, որ նրանք պատրաստ են, և խորհրդակցեք Երեխաների Խմբի

նախագահության հետ, որպեսզի որոշեք, թե երբ պետք է փոփոխությունը կատարվի: Երեք տարեկանները կարող են միանալ Երեխաների Խմբի մյուս երեխաներին բացման և փակման վարժությունների ժամանակ ամբողջ տարվա ընթացքում:

Երեխաների Խմբի դասը հիմնականում տևում է 1 ժամ 40 րոպե: Բացման և փակման մասերը տևում են 20 րոպե, 5 րոպեն երեխաները գնում են իրենց դասարաններ: Եթե երեք տարեկանները միացյալ ժամը անցկացնում են իրենց դասարանում, դասը տևում է 75 րոպե: Հետևյալ դասացուցակը կարող եք հարմարեցնել տեղական կարիքներին՝

Ողջույնի մաս՝	10–15 րոպե
Դասաժամ՝	25–30 րոպե
Միացյալ և վարժությունների ժամ՝	20–25 րոպե
Փակման մաս՝	10–15 րոպե

Երբ երեք տարեկանները Երեխաների Խմբի հետ մասնակցում են միացյալ ժամին, դասաժամը տևում է 40 րոպե և բաղկացած կլինի դասի ժամից և կարճատև ողջույնի և փակման մասերից:

Ողջույնի մաս.. Ողջույնի մասի նպատակն է՝ թույլ տալ երեխաներին խոսել և շփվել ուսուցչի և միմյանց հետ մտերմիկ միջավայրում: Երեխաներն ավելի ապահով և ավելի դրական զգացումներ կունենան Երեխաների խմբում գտնվելիս, եթե այս ընթացքում ազատորեն տեղաշարժվեն սենյակում:

Օգնեք երեխաներին ընդունված և համարավետ զգալ դասարանում: Ձեր խոսքով և գործով սեր, ջերմություն և հարգանք ցուցաբերեք: Քննարկեք երեխաների կարիքները և հետաքրքրությունները: Քննարկման հարմար թեմաներ կարող են լինել՝

- Վերջերս երեխաների կյանքում տեղի ունեցած փորձառություններ, օրինակ՝ տանը նոր երեխայի ծնունդը կամ ընտանիքով քաղաքից դուրս զբոսանքը:
- Հատուկ տոներ:
- Եղանակ:
- Բնության դիտարկումները:
- Սոցիալական հմտությունները, օրինակ՝ լսելը, կիսվելը կամ լավ պահելածևը:
- Բարի արարքներ:

Այդ ժամանակահատվածում մատերով խաղերը, կքվելու և ձգվելու վարժությունները և երգերը նույնպես կարող են օգտագործվել՝ օգնելով երեխաներին հաղթահարել անհանգստությունը:

Դասաժամ. Հետևեք յուրաքանչյուր դասի հիմնական ծրագրին, անհրաժեշտության դեպքում այն հարմարեցնելով ձեր դասարանին: Կենտրոնացեք երեխաների հասկանալու և հետաքրքրությունների վրա: Ընտրեք պատմություններ և վարժություններ, որոնք ձեր դասարանի անդամներին լավագույնս կուսուցանեն դասի կարևոր սկզբունքները: «Նյութն ամրապնդող վարժություններ» բաժնից ընտրեք ցանկացած վարժություն, որը հնարավորինս հարմար կլինի ձեր դասարանի երեխաներին: Դասի ընթացքում ցանկացած պահի կարող եք օգտագործել այս վարժությունները: Երեխաները լավ են սովորում կրկնելով, այնպես որ կարող եք դասի կամ հետագա դասերի ընթացքում մեկ անգամից ավելի օգտագործել նույն վարժությունը, երգը, պատմությունը կամ սուրբ գրությունը:

Ուսուցանեք դասերը հերթականությամբ, բացի 45 և 46 (Զատկի և Սուրբ Ծննդյան) դասերից:

Միացյալ և վարժությունների ժամ. Երբ երեխաները միացյալ ժամն անցկացնում են դասարանում, և ոչ թե Երեխաների Խմբի մյուս երեխաների հետ, միացյալ ժամի համար օգտագործեք դասերի վարժությունները և «Նյութն ամրապնդող վարժություններ» բաժինը: Դուք կարող եք կրկնել երեխաների սիրելի վարժությունները նախորդ դասերից: Ժամանակ հատկացրեք Երեխաների Խմբի երգերը երգելու համար (տես «Երաժշտությունը դասարանում», էջ vii): Խրախուսեք երեխաներին մասնակցել և միմյանց հետ կիսվել իրենց մտքերով:

Երբ երեք տարեկանները սկսում են մասնակցել միացյալ ժամին Երեխաների Խմբի մյուս երեխաների հետ, նրանց երբեմն կխնդրեն ելույթ ունենալ միացյալ ժամին: Ծրագրեք ավետարանական մի պարզ ներկայացում, որը կներգրավվի դասարանի բոլոր երեխաներին: Դուք կարող եք՝

- Օգնել երեխաներին դերերով կատարել դասի պատմությունը կամ իրավիճակ:
- Խնդրել երեխաներին օգտագործել նկարներ, որոնք կօգնեն պատմել դասի պատմությունը:
- Խնդրել յուրաքանչյուր երեխայի կիսվել սուրբ գրությամբ կամ ավետարանի սկզբունքի մասին մտքով:
- Խնդրել երեխաներին երգել ուսուցանվող սկզբունքի վերաբերյալ երգ:

Փակման մաս. Վերանայեք և ամփոփեք դասի հիմնական մտքերը: Հատկապես նշեք դասի մեկ կամ երկու կարճ սուրբ գրություններ, շեշտեք հիմնական մտքերը, որպեսզի երեխաները կարողանան կիսվել դրանցով տանը: Խնդրեք մի երեխայի ասել փակման աղոթքը:

ԴԱՍԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Փոքր երեխաներին հաջողությամբ ուսուցանելու առաջին քայլը նրանց ճանաչելն ու սիրելն է: Իմացեք և օգտագործեք ձեր դասարանի անդամների անունները՝ նրանց հետ խոսելիս: Անձնապես շփվեք նրանց հետ և տեղեկացեք նրանց կյանքին: Փնտրեք ուղիներ նրանց դասերին ներգրավվելու և դասերը անհատապես հարմարեցրեք նրանց: Ձեր դասարանի բոլոր երեխաների հանդեպ սեր և հետաքրքրություն ցուցաբերեք:

Երկրորդ քայլը պատրաստվելն է: Ամեն դասին սկսեք պատրաստվել առնվազն մեկ շաբաթ առաջ: Կարդացեք ամբողջ դասը, ապա աղոթքով ուսումնասիրեք այն՝ որոշելով, թե որն է ձեր դասարանի երեխաներին սկզբունքներն ուսուցանելու լավագույն եղանակը: Ընտրեք Նյութն ամրապնդող վարժություններ, որոնք կհամալրեն դասի վարժությունները և կնպաստեն, որ երեխաները հետաքրքրվեն և մասնակցություն ցուցաբերեն: Մի քանի տեսակի վարժություններ ծրագրեք, այնուհետև օգտագործեք դրանք այնպես, որ բավարարեք երեխաների կարիքները: Դասին այնպես պատրաստվեք, որպեսզի գրքից կարդալու կարիք չլինի: Դասը մատուցելիս հնարավորինս տեսողական կոնտակտ պահպանեք: Ամեն անգամ դաս պատրաստելիս հաճախ աղոթեք, և ձգտեք ունենալ Հոգին, որ առաջնորդի ձեզ դասին պատրաստվելիս և ուսուցանելիս:

ԴԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄԸ

Ավետարանի Սկզբունքները երեխաներին ուսուցանելիս դուք պետք է քաջալերեք երեխաներին սիրել ավետարանը: Հետևյալ առաջարկությունները կօգնեն ձեզ Երեխաների դասը հաճելի դարձնել ձեր դասարանի երեխաների համար՝

- Երեխաներին խոսելու և մասնակցելու շատ հնարավորություններ տվեք:
- Լսեք, երբ երեխաները խոսում են, և փորձեք դրական, սակայն տեղին արձագանքել:
- Խանդավառ եղեք: Եթե ուսուցիչը հաճույքով է ուսուցանում Երեխաների Խմբում, երեխաները ուրախությամբ են մասնակցում դասին:
- Խոսեք բարի տոնով:
- Եղեք համբերատար, բարի և սիրալիր, հատկապես, երբ երեխաները հոգնած կամ անհանգիստ են:
- Դրական արձագանքեք լավ վարքին և, հնարավորության դեպքում, անտեսեք վատ վարքը:
- Պատրաստեք մի քանի տեսակի վարժություններ և դրանք օգտագործեք այնպես, որ բավարարեք երեխաների կարիքները: Փոքր երեխաները նույն բանի վրա չեն կարողանում երկար կենտրոնանալ և նրանք անընդհատ շարժման մեջ լինելու կարիք ունեն:
- Փորձեք երեխաների ուշադրությունը շեղել, երբ վեճեր են ծագում:
- Հիշեք, որ փոքր երեխաները սիրում են պատմություններ, ցուցադրական նյութեր, երաժշտություն և շարժում: Նրանք սիրում են հաճախ կրկնել հատկապես իրենց քաջածանոթ վարժությունները և երգերը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Այս ձեռնարկի յուրաքանչյուր դաս ընդգրկում է երգեր, որոնք նպաստում են ավետարանական ուսմունքների ամրապնդմանը: Կարիք չկա հմուտ երաժիշտ լինեք, որպեսզի դասարանում երգեցողությունը ուրախ և իմաստալից դարձնեք: Երեխաները չեն տարբերի դուք լավ եք երգում, թե վատ, նրանք միայն կզգան, որ դուք հաճույքով եք երգում: Լավ սովորեք յուրաքանչյուր երգը, և դասին պատրաստվելիս պարապեք այն: Առկայության դեպքում, *Children's Songbook*-ը կամ աուդիերիզները (երաժշտությունը միայն՝ 52505, երաժշտություն և խոսք՝ 52428) կամ կոմպակտ սկավառակները (միայն երաժշտությունը՝ 50505, երաժշտություն և խոսք՝ 50428) կարող են օգնել ձեզ երգերը սովորելիս: Դուք նաև կարող եք օգտագործել այս ձայնագրությունները դասարանում երգելիս:

Երեխաներին նոր երգ ուսուցանելու լավագույն եղանակը մի քանի անգամ երգելն է: Դասի ընթացքում կարող եք նույն երգը մի քանի անգամ օգտագործել: Պարզ շարժումները կարող են օգնել փոքրիկներին մասնակցել երգին: Եթե երեխաներին քաջածանոթ է երգը և հաճույքով են այն երգում, դասաժամին կամ միացյալ և վարժության ժամին հաճախ երգեք այդ երգը:

Նոր երգ կամ վարժություն ուսուցանելու համար՝

- Դասից առաջ անգիր սովորեք երգը կամ վարժության ոտանավորը:
- Նոր երգը կամ վարժության ոտանավորը ներկայացրեք երեխաների համար երգելով կամ արտասանելով այն: Շարժումներն ընդգծված կատարեք, եթե կան:

- Խնդրեք երեխաներին ձեզ հետ միասին երգել կամ կարդալ խոսքերը: Նրանք անմիջապես չեն սովորի խոսքերը, սակայն եթե մի քանի անգամ կրկնեք երգը կամ ոտանավորը, նրանք կսովորեն բառերը:
- Դանդաղ արտասանեք, որպեսզի երեխաները հասկանան խոսքերն ու շարժումները:
- Հաճախ օգտագործեք ցուցադրական նյութեր, որը կօգնի ներկայացնել երգը կամ ոտանավորը: Երեխաների ուշադրությունը կենտրոնանում է և ավելի լավ են սովորում, եթե միաժամանակ դիտում են:
- Եթե երեխաները անհանգստանում են, կրճատեք երգը կամ ոտանավորը: Եթե երգը կամ ոտանավորը երկար է, կարող եք օգնել երեխաներին անել շարժումները, մինչ դուք կերգեք կամ կկարդաք միայն խոսքերը:

Փոքր երեխաները միշտ չեն ցանկանա երգել ձեզ հետ, սակայն հաճույքով կլսեն երգը:

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Փոքր երեխաների ուսուցման գործում կարևոր դեր ունեն ցուցադրական նյութերը: Նկարները, կտրվող նկարները, առարկաները և այլ ցուցադրական նյութերը կարող են գրավել երեխաների ուշադրությունը, օգնելով որ երեխաները հիշեն ձեր ուսուցանածը:

Դասերի մեջ նշվող նկարները և կտրվող նկարները ընդգրկված են այս ձեռնարկում: Յուրաքանչյուր դասի «Նախապատրաստություն» բաժնում տրված են դասի մեջ կիրառվող նկարները ըստ իրենց անվանման և համարի: Փակագծերում նշված համարները ցույց են տալիս յուրաքանչյուր նկարը (կամ նմանատիպ նկարը) Ավետարանն արվեստում նկարների հավաքածույում (34730 կամ 34735) և հավաքատան գրադարանում: «Նախապատրաստություն» բաժնում նաև տրվում են կտրվող նկարները՝ ըստ ձեռնարկում իրենց համարի և Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածույի (33239–33250 կամ 08456), որը ընդգրկում է նմանատիպ կտրվող նկարներ:

Առարկաները լավ ցուցադրական նյութեր են, հատկապես եթե դրանք ծանոթ են և երեխաները կարող են շոշափել դրանք կամ ձեռքում պահել: Երբ դուք պատմում եք սուրբ գրքյան պատմություն, որպես ցուցադրական նյութ օգտագործեք ձեր անձնական սուրբ գրությունները կամ հավաքատան գրադարանի սուրբ գրությունները:

ՀԱՏՈՒԿ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Փրկիչը օրինակ է ծառայել մեզ համար՝ կարեկցանք ցուցաբերելով հաշմանդամ մարդկանց հանդեպ: Իր Հարությունից հետո այցելելով Նեփիացիներին, Նա ասաց.

«Ունե՞ք ձեր մեջ այնպիսիք, որ հիվանդ են: Բերե՛ք նրանց այստեղ: Ունե՞ք դուք կաղեր, կամ կույրեր, կամ խեղվածներ, կամ հաշմանդամներ, կամ բորոտներ,

կամ որ չորացած են, կամ, որ խուլ են, կամ, որ չարչարված են ինչ-որ ձևով: Բերե՛ք նրանց այստեղ, և ես կբժշկեմ նրանց, քանզի ես կարեկցանք ունեմ ձեզ վրա» (3 Նեփի 17.7):

Որպես Երեխաների Խմբի ուսուցիչ դուք գերազանց դիրքում եք կարեկցանք ցուցաբերելու համար: Թեպետ հնարավոր է դուք չունեք մասնագիտական օգնություն տրամադրելու կրթություն, որպես ուսուցիչ դուք կարող եք հասկանալ և փայփայել հաշմանդամ երեխաներին: Անհրաժեշտ է մտահոգություն, հասկացողություն և ցանկություն՝ դասարանի յուրաքանչյուր անդամին Ուսուցողական վարժություններում ներգրավելու համար:

Հաշմանդամ երեխաներին կարող է Հոգին դիպչել՝ անկախ նրանց հասկացողության մակարդակից: Թեպետ որոշ երեխաներ գուցե չկարողանան մնալ Երեխաների խմբի ամբողջ դասին, նրանք պետք է հնարավորություն ունենան թեպետ կարճ ժամանակով հաճախել՝ Հոգին զգալու համար: Անհրաժեշտ կլինի ունենալ օգնական, որը Երեխաների Խմբի դասին ուշադիր կլինի երեխայի կարիքների հանդեպ գտնվելով երեխայի կողքին, հատկապես եթե երեխան որոշ ժամանակով խմբից առանձնանալու կարիք ունենա:

Դասարանի որոշ անդամներ գուցե սովորելու հետ կապված խնդիրներ ունենան, տեսողության կամ լսողության կորուստ, մտավոր անբավարարություն, լեզվական կամ խոսակցական խնդիրներ, վարքի և շփման խնդիրներ, հոգեկան հիվանդություն, տեղաշարժման դժվարություններ կամ քրոնիկ առողջական խնդիրներ: Ոմանց համար հնարավոր է լեզուն կամ շրջապատը անծանոթ և դժվար հաղթահարելի լինի: Անկախ անհատական հանգամանքներից՝ յուրաքանչյուր երեխա սիրվելու և ընդունվելու, ավետարանը սովորելու, Հոգին զգալու, հաջողությամբ իր մասնակցությունը բերելու և մյուսներին ծառայելու կարիք ունի:

Այս ուղեցույցները կարող են օգնել ձեզ ուսուցանել հաշմանդամ երեխային.

- Նայեք արատից այն կողմ և ճանաչեք երեխային: Եղեք բնական, ընկերական և ջերմ:
- Ուսումնասիրեք երեխայի առանձնահատուկ ուժեղ և թույլ կողմերը:
- Ջանք մի խնայեք ուսուցանելու և դասարանի անդամներին հիշեցնելու իրենց պարտականությունը՝ հարգել դասարանի յուրաքանչյուր անդամին: Դասարանի հաշմանդամ անդամին օգնելը կդառնա սովորելու Քրիստասանման փորձառություն ողջ դասարանի համար:
- Գտեք երեխային ուսուցանելու լավագույն եղանակները՝ խորհրդակցելով ծնողների, ընտանիքի այլ անդամների և, հարմարության դեպքում, երեխայի հետ:
- Նախքան աղոթելու կամ ինչ-որ մասնակցություն բերելու նպատակով հաշմանդամ երեխային կանչելը, հարցրեք նրան, թե արդյոք դասի ընթացքում մասնակցելու ցանկություն ունի: Շեշտեք յուրաքանչյուր երեխայի ունակություններն ու տաղանդները, և ուղիներ փնտրեք, թե ինչպես կարող է յուրաքանչյուրը հարմարավետ և հաջող մասնակցություն ունենալ:
- Դասի նյութերն ու ֆիզիկական միջավայրը հարմարեցրեք բավարարելու հաշմանդամ երեխաների անհատական կարիքները:

Հաշմանդամ երեխաներին ուսուցանելու լրացուցիչ նյութեր են մատչելի Եկեղեցու բաշխման կենտրոններում (տես “Materials for Those with Disabilities” in the *Church Materials Catalog*):

Ինչպես հարմարեցնել ձեռնարկը մսուրային խմբում օգտագործելու համար

ՄՍՈՒՐԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Ով է հաճախում

Երեխաները, ովքեր առնվազն 18 ամսական են, սակայն դեռևս հունվարի 1-ի դրությամբ 3 տարին դեռ չի լրացել, հաճախում են մսուրային խումբ իրենց ծնողների հայեցողությամբ: Մսուրային յուրաքանչյուր դասարանի համար առնվազն երկու ուսուցիչ պետք է կանչվի: Եթե ուսուցիչներն ամուսիններ չեն, ապա պետք է լինեն միևնույն սեռի ներկայացուցիչներ: Երեխաների խմբի ողջ դասաժամի ընթացքում երկու ուսուցիչներն էլ պետք է լինեն դասարանում:

Նպատակը

Մսուրային դասարանի նպատակն է ստեղծել սիրալիր, ապահով, կազմակերպված վայր, մանուկները կարող են խորացնել իրենց հասկացողությունը և սերը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ, դրական փորձառություններ ունենալ եկեղեցում և մեծացնել իրենց ինքնագնահատականը: Մսուրային դասարանը եկեղեցում առաջին փորձառությունն է, որտեղ մանուկներին ուսուցանում են ավետարանը և շփումը մյուս երեխաների ու մեծահասակների հետ:

Ֆիզիկական միջավայրը

Մսուրային սենյակը պետք է լինի մաքուր, ուրախ և գրավիչ, և հնարավորության դեպքում գտնվի զուգարանին մոտիկ: Մսուրային սենյակը կարող է բաժանվել առանձին հատվածների՝ խաղալու (հնարավորության դեպքում կարպետի կամ ուղեգորգի վրա) կարդալու կամ վարժությունների և դաս անցկացնելու համար: Խաղալիքները պետք է լինեն մաքուր, անվտանգ և լավ վիճակում: Մագլցելու սարքավորում չպետք է լինի:

Դասաժամ

Մսուրային դասը հիմնականում տևում է 1 ժամ և 40 րոպե: Այս ժամը պետք է բաժանված լինի մի քանի տարբեր մասերի, և յուրաքանչյուրը պետք է հետամուտ լինի դասի նպատակին:

Փորձեք ծրագրել դասեր, որոնք ամեն շաբաթ կունենան նույն ձևաչափը: Երեխաներն իրենց ապահով են զգում, երբ դասը կանոնավոր ընթացք է ունենում և նրանց համար ծանոթ ձևով է անցում կատարվում մեկ վարժությունից մյուսին: Հետևյալ առաջարկված ձևաչափը կարող եք հարմարեցնել տեղական կարիքներին.

Ողջույնի մաս	
Խաղաժամ՝	35 րոպե
Հավաքվելու ժամ՝	10 րոպե
Երգի ժամ՝	10 րոպե
Նախաճաշիկ՝	10 րոպե

Դասի ժամ	10 րոպե
Վարժության ժամ՝	15 րոպե
Փակման մաս՝	10 րոպե

Մսուրային խմբի երեխաները չեն մասնակցում միացյալ ժամին, բացման կամ փակման մասերին:

Ողջույնի մաս. Երբ երեխաները գալիս են մսուրային դասարան, ողջունեք յուրաքանչյուրին անհատապես: Օգնեք յուրաքանչյուր երեխայի զգալ ձեր և Երկնային Հոր սերը: Մեղմ երաժշտությունը կարող է ակնածալից, գրավիչ մթնոլորտ ստեղծել: *Children's Songbook*-ից երգերի ձայնագրություններ են մատչելի աուդիոերիզների (52428) և կոմպակտ սկավառակների վրա (50428):

Խաղաժամ. Թույլ տվեք երեխաներին խաղալ խաղալիքներով, նկար-հանելուկներով, նկարներով կամ գրքերով: Խրախուսեք յուրաքանչյուր երեխայի միայն մեկ բան վերցնել այդ պահին խաղալու համար և այն իր տեղը դնել՝ նախքան մեկ ուրիշ բան ընտրելը: Մի ստիպեք երեխային կիսվել, եթե նա ցանկություն չունի: Այս տարիքի շատ երեխաներ էմոցիոնալ կամ սոցիալական առումով պատրաստ չեն կիսվելու: Խաղաժամի վերջում օգնեք երեխաներին դասավորել խաղալիքները:

Հատուկ վարժություններ և խաղեր կարող եք անցկացնել այս ժամի ընթացքում (տես «Վարժություններ և խաղեր մսուրային խմբի համար», xviii-xxiii), սակայն երեխաներից չպետք է պահանջեք մասնակցել:

Հավաքվելու ժամ. Երեխաներին հավաքեք՝ երգ երգելու և աղոթքին պատրաստվելու: Աղոթքի համար երգերի ցուցակ է տրված *Children's Songbook*-ի էջ 310-ում: Մի երեխայի հրավիրեք աղոթելու: Երեխաներին սովորեցրեք կարճ, պարզ աղոթքներ ասել: Անհրաժեշտության դեպքում օգնեք նրանց: Աղոթքից հետո, երեխաներին հրավիրեք զրուցելու և շփվելու ուսուցիչների և միմյանց հետ անկաշկանդ միջավայրում: Սեր, ջերմություն և հարգանք ցուցաբերեք ձեր խոսքով և վարմունքով: Նրբանկատ և ճկուն եղեք: Քննարկեք երեխաների կարիքները և հետաքրքրությունները: Քննարկման հարմար թեմաներ կարող են լինել՝

- Վերջերս երեխաների կյանքում տեղի ունեցած փորձառություններ, օրինակ, տանը նոր երեխայի ծնունդը կամ ընտանեկան հավաքույթը:
- Հատուկ տոները:
- Եղանակը:
- Բնության դիտարկումները:
- Սոցիալական հմտությունները, օրինակ՝ լսելը, կիսվելը կամ լավ վարվելակերպը:
- Բարի արարքները:

Ոտանավորներ, կքվելու-և-ձգվելու վարժություններ և երգեր նույնպես կարելի է օգտագործել այս ժամին, որոնք կօգնեն երեխաներին հաղթահարել անհանգստությունը:

Երգի ժամ. Երաժշտությունը կարող է օգտագործվել մսուրային խմբում՝ ուրախ, հաճելի միջավայր ստեղծելու, ավետարանի ուղերձը ուսուցանելու համար և թույլ տալու, որ երեխաները փոխեն իրենց շարժվելու տեմպը (տես «Երաժշտությունը մսուրային դասարանում», xvii–xix): Երեխաները հաճույքով են երգում նույն երգերը ամեն շաբաթ: Մսուրային խմբի ղեկավարները և ուսուցիչները պետք է ունենան *Children's Songbook*-ը: Մսուրային խմբում երաժշտության հետ կապված ուրիշները կարող են հրավիրվել օգնելու:

Նախաճաշիկ Նախատեսեք, որ նախաճաշիկի ժամ ունենաք, որպեսզի երեխաների կարիքները բավարարվեն: Նախաճաշիկի գումարը պետք է հատկացվի Երեխաների Խմբի բյուջեից: Քանի որ ամեն շաբաթ երեխաները մսուրային խմբում նախաճաշիկ են անում, ուսուցիչները պետք է ծնողներից տեղեկանան, թե արդյոք կան այնպիսի ուտելիքներ, որ չեին ցանկանա իրենց երեխաներն ուտեին (տես *Church Handbook of Instructions, Book 2: Priesthood and Auxiliary Leaders* [1998], 239): Նախքան նախաճաշիկը մատուցելը օգնեք մի երեխայի ուտելիքը օրհնել:

Դասաժամ. Այս ձեռնարկի դասերը գրված են երեք տարեկանների մակարդակի համար, սակայն դասերում և «Նյութն ամրապնդող վարժություններ» բաժիններում շատ վարժություններ հարմար են ավելի փոքր երեխաների համար: Յուրաքանչյուր դաս նաև պարունակում է «Լրացուցիչ վարժություններ ավելի փոքր երեխաների համար» բաժին: (Նկատի առեք, որ լրացուցիչ վարժությունների համար անհրաժեշտ նյութերը և նախապատրաստությունը տրված չեն յուրաքանչյուր դասի «Նախապատրաստություն» բաժնում: Ուշադիր կարդացեք ձեր ընտրած յուրաքանչյուր վարժության նկարագրությունը, որպեսզի հավաստիանաք, որ ունենք անհրաժեշտ նյութերը:)

Այս ձեռնարկի դասերը մսուրային դասարանի համար հարմարեցնելու օրինակները տրված են էջեր xix–xx: Դասերը հարմարեցնելիս, հիշեք աղոթքով հաշվի առնել երեխաների հասկացողությունը և հետաքրքրությունները: Վարժությունները պետք է լինեն կարճ և բազմազան, որովհետև այս տարիքի երեխաները ունեն ուշադրության կարճատև կենտրոնացում: Երեխաները սովորում են կրկնելով, այնպես որ դուք կարող եք կրկնել վարժությունը դասի ընթացքում կամ հետագայում: Փոքր երեխաներին ուսուցանելու վերաբերյալ լրացուցիչ օգնության համար, տես «Դասերը պատրաստելը», «Դասերի ուսուցանումը», «Երաժշտությունը դասարանում» և «Ցուցադրական նյութեր», էջեր ix–x-ում:

Վարժության ժամ. Ընտրեք վարժություններ, օրինակ՝ գունավորում, խաղալու խմորով բաներ պատրաստել, դերերով կատարում, խաղեր և այլն (տես «Վարժություններ և խաղեր մսուրային խմբի համար», xviii–xxiii), որը կամրապնդի ավետարանի ուղերձը, հնարավորություն կտա կիսվել և ստեղծագործական մոտեցում ցուցաբերել: Մի մտահոգվեք, եթե փոքր երեխաները ցանկանում են վերադառնալ խաղին:

Փակման մաս. Օգնեք երեխաներին հավաքել բոլոր խաղալիքները և նյութերը, ապա հակիրճ վերանայեք և ամփոփեք դասի ընթացքում ուսուցանված ավետարանի ուղերձը: Օգնեք մի երեխայի ասել փակման աղոթքը:

ՊԱՏՐԱՍՏԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՄՍՈՒՐԱՅԻՆ ԽՄԲԻՆ

Մսուրային խումբ երեխային բերելուց մի քանի շաբաթ առաջ, Երեխաների Խմբի նախագահության առաջին խորհրդականը յուրաքանչյուր երեխայի ծնողին պետք է հանձնի xv էջում տրված ստուգաթերթիկը և հանդիպում կազմակերպի ծնողների և մսուրային խմբի ուսուցիչների համար:

Ծնողների ստուգաթերթիկ

Առաջին անգամ երեխայի այցելությունը մսուրային խումբ կարող է ուղեկցվել մեծ անհամբերությամբ կամ վախով, ժպիտով կամ արցունքներով: Ծնողները շատ բան կարող են անել, որպեսզի իրենց երեխայի մսուրային խմբի փորձառությունը լինի հաճելի, նախորոք նախապատրաստելով երեխային: Երբ երեխաները իմանում են, թե ուր են գնում և ինչ են ակնկալում, նրանք մեծ ցանկությամբ են այցելում: Ում նախորոք շատ քիչ կամ ընդհանրապես չի բացատրվում, հնարավոր է վախենան կամ չցանկանան մնալ: Ձեր երեխային պատրաստեք մսուրային խմբին հնարավորինս հետևելով հետևյալ խորհուրդներին.

_____ 1.Ձեր երեխային պատմեք մսուրային դասարանի մասին՝ առաջին անգամ մսուրային դասարան հաճախելուց առնվազն երկու շաբաթ առաջ:

_____ 2.Առնվազն մեկ կամ երկու շաբաթ առաջ երեխային ծանոթացրեք մսուրային խմբի ուսուցիչների հետ:

_____ 3.Ձեր երեխային ծանոթացրեք մսուրային խմբի այլ երեխաների հետ:

_____ 4.Մսուրային խումբ հաճախելու նախորդ շաբաթվա ընթացքում դրական արտահայտվեք մսուրային խմբի մասին:

_____ 5.Ձեր երեխային ցույց տվեք մսուրային սենյակը, երբ այնտեղ ոչ ոք չկա:

_____ 6.Մեկ օր առաջ հիշեցրեք ձեր երեխային, որ վաղվանից սկսած մսուրային խումբ է հաճախելու:

_____ 7.Մսուրային խումբ հաճախելու օրը շատ ժամանակ հատկացրեք ձեր երեխային՝ պատրաստելով եկեղեցուն: Մի շտապեք:

_____ 8.Ձեր երեխայի բոլոր խաղալիքները թողեք տանը:

_____ 9.Նախքան մսուրային խումբ տանելը հավաստիացեք, որ ձեր երեխան զուգարան գնալու կարիք չունի, և նրան կերակրել եք: Եթե տակաշոր փոխելու կարիք է լինում, երեխային տանում են ծնողի մոտ:

_____ 10. Ժամանակին եկեք մսուրային դասարան:

_____ 11. Ձեր երեխային ասեք, որ ավելի ուշ կգաք նրա ետևից: Մսուրային դասի վերջում ժամանակին եկեք ձեր երեխային տանելու:

_____ 12. Եթե ձեր երեխան վախենում է, առաջին մի քանի անգամը նրա հետ մնացեք մսուրային խմբում:

_____ 13. Մսուրային խմբի ուսուցիչներին ասեք, թե որ դասերին եք դուք մասնակցելու, որպեսզի խնդիր ծագելու դեպքում կարողանան ձեր երեխային բերել ձեզ մոտ:

_____ 14. Մսուրային ուսուցիչներին տեղեկացրեք ձեր երեխայի արտասովոր խնդիրների մասին, օրինակ՝ ալերգիա որոշ ուտելիքների հանդեպ:

_____ 15. Երեխայի հետ մսուրային փորձառությունների վերաբերյալ դրական, ջերմ արտահայտվեք: Հավաստիացեք, որ ձեր երեխային մսուրային խմբի և ուսուցիչների մասին լավ խոսքեր եք ասում:

_____ 16. Հիշեք, որ սերը և համբերությունը մսուրային խումբը կդարձնի լավ փորձառություն ձեր երեխայի համար:

Խնդրում ենք ձեր երեխային մի տարեք մսուրային խումբ, եթե նրա մոտ նկատել եք հետևյալ ախտանիշները.

- Ջերմ
- Քթարտադրություն
- Հազ
- Անսովոր գրգռվածություն կամ տրամադրության անկում
- Սրտխառնոց
- Փորլուծություն
- Ցան
- Աչքերի ջրակալում
- Մազերի մեջ ոջիլ
- Եթե հիվանդ է կամ ունի վարակ, որի բուժման համար վերջին 48 ժամերի ընթացքում տվել եք հակաբիոտիկներ:
- Մանկական հիվանդություններ վարակի շրջանում.

  ջրծաղիկ (յոթ օր)

  կարմրուկ (մինչև ցանը անհետանա)

  կամրախտ (մինչև ցանը անհետանա)

  խոզուկ (մինչև այտուցն անցնի, սովորաբար յոթ օր)

  մաշկի քոր

Եթե ձեր երեխան ունի ալերգիա, որն արտահայտվում է գրիպի նման, հազով կամ ցանով, խնդրում ենք մսուրային խմբի ուսուցիչներին տեղեկացրեք, որ ձեր երեխայի ախտանիշները վարակիչ չեն:

ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԳԾԵՐԸ

Ուսումնասիրելով փոքր երեխաների հետևյալ առանձնահատկությունները կօգնի ձեզ ավելի լավ հասկանալ, թե ինչու են ձեր դասարանի երեխաները նման պահվածք դրսևորում: Օգտագործեք այս գիտելիքը դասերը պատրաստելիս և մատուցելիս և երեխաների հետ շփվելիս: Հիշեք, որ սրանք ընդհանուր ուղեցույցներ են, բոլոր երեխաները միևնույն արագությամբ չեն զարգանում կամ նույն տարիքում միևնույն պահվածքը չեն դրսևորում: Երեխաների առանձնահատուկ գծերի մասին լրացուցիչ տեղեկության համար, տես *Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* (*Teaching, No Greater Call*, 110–11):

Փոքր երեխայի մտավոր ունակությունները

- Մտածում է պարզ և ուղղակիորեն: Վերացական մտքեր չի հասկանում:
- Ունի ուշադրության կարճատև կենտրոնացում (մեկից երեք րոպե):
- Հաճախ թեմայից դուրս հարցեր է տալիս կամ մեկնաբանություններ է կատարում:
- Շատ հետաքրքրասեր և հարցասեր է:
- Հիմնականում ոգևորվում է սովորելիս և նոր բաներ է փորձում:
- Սիրում է կրկնողությունը:
- Կարող է հասարակ ընտրություններ կատարել:

Փոքր երեխայի ֆիզիկական հատկանիշները

- Հիմնականում շատ ակտիվ է:
- Քայլելու, թռնելու և ծափ տալու ունակություններ է զարգացնում:
- Անհանգստանում, գրգռվում և արագ հոգնում է:
- Գտնում է, որ ավելի հեշտ է չեղյալ անել և քանդել, քան ետ դնել իր տեղը:

Փոքր երեխայի սոցիալական հատկանիշները

- Վստահող է:
- Հիմնականում սիրում է միայնակ խաղալ:
- Հաճախ բավականին եսասեր և եսակենտրոն է:
- Դժվարությամբ է կիսվում կամ հերթ պահում:
- Հաճախ վիճում է խաղալիքների համար:

Փոքր երեխայի էմոցիոնալ հատկանիշները

- Հիմնականում ձգտում է սիրել և սիրվել:
- Հաճախ զգացմունքային պոռթկումներ է ունենում:
- Հաճախ հեշտորեն լացում է:
- Հաճախ է փոխում տրամադրությունը:

Փոքր երեխայի հոգևոր հատկանիշները

- Սիրում է աղոթել, սակայն դրա համար օգնության կարիք կունենա:
- Կարող է սկսել սովորել ակնածանքի նշանակությունը:
- Ջգայուն է Հոգու հանդեպ:
- Հասկանում է, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են մեզ:
- Հասկանում է հոգևոր հիմնական հասկացությունները:

ՍՍՈՒՐԱՅԻՆ ԽՄԲՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Անգամ ամենալավ մսուրային խմբում երեխաները երբեմն իրենց լավ չեն պահում: Տրված են վարքագծի հետ կապված ընդհանուր որոշ խնդիրներ և դրանք լուծելու առաջարկություններ:

Խնդիր	**Հնարավոր լուծումներ**
Ծնողն ասում է, որ երեխան չի ուզում գալ մսուրային խումբ: Երեխան բղավում և լաց է լինում, երբ ծնողը փորձում է հեռանալ:	Քաջալերեք ծնողներին իրենց երեխաներին նախորոք պատրաստել մսուրային խմբին (տես «Պատրաստել երեխաներին մսուրային խմբին», էջեր x–xi): Հրավիրեք ծնողին մնալ այնքան, որ երեխան հանգստանա և հարմարվի: Գուցե օգտակար կլինի հրավիրել այլ չափահասների, որպեսզի պահեն լացող երեխաներին, որ նրանք ավելի ապահով զգան իրենց:
Թվում է, երեխան վախենում է ձեզանից կամ մյուս երեխաներից, անիմաստ թափառում է մսուրային դասարանում և չի խոսում ոչ մեկի հետ:	Եղեք համբերատար, մի ճնշեք երեխային: Նրան ժամանակ տվեք ձեզ հետ, մյուս երեխաների հետ և միջավայրին ծանոթանալու համար: Երբեմն երեխային առաջարկեք մեկ կամ երկու խաղ խաղալ: Օգնեք երեխային հաջողությամբ կատարել որևէ բան:
Մսուրային դասի ամբողջ ընթացքում երեխան կառչում է ձեր ոտքերից կամ փորձում է նստել ձեր գիրքը:	Փոքր երեխաները ջերմության և ուշադրության կարիք ունեն: Պարբերաբար երեխային գրկելը կամ նրա հետ խոսելը սովորաբար բավարարում է նրան: Ապա խրախուսեք երեխային մասնակցի մսուրային խմբի խաղերին:
Դասի ընթացքում նախքան վարժություններն ավարտելը, մի քանի երեխաներ կանգնում և հեռանում են:	Ջգոն եղեք և տեղյակ՝ յուրաքանչյուր երեխայի կարիքներին, հետաքրքրություններին և ուշադրության կենտրոնացմանը: Ուշադիր եղեք, որ նկատեք ձանձրանալու կամ անհանգստության նշանները, որպեսզի կարողանաք վարժությունը փոփոխել այնպես, որ գրավեք երեխաների ուշադրությունը: Մի ստիպեք երեխային մասնակցել որևէ վարժության: Եթե որոշ երեխաներ ցանկանում են վերադառնալ խաղալիքներով խաղալուն, թող խաղան:

Երեխան հանգիստ չի նստում և լսում: Սա հրում կամ քաշքշում է իր կողքին նստած երեխաներին:	Երկրորդ ուսուցիչը կարող է երեխայի ուշադրությունը հրավիրել վարժության վրա, որը վարում է առաջին ուսուցիչը: Երեխային տվեք մի բան պահի իր մոտ, որ ակտիվորեն մասնակցի դասին կամ վարժությանը:
Մի քանի երեխաներ սկսում են կռվել խաղալիքի համար: Մի երեխան խաղալիքը պահելու համար ոտքով, ձեռքով հարվածում է կամ կծում է:	Երեխաները կարող են երբեմն վեճերը ինքնուրույն հարթել, սակայն անհրաժեշտության դեպքում դուք պետք է միջամտեք, որպեսզի նրանք չվնասեն միմյանց կամ գույքը: Դուք կարող եք տարբեր եղանակներ առաջարկել երեխաներին լուծելու իրենց խնդիրը:
Երեխան սկսում է կոպիտ խաղալ, խաղալիքը պտտում է իր շուրջը, խփելով այս ու այն կողմ կամ նետելով այն: Ապա վազում է սենյակի մյուս ծայրը:	Դուք պետք է կանխեք նման պահվածքը: Բացատրեք երեխային, թե ինչու նա չի կարող այդպես անել, ապա երեխային մեկ այլ խաղ առաջարկեք:
Երեխան պահարանից խաղալիքներ է հանում՝ չցանկանալով որևէ մեկը դնել ձեռքից:	Նրբանկատորեն, սակայն հաստատուն ձևով կրկին ասեք, թե ինչ պահվածք եք ակնկալում իրենից: ցույց տվեք երեխային, թե ինչպես պետք է խաղալիքները հավաքի: Խրախուսեք երեխային իր ձեռքի խաղալիքը դնի մեկ այլ խաղալիք վերցնելիս:
Երեխան սկսում է նկնվալ և լացել: Երբ փորձում եք նրան հանգստացնել, ձեզ հրելով ասում է. «Ես քեզ չեմ սիրում»:	Փոքր երեխաները սովորաբար հեշտորեն են շեղվում: Երեխային հատուկ խաղալիք ցույց տվեք և առաջարկեք, որ կարող է խաղալ: Եթե չի ցանկանում, փորձեք պատմություն պատմել կամ գիրք տվեք: Երեխայի աչքերը սրբելը երբեմն օգնում է դադարեցնել լացը: Եթե երեխան շարունակում է լացել, նրան տարեք ծնողի մոտ:
Երեխան հարցնում է. «Ե՞րբ է իմ մայրիկը գալու: Ե՞րբ եմ գնալու տուն»:	Հավաստիացրեք երեխային, որ իր ծնողները ետ կգան: Ասեք, թե ինչ եք անելու մինչև դասի ավարտը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽԱՂԵՐ ՄՍՈՒՐԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

Մսուրային խմբի խաղաժամին կամ վարժությունների ժամին օգտագործեք այս բաժնի վարժությունները ձեր հայեցողությամբ: Դուք կարող եք նաև օգտագործել այս բաժնի ցանկացած վարժություն, որ համապատասխանում է տվյալ դասին մսուրային դասաժամին, և նաև դասից վարժություններ կարելի է օգտագործել խաղալու ժամի ընթացքում: Մատչելի դարձրեք վարժությունները երեխաների համար խաղի ժամին, սակայն մի պահանջեք, որ երեխաները մասնակցեն: Որոշ երեխաներ միգուցե գերադասեն խաղալ խաղալիքներով ողջ խաղաժամի ընթացքում:

Ստեղծագործական աշխատանք

Արվեստի հետ փորձարկումները կարող են լինել հաճելի և օգնել երեխաներին՝ զարգացնել ինքնավստահություն, ստեղծագործական ունակություններ, ձեռքի վարժվածություն, աչք-ձեռք կոորդինացում և իրենց զգացմունքների գիտակցում: Արվեստը նաև կարող է լինել անհատականության դրսևորման խիստ բավարարող միջոց: Օգտագործեք ձեր պատկերացումը և ստեղծագործական մոտեցում ցուցաբերեք ձեր դասարանի համար համապատասխան արվեստի նախագծեր ծրագրելիս:

Այս ուղեցույցները կօգնեն ձեզ արվեստի նախագծեր կազմել.

- Պարզ նախագծեր կազմեք:
- Պատրաստ եղեք: Ունեցեք բոլոր անհրաժեշտ նյութերը և իմացեք, թե ինչպես պետք է ինքներդ կատարեք այդ նախագիծը:
- Եղեք ճկուն: Ճկուն լինելով դուք չեք հիասթափվի, եթե ձեր նախատեսած ձևով չի ընթանում ձեր նախագիծը: Հիշեք, որ երեխաները հաճախ ավելի հետաքրքրված են նյութերով փորձարկելու, քան նախագիծը ավարտելու մեջ:
- Դրական մոտեցում ցուցաբերեք և հետաքրքրվեք այն ամենով, ինչ երեխաները անում են, և անկեղծորեն գովաբանեք նրանց:
- Բազմազանություն կիրառեք: Ամեն շաբաթ ծրագրեք այնպիսի նախագծեր, որոնք թույլ կտան երեխաներին օգտագործել նյութերի և եղանակների բազմազանություն:
- Եղեք նրբանկատ: Փոքր երեխաները միշտ չէ, որ փորձում են իրենց արվեստով ինչ-որ բան ներկայացնել: Նրանք պարզապես հաճույքով փորձարկում են՝ օգտագործելով իրենց ձեռքի տակ եղած նյութերը: Եթե ցանկանում եք իմանալ երեխայի կատարած աշխատանքի վերաբերյալ, ասեք՝ «Պատմիր քո նկարի մասին», ոչ թե հարցրեք՝ «Ի՞նչ է սա»:
- Նվազագույն օգնություն ցուցաբերեք: Անհրաժեշտության դեպքում օգնեք, սակայն թույլ տվեք, որ երեխաներն ինքնուրույն աշխատեն:

Գունավորում երաժշտության ներքո

Անհրաժեշտ նյութեր՝ Ձայնագրություն կամ երաժշտական գործիքներ, թուղթ ու գունավոր մատիտներ:

Երաժշտություն միացրեք, երբ երեխաները գունավորում են: Խնդրեք նրանց գունավորել այնպես, ինչպես զգում են երաժշտության ներքո:

Կոլաժ

Կոլաժը նկար է՝ պատրաստված թղթի կտորներից, լուսանկարներից կամ այլ նյութերից, որոնք սոսնձվում են միմյանց:

Անհրաժեշտ նյութեր. Գրեթե ցանկացած նյութ կարելի է օգտագործել կոլաժի մեջ, օրինակ՝ նվեր փաթաթելու թուղթ, անձեռոցիկ, պաստառի կտորներ, տերևներ, ավազ և մակարոնեղեն: Յուրաքանչյուր երեխայի համար անհրաժեշտ է սոսինձ կամ մածուկ և թուղթ կամ հարթ մակերեսով մեկ այլ առարկա (որը կարող է կոլաժի համար հիմք ծառայել):

Թող երեխաներն ընտրեն, ինչ են ուզում փակցնել կոլաժի հիմքի վրա: Թող ստեղծեն իրենց ուզած դիզայնը:

Մակարոնի շարան

Անհրաժեշտ նյութեր՝ չեփած մակարոն (կամ ձողիկների կտորներ կամ այլ նյութից պատրաստված անցքով մասեր, որոնք հեշտ թելի վրա կշարվեն), երկար սովորական թել կամ մանած թել յուրաքանչյուր երեխայի համար, և սոսինձ կամ մոմ:

Յուրաքանչյուր թելի մի ծայրը կոշտացնում ենք այն թաթախելով սոսնձի կամ մոմի մեջ: Երբ չորանա, այնքան պինդ կլինի, որ կարելի է օգտագործել թելելու համար: Կապ գցեք թելի մյուս ծայրը, որ թելած մակարոնները դուրս չգան: Թող երեխաները թելը անցկացնեն մակարոնների միջով, և ապա թելի երկու ծայրերը միասին կապեք, երբ երեխաները կավարտեն մակարոնների շարան պատրաստելը:

Խաղալու խմոր

Անհրաժշետ նյութեր՝

2 բաժակ ալյուր
1 բաժակ աղ
1 ճաշի գդալ բուսական յուղ
3/4 բաժակ ջուր
սննդային գույն (պարտադիր չէ)

Ալյուրն ու աղը խառնել իրար: Ավելացնել ձեթը և այնքան ջուր, որ սոսնձի մածուցիկություն ունենա: Քիչ-քիչ ավելացնել ջուրը, մինչև որ խառնուրդը դառնա փափուկ, սակայն ոչ շատ կպչուն: Խառնել և թեթևակի հունցել: (Խաղալու խմորը գունավորելու համար, սննդի գույն ավելացրեք ջրին, նախքան ալյուրին և աղին ավելացնելը:)

Հնարավորության դեպքում, տանը պատրաստեք խաղալու խմորը, նախքան մսուրային խմբում օգտագործելը, և պահեք այն լավ փակվող տարայի մեջ: Բերեք թուղթ (հատկապես լավ է մոմապատ թուղթը), որով կարող եք ծածկել սեղանները, որտեղ երեխաները կխաղան խմորով:

Խաղեր և ոտանավորներ

Երեխաները սիրում են կատարել ինչ-որ բան, որտեղ շարժումներ են ընդգրկված, օրինակ՝ հասարակ խաղեր կամ ոտանավորների և երգերի հետ տրված շարժումներ: Դասերում ընդգրկված են ոտանավորներ, և որոշ պարզ խաղեր նկարագրված են ստորև: Եթե երեխաներին դուր է գալիս տվյալ վարժությունը, կարող եք այն օգտագործել ոչ միայն այն դասի ժամանակ, որտեղ տրված է այդ վարժությունը, այլ ողջ տարվա ընթացքում:

Այս ուղեցույցները կարող են օգնել ձեզ երեխաներին նոր ոտանավոր ուսուցանելիս.

- Նախքան դասը, անգիր սովորեք շարժումներով ոտանավորը:
- Նախ երեխաների համար արտասանեք խոսքերը և կատարեք շարժումները՝ խիստ ընդգծելով ամեն մի շարժումը: Ապա խնդրեք երեխաներին միանալ ձեզ:
- Դանդաղ կատարեք, որպեսզի երեխաները հասկանան խոսքերը և բառերը:
- Հաճախակի օգտագործեք ցուցադրական նյութեր, որոնք կօգնեն ներկայացնել շարժումներով ոտանավորը: Երեխաները ուշադիր են լինում և ավելի լավ են սովորում, երբ նրանք տեսնելու նյութ ունեն:

- Կրճատեք ոտանավորը, եթե երեխաներն անհանգիստ են դառնում: Եթե ոտանավորը երկար է, դուք կարող եք օգնել երեխաներին կատարել շարժումները, մինչ դուք արտասանում եք խոսքերը:

Ակնածանքի ոտանավորներ

Օգտագործեք հետևյալ ոտանավորները, երբ երեխաներն անհանգիստ են և ակնածալից դառնալու համար օգնության կարիք ունեն: Ամեն շաբաթ միևնույն ժամին օգտագործելով դրանցից մեկը, կօգնեք երեխաներին իմանալ, թե երբ է բացող կամ փակող աղոթքի ժամը: Օգնեք երեխաներին արտասանել խոսքերը և խոսքերին համապատասխան շարժումներ կատարել:

Open, Shut Them [ձեռքերը]

Բացեք և փակեք,
Բացեք և փակեք,
Ծափ տվեք:
Բացեք և փակեք,
Բացեք և փակեք,
Ծնկներին դրեք:

I Shake My Hands

Ձեռքերս թափահարում եմ:
Ձեռքերս պտտում եմ:
Եվ ծափ եմ տալիս:
Ձեռքերս բարձրացնում եմ,
Ապա իջեցնում եմ,
Եվ դնում եմ ծնկներիս:

Ոտքերիս սաստում եմ:
Եվ դրանք չեն շարժվում:
Աթոռին ուղիղ նստում եմ:
Գլուխս խոնարհում եմ:
Աչքերս փակում եմ:
Աղոթքին պատրաստ եմ:

Sometimes I'm Tall, and Sometimes I'm Small

Օգտագործեք հետևյալ կքվել-և-ձգվել ոտանավորը, երբ երեխաները նստած են եղել և շարժվելու կարիք ունեն: Ցանկության դեպքում կրկնեք:

Երբեմն մեծ եմ—շատ-շատ մեծ (ոտքի կանգնել, ապա կանգնել ոտքի ծայրերին):

Երբեմն փոքր եմ—շատ-շատ փոքր (կռացեք, ապա կքանստեք):

Երբեմն մեծ եմ, երբեմն փոքր եմ (ոտքի կանգնեք, ապա կքանստեք):

Ի՞նչ եմ ես այժմ (ոտքի կանգնեք կամ կքանստեք, թող երեխաներն ասեն՝ իրենք մեծ են, թե՝ փոքր):

Փոքր սերմեր

Երեխաներին պատմեք, ինչպես են սերմերը ցանում հողի մեջ, և օգնեք նրանց ներկայացնել իբր իրենք աճող սերմեր են: Ասեք. «Եկեք ձևացնենք իբր մենք փոքր սերմեր ենք» (կքանստեք կամ կուչ եկեք նմանվելով գնդակի, և փակեք աչքերը): «Արևը ծագեց և սերմերը տաքացրեց: Ապա անձրև տեղաց և ասաց. «Զարթնեք, փոքր սերմեր»: (Բացեք աչքերը և սկսեք ձգվել): «Փոքր սերմեր, ծիլ տվեք և դուրս եկեք հողից, որ աճեք» (կանգնեք և ձեռքերը ձգեք գլխավերևում): «Փոքր սերմեր, դուք աճել եք դառնալով գեղեցիկ ծաղիկներ [կամ բարձր ծառեր]»:

Եկեք գնանք տատիկի [կամ պապիկի] տուն

Ասեք. «Եկեք ձևացնենք գնացել ենք տատիկի [կամ պապիկի] տուն: Նախ պետք է հանգնենք վերարկուները [կամ հագնվենք]» (ցույց տվեք իբր հագնում եք վերարկու կամ հագուստ): «Եկեք նստենք մեքենա [կամ ավտոբուս]» (ցույց տվեք իբր բացում եք դուռը և մեքենայով գնում եք): «Օ, այս ճանապարհը խորդուբորդ է» (խորդուբորդ ճանապարհով գնալու շարժումներ կատարեք): «Տեսեք ոստիկան, եկեք ձեռքով անենք նրան» (ձեռքը թափահարելու շարժում կատարեք): «Մենք հասանք: Ահա գալիս է տատիկը [կամ պապիկը]: Եկեք նրան ամուր գրկենք» (կատարեք տատիկին կամ պապիկին գրկելու շարժում):

Օգնենք մեր ծնողներին

Ուղղորդեք երեխաներին կատարել իրենց ծնողներին օգնող շարժումներ: Դուք կարող եք ասել. «Եկեք ցույց տանք, որ օգնում ենք ավլել հատակը»: Երեխաները շարժումներով ցույց են տալիս, ինչպես են ավլում հատակը: Կարող եք շարունակել՝ ցույց տալով անկողինը հարդարելը, պատուհաններ լվանալը, փոշի մաքրելը, փոցխով տերևները հավաքելը, պարտեզում փորելը, մեքենա լվանալը կամ ձեր տարածքում ընդունված այլ գործողություններ:

Գնդակ գլորելու խաղ

Անհրաժեշտ է՝ գնդակ

Երեխաները նստում են կիսաշրջան: Դուք նստում եք նրանց առաջ և գնդակը գլորում եք մի երեխայի՝ տալով այդ երեխայի անունը կամ այդ դասին վերաբերող հարց: Երեխան ետ ձեզ է գլորում գնդակը տալով ձեր ունունը կամ պատասխանելով հարցին: Յուրաքանչյուր երեխայի խաղալու առնվազն մեկ հնարավորություն տվեք: Դուք կարող եք նաև այս խաղը կանգնած խաղալ՝ գնդակը փոխանցելով:

Համընկնող պատկերներ

Անհրաժեշտ նյութեր՝ գունավոր թուղթ, մկրատ:

Օգտագործեք գունավոր թուղթ կտրելով միևնույն ձևի մեծ և փոքր հետևյալ պատկերները՝ քառակուսի, շրջան, եռանկյունի, սիրտ, ութանկյուն և օվալ: Այդ պատկերները շաղ տվեք հատակին: Հերթով երեխաները պետք է համընկնող պատկերները դնեն իրար վրա՝ փոքրը դնելով մեծի վրա: Փոփոխության համար նույն պատկերները կտրեք գունավոր թղթերից և խնդրեք երեխաներին համընկեցնել ոչ թե ձևերը, այլ գույները:

Երաժշտական պատկերներ

Անհրաժեշտ նյութեր՝ Տարբեր գույների շրջանակներ՝ կտրված գունավոր թղթերից կամ կտորից, ձայնագրված երաժշտություն կամ գործիքներ, կպչուն ժապավեն (պարտադիր չէ):

Հատակի վրա մեծ շրջանով շրջանակները շարեք կամ կպչուն ժապավենով փակցրեք: Խնդրեք երեխաներին մեծ շրջանի դրսի կողմից քայլել, երբ երաժշտություն է հնչում: Երբ երգը դադարում է, երեխաները պետք է կանգնեն իրենց տեղում, և յուրաքանչյուր երեխա պետք է ասի ինչ գույն ունի շրջանակը, որի մոտ ինքը կանգնած է: Փոփոխության համար, օգտագործեք տարբեր ձևեր և խնդրեք երեխաներին ասել գույնը և ձևը:

Լոբով տոպրակ նետելը

Անհրաժեշտ նյութեր՝ Լոբով տոպրակներ, տուփ, զամբյուղ կամ թիրախ (պատրաստել անցքեր բացելով նկար պլակատի վրա, որը ամրացվում է պինդ հիմքի վար):

Խնդրեք երեխաներին լոբու տոպրակները նետել տուփի, զամբյուղի կամ թիրախի վրա: (Կարող եք լոբով տոպրակները կամ թիրախը պատրաստել տոնին կամ տվյալ դասին համահունչ:) Երեխաները նաև կարող են լոբու տոպրակները նետել միմյանց վրա շարված բլոկների կամ տուփերի վրա:

Արձաններ

Անհրաժեշտ նյութեր՝ Ձայնագրված երաժշտություն կամ երաժշտական գործիքներ:

Խնդրեք երեխաներին շարժվել սենյակում, երբ երաժշտություն է հնչում: Երբ երաժշտությունը կանգ է առնում, երեխաները անշարժ կանգնում են՝ արձանի պես: Երեխաները կարող են կրկին շարժվել, երբ երաժշտությունը սկսում է հնչել, բայց երբ երաժշտությունը կանգ է առնում, նրանք պետք է անշարժ քարանան իրենց տեղում:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄՍՈՒՐԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Մսուրային դասարանում երաժշտությունը ջերմ և սիրալիր մթնոլորտ է ստեղծում, դարձնելով Երեխաների Խումբը ուրախ վայր: Մսուրային տարիքի երեխաները պատրաստ են և ցանկանում են սովորել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի, իրենք իրենց և այս գեղեցիկ աշխարհի մասին: Նրանց համար կարևոր է երաժշտության միջոցով սովորելը: Երեխաները կարող են երաժշտությունը վայելել տարբեր կերպ: Նրանք կարող են երգել, երաժշտական գործիքներ նվագել և երաժշտություն լսել: Փոքր երեխաներին ուսուցանելիս երաժշտություն օգտագործելու համար լրացուցիչ առաջարկություններ տես «Երաժշտությունը դասարանում», էջ ix:

Երգեցողություն

Փոքր երեխաները հնարավոր է չցանկանան երգել ձեզ հետ (փոքրերը հնարավոր է չկարողանան երգել ձեզ հետ), սակայն նրանք հաճույքով կլսեն ձեր երգը և հաճախ երգերի միջոցով կսովորեն սկզբունքներ: Խրախուսեք երեխաներին երգել, սակայն մի անհանգստացեք, եթե նրանք չեն երգում: Երեխաները, ովքեր չեն երգում ձեզ հետ, կարող են հաճույքով պարզ շարժումներ կատարել, մինչ դուք երգում եք:

Կարող եք ամեն շաբաթ նույն երգերն օգտագործել, յուրաքանչյուր վարժությունը սկսելիս: Երբ երեխաները կլսեն ծանոթ երգ, նրանք կիմանան, որ վարժություն է սկսվում: Դուք կարող եք նաև փոխել երգի բառերը համապատասխանեցնելով երեխաների պայմաններին կամ վարժություններին: Տարվա ընթացքում շատ երգեք երեխաների սիրելի երգերը:

Children's Songbook-ի հետևյալ երգերը հատկապես հարմար են մսուրային խմբում օգտագործելու համար: Տրված են առաջարկություններ, թե ինչպես կարող եք հարմարեցնել խոսքերը: *Children's Songbook* -ի կամ ուրիշ երգեր հարմարեցնելու այլ գաղափարներ կարող եք ունենալ, որպեսզի դրանք համապատասխանեն մսուրային խմբի երեխաներին:

- "A Happy Family" (էջ 198) (© 1975 Pioneer Music Press, Inc.): Կարող եք քառյակ հորինել ձեր ուրախ մսուրային խմբի կամ Երեխաների Խմբի մասին: Օգտագործեք որպես ողջույն. «Ես տեսնում եմ Սյուզիին, նա տեսնում է ինձ ...»:
- "Do As I'm Doing" (էջ 276): Օգտագործեք հրահանգներ տալու համար. «Մաքրեք դասասենյակը, ինձ հետևեք ...» կամ «Հավաքվեք երգելու ...»:
- "Fun to Do," (էջ 253)
- "Here We Are Together," (էջ 261)
- "I Wiggle" (էջ 271)
- "If You're Happy," (էջ 266)
- "My Hands" (էջ 273)
- "Once There Was a Snowman" (p. 249) (© 1981 Pioneer Music Press, Inc.): Հորինեք քառյակներ բնության այլ բաների մասին. «Կար մի կանաչ ծառ ... բարձր, բարձր, բարձր: Դրա ստվերում ես հանգստացա ... ցածր, ցածր, ցածր»:
- "Rain Is Falling All Around" (էջ 241)
- "Sing a Song" (էջ 253): «Երգելու» փոխարեն օգտագործեք հիմնական շարժումներ՝ «Ցատկ, ցատկ, ցատկ»: Երգեք հագուստի, գույների կամ ձեր մասին՝ «Կոշիկներ, կոշիկներ, կոշիկներ, ես սիրում եմ իմ կոշիկները: Ես դրանք հագնում եմ ոտքերիս, կոշիկներ, կոշիկներ, կոշիկներ»:
- "Smiles," (էջ 267)
- "Popcorn Popping," (էջ 242)

Երաժշտական գործիքներ

Ձեռք բերեք հասարակ երաժշտական գործիքներ, որ երեխաները նվագեն կամ ինքնուրույն պատրաստեք:

Ֆլեյտա կամ շվի. Մի քանի անցքեր բացեք ստվարաթղթե խողովակի մի կողմում (օրինակ՝ ստվարաթղթի խողովակներ կարող եք գտնել այլումինե փայլաթիթեղի, մոմապատ թղթերի կամ անձեռոցիկ թղթերի փաթեթների մեջ): Հատուկ էֆեկտի համար, մի ծայրին կպչուն ժապավենով ցելոֆան ամրացրեք:

Հղկված խորանարդիկներ. Կտրեք 2.5սմ հաստությամբ 5սմ լայնությամբ և 10սմ երկարությամբ փայտի երկու կտոր: Կտրեք երկու ավելի փոքր կտոր՝ մոտ 2.5x6սմ չափերով: Հղկեք խորանարդիկների սուր ծայրերը կամ փշերը: Փոքր կտորները դրեք մեծ կտորների մեջտեղում և զգույշ մեխեք: Հղկաթուղթ փակցրեք

յուրաքանչյուր խորանարդիկի տակ: Նվագելիս, բռնելով փոքր մասերից խորանարդիկները հարվածեք իրար կամ հոկաթղթերի մասերը միմյանց քսեք:

Թափահարելու գործիքներ. Եգիպտացորենի հատիկներ կամ չոր լոբի լցրեք սուր եզրեր չունեցող պահածոյի տուփի կամ ստվարաթղթե տարայի մեջ: Խնդրեք երեխաներին զարդարել տարաները: Բաց մասերը զգույշ կպչուն ժապավենով փակեք, որպեսզի երեխաները չուտեն տարայի մեջ լցրած հատիկները կամ չխաղան դրանցով: Նվագելու համար թափահարեք:

Զանգեր. Կտորի շերտիկի վրա զանգակներ կարեք: Նվագելիս կտորի շերտիկը թափահարեք:

Շաժումներ երաժշտության ներքո

Երաժշտության տակ բազմազան շարժումները օգնում են երեխաներին էներգիա ծախսել և զարգացնել միտքը ճկուն ձևով օգտագործելու իրենց ունակությունները: Երգեք, դաշնամուր կամ այլ գործիք նվագեք, օգտագործեք ձայնագրություն, որի տակ երեխաները կարող են շարժվել:

Դուք կարող եք հետևյալ կերպ ներգրավել երեխաներին երաժշտության տակ շարժումներ կատարելու.

- Հրահանգեք երեխաներին երաժշտության ներքո վազել, ցատկել, կքվել, պտտվել, ոտքերի մատերի վրա քայլել, սողալ, գորտի նման ցատկոտել կամ ձգվել: Թող երեխաները հերթով առաջնորդեն խմբին շարժումներ կատարելիս:
- Նվագեք կամ երգեք երգեր տարբեր տեմպերով և թող երեխաները վազեն կամ քայլեն երաժշտության տեմպի տակ:
- Խնդրեք երեխաներին երաժշտության տակ շարժվելիս թափահարել գունավոր շարֆեր կամ թղթե շերտեր:
- Օգտագործեք շարժումներով երգեր, երբ երեխաներին հարկավոր է տեմպի փոփոխություն: Եթե երեխաները երկար ժամանակ է նստած են, տեղին կլինի կատարել երգ, որի ժամանակ կկատարվեն լայնակի շարժումներ և կաշխատեն մեծ մկանները: Եթե երեխաները շարժման մեջ են և պետք է հանգստանան, արդյունավետ կլինի օգտագործել շարժումներով երգ, որի ժամանակ կաշխատեն փոքր մկանները, երբ երեխաները նստած են:

Լսելը

Այս ձեռնարկի հետ գալիս է աուդիոերիզ, որը կարող է օգտագործվել լսելու վարժությունների համար: Աուդիոերիզը պարունակում է հինգ բաժիններ.

1. «Հանգիստ երաժշտություն» —պետք է միացնել, երբ երեխաները գալիս են մսուրային դասարան կամ այն ժամանակ, երբ ցանկանում եք, որ հանգիստ մթնոլորտ տիրի:
2. «Ծանոթություն երաժշտությանը»—օգնեք երեխաներին ծանոթանալ տարբեր երաժշտական առանձնահատկություններին:
3. «Շարժումներ երաժշտության ներքո» —պետք է նվագել երեխաների համար, երբ նրանք շարժումներ են կատարում, օրինակ՝ ձգվում են կամ կքվում են: Երեխաները էներգիա են ծախսում և զարգացնում են ֆիզիկական և ռիթմիկ հմտություններ, երբ լսում և մասնակցում են:

4. «Երաժշտական զգացողություն»—խրախուսեք երեխաներին լսել և անկաշկանդ շարժվել երաժշտության ներքո: Տասներկու փոքր ընտրանիներ են ներառված, որտեղ հնչում են երաժշտության ներքո շարժումներ կատարելու առաջարկություններ: Մեկ դասաժամի ընթացքում օգտագործեք երեքից ոչ ավել ընտրություն:

5. «Պատմությունների ներկայացում»—կատարելու համար շարժումներ առաջարկեք երեխաներին: Հետևելով հրահանգներին և ուշադիր լսելով պատմությունները, երեխաները մասնակցում են մնջախաղին և այլ ֆիզիկական վարժություններին: Պատմությունները վերնագրվում են՝ «Ջրոսանք անտառում», «Գազանանոցում» և «Խաղալիքները խաղալիքի տուփում»: Մեկ դասաժամի ընթացքում օգտագործեք միայն մեկ պատմություն:

Դուք կարող եք նաև առկայության դեպքում օգտագործել *Children's Songbook* աուդիոերիզները (միայն երաժշտությունը, 52505, երաժշտություն և խոսք, 52428) կամ կոմպակտ դիսկեր (միայն երաժշտությունը, 50505, երաժշտություն և խոսք, 50428):

Երեխաները հնարավոր է դժվարությամբ կենտրոնանան երաժշտության վրա, եթե միայն լսում են: Լսելը համատեղեք երգելու, շարժվելու կամ այլ վարժությունների հետ, ինչպես հետևյալ օրինակում.

- Խնդրեք երեխաներին պառկել գետնին և լսել տարբեր տեսակի երաժշտություն: Խոսեք այն մասին, թե ինչ են զգում տվյալ երաժշտությունը լսելիս: Այնուհետև թող ցույց տան, թե ինչ են զգում:
- Նվագեք քայլերգ և թող երեխաները սենյակում քայլեն այդ քայլերգի տակ:
- Խնդրեք երեխաներին ծափ տալ այն երաժշտության ռիթով, որը լսում են:

ՀԱՐՍԱՐԵՑՎԱԾ ԴԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Տրված են օրինակներ, թե ինչպես կարող են այս ձեռնարկի երկու դասեր հարմարեցվել մսուրային խմբում կիրառելու համար: Այդ օրինակները դիտարկելիս ուշադրություն դարձրեք, որ.

Դասաժամի յուրաքանչյուր մասը պետք է կենտրոնանա ավետարանի մի պարզ ուղերձի վրա: Վարժություններն ու երաժշտությունը պետք է օգնեն երեխաներին սկսել հասկանալ Ավետարանի հիմնական սկզբունքները և տերմինները:

Հիմնական դասի միայն մի քանի մասերը կարող եք ընտրել: Սա օգնում է, որ դասը լինի պարզ, ակտիվ և համապատասխանի մսուրային տարիքի երեխաներին:

Ընտրված վարժությունները միշտ չեն օգտագործվում նույն հաջորդականությամբ, ինչպես տրված են հիմնական դասում: Դասի վարժությունները պետք է մատուցվեն այն հաջորդականությամբ, որը կօգնի մսուրային տարիքի երեխաներին հասկանալ ավետարանի ուղերձը:

Դաս 6. Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են ինձ

Ողջույնի մաս

Մսուրային խմբում ակնածալից մթնոլորտ ստեղծելու մի տարբերակ է երաժշտություն միացնել *Children's Songbook* ձայնաերիզներից: Այս դասի ընթացքում ավետարանի ուղերձը ներկայացնելու համար դուք կարող եք յուրաքանչյուր երեխայի տալ կրծքանշան, որի վրա գրված է՝ «Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են ինձ» (տես նյութն ամրապնդող վարժություն 6, էջ 26):

Խաղաժամ 35 րոպե

Խաղի ժամին ուղիներ գտեք օգնելու երեխաներին մտածել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին: Օրինակ, դուք կարող եք երեխաներին ուսուցանել, որ Երկնային Հայրը և Հիսուսը ուրախ են, երբ մենք բարի ենք միմյանց հանդեպ, և որ նրանք շատ են սիրում մեզ: Դուք կարող եք նաև օգնել երեխաներին հիշել անցյալ շաբաթվա դասը, հարցնելով՝ «Ո՞վ է Երկնային Հոր Որդին»:

Հավաքվելու ժամ 10 րոպե

Հավաքվելու ժամը կարող է նաև օգտագործվել երեխաներին դասին պատրաստելու համար: Սկսեք երգելով աղոթքի երգը և օգնեք մի երեխայի աղոթել: Այնուհետև օ Այնուհետև օգնեք երեխաներին պատրաստվել դասին հարցնելով նրանց, թե ով է տվել մեզ այս գեղեցիկ երկիրը, ավետարանը և Եկեղեցին (տես ուշադրությունը կենտրոնացնող վարժություն, էջ 23):

Երգի ժամ 10 րոպե

Երաժշտությունը կարող է շատ բավականին օգնել մսուրային խմբի երեխաներին ավետարանի ուղերձը սովորելիս: Օրինակ, այս դասի ընթացքում դուք կարող եք օգնել երեխաներին մտածել Երկնային Հոր և Հիսուսի մասին երգելով՝ «Գիտեմ Հայրս ապրում է» կամ «Ես զգում եմ իմ Փրկչի սերը» (տես նյութն ամրապնդող վարժություն 2, էջ 26): Եթե ժամանակը թույլ է տալիս, երգեք նախորդ դասերի երգերից կամ էջ xvii-ի ընտրված երգերից:

Նախաճաշիկ 10 րոպե

Թեպետ այս ժամանակահատվածում ավետարանի ուղերձի հետ կապված ոչ մի վարժություն նախատեսված չէ, դուք կարող եք հիշեցնել երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են մեզ, և որ մենք պետք է շնորհակալություն հայտնեք նրանց ամեն ինչի, նաև մեր ուտելիքի համար: Այնուհետև խնդրեք մի երեխայի օրհնել ուտելիքը:

Դասաժամ 10 րոպե

Այս դասաժամը բաղկացած է մի քանի մասերից, որոնք կարող են օգտագործվել օգնելու մսուրային խմբի երեխաներին հասկանալ, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են իրենց: Օրինակ, դուք կարող եք Դաս 6-ի հետևյալ մասերը:

- Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը օրհնություններ են տալիս մեզ (էջ 23–24)
- Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են մեզանից յուրաքանչյուրին (էջ 16)
- Լրացուցիչ վարժություն 2 (էջ 26)
- Նյութն ամրապնդող վարժություն 1 (էջ 25)

Վարժության ժամ 15 րոպե

Վարժության ժամը երեխաներին հնարավորություններ է ընձեռում ստեղծագործական մոտեցում զարգացնել և ուղղորդել իրենց էներգիան: Որտեղ հնարավոր է, վարժությունները պետք է օգնեն ամրապնդել ավետարանի ուղերձը: Օրինակ, դուք կարող եք գնդակ գլորելու խաղը խաղալ (էջ xx), տալով հարցեր՝ ավետարանի ուղերձը ամրապնդելու համար:

Փակման մաս 10 րոպե

Օգտագործեք փակման մասը հիշեցնելու համար երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են նրանցից յուրաքանչյուրին և գիտեն նրանց անուններով:

Հայտնեք ձեր երախտագիտությունը օրհնությունների համար, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը տվել են ձեզ: Այնուհետև օգնեք մի երեխայի ասել փակման աղոթքը:

Դաս 10. Ես շնորհակալ եմ ծառերի, բույսերի և ծաղիկների համար

Ողջույնի մաս

Ողջունեք յուրաքանչյուր երեխային անունով, երբ նրանք մտնում են մսուրային դասարան: Նրանց ողջունելուց հետո ներկայացրեք դասի թեման ասելով, որ այսօր նրանք կսովորեն բույսերի, ծաղիկների և ծառերի մասին:

Խաղաժամ

35 րոպե

Խաղի ժամին երեխաներին պատրաստեք դասին, պատմելով նրանց այս աշխարհի բազմաթիվ գեղեցիկ բաների մասին, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ստեղծել են մեզ համար:

Հավաքվելու ժամ

10 րոպե

Երգեք աղոթքի երգ, ապա օգնեք մի երեխայի աղոթք ասել: Այս դասի համար դուք կարող եք նաև մի բույս բերել, որ երեխաները տեսնեն, շոշափեն և հոտ քաշեն: Այնուհետև ձեր երախտագիտությունը հայտնեք բույսերի, ծաղիկների և ծառերի համար (տես լրացուցիչ վարժություն 2, էջ 45):

Երգեցողության ժամ

10 րոպե

Երգեք “In the Leafy Treetops” (տես լրացուցիչ վարժություն 4, էջ 54): Երգին համապատասխան շարժումներ կատարելը կօգնի ուրախ մթնոլորտ ստեղծել և երեխաներին աշխուժացնել: Եթե ժամանակը թույլ է տալիս, կարող եք նաև երգել նախորդ դասերի երգերը:

Նախաճաշիկ

10 րոպե

Հնարավորության դեպքում, սկսեք ուտել կատարելով մի պարզ վարժություն, որը կապված է ավետարանի ուղերձի հետ: Օրինակ, այս դասի համար նախաճաշիկը պետք է բաղկացած լինի հացից և մրգերից: Բացատրեք երեխաներին, որ այս ուտելիքը գալիս է ծառերից, բույսերից և ծաղիկներից (տես վարժությունը, էջ 44): Այնուհետև օգնեք մի երեխայի ասել հացի օրհնությունը:

Դասաժամ

10 րոպե

Դասից ընտրեք մասեր, որոնք ձեր կարծիքով կօգնեն երեխաներին հասկանալ ավետարանի ուղերձը: Օրինակ, դուք կարող եք օգնել երեխաներին հասկանալ, ինչպես են ծառերը, բույսերը և ծաղիկներն աճում՝ կտրելով մի պտուղ այնպես, որ երեխաները տեսնեն սերմերը: Բացատրեք, թե ինչ պետք է տեղի ունենա, որ սերմերն աճեն և ավելի շատ պտուղ տան (տես նյութն ամրապնդող վարժություն 4, էջ 54): Այնուհետև օգնեք երեխաներին սերմեր ցանել հողով լցված թղթե բաժակների մեջ (տես նյութն ամրապնդող վարժություն 1, էջ 44):

Վարժության ժամ

15 րոպե

Դասից հետո, կարող եք մեղմ երաժշտություն միացնել, իսկ այդ ընթացքում երեխաները կարող են գունավորել ծառերի, բույսերի և ծաղիկների նկարներ: Վարժությունները կարող եք ընտրել դասից կամ էջ xviii–xvii-ում նշվածներից: Որոշ երեխաներ հնարավոր է նախընտրեն այդ ժամանակ խաղալիքներով խաղալ: Վարժություններ կազմակերպեք, սակայն երեխաներից մի պահանջեք մասնակցել:

Փակման մաս 10 րոպե

Փակման մասը նախատեսված է ավետարանի ուղերձը ամփոփելու և աղոթքին պատրաստվելու համար: Այս դասին դուք կարող եք խնդրել երեխաներին ձեզ հետ միասին կրկնել “Little Seeds Lie Fast Asleep” երգի խոսքերը, հիշեցնելով երեխաներին, որ մենք շնորհակալ ենք ծառերի, բույսերի և ծաղիկների համար (տես Նյութն ամրապնդող վարժություն 2, էջ 44): Այնուհետև օգնեք մի երեխայի ասել փակման աղոթքը:

Ես Աստծո զավակն եմ

Դաս
1

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ մենք Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք: Նա ճանաչում և սիրում է մեզ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ելից Բ. Աղոթքով ուսումնասիրեք Ելից Բ.1–10; Սաղմոս ՁԲ.6; Վարդապետություն և Ուխտեր 138.55–56; և Մովսես 1.1–6: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 2:
2. Գտեք յուրաքանչյուր երեխայի երկու կամ երեք լավ գծեր՝ խորհրդակցելով նրա ծնողների հետ:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Թանկագին Մարգարիտ:
   բ. Լոբու տոպրակ կամ փափուկ փոքր առարկա:
   գ. Նկար 1-1՝ Աշխարհը (62196); նկար 1-2՝ Մովսեսը եղեգների մեջ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 106; 62063):
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաների հետ երգեք «Աստծո զավակն եմ» (*Հիմներ և մանկական երգեր,* էջ 58):

Զավակն եմ ես Աստծո,
Նա է ինձ կյանք տվել,
Տվել է ինձ տուն երկրային
Եվ ծնողներ բարի:

Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
Որ ուղին գտնեմ,
Սովորեցրու՝ ինչ անել,
Որ մի օր Քեզ հասնեմ:

Լոբու տոպրակ կամ փափուկ առարկա նետեք մի երեխայի ասելով՝ «Ես գիտեմ Աստծո զավակ, որի անունն է »: Թող երեխան ասի իր անունը և լոբու տոպրակը նետի ետ ձեզ: Կրկնեք խաղը մինչև որ բոլորը կմասնակցեն:

Մենք Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք

- Ո՞վ է Երկնային Հայրը: (Օգտագործեք երեխաների պատասխանները, որոնք կուղղորդեն ձեզ դասի այս մասը ճիշտ ձևով բացատրելու համար:)

Ցույց տվեք նկար 1-1՝ Աշխարհը: Բացատրեք, որ նախքան երկրի վրա ծնվելը մենք ապրել ենք երկնքում՝ Երկնային Հոր հետ: Մենք այնտեղ հոգիներ էինք:

Հոգին մեր ներսում է, որը մեզ կենդանի է պահում: Երբ մենք հոգիներ էինք, մենք չունեինք մսից և ոսկորից մարմին, ինչպես մեր մարմիններն են այժմ, սակայն մենք նույն տեսքն ունեինք:

Բացատրեք, որ Երկնային Հայրը մեր հոգիների հայրն է, և մենք նրա հոգևոր զավակներն ենք: Մենք չենք հիշում նախքան երկիր գալը Երկնային Հոր հետ ապրելը, սակայն գիտենք, որ մենք նրա հոգևոր զավակներն ենք, որովհետև այդ մասին կարդում ենք սուրբ գրքերում:

Ցույց տվեք Աստվածաշունչը և կարդացեք Սաղմոս ՁԲ.6, բացատրելով, որ *Բարձրյալ* նշանակում է Երկնային Հայր: Շեշտեք, որ երկրի վրա ապրող յուրաքանչյուր մարդ Երկնային Հոր զավակն է:

Երգ

Կրկին երգեք «Աստծո զավակն եմ» երգը: Բացատրեք, որ *Աստվածը* Երկնային Հոր մեկ այլ անունն է:

Երկնային Հայրը ճանաչում և սիրում է մեզ

Բացատրեք, որ Երկնային Հայրը շատ է սիրում մեզանից յուրաքանչյուրին, որովհետև մենք նրա զավակներն ենք: Նա գիտի մեր անունները և ճանաչում է մեզ: Նա գիտի, թե ինչն է մեզ ուրախացնում և ինչը՝ տխրեցնում: Նա գիտի, թե ինչն է լավագույնը մեզանից յուրաքանչյուրի համար:

Վարժություն

Երեխաների հետ մի քանի անգամ արտասանեք հետևյալ տողերը, կատարելով նկարագրված գործողությունները.

Երկնային Հայրը ճանաչում է ինձ

Երկնային Հայրը ճանաչում է ինձ *(ցույց տվեք ձեզ)*
Եվ գիտի ինչ եմ սիրում անել:
Նա գիտի իմ անունը, և որտեղ եմ ապրում *(երկու ձեռքերի մատերը միացնելով տանիք պատկերեք):*
Ես նաև գիտեմ, որ նա սիրում է ինձ *(խաչեք ձեռքերը և դրեք ուսերի վրա):*

Նա գիտի ինչն է ինձ ուրախացնում (*մատերը դրեք ժպտացող բերանի վրա*):
Նա գիտի, ինչն է ինձ տխրեցնում *(դրեք մատերը տխրություն արտահայտող բերանի վրա):*
Ես գիտեմ, որ նա ինձ օգնել է ուզում *(ցույց տվեք ինքներդ ձեզ),*
Եվ դա է ինձ ուրախացնում:

Խնդրեք մի երեխայի գալ դասարանի կենտրոն: Օգտագործելով երեխայի ծնողներից նախորոք իմացած տեղեկությունները, բացատրեք, որ Երկնային Հայրը գիտի այդ երեխայի հրաշալի գծերի մասին: Օրինակ, կարող եք ասել. «Երկնային Հայրը գիտի, որ Էմիլին սիրելի դուստր է, օգնում է իր մայրիկին խնամել իր քույրիկին, նա մշտապես ուրախ է և ժպտում է»: Այդ նույնը կատարեք բոլոր երեխաների համար:

Բացատրեք, որ երբ բարի և լավ բաներ ենք անում, մենք նմանվում ենք Երկնային Հորը:

Մենք կարող ենք լինել Երկնային Հոր նման

- Ինչպե՞ս է կոչվում շան ձագը:
- Ի՞նչ կդառնա այդ շնիկը մեծանալով:
- Ինչպե՞ս է կոչվում հավի ճուտը:
- Ի՞նչ կդառնա այդ ճուտիկը մեծանալով:

Բացատրեք, որ ճիշտ ինչպես կենդանիներն են մեծանում նմանվելով իրենց ծնողներին, մենք էլ մեծանալով նմանվում ենք մեր ծնողներին: Երկնային Հայրը մեր հոգիների հայրն է, այնպես որ մենք մեծանալով կարող ենք նմանվել նրան: Երկնային Հայրը սիրառատ, մեծահոգի և բարի է, և նա ցանկանում է օգնել մեզ: Երբ մենք սիրառատ, մեծահոգի և բարի ենք, մենք նմանվում ենք Երկնային Հորը: Բացատրեք, որ մենք պետք է փորձենք ամեն օր էլ ավելի նմանվել Երկնային Հորը:

Երկնային Հայրը կարևոր աշխատանք ունի մեզ համար

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-2՝ Մովսեսը եղեգների մեջ, և պատմեք, թե ինչպես փարավոնի դուստրը փրկեց Մովսեսին վտանգից, երբ նա մանուկ էր, ինչպես տրված է Ելից Բ.1–10-ում:

Բացատրեք, որ Մովսեսը մեծացավ դառնալով Երկնային Հոր կարևոր օգնականներից մեկը՝ մարգարե: Երկնային Հայրն ասաց Մովսեսին, որ Մովսեսն իր որդին էր (տես Մովսես 1.4, 6) և նա կարևոր աշխատանք ուներ անելու: Երեխաների համար կարդացեք Մովսես 1.6-ի առաջին հատվածը: Մովսեսը կատարեց այդ աշխատանքը, երբ նա Իսրայելցիներին հանեց Եգիպտոսի երկրից, որտեղ նրանց շատ դաժանաբար էին վերաբերվում, առաջնորդելով նրանց մի երկիր, որտեղ Մովսեսը նրանց ուսուցանեց Երկնային Հոր պատվիրանները:

Խնդրեք երեխաներին հերթով գալ դասարանի կենտրոն, և օգնեք յուրաքանչյուրին կրկնել Մովսես 1.6-ի առաջին մասը, նշելով տվյալ երեխայի անունը. «Ես աշխատանք ունեմ քեզ համար, (երեխայի անունը), որդի՛ս (դուստրս)»:

Բացատրեք, որ Երկնային Հայրը կարևոր բաներ ունի պահած մեզ համար, որ մենք պետք է կատարենք երկրի վրա ապրելու ընթացքում, օրինակ՝ լինել մայր կամ հայր, միսիոներ, ուսուցիչ, օգնական եկեղեցում կամ համայնքում:

- Ի՞նչ կարևոր աշխատանք կուզենար Երկնային Հայրը, որ դուք անեիք:

Վարժություն

Խնդրեք երեխաներին մնջախաղի միջոցով ցույց տալ, թե ինչ են իրենք ուզում դառնալ, երբ մեծանան, օրինակ՝ մայր կամ հայր օրորելով երեխային, միսիոներ, որը դուռ է թակում կամ մարդկանց մոտենում, կամ ուսուցիչ, որը դասարանին է ուսուցանում:

Վկայություն

Ասեք երեխաներին, որ նրանք միշտ պետք է հիշեն, որ իրենք Երկնային Հոր հոգևոր զավակներն են, և որ նա ճանաչում և սիրում է իրենց: Օգնեք նրանց հասկանալ, որ իրենք կարող են ավելի նմանվել Երկնային Հորը, և որ իրենք կարևոր աշխատանք ունեն կատարելու երկրի վրա: Կարող եք նրանց հետ կիսվել անձնական փորձով, որը օգնել է ձեզ իմանալ, որ Երկնային Հայրը ճանաչում և սիրում է ձեզ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Ցույց տվեք տարբեր մարդկանց նկարներ, կամ խոսեք մարդկանց մասին, ում երեխաները ճանաչում են, և հարցրեք, արդյո՞ք այդ մարդը Աստծո զավակ է: Օրինակ՝ «Աստծո զավա՞կ է եպիսկոպոսը», «Աստծո զավա՞կ է ոստիկանը», «Աստծո զավա՞կ է ձեր հարևանը» և այլն: Օգնեք երեխաներին հասկանալ, որ ամեն ոք Աստծո զավակ է:

2. Շեշտելու համար, որ Երկնային Հայրը գիտի և հոգ է տանում յուրաքանչյուր երեխայի համար, թող երեխաներն ավարտեն ձեր նախադասությունները, ինչպես տրված է այս օրինակներում՝ «Երկնային Հայրը գիտի, որ ես տխրում եմ, երբ », «Երկնային Հայր գիտի, որ ես ուրախանում եմ, երբ », «Երկնային Հայրը գիտի, որ իմ սիրելի զբաղմունքը », «Երկնային Հայրը գիտի, որ ես ուզում եմ գալ Երեխաների Խմբի դասերին, որովհետև » և այլն:

3. Բացատրեք, որ Երկնային Հայրը երկնքի և երկրի թագավորն է: Որովհետև մենք նրա զավակներն ենք, մենք արքայազներ և արքայադուստրեր ենք: Փոքր թագ պատրաստեք յուրաքանչյուր երեխայի համար և յուրաքանչյուրի վրա գրեք հետևյալ բառերը՝ *Ես Աստծո զավակ եմ*: Թող երեխաները գունավորեն այդ թագերը:

4. Երեխաների հետ երգեք կամ արտասանեք «Գիտեմ, հայրս ապրում է» երգի երկու տուները (*Հիմներ և մանկական երգեր,* էջ 59):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Խնդրեք երեխաներին մտածել ինչ-որ բանի մասին, որ իրենք սիրում են (նաև կարող եք այդ մասին նախորոք տեղեկանալ իրենց ծնողներից): Հարցրեք յուրաքանչյուր երեխային, թե ինչ է ինքը սիրում, և ասեք նրան, որ Երկնային Հայրը գիտի դա, ինչպես այս օրինակում՝ «Երկնային Հայրը գիտի, որ Լիան շներ է սիրում»:

2. Օգնեք երեխաներին կատարել այս ոտանավորի գործողությունները.

   Եթե դու շատ-շատ մեծ ես *(ձեռքերով ձգվեք վեր),*
   Քեզ համար տեղ կա եկեղեցում:
   Եթե դու շատ-շատ փոքր ես *(կքանստեք),*
   Քեզ համար տեղ կա եկեղեցում:

   Մեծ *(ձգվեք),*
   Փոքր *(կքանստեք),*
   Մեծ *(ձգվեք),*
   Փոքր *(կքանստեք)—*
   Երկնային Հայրը սիրում է մեզ բոլորիս:

3. Օգնեք երեխաներին կատարել այս պատմության գործողությունները, մինչ դուք պատմում եք այն.

   Մանուկ Մովսեսը

   Մանուկ Մովսեսը պառկած էր նավակի մեջ *(մի ձեռքի ափը նավակի նման կորացրեք, իսկ մյուս ձեռքի ցուցամատը դրեք դրա մեջ):*

   Նրա սիրելի քույրը հետևում էր նրան թփերի մեջ պահ մտած *(զգուշորեն նայեք աչքերի առաջ պահած ձեռքի մատերի արանքից):*

Մի օր փարավոնի աղջիկը գտավ նրան *(կռացեք ներքև նայելով)* և իր գիրկը առավ նրան *(ցույց տվեք իբր երեխա եք գրկում):*

Նա ասաց. «Ես կվերցնեմ այս երեխային և կպաշտպանեմ նրան ամեն չարիքից» *(ցույց տվեք իբր ձեռքերի մեջ երեխա եք օրորում):*

(From *Fascinating Finger Fun* by Eleanor Doan. © 1951. Օգտագործվել է թույլտվությամբ:)

Դաս
2

Երկնային Հայրը մարմին ունի

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Երկնային Հայրը իրական անձնավորություն է մսից և ոսկորներից կատարյալ մարմնով, և որ մենք ստեղծվել ենք նրա պատկերով:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Հովհաննես ԺԴ.9; Վարդապետություն և Ուխտեր 130.22; Մովսես 2.27; և Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.14–17: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 1:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Թանկագին Մարգարիտ:
   բ. Թուղթ ու մատիտներ յուրաքանչյուր երեխայի համար:
   գ. Փոքր հայելի:
   դ. Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240; 62572); նկար 1-4՝ Առաջին տեսիլքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 403; 62470):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Բաժանեք թուղթ ու մատիտներ, և խնդրեք երեխաներին, որ իրենք իրենց նկարեն: Երբ ավարտեն, խնդրեք նրանց բարձր պահել իրենց նկարները, և հարցրեք, թե ովքեր են իրական, թղթի վրա նկարված, թե՞ այդ թուղթը պահող երեխաները: Հարցրեք, թե ինչպես գիտեն:

Բացատրեք, որ իրենք են իրական, որովհետև ունեն մարմին, Երկնային Հայրը իրական է և մարմին ունի: Մենք կարող ենք տեսնել Երկնային Հոր նկարները, սակայն դրանցում իրական Երկնային Հայրը չէ: Իրական Երկնային Հայրը ունի մսից և ոսկորներից մարմին:

Հիսուս Քրիստոսը նման է Երկնային Հորը

Հարցրեք երեխաներին, թե արդյոք ինչ-որ մեկը ասե՞լ է իրենց, որ նման են իրենց ծնողներին: Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը, և բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը Երկնային Հոր որդին է: Սուրբ գրությունները ասում են մեզ, որ Հիսուսը նման է Երկնային Հորը: Ցույց տվեք Աստվածաշունչը և երեխաներին բացատրեք Հովհաննես ԺԴ.9-ը:

- Ո՞ւմ նման է Հիսուսը:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել: Օգնեք նրանց մտապահել հավատո հանգանակի առաջին մասը. «Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին»:

Մենք նման ենք Երկնային Հորը և Հիսուսին

Բացատրեք, որ մենք Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք, և որ մենք նաև նման ենք իրեն: Մենք ունենք մարմիններ, ինչպես նա: Երեխաներին բացատրեք Մովսես 2.27-ը: Բացատրեք, որ ստեղծված լինել Երկնային Հոր պատկերով, նշանակում է՝ մենք նման ենք իրեն:

Վարժություն

Խնդրեք երեխաներին հերթով նայել հայելու մեջ կամ մեկ այլ երեխայի: Թող երեխաներից յուրաքանչյուրը տա մարմնի մի մասի անունը, որը տեսնում է, օրինակ՝ ձեռքեր, ոտքեր, աչքեր կամ ականջներ: Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը նույնպես ունեն մարմնի այդ մասերը:

- Դուք ունե՞ք մարմին, որը նման է Երկնային Հոր և Հիսուսի մարմնին:

Բացատրեք, որ մենք գիտենք, որ Երկնային Հայրը և Հիսուսը նման են իրար, որովհետև որոշ մարգարեներ (Եկեղեցու ղեկավարներ) տեսել են Երկնային Հորը և Հիսուսին և գրել են նրանց մասին սուրբ գրություններում:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-4՝ Առաջին տեսիլքը: Պատմեք Առաջին տեսիլքի պատմությունը, ինչպես տրված է Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.14–17-ում:

- Ինչպե՞ս Ջոզեֆ Սմիթն իմացավ, որ Երկնային Հայրն ու Հիսուսը նման են իրար:
- Ինչպիսի՞ մարմիններ ունեն Հիսուսը և Երկնային Հայրը:

Վկայություն

Ձեր վկայությունը բերեք, թե որքան երախտապարտ եք դուք, որ ունեք Երկնային Հոր պատկերով ստեղծված մարմին: Երախտագիտություն հայտնեք այն բազմաթիվ հրաշալի բաների համար, որ ձեր մարմինը կարող է կատարել:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Խնդրեք երեխաներին կանգնել և մի քանի անգամ ասել հետևյալ ոտանավորը՝ կատարելով նկարագրված գործողությունները.

   Ես հրաշալի մարմին ունեմ

   Ես հրաշալի մարմին ունեմ *(ձեռքերը դրեք կրծքին)*
   Որ Երկնային Հայրն է ինձ տվել:
   Նա ինձ ականջներ է տվել, որ լսեմ *(ձեռքի ափը կլորացրած պահեք ականջի մոտ),*
   Եվ աչքեր է տվել, որ տեսնեմ *(ցույց տվեք աչքերը):*

   Ես ունեմ երկու ձեռք, որ ծափ տամ *(ծափ տվեք),*
   Ես ունեմ երկու ոտք, որ պտտվեմ *(պտտվեք):*
   Երբ ցանկանամ, կարող եմ խոնարհվել
   Եվ ոտքերիս մատներին դիպչել *(կքվեք և դիպչեք ոտքի մատերին):*

Իմ մարմնի մասին մտածելիս *(մատը դրեք գլխի վրա),*
Ուրախանում եմ նրանով *(նստեք հանգիստ),*
Որ Երկնային Հայրն է ստեղծել
Իմ մարմինն իր կերպարով:

2. Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “I Have Two Ears” (*Children’s Songbook,* էջ 269) կամ “Head, Shoulders, Knees, and Toes” (*Children’s Songbook,* p. 275): Հիշեցրեք երեխաներին, որԵրկնային Հայրը տվել է մեզ մարմին իր մարմնի նմանությամբ և այս հրաշալի մարմինները կարող են շատ բաներ անել:

3. Թող երեխաները հերթով օգտագործելով նկար 1-4՝ Առաջին տեսիլքը, դասարանին պատմեն Առաջին տեսիլքի պատմությունը:

4. Պատմեք Մարկի և ընտանիքի հանդիպման պատմությունը.

   Մարկի հայրը մահացել էր, երբ Մարկը մանուկ էր: Մարկը հաճախ էր մտածում, թե ինչպիսին էր իր հայրը: Նա և իր մայրը գնացին ընտանեկան միջոցառման, որի ժամանակ նա հանդիպելու էր իր հորաքույրներին և հորեղբայրներին, ովքեր լավ գիտեին իր հորը:

   Տեղ հասնելուն պես հորեղբայր Ջոն եկավ նրանց դիմավորելու: Նա նայեց Մարկին և ասաց. «Ես քեզ անպայման կճանաչեի: Քո աչքերը հորդ աչքերի նման են»: Հորաքույր Էլիզաբեթը ասաց. «Գիտե՞ս Մարկ, քո քիթը իսկը հորդ քիթն է»: Հորաքույր Մերին ասաց. «Մարկ, քո ժպիտը ինձ հիշեցնում է հորդ ժպիտը»:

   Երբ նրանք տուն էիր վերադառնում, Մարկն ասաց իր մայրիկին. «Այսօր շատ լավ անցավ: Ես շատ բաներ իմացա հայրիկիս մասին: Ես իմացա, որ ես նրա նման եմ, և ես ուրախ եմ դրա համար: Այժմ, երբ նայեմ հայելու մեջ, ես կհիշեմ, թե ինչպիսին է նա, և ես չեմ մոռանա նրան»: Մարկի մայրը ձգվեց, շոյեց Մարկի ձեռքը և ասաց. «Երբ դու իմ կողքին ես, ես էլ չեմ մոռանում նրան»:

   Ասեք երեխաներին, որ ճիշտ ինչպես Մարկն իմացավ, որ ինքը նման է իր հորը, թեպետ չէր տեսնել նրան, մենք գիտենք, որ մենք նման ենք մեր Երկնային Հորը, թեպետ չենք կարող տեսնել նրան:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցույց տվեք նկար 1-4՝ Առաջին տեսիլքը: Պատմեք Առաջին տեսիլքի պարզեցված պատմությունը: Շեշտեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը իրական են, և որ նրանք լսում են մեր աղոթքները:

2. Օգտագործեք նկար 1-4՝ Առաջին տեսիլքը, ցույց տալու համար, թե որքան նման են մեր մարմինները Երկնային Հոր և Հիսուսի մարմիններին: Նկարի վրա ցույց տալով մարմնի մասը, խնդրեք երեխաներին ցույց տալ իրենց համապատասխան մարմնի մասը: Օրինակ, եթե դուք ցույց եք տալիս Երկնային Հոր ձեռքը, երեխաները պետք է ցույց տան իրենց ձեռքերը:

3. Օգնեք երեխաներին կատարել գործողություններ հետևյալ ոտանավորի համար, երբ դուք արտասանեք այն.

   Ջոզեֆն անտառում ծնկի եկավ *(ծնկի եկեք և ծալեք ձեռքերը)*

Եվ հատուկ աղոթք ասաց *(մատերի ծայրով դիպչեք ձեր շրթունքներին)*:
Նա Հորը և Որդուն տեսավ *(նայեք վեր՝ ձեռքի ափը պահելով աչքերի վերևում)*
Եվ այնտեղ լսեց նրանց *(ձեռքերի ափերը կիսակլոր պահեք ականջների մոտ)*:

4. Ցույց տվեք ձեր բերանը և ասեք. «Սա իմ բերանն է»: Ապա հարցրեք. «Կարո՞ղ եք ցույց տալ ձեր բերանը» և օգնեք երեխաներին ցույց տալ իրենց բերանը: Հարցրեք. «Երկնային Հայրը ունի՞ բերան»: Նույնը կրկնեք աչքերի, քթի, ականջների, ձեռքերի և ոտքերի համար: Ապա ցույց տվեք մարմնի ամեն մի մասը առանց անունը տալու, և թող երեխաները ասեն անունը:

Դաս
3

Երկնային Հոր ծրագիրը մեզ համար

ՆՊԱՏՈԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ նախքան երկիր գալը մենք ապրել ենք Երկնային Հոր հետ որպես հոգևոր զավակներ, և որ մենք կարող ենք կրկին ապրել նրա հետ այս կյանքից հետո:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Աբրահամ 3.22–27. Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 2:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Սուրբ գրություններ:
   բ. Տիկնիկ կամ կտրված թղթե պատկեր:
   գ. Նկար 1-1՝ Աշխարհը (62196); նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240; 62572); նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ (62307); նկար 1-6՝ Ընտանեկան երեկո (62521); նկար 1-7՝ Սիրող ընտանիք; նկար 1-8՝ Հաղորդության բաժանելը (62021); նկար 1-9՝ Առավոտյան աղոթք (62310); նկար 1-10՝ Ընտանեկան աղոթք (62275); նկար 1-11՝ Մկրտվող տղան (62018); նկար 1-12՝ Հաստատվող աղջիկը (62020); նկար 1-13՝ Ջոզեֆ Սմիթ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 400; 62449):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Տիկնիկը կամ թղթե պատկերը դրեք աթոռներից մեկի վրա՝ երեխաների կողքին: Խնդրեք երեխաներին կանգնել, պտտվել և նորից նստել:

- Ինչո՞ւ տիկնիկը չի կանգնում:
- Ինչո՞ւ եք դուք կարողանում կանգնել:

Խոսեք տիկնիկի և երեխաների միջև տարբերությունների մասին: Օգնեք երեխաներին հասկանալ, որ իրենք կենդանի են: Նրանցից յուրաքանչյուրն իր մարմնում ունի հոգի, որը իրենց կենդանի է պահում, որի շնորհիվ իրենք կարող են տեսնել, լսել, կանգնել, շարժվել, մտածել և խոսել:

Մենք Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք

Երեխաների հետ միասին վերանայեք, թե նախքան երկրի վրա ծնվելը ինչպես ենք մենք ապրել Երկնային Հոր հետ որպես իր հոգևոր զավակներ: Մենք երջանիկ էինք, և սիրում էինք ապրել Երկնային Հոր հետ: Մենք ֆիզիկական մարմին չունեինք, ինչպես այժմ, սակայն հոգի ունեինք: Բացատրեք, որ հոգին նման է ֆիզիկական մարմնին, սակայն միս ու ոսկորներ չունի:

• Նախքան երկրի վրա ծնվելը, որտե՞ղ էիք դուք ապրում:

Երգ

Երեխաների հետ երգեք “I Am a Child of God” (*Children’s Songbook,* էջ 58): Հիշեցրեք երեխաներին, որ*Աստված* Երկնային Հոր մեկ այլ անունն է:

Զավակն եմ ես Աստծո,
Նա է ինձ կյանք տվել,
Տվել է ինձ տուն երկրային
Եվ ծնողներ բարի:

Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
Որ ուղին գտնեմ,
Սովորեցրու՝ ինչ անել,
Որ մի օր Քեզ հասնեմ:

Վարժություն

Խնդրեք մի երեխայի կանգնել ձեր կողքին: Տալով երեխայի անունը, բացատրեք, որ նախքան երկրի վրա ծնվելը նա ապրել է Երկնային Հոր հետ, և նա Երկնային Հոր սիրելի հոգևոր զավակն է: Նույնը կատարեք մյուս երեխաների հետ:

Բացատրեք, որ քանի որ Երկնային Հայրը սիրում է մեզ, նա ծրագիր ունի մեզ համար: Նախքան երկիրը ստեղծելը, Երկնային Հայրը մեկտեղ կանչեց իր բոլոր զավակներին իր ծրագիրը բացատրելու համար: Մենք բոլորս, մեր ծնողները և մեր եղբայրներն ու քույրերը այնտեղ էինք:

Երկնային Հայրը ուղարկեց մեզ երկրի վրա ապրելու

Ցույց տվեք նկար 1-1՝ Աշխարհը: Բացատրեք, որ երկիրը Երկնային Հոր ծրագրի մի մասն է: Երկնային Հոր ղեկավարությամբ Հիսուս Քրիստոսը ստեղծեց երկիրը մեզ համար: Մենք ուղարկվեցինք ծնվելու այստեղ և ֆիզիկական մարմին ստանալու:

Ցույց տվեք նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ: Թող երեխաները խոսեն նկարի մասին: Ասեք նրանց, որ մենք ոգևորվել էինք երկիր գալու, սովորելու և աճելու համար: Մենք եկանք երկիր որպես մանուկներ ընտանիքներում, ովքեր կարող էին սիրել մեզ և հոգ տանել մեզ համար:

Ասեք երեխաներին, որ երկիր գալով մենք ստացանք ֆիզիկական մարմին՝ մաշկով, մկաններով, արյունով և ոսկորներով: Խնդրեք երեխաներին շոշափել իրենց ձեռքը:

• Կարո՞ղ եք զգալ ձեր ձեռքի ոսկորը:

• Կարո՞ղ եք տեսնել և զգալ ձեր մաշկը:

• Կարո՞ղ եք զգալ ձեր մկանները:

Հիշեցրեք երեխաներին, որ մեր մարմնում մեր հոգին մեզ կյանք է տալիս, սակայն մենք չենք կարող տեսնել կամ շոշափել մեր հոգին: Կարող ենք տեսնել և շոշափել մեր ֆիզիկական մարմինը: Ասեք երեխաներին, որ ֆիզիկական մարմին ունենալը մեծ օրհնություն է:

Վարժություն

Երեխաների հետ արտասանեք հետևյալ ոտանավորը: Մարմնի յուրաքանչյուր անդամի անունը տալիս ցույց տվեք այն:

Շնորհակալություն իմ աչքերի համար

Շնորհակալություն իմ աչքերի համար,
Իմ ականջների, բերանի և քթի համար,
Շնորհակալություն իմ ձեռքերի և մատների համար,
Եվ նաև իմ ոտքերի համար:

(Վերցված է կյուսի Պիկոյի ոտանավորից:)

Բացատրեք, որ մինչ մենք երկրի վրա ենք, մենք մեծանում և շատ բաներ ենք սովորում: Սովորելով ճիշտ ընտրություն կատարել՝ մենք կարող ենք ավելի նմանվել Երկնային Հորը և Հիսուսին: Սա Երկնային Հոր Ծրագրի մյուս մասն է:

Երկնային Հայրը ցանկանում է, որ մի օր մենք վերադառնանք Նրա մոտ

Հայտնեք, որ սիրում եք Երկնային Հորը: Ասեք երեխաներին, որ ցանկանում եք մի օր վերադառնալ Երկնային Հոր մոտ, որ տեսնեք Նրան և կրկին լինեք Նրա հետ: Բացատրեք, որ դա ևս Երկնային Հոր Ծրագրի մի մասն է: Նա ցանկանում է, որ մեզանից յուրաքանչյուրը վերադառնա և ապրի Նրա հետ, երբ մեր երկրային կյանքն ավարտվի: Նա ցանկանում է, մենք, մեր ծնողները և մեր ընտանիքի անդամները կրկին իր հետ լինեն:

Բացատրեք, որ կրկին Երկնային Հոր և Հիսուսի հետ ապրեու համար մենք պետք է մկրտվենք և պահենք բոլոր պատվիրանները: Ցույց տվեք սուրբ գրքերը: Բացատրեք, որ սուրբ գրքերը մեզ ուսուցանում են Երկնային Հոր և Հիսուսի մասին և այն, թե ինչ են Նրանք ուզում, որ մենք անենք:

«Նախապատրաստություն» բաժնում տրված նկարները ցուցադրելով ասեք, թե ինչ է Երկնային Հայրը ցանկանում, որ մենք սովորենք և անենք երկրի վրա: Նա ցանկանում է, որ մենք սիրենք մեր ընտանիքներին, լինենք անեսասեր, գնանք եկեղեցի, ընդունենք հաղորդությունը, առավոտյան և երեկոյան աղոթենք, ընտանիքով աղոթենք և ընտանեկան երեկո անցկացնենք, մկրտվենք, հաստատվենք և ստանանք Սուրբ Հոգին, ամուսնանանք տաճարում, սովորենք մարգարեների մասին, և նմանվենք Երկնային Հորը և Հիսուսին:

Վկայություն

Ձեր երախտագիտությունը հայտնեք Երկնային Հոր և Նրա Ծրագրի համար: Խրախուսեք երեխաներին, որ միշտ անեն այն, ինչը գիտեն, որ ճիշտ է, որպեսզի մի օր կարողանան վերադառնալ ապրելու Երկնային Հոր և Հիսուսի հետ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երեխաներին բաժանեք թղթեր, որոնց վրա դուք գրել եք՝ *Ես Աստծո զավակն եմ*, և երեխաներին խնդրեք, որ յուրաքանչյուրը նկարի ինքն իրեն: Թող երեխաները ցույց տան իրենց նկարները դասարանին: Յուրաքանչյուր երեխայի քաջալերեք նկարը ցույց տալով ասել ինչ-որ լավ բան իր մասին:

2. Օգնեք երեխաներին արտասանել հետևյալ ոտանավորը և կատարել նշված գործողությունները.

   Աստված ստեղծեց

   Աստված ստեղծեց լուսինը *(ձեռքերով կլորակ արեք)*
   Եվ կայծկլտացող աստղերը *(բացեք և փակեք ձեռքերը),*
   Եվ դրանք երկնքում դրեց *(ձգվեք)*:
   Նա ստեղծեց արևը *(ձեռքերը կլորացնելով միացրեք գլխավերևում),*
   Ծառերը *(ձեռքերը պարզեք վեր)*
   Եվ ծաղիկները *(ձեռքերի ափերը կլորացրեք բաժակի նման),*
   Ծիտիկներին, որ թռչում են շուրջբոլորը *(ձեռքերով թափահարեք):*

   (From *Fascinating Finger Fun* by Eleanor Doan. © 1951. Օգտագործվել է թույլտվությամբ:)

3. Գրեք հետևյալ հարցերը առանձին թերթիկների վրա: Վերանայեք դասը խնդրելով յուրաքանչյուր երեխայի ընտրել մեկ թերթիկ: Կարդացեք հարցը և թող այդ երեխան պատասխանի հարցին: Անհրաժեշտության դեպքում կրկնեք խաղը, յուրաքանչյուր երեխայի հնարավորություն տալով մասնակցել:

   ա. Ո՞վ է Աստծո զավակ: (Ես եմ, ամեն ոք)
   բ. Նախքան երկրի վրա ծնվելը, որտե՞ղ ենք մենք ապրել: (Երկնքում՝ Երկնային Հոր և Հիսուսի հետ:)
   գ. Ինչո՞ւ Երկնային Հայրը խնդրեց Հիսուսին երկիր պատրաստել մեզ համար: (Որպեսզի մենք ֆիզիկական մարմին ունենանք և սովորենք, թե ինչ պետք է անենք կրկին Երկնային Հոր և Հիսուսի հետ ապրելու համար:)
   դ. Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի կրկին Երկնային Հոր և Հիսուսի հետ ապրենք: (Հնազանդվելպատվիրաններին, լինել անեսասեր, մկրտվել, գնալ տաճար և այլն: Խնդրեք երեխաներին այս հարցին պատասխանելիս ցույց տալ համապատասխան նկարները:)
   ե. Ո՞ւմ հետ կարող ենք մենք ապրել՝ այստեղ երկրի վրա մեր կյանքն ավարտելուց հետո: (Երկնային Հոր և Հիսուսի, և մեր ընտանիքների:)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ձեր Երեխաների Խմբի նախագահի թույլտվությամբ հրավիրեք մի հայրիկի իր երեխային բերել դասարան: Խոսեք հայրերի մասին և թե ինչպես են նրանք սիրում իրենց երեխաներին: Ասեք երեխաներին, որ նրանք ունեն իրենց սիրող երկու հայր՝ իրենց հայրը այստեղ երկրի վրա և իրենց Երկնային Հայրը: Նախքան այստեղ երկրի վրա ծնվելը երեխաներն ապրում են Երկնային Հոր հետ: (Ուշադրություն. Սրբանկատ եղեք այն երեխաների հանդեպ, ովքեր միգուցե հայր չունեն իրենց տանը:)

2. Մեկ կամ երկու զույգ «Հայրիկի կոշիկ» բերեք դասարան: Խոսեք, թե ովքեր են հագնում այս մեծ կոշիկները: Թող երեխաները համեմատեն իրենց կոշիկները այդ մեծ կոշիկների հետ: Թող երեխաները հերթով քայլեն «հայրիկի կոշիկներով»:

3. Երգեք կամ կարդացեք “I Lived in Heaven” երգի առաջին երկու տողը (*Children’s Songbook,* p. 4):

   Շատ վաղուց ես ապրել եմ երկնքում,
   Ապրել եմ այնտեղ և սիրել եմ նրանց, ում ճանաչել եմ: Դուք նույնպես:

   (© 1987 by Janeen Jacobs Brady. Օգտագործվել է թույլտվությամբ:)

   - Ո՞ւմ հետ ենք մենք ապրել երկնքում: (Երկնային Հոր, Հիսուսի և բոլորի հետ:)

4. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի գործողությունները, մինչ դուք կարտասանեք խոսքերը: Կրկնեք որքան ցանկանում եք:

   Թող բոլորը կանգնեն, շրջան կազմեք և բռնեք ձեռքերը: Ողջ վարժության ընթացքում ձեռքերը բռնած պահեք:

   Մենք բոլորս միասին Երկնային Հոր հետ ենք ապրել *(բոլորը մոտենում են միմյանց՝ ձեռքերը շրջանի կենտրոն բերելով):*
   Նա մեզ ուղարկեց երկիր ապրելու *(բացվեք շրջանը մեծացնելով):*
   Նա մեզ տվեց ընտանիքներ սիրելու և մեզ ուսուցանելու *(կրկին մոտեցեք միմյանց):*
   Մեր ընտանիքները կօգնեն մեզ կրկին նրա հետ ապրելու *(կրկին բացվեք՝ շրջանը մեծացնելով):*

Ես կարող եմ աղոթել Երկնային Հորը

Դաս
4

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի սովորել՝ ինչպես պետք է աղոթել Երկնային Հորը և իմանալ, որ նա կլսի:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Դանիել Զ: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 8:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-9՝ Առավոտյան աղոթք (62310); նկար 1-10՝ Ընտանեկան աղոթք (62275); նկար 1-14՝ Դանիելը առյուծների գուբում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 117; 62096); նկար 1-15՝ Ուտելիքի օրհնումը:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք, որ բացող աղոթքն ասող երեխան կանգնած մնա դասարանի կենտրոնում: Հիշեցրեք երեխաներին, որ նախորդ դասի ժամանակ նրանք սովորեցին, որ նախքան ծնվելը մենք ապրել ենք Երկնային Հոր հետ: Երկնային Հայրը մեզ ուղարկել է երկիր:

- Ինչպե՞ս կարող ենք խոսել Երկնային Հոր հետ՝ երկրի վրա ապրելու ընթացքում:
- Աղոթելիս ո՞ւմ հետ էր խոսում (տվեք աղոթք ասող երեխայի անունը):

Օգնեք երեխաներին հասկանալ, որ աղոթելիս մենք իրականում խոսում ենք Երկնային Հոր հետ:

Մենք կարող ենք աղոթել Երկնային Հորը

Բերեք ձեր վկայությունը, որ թեև մենք չենք կարող տեսնել նրան, մենք կարող ենք աղոթել Երկնային Հորը, և նա կլսի մեր աղոթքները:

Ցույց տվեք նկար 1-9՝ Առավոտյան աղոթք:

- Ի՞նչ է անում այս աղջիկը:
- Ո՞ւմ հետ է նա խոսում:
- Ձեր կարծիքով, ի՞նչ կարող է այս աղջիկն ասել Երկնային Հորը:

Օգտագործեք նկար 1-9՝ Առավոտյան աղոթք, նկար 1-10՝ Ընտանեկան աղոթք, և նկար 1-15՝ Ուտելիքի օրհնություն, երբ երեխաների հետ քննարկեք երբ ենք մենք աղոթում: Բացատրեք, որ կարող ենք աղոթել Երկնային Հորը, երբ որ ցանկանում ենք, հիմնականում այն ժամանակ, երբ արթնանում ենք և գնում ենք քնելու, ճաշի ժամանակ, մեր ընտանիքների հետ, և երբ հատուկ օգնության կարիք ունենք: Քննարկման ընթացքում թող երեխաները պահեն համապատասխան նկարները:

Հիսուս Քրիստոսն ուսուցանեց մեզ աղոթել Երկնային Հորը

Բացատրեք, որ Հիսուսն ուսուցանել է աղոթելիս որոշակի բաներ անել: Աղոթելուն պատրաստվելիս մենք մտածում ենք Երկնային Հոր մասին:

- Աղոթելիս ի՞նչ ենք անում մեր ձեռքերը:
- Աղոթելիս ի՞նչ ենք անում մեր գլուխն ու աչքերը:

Վարժություն

Թող երեխաները կրկնեն ձեր ետևից, երբ դուք ցույց տաք ինչպես պետք է պատրաստվել աղոթելուն՝ ծալելով ձեր ձեռքերը, խոնարհելով ձեր գլուխը և փակելով ձեր աչքերը: Որից հետո կարող եք խնդրել մի երեխայի կանգնել դասարանի առաջ և ցույց տալ, ինչպես պետք է պատրաստվել աղոթելուն, իսկ մյուս երեխաները թող կրկնեն այն, ինչ նա ցույց կտա:

Երգ

Երեխաների հետ մի քանի անգամ երգեք կամ կարդացեք “A Prayer Song” օրհներգը (*Children’s Songbook,* p. 22): Երգի հետ համընթաց կատարեք համապատասխան շարժումները:

Այսօր աղոթելիս մեր գլուխը խոնարհում ենք,
Ձեռքերը ծալում ենք,
Ապա աչքերը փակում ենք,
Եվ աղոթելիս Երկնային Հոր հետ խոսում ենք:

- Ուրիշ ի՞նչ կարող ենք անել աղոթելուն պատրաստվելիս:

Բացատրեք, որ տանը, երբ մեր անձնական կամ ընտանեկան աղոթքներն ենք ասում, մենք ոչ միայն ծալում ենք մեր ձեռքերը, խոնարհում մեր գլուխը և փակում աչքերը, այլ հաճախ նաև ծնկի ենք իջնում:

Երգ

Բացատրեք, որ մենք աղոթելիս հատուկ բաներ ենք ասում: Մի քանի անգամ երգեք կամ կարդացեք “I Pray in Faith” երգի երկրորդ տունը (*Children’s Songbook,* p. 14): Խնդրեք երեխաներին ամեն անգամ ծալել մի մատը՝ աղոթելիս ասվող հատուկ բաներից յուրաքանչյուրի համար:

Ես սկսում եմ ասելով՝ Սիրելի Երկնային Հայր,
Շնորհակալություն՝ օրհնությունների համար,
Ապա խոնարհ խնդրում եմ այն, ինչ ուզում եմ,
Հիսուս Քրիստոսի անունով, Ամեն:

(© 1987 by Janice Kapp Perry. Օգտագործվել է թույլտվությամբ:)

- Ինչպե՞ս ենք մենք սկսում մեր աղոթքները:
- Ինչի՞ համար մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը:

- Ի՞նչ կարող ենք խնդրել Երկնային Հորից:
- Ինչպե՞ս ենք մենք ավարտում մեր աղոթքները:

Երբ մենք աղոթում ենք, Երկնային Հայրը լսում է մեզ

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-14՝ Դանիելը Առյուծների գուբում: Պատմեք Դանիել Զ-ում տրված պատմությունը: Բարձրաձայն կարդացեք 22 հատվածի առաջին մասը, որ բացատրեք, թե ինչու Դանիելը չվնասվեց գտնվելով առյուծների գուբում:

Բացատրեք, որ Դանիելը ցանկանում էր աղոթել, որովհետև դա Երկնային Հոր պատվիրանն էր, և նա ցանկանում էր շնորհակալություն հայտնել Երկնային Հորը իր օրհնությունների համար:

- Ի՞նչ արեց թագավորը, որովհետև Դանիելն աղոթում էր: (Տես Դանիել Զ.16:)
- Ի՞նչ տեղի ունեցավ Դանիելի հետ առյուծների գուբում: (Տես Դանիել Զ.22:)
- Ինչպե՞ս գիտեք, որ Երկնային Հայրը լսեց Դանիելի աղոթքը: (Տես Դանիել Զ.23:)

Վկայություն

Պատմեք այն պահերի մասին, երբ Երկնային Հայր լսել է ձեր աղոթքները: Խնդրեք երեխաներին պատմել աղոթքի հետ կապված իրենց փորձառությունների մասին:

Ասեք երեխաներին, թե որքան երախտապարտ եք, որ կարող ենք աղոթել Երկնային Հորը, և նրանց հավաստիացրեք, որ Երկնային Հայրը լսում է մեր աղոթքները:

Երբ խնդրում եք մի երեխայի ասել փակման աղոթքը, կրկնեք, թե ինչպես ենք պատրաստվում աղոթելուն:

- Ինչպե՞ս ենք պատրաստվում աղոթելուն: (Ծալում ենք մեր ձեռքերը, խոնարհում մեր գլուխը, և փակում աչքերը:)
- Ո՞րն է առաջին բանը, որ (երեխայի անունը) պետք է ասի աղոթելիս:
- Ի՞նչ համար կարող է (երեխայի անունը) շնորհակալություն հայտնել Երկնային Հորը:
- Ի՞նչ կարող է (երեխայի անունը) խնդրել Երկնային Հորը:
- Ինչպե՞ս պետք է (երեխայի անունը) ավարտել աղոթքը:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Մի փափուկ առարկա, օրինակ լոբու տոպրակ կամ գնդակ, նետեք եղեխաներին: Ամեն անգամ երբ երեխաներից մեկը բռնում է առարկան, խնդրեք նրան ավարտի հետևյալ նախադասությունը. «Աղոթելիս ես կարող եմ շնորհակալություն ասել Երկնային Հորը _____ համար»: Երեխան կարող է պատասխանել. «Իմ ընտանիքի»: Երբ բոլոր երեխաները մասնակցեն այս խաղին, կրկնեք այն այս անգամ երեխաներին խնդրելով նշել, թե աղոթելիս ինչ կարող են խնդրել Երկնային Հորից: Կարող եք ցույց տալ նկարներ, որոնք կօգնեն նրանց մտքեր հղանալ:

2. Երգեք կամ կարդացեք “A Song of Thanks” (*Children’s Songbook,* p. 20), կատարելով ստորև տրված գործողություններ.

   Շնորհակալություն այս գեղեցիկ աշխարհի համար (ձեռքերով շրջան արեք աշխարհը ներկայացնելու համար);
   Շնորհակալություն մեր ուտելիքի համար (ձևացրեք թե ուտելի եք դնում բերանի մեջ),
   Շնորհակալություն երգող թռչունների համար (ձեռքի ցուցամատն ու բութ մատը միացրեք թռչունի կտուց ներկայացնելով),
   Շնորհակալություն քեզ, Աստված, ամեն ինչի համար *(ձեռքերը լայն բացեք):*

   (From *First Year Music* by Hollis և Dann. © 1957 by Դ. Գ. Heath և Company. Reprinted by permission.)

3. Արտասանեք “I Am Thankful for My Eyes” ոտանավորը՝ ցույց տալով մարմնի համապատասխան մասը.

   Շնորհակալություն իմ աչքերի համար,
   Իմ ականջների, բերանի և քթի համար,
   Շնորհակալություն իմ ձեռքերի և մատների համար,
   Եվ նաև իմ ոտքերի համար:

   (Վերցված է Լյուսի Պիկոյի ոտանավորից:)

4. Խնդրեք երեխաներին բեմականացնել Դանիելը առյուծների գուբում պատմությունը: Կարող եք բերել հասարակ հագուստներ: Եթե չեք ցանկանում բեմադրել ամբողջ պատմությունը, թող երեխաները ձևացնեն իբր իրենք մռնչացող առյուծներ են, և ապա փակեն իրենց բերանը իբր հրեշտակն է փակում այն:

5. Երգեք կամ կարդացեք “Thanks to Our Father” (*Children’s Songbook,* p. 20) կամ “We Bow Our Heads” (*Children’s Songbook,* p. 25) երգերի խոսքերը:

6. Խնդրեք երեխաներին նկարել այն, ինչի համար իրենք կարող են աղոթելիս շնորհակալություն ասել Երկնային Հորը: Գրեք *Երբ ես աղոթում եմ, ես կարող եմ շնորհակալություն ասել Երկնային Հորը (նկարի վրա պատկերվածի) համար:*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Հիշեցրեք երեխաներին, որ երբ աղոթում ենք, մենք խոսում ենք Երկնային Հոր հետ, որը սիրում է մեզ և լսում է մեզ: Օգնեք երեխաներին ասել հետևյալ ոտանավորը.

   Ես իմ Երկնային Հորը սիրում եմ,
   Աղոթելիս նրան շնորհակալություն եմ հայտնում:
   Իմ Երկնային Հայրն ինձ սիրում է,
   Եվ լսում այն, ինչ ես ասում եմ:

2. Օգնեք երեխաներին ասել հետևյալ ոտանավորներից մեկը կամ երկուսը, կատարելով համապատասխան գործողությունները.

   Ծալում ենք ձեռքերը, խոնարհում՝ գլուխը,
   Փակում ենք՝ աչքերը, այժմ պատրաստ ենք ասելու աղոթքը:

   Ձեռքերը ծալում ենք, գլուխը խոնարհում,
   Եվ լսում, երբ աղոթք է ասվում:

3. Թղթերի վրա նկարեք երեխաների ձեռքերը: Խոսեք այն մասին, թե աղոթելիս ինչ պետք է անենք մեր ձեռքերը: Թող երեխաները գունավորեն իրենց նկարված ձեռքերը: Յուրաքանչյուր նկարի տակ գրեք այդ երեխայի անունը:

Դաս
5

Հիսուս Քրիստոսը Երկնային Հոր որդին է

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Հիսուս Քրիստոսը Երկնային Հոր որդին է:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մատթեոս Գ.13–17 և Ղուկաս Ա.26–35; Բ.1–7, 41–52: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 3:
2. Ձեր Երեխաների Խմբի նախագահի թույլտվությամբ երեխաներից մեկի հայրիկին հրավիրեք դասարան, որպեսզի պատմի իր երեխայի մասին, երբ նա փոքր էր: Խնդրեք նրան, հնարավորության դեպքում, դասարան բերել լուսանկարներ և նրաս սիրելի խաղալիքը: Խրախուսեք նրան իր սերն արտահայտել իր երեխայի հանդեպ:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 201; 62495); նկար 1-17՝ Պատանի Հիսուսը տաճարում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 205; 62500); նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 208; 62133):
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Այս դասին հայրիկների մասին խոսելիս ուշադիր եղեք ձեր դասարանի հայրազուրկ երեխաների հանդեպ: Շեշտեք, որ մենք *բոլորս* ունենք Երկնային Հայր, որ սիրում է մեզ: Եթե ձեր դասարանի որոշ երեխաներ ունեն խորթ հայր, բացատրեք, որ խորթ հայրերը նույնպես սիրում են մեզ և հոգ են տանում մեզ համար:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Հարցրեք երեխաներին արդյոք գիտե՞ն, թե ով է այցելուն: Հրավիրեք հրավիրված անդամի երեխային, որ ներկայացնի նրան դասարանին: Խնդրեք այդ հայրիկին երեխաներին պատմի իր երեխայի մասին: Հրավիրեք յուրաքանչյուր երեխայի ինչ-որ բան պատմել իր հայրիկի մասին, օրինակ՝ ինչ գույնի են նրա մազերը կամ ինչ մասնագիտություն ունի նա:

Հիսուս Քրիստոսը Երկնային Հոր որդին է

Ասեք երեխաներին, որ նրանք ունեն երկու հայր՝ երկրային հայր և Երկնային Հայր: Մեր երկրային հայրը մեր ֆիզիկական մարմնի հայրն է: Երկնային Հայրը

մեր մարմնի ներսում գտնվող հոգու հայրն է: Հիսուսն ունի միայն մեկ հայր, որովհետև Երկնային Հայրը Հիսուսի հոգու և ֆիզիկական մարմնի հայրն է: Այդ պատճառով Հիսուսը կոչվում է Աստծո Որդի:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ, և պատմեք Հիսուսի ծննդյան պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս Ա.26–35 և Բ.1–7-ում: Շեշտեք, որ հրեշտակը Մարիամին ասաց, որ իր երեխան կլինի Աստծո Որդին: Նկարին անդրադառնալով տվեք հետևյալ հարցերը.

- Ո՞րն է Հիսուսի մայրը:
- Ի՞նչ է նրա անունը: (Տես Ղուկաս Ա.27:)
- Ո՞վ է նկարում պատկերված տղամարդը: (Տես Ղուկաս Ա.27:)
- Ո՞վ է Հիսուսի հայրը: (Երկնային Հայրը: Հովսեփը բարի մարդ էր՝ ընտրված Երկնային Հոր կողմից, նա պետք է հոգ տաներ Մարիամի և Հիսուսի համար:)

Երգ

Խնդրեք երեխաներին կանգնել և երգել կամ կարդացեք “Away in a Manger” երգը (*Children’s Songbook,* p. 42): Խոսքերին համեմատ ձեռքերով և մատերով համապատասխան շարժումներ կատարեք:

Հեռու մի ախոռում, մսուրի մեջ պառկած,
Մանուկ Տեր Հիսուսն էր անուշ քնած,
Աստղերը երկնքից նայում էին նրան,
Մանուկ Տեր Հիսուսն էր չոր խոտին քնած:

Հիսուսը սիրում է Երկնային Հորը և հնազանդվում է Նրան

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-17՝ Պատանի Հիսուսը Տաճարում, և պատմեք Հիսուսը տաճարում պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս Բ.41–52-ում: Շեշտեք, որ Հիսուսը գնաց տաճար, որովհետև սիրում էր Երկնային Հորը և ցանկանում էր ուսուցանել մարդկանց նրա մասին:

- Ի՞նչ է Հիսուսն անում տաճարում: (Տես Ղուկաս Բ.46:)

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և մի քանի անգամ կատարել հետևյալ գործողություններով ոտանավորը.

Պատանի Հիսուսը գնաց տաճար *(քայլեք տեղում)*
Մինչև մեծ և ուժեղ կդառնար *(ձեռքերը ձգեք վեր)*
Որ իր Հոր գործը կատարեր *(պարզեք ձեռքերը)*
Քանզի մեր հանդեպ մեծ սեր ուներ *(գրկեք ինքներդ ձեզ):*

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին, և պատմեք Հիսուսի մկրտության պատմությունը, ինչպես տրված է Մատթեոս Գ.13–17-ում: Բացատրեք, որ Հիսուսը մկրտվեց, որովհետև սիրում էր Երկնային Հորը և ցանկանում էր հնազանդվել նրան: Հիսուսը նաև ցանկանում էր լավ օրինակ ծառայել մեզ: Բարձրաձայն կարդացեք հատված 17-ը (սկսելով՝ *Դա է իմ սիրելի որդին*), և բացատրեք, որ սրանք Երկնային Հոր խոսքերն են: Երկնային Հայրը գոհ էր, որ Հիսուսը մկրտվեց:

- Տեսե՞լ եք որևէ մեկի մկրտությունը:

Բացատրեք, որ երեխաները կարող են հնազանդ լինել Երկնային Հորը և ցույց տալ, որ սիրում են նրան, երբ ութ տարեկան դառնալուն պես մկրտվեն:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը, որ Հիսուս Քրիստոս Երկնային Հոր որդին է: Ձեր սերն ու երախտագիտությունը հայտնեք Հիսուսի հանդեպ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Դասի երեք նկարները հակառակ կողմով դրեք ձեր ծնկներին կամ սեղանին: Խնդրեք մի երեխայի ընտրել նկարներից մեկը, ցույց տալ այն դասարանին, և պատմել նկարի պատմությունը: Նույնը կրկնեք մյուս երկու նկարների համար:
2. Խնդրեք երեխաներին երգել կամ կարդալ “Tell Me the Stories of Jesus” առաջին տան խոսքերը (*Children’s Songbook,* p. 57):
3. Խնդրեք երեխաներին դերերով կատարել Հիսուսի ծննդյան պատմությունը՝ օգտագործելով հասարակ իրեր, օրինակ՝ տիկնիկ, շալ կամ շարֆ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցույց տվեք նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ, և հարցրեք երեխաներին, թե ով է նկարի մանկիկը: Ասեք նրանց, թե ով է նկարի մանկիկը և պատմեք նրանց Հիսուսի ծննդյան մասին:

   Բացատրեք, որ Հիսուսը այլևս մանուկ չէ: Նա այժմ մեծացել է և Երկնային Հոր ամենակարևոր օգնականն է: Ցույց տվեք նկար 1-3, Հիսուս Քրիստոսը, և ասեք երեխաներին, որ Հիսուսը սիրում է մեզ և օգնում է մեզ տարբեր եղանակներով:
2. Խնդրեք երեխաներին կանգնել և հետևյալ խոսքերն օգտագործելով երգել “Once There Was a Snowman” (*Children’s Songbook,* p. 249): Կքանստեք առաջին տան համար և ձգվեք երկրորդ տան համար:

   Երբ մանչուկ էի, փոքրիկ մանչուկ,
   Ես շատ փոքր էի, փոքրիկ մանչուկ:

   Այժմ ես մեծանում եմ ու մեծանում,
   Եվ հասակս է բարձրանում:
3. Նախորոք խոսեք ձեր դասարանի անդամների ծնողների հետ, որպեսզի նրանցից վերցնեք երեխաների փոքր տարիքի նկարները կամ փոքր խաղալիքներ, որոնցով նրանք սովորաբար խաղացել են: Ցույց տվեք դրանք դասարանին: Պարզեք որ երեխան է յուրաքանչյուր նկարում պատկերվածը կամ ով է յուրաքանչյուր խաղալիքի տերը: Բացատրեք, որ երբ նրանք փոքր էին, լուսանկարում պատկերվածի պես էին և այդ խաղալիքներով էին խաղում:

Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են ինձ

Դաս
6

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի զգալ, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են մեզանից յուրաքանչյուրին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մարկոս ժ.13–16; Հովհաննես Գ.16; և 3 Նեփի 17.11–12, 21–24:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Փոքր հայելի:
   գ. Նկար 1-1՝ Աշխարհը (62196); նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240; 62572); նկար 1-4՝ Առաջին տեսիլքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 403; 62470); նկար 1-19՝ Քրիստոսը մանուկների հետ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 216; 62467); նկար 1-20՝ Հիսուսն օրհնում է Նեփիացի երեխաներին:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Սեղմեք յուրաքանչյուր երեխայի ձեռքը: Այդ երեխայի անունը տալով ասեք նրան, թե ինչն եք սիրում նրա մեջ:

Խնդրեք երեխային տալ մի մարդու անուն, որը սիրում է իրեն և ասել, թե ինչ է այդ մարդն անում, որ ինքն իրեն սիրված է զգում:

Բացատրեք, որ այս դասը երկու անձնավորության մասին է, որոնք սիրում են մեզ բոլորիս: Նրանք մեզ տվել են այս գեղեցիկ երկիրը, ավետարանը և Եկեղեցին:

- Ովքե՞ր են այդ երկու անձնավորությունը, որ սիրում են բոլորին: (Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը:)

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-4՝ Առաջին տեսիլքը: Խնդրեք երեխաներին օգնել ձեզ պատմել, թե ինչ է տեղի ունենում այս նկարում:

- Դուք հիշո՞ւմ եք, թե ովքեր են այս նկարի մարդիկ:
- Ի՞նչ են նրանք անում:

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը օրհնություններ են տալիս մեզ

Հիշեցրեք երեխաներին, որ նախքան երկիր գալը մենք ապրել ենք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ: Նրանք ծրագրել են մեզ համար, որպեսզի մենք գալով այս երկիր սովորենք և աճենք: Նրանք գիտեն մեզ և հոգ են տանում մեզ համար:

Ցույց տվեք նկար 1-1՝ Աշխարհը:

- Ի՞նչ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ստեղծել մեզ համար:

Բացատրեք, որ Երկնային Հայրը խնդրեց Հիսուսին ստեղծել երկիրը և դրա վրա գտնվող ամեն ինչ: Օգնեք երեխաներին հասկանալ, որ Երկնային Հայրը և Հիսուսը ծրագրեցին այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք ապրելու և երջանիկ լինելու համար: Այդ ամենը մեզ հիշեցնում են մեր հանդեպ նրանց սիրո մասին:

- Ի՞նչն է ձեզ հիշեցնում ձեր հանդեպ Երկնային Հոր և Հիսուսի սիրո մասին: (Պատասխանները կարող են լինել, օրինակ՝ ընտանիք, ընկերներ, Եկեղեցի, բույսեր և կենդանիներ:)

Երգ

Երգեք կամ կարդացեք "My Heavenly Father Loves Me" (*Children's Songbook,* p. 228), օգտագործելով ստորև նշված շարժումները: Այնուհետև խնդրեք երեխաներին կանգնել և երգել երգը ձեզ հետ:

Երբ ծիտիկների երգն եմ *(բացեք և փակեք մատները ծիտիկի կտուցի նման)* լսում *(ձեռքերը դրեք ականջների մոտ)*
Կամ կապույտ երկնքին *(բարձրացրեք ձեռքը կամարաձև շարժումով)* նայում *(վեր նայեք),*
Երբ անձրևը դեմքիս վրա է կաթկթում *(մատերով անձրևի կաթիլներ ցույց տվեք)*
Կամ քամին արագ իմ կողքով սլանում *(երկու ձեռքերն էլ հետ ու առաջ շարժեք),*
Երբ թավշյա վարդն եմ քնքուշ շոյում *(իբր շոյում եք ծաղկին կամ ծաղկից հոտ եք քաշում)*
Կամ յասամանի ծառին հմայված նայում *(քայլեք տեղում),*
Ես ուրախ եմ, որ Երկնային Հոր ստեղծած
Այս գեղեցիկ աշխարհում եմ ապրում *(լայն տարածեք ձեռքերը):*

Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը:

- Ո՞վ է սա:
- Ո՞վ է Հիսուսի հայրը:

Կարդացեք Հովհաննես Գ.16-ի առաջին մասը (մինչև *Որդին տվավ*) և բացատրեք, որ մեծագույն օրհնությունը, որ Երկնային Հայրը երբևէ տվել է մեզ, Հիսուս Քրիստոսն էր, որին նա ուղարկեց երկիր:

Հիսուսն Իր սերն է արտահայտում երեխաների հանդեպ

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-19՝ Քրիստոսը մանուկների հետ: Պատմեք պատմությունը, որտեղ Հիսուսն օրհնում է երեխաներին, ինչպես տրված է Մարկոս Ժ.13–16-

ում: Նշեք, որ Հիսուսը ժամանակ տրամադրեց սիրելու և օրհնելու երեխաներին, թեև նրա հետևորդներից ոմանց կարծիքով երեխաները չպետք է նրան անհանգստացնեին:

- Ի՞նչ արեց Հիսուսը, երբ երեխաները եկան: (Տես Մարկոս Ժ.16:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ էին զգում երեխաները Հիսուսի հանդեպ:

Երգ

Երեխաների հետ երգեք կամ կարդացեք "Jesus Loved the Little Children" օրհներգը (*Children's Songbook,* p. 59):

Հիսուսը սիրում էր մանուկներին,
Ինձ նման մանուկներին:
Նա նրանց օրհնում էր և օգնում
Եվ իր ծնկներին նստեցնում:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-20՝ Հիսուսն օրհնում է Նեփիացի երեխաներին: Բացատրեք, որ մահանալուց հետո, Հիսուսն այցելեց Ամերիկայի ժողովրդին: Ամերիկան շատ հեռու էր գտնվում այն վայրից, որտեղ երկրի վրա ապրել էր Հիսուսը:

Պատմեք պատմությունը, որտեղ Հիսուսն օրհնում է Նեփիացի երեխաներին, որը տրված է 3 Նեփի 17.11–12, 21–24 հատվածներում: Բացատրեք, որ Հիսուսն մեկառմեկ օրհնեց յուրաքանչյուր երեխայի:

- Ինչպե՞ս Հիսուսն իր սերն արտահայտեց երեխաների հանդեպ:
- Ինչպե՞ս գիտեք, որ Հիսուսը սիրում է ձեզ:

Վարժություն

Երեխաների հետ մի քանի անգամ արտասանեք հետևյալ ոտանավորը՝ կատարելով նշված գործողությունները.

Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին

Հիսուսը սիրում է բոլոր երեխաներին *(ձեռքերը տարածեք),*
Դեռևս փոքր մանչուկներին *(ձեռքով ցույց տվեք շատ փոքր երեխայի),*
Ինչպես օրորոցում գտնվող նորածիններին *(ձեռքերով կարծես երեխա եք օրորում),*
Այնպես էլ մեծ երեխաներին *(ձեռքերը բարձրացրեք գլխից վեր):*

(From *Finger Fun for Little Folk* by Thea Cannon. © 1949 by the Standard Publishing Company, Cincinnati, Ohio. Օգտագործվել է թույլտվությամբ:)

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը սիրում են մեզանից յուրաքանչյուրին

Օգնեք երեխաներին հասկանալ, թե նրանցից յուրաքանչյուրը որքան կարևոր է Երկնային Հոր և Հիսուսի համար: Բացատրեք, որ Երկնային Հայր և Հիսուսը սիրում են մեզանից յուրաքանչյուրին և գիտեն մեզ անունով:

Վարժություն

Պահեք հայելի և խնդրեք երեխաներին հերթով մոտենալ: Երբ ամեն մեկը մոտենում և նայում է հայելու մեջ, ասեք. «Սա (երեխայի անունը)-ն է, Երկնային Հայրը և Հիսուսը շատ են սիրում (երեխայի անունը)-ին»:

Վկայություն

Վկայություն բերեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ապրում են, և որ նրանք սիրում են մեզանից յուրաքանչյուրին: Կիսվեք երախտագիտության ձեր զգացմունքներով այն բոլոր օրհնությունների համար, որ Երկնային Հայրը և Հիսուսը տվել են ձեզ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երգեք կամ կարդացեք “Jesus Is Our Loving Friend” (*Children’s Songbook,* p. 58): Յուրաքանչյուր երեխայի տվեք “Jesus Is Our Loving Friend” թղթերը (դասի վերջում), և թող երեխաները գունավորեն իրենց թղթերը:
2. Երգեք կամ կարդացեք «Գիտեմ, Հայրս ապրում է» (*ՀՄԵ,* էջ 59) կամ “I Feel My Savior’s Love” (*Children’s Songbook,* p. 74):

3. Ցույց տվեք նկարներ, որոնց վրա պատկերված են, թե ինչ են Երկնային Հայրը և Հիսուսը տվել մեզ, օրինակ՝ տաճար, կենդանիներ, ծաղիկներ, ընտանիքներ, ուտելիք, տներ, հավաքատուն կամ սուրբ գրություններ: (Նկարները կարող եք ձեռք բերել հավաքատան գրադարանից, Ավետարանն արվեստում նկարների հավաքածուից, կամ Եկեղեցու ամսագրերից:) Օգնեք երեխաներին հասկանալ, որ Երկնային Հայրը և Հիսուսը մեզ տվել են այդ ամենը, որովհետև նրանք սիրում են մեզ:

4. Բերեք մի իր, օրինակ դատարկ շիշ, որը կարող է պտտվել որպես ցուցիչ: Երեխաներին նստացրեք շրջանով հատակին և շիշը դրեք շրջանի մեջտեղում: Շիշը պտտեք: Երբ այն կանգ է առնում մի երեխայի դիմաց, այդ երեխան պետք է ասի ինչ-որ մի բան, որ Երկնային Հայրը և Հիսուսը տվել են մեզ, որը ցույց է տալիս նրանց սերը մեր հանդեպ: Օգնեք երեխաներին պատասխանելիս: Պատասխանելուց հետո թող երեխան պտտի շիշը, որը կկանգնի մեկ ուրիշ երեխայի դիմաց:

5. Պատրաստեք մի տուփ կամ տոպրակ, որի մեջ կլինեն մի քանի իրեր, որոնք անհրաժեշտ են մեզ երկրի վրա ապրելիս, օրինակ՝ ուտելիք, ջուր կամ հագուստ: Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը այս երկիրը ստեղծել են մեզ համար, որ ապրենք այստեղ: Բացատրեք, որ տուփը կամ տոպրակը պարունակում են այնպիսի իրեր, որոնք մեզ անհրաժեշտ են երկրի վրա: Երեխաներին հուշեք մի իրի վերաբերյալ մինչև նրանք կգուշակեն, թե ինչ է դա: Երբ նրանք ճիշտ կգուշակեն, հանեք այդ իրը տուփի կամ տոպրակի միջից: Շարունակեք այդ խաղը, մինչև երեխաները կգուշակեն բոլոր իրերը:

6. Պատրաստեք կրծքանշաններ, որոնց վրա գրված է *Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են ինձ,* որպեսզի երեխաները կրեն իրենց վրա կամ տուն տանեն: Կարող եք կչուն ժապավենով այդ կրծքանշանը փակցնել երեխայի կրծքին կամ կրծքանշանից մի թել կապել և այն կախել երեխայի վզից: Նախքան դասը սկսելը կարող եք թաքցնել կրծքանշանները երեխաների աթոռների տակ, իսկ հետո թող երեխաները փնտրեն դրանք:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Օգնեք երեխաներին արտասանել այս ոտանավորի խոսքերը և կատարել գործողությունները.

   Եթե դու շատ-շատ մեծ ես *(ձեռքերով ձգվեք վեր),*
   Քեզ համար տեղ կա եկեղեցում:
   Եթե դու շատ-շատ փոքր ես *(կքանստեք),*
   Քեզ համար տեղ կա եկեղեցում:

   Մեծ *(ձգվեք),*
   Փոքր *(կքանստեք),*
   Մեծ *(ձգվեք),*

Փոքր *(կքանստեք)* —
Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են մեզ բոլորիս:

2. Ասեք հետևյալ ոտանավորը և օգնեք երեխաներին կատարել նշված շարժումները.

Երկնային Հայրը ճանաչում է ինձ

Երկնային Հայրը ինձ ճանաչում է *(ցույց տվեք ինքներդ ձեզ)*
Եվ գիտի ինչ եմ սիրում անել:
Նա գիտի իմ անունը և որտեղ եմ ապրում *(երկու ձեռքերի մատերը միացնելով տանիք պատկերեք):*
Ես էլ գիտեմ, որ նա ինձ է սիրում *(խաչելով ձեռքերը դրեք ուսերի վրա):*

Նա գիտի ինչն է ինձ ուրախացնում (*մատերը դրեք ժպտացող բերանի վրա*):
Նա գիտի, ինչն է ինձ տխրեցնում *(մատերը դրեք տխրություն արտահայտող բերանի վրա):*
Ես գիտեմ, որ նա ինձ օգնել է ուզում *(ցույց տվեք ինքներդ ձեզ),*
Եվ դա է ինձ ուրախացնում:



Հիսուսը մեր սիրող ընկերն է

Սուրբ Հոգին օգնում է ինձ

Դաս
7

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Սուրբ Հոգին օգնում է մեզ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Հովհաննես ԺԴ.16–17; 2 Նեփի 32.5; Մորոնի 10.4–5; և Վարդապետություն և Ուխտեր 39.23; 130.22: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 7:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Վարդապետություն և Ուխտեր:
   բ. Ծանոթ առարկա և մի տոպրակ՝ այն մեջը դնելու համար:
   գ. Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240; 62572); նկար 1-4՝ Առաջին տեսիլքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 403; 62470):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի ձեզ մոտենալ: Նրա ականջին ինչ-որ բան շշնջացեք Սուրբ Հոգու վերաբերյալ, օրինակ՝ «Սուրբ Հոգին օգնում է Երկնային Հորը և Հիսուսին»: Նույնը կրկնեք բոլոր երեխաների հետ (կարող եք նույն բանը ասել բոլորին): Հարցրեք երեխաներին, արդյոք գիտեն, թե ում մասին եք խոսելու այսօր: Բացատրեք, որ դուք խոսելու եք Երկնային Հոր և Հիսուսի օգնական՝ Սուրբ Հոգու մասին:

Ցույց տվեք նկար 1-4՝ Առաջին տեսիլքը: Ուշադրությունը հրավիրեք Երկնային Հոր և Հիսուսի վրա, և բացատրեք, որ նրանք ունեն ձեր մարմնի նման ֆիզիկական մարմիններ: Բացատրեք, որ Սուրբ Հոգին շատ առումներով նման է Երկնային Հորը և Հիսուսին: Նա սիրում է մեզ և օգնում է մեզ: Սակայն նա Երկնային Հոր և Հիսուսի նման ֆիզիկական մարմին չունի: Նա հոգի է, այնպես որ կարող է հանգիստ կերպով մտքեր դնել մեր մտքում և մեզանում երջանկության և հարմարավետության զգացումներ առաջացնել:

Սուրբ Հոգին սփոփում և օգնում է մեզ

- Երբ դուք նեղված կամ տխուր եք, ինչպե՞ս է ձեր մայրիկը կամ հայրիկը սփոփում և հանգստացնում ձեզ:

Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը: Ասեք երեխաներին, որ Հիսուսը գիտեր, որ երբ ինքը մահանա, իր աշակերտները, հետևորդները տխրելու են, և նրանց ասաց, որ կխնդրի Երկնային Հորը, որ Մխիթարիչ ուղարկի, որպեսզի նրանք իրենց այդքան վատ չզգան (տես Հովհաննես ԺԴ.16–17):

Ասեք երեխաներին, որ այդ Մխիթարիչը Սուրբ Հոգին է, և նա կարող է սփոփել նաև մեզ: Բացատրեք, որ երբ մենք տխուր ենք կամ անտրամադիր, Երկնային Հայրը կօգնի մեզ ուղարկելով Սուրբ Հոգուն, որ սփոփի մեզ:

Պատմություն

Բացատրեք, որ երբ մենք օգնության կարիք ունենանք, Սուրբ Հոգին կարող է զգուշացնել և առաջնորդել նաև մեզ: Ձեր բառերով պատմեք Հարոլդ Բ. Լիի մասին հետևյալ պատմությունը, որը դարձավ Եկեղեցու տասնմեկերորդ Նախագահը.

«Ես մոտ ութ տարեկան էի կամ ավելի փոքր, երբ հայրս ինձ տարավ հեռավոր մի ագարակ: Մինչ նա աշխատում էր, ես փորձում էի զբաղվել իմ տարիքի տղային հատուկ զբաղմունքով: Շոգ էր և փոշի, ես խաղացի մինչև հոգնեցի: Ցանկապատի այն կողմը փլված գոմ կար, որն ինձ մոտ հետաքրքրություն առաջացրեց: Իմ մտքում պատկերացրեցի այդ փլված գոմը ամրոց է, և ինձ մոտ ցանկություն առաջացավ հետազոտել այն: Այնպես որ ես մոտեցա ցանկապատին և փորձեցի ցատկել ցանկապատի վրայով: Այդ պահին ես մի ձայն լսեցի, որն ասաց այս կարևոր բանը. «Հարո՛լդ, մի գնա այնտեղ»: Ես նայեցի շուրջս, որ տեսնեմ՝ ով էր խոսում ինձ հետ: Հայրս դաշտի մյուս կողմում էր: Նա չէր կարող տեսնել ինչ եմ ես անում: Իմ տեսադաշտում ոչ ոք չկար: Այդ ժամանակ ես հասկացա, որ ինչ-որ մեկը, որին ես չեմ տեսնում, զգուշացնում էր ինձ, որ չգնամ այնտեղ: Ինչ կար այնտեղ, ես երբեք չեմ իմանա, սակայն ես վաղ հասակից սովորեցի, որ կան էակներ, որոնք թեպետ մեր տեսողական դաշտից դուրս են գտնվում, սակայն նրանք կարող են խոսել մեզ հետ» (in Conference Report, Mexico City Mexico Area Conference 1972, pp. 48–49):

Բացատրեք, որ երբեմն Սուրբ Հոգին շշնջում է բարձրաձայն, ինչպես շշնջաց Նախագահ Լիին, սակայն հաճախ այն մեր մեջ զգացողություն է առաջացնում, թե ինչ պետք է մենք անենք և ինչ պետք է չանենք:

Սուրբ Հոգին օգնում է մեզ իմանալ, թե ինչն է ճիշտ

Բացատրեք, որ Սուրբ Հոգին սիրում է մեզ և օգնում է մեզ ճիշտը ընտրել: Խնդրեք երեխաներին մտածել իրենց կատարած բարի գործերի մասին, օրինակ իրենց ծնողներին հնազանդվելը, մյուսներին օգնելը և իրենց աղոթքներն ասելը:

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ճիշտ բաներ եք անում:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ սխալ բաներ եք անում:

Բացատրեք, որ Սուրբ Հոգին օգնում է մեզ իմանալ, թե ինչն է ճիշտ և ինչը սխալ, մեզ պարգևելով լավ, ջերմ զգացողություն, երբ ճիշտ ենք գործում, և՝ տխուր զգացողություն, երբ սխալ ենք գործում:

Խնդրեք երեխաներին պատմել այն ժամանակների մասին, երբ լավ, ջերմ զգացողություններ են ունեցել, որովհետև ճիշտ ընտրություն են կատարել կամ օգնել են ինչ-որ մեկին: Օգնեք նրանց հասկանալ Սուրբ Հոգու ազդեցությունը:

Երգ

Երեխաների հետ երգեք կամ կարդացեք “Listen, Listen” (*Children’s Songbook,* p. 107):

Լսիր ցածր, հանդարտ ձայնին,
Լսիր, լսիր, ընտրություն կատարելիս:
Նա քեզ միշտ կառաջնորդի:

Սուրբ Հոգին օգնում է մեզ իմանալ, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը իրական են

Բացատրեք, որ Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ իմանալ, երբ ինչ-որ բան ճշմարիտ է կամ իրական: Երեխաներին ցույց տվեք մի տոպրակ՝ մեջը մի ինչ-որ առարկա: Ասեք երեխաներին, որ տոպրակում ինչ-որ բան կա, սակայն ցույց մի տվեք այն:

- Ինչ-որ բան կա՞ այս տոպրակում:

Բացատրեք, որ թեպետ երեխաները չեն կարող տեսնել տոպրակի մեջ գտնվող իրը, նրանք գիտեն, որ դա այնտեղ է, որովհետև դուք ասել եք նրանց այդ մասին: Թեպետ ընդամենը մի քանի մարդիկ են տեսել Երկնային Հորը և Հիսուսին, Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ իմանալ, որ Երկնային Հայրը և Հիսուսն իրական են, և որ նրանք սիրում են մեզ: Բացատրեք, որ այս գիտելիքը կոչվում է վկայություն: Երբեմն մարդիկ իրենց վկայություններն են բերում Եկեղեցու ժողովներին, ասելով, որ իրենք գիտեն, որ Հիսուսն ապրում է: Սուրբ Հոգին օգնել է նրանց իմանալ այդ ճշմարտությունը:

Մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգու պարգևը

Պատմեք մկրտվելու և հաստատվելու ձեր փորձառության մասին: Պատմեք, թե ինչ զգացիք, երբ քահանայություն կրող տղամարդիկ իրենց ձեռքերը դրեցին ձեր գլխին և ձեզ շնորհեցին Սուրբ Հոգու պարգևը:

Բաձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 39.23 մինչև *Սուրբ Հոգին:* Բացատրեք, որ երբ երեխաները ութ տարեկան են և մկրտվում են ու հաստատվում, նրանք կկարողանան ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Սուրբ Հոգու պարգևը կօգնի նրանց պահել մկրտության ժամանակ տված իրենց խոստումները:

Վկայություն

Ձեր երախտագիտությունը հայտնեք Սուրբ Հոգու համար և ասեք երեխաներին, թե ինչպես է Սուրբ Հոգին սփոփել ձեզ և օգնել իմանալ, թե ինչն է ճիշտ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “The Still Small Voice” (*Children’s Songbook,* p. 106) կամ “The Holy Ghost” (*Children’s Songbook,* p. 105):
2. Ցույց տվեք լավ գործեր կատարող մարդկանց նկարներ, օրինակ՝ ովքեր կիսվում են և օգնում միմյանց: Հարցրեք երեխաներին, թե ինչպես են իրենց զգում, երբ լավ գործեր են կատարում: Նկարագրեք լավ և վատ արարքներ ներկայացնող մի քանի իրավիճակներ, օրինակ՝ երեխաները օգնում են իրենց մայրիկին, կռվում են իրենց եղբայրների հետ, կիսվում են իրենց խաղալիքներով և չեն հնազանդվում իրենց ծնողներին: Խնդրեք երեխաներին ժպտալ, երբ լավ արարք եք ներկայացնում, և խոժոռվել, երբ արարքը վատն է:
3. Ցածր ձայնով ասեք. «Ով որ լսում է իմ ձայնը, թող մատը դնի իր քթին: Ով որ լսում է իմ ձայնը, թող ձեռքը դնի իր գլխին»: Շարունակեք նշելով մարմնի այլ մասեր, մինչև որ բոլոր երեխաները կլսեն ձեր ցածր ձայնը: Բացատրեք, որ թեև դուք ցածր էիք խոսում, երբ երեխաները ուշադիր էին, նրանք լսում էին ձեր

ձայնը և հնազանդվում ձեր հրահանգներին: Բացատրեք, որ Սուրբ Հոգին մեզ հետ խոսում է ցածր ձայնով: Եթե մենք ուշադիր լսենք, նա մեզ կարևոր բաներ կասի:

4. Ձեր խոսքերով պատմեք Եկեղեցու չորրորդ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի մասին հետևյալ պատմությունը.

   Մի երեկո Նախագահ Վուդրուֆը, իր կինը և իրենց չորս երեխաները ճամփորդում էին, և կանգ առան գիշերելու իրենց ընկերոջ տանը: Երեք երեխաները քնեցին տանը, իսկ Նախագահ Վուդրուֆը, իր կինը և մի երեխան քնեցին դրսում՝ կառքի մեջ: Նախագահ Վուդրուֆը պատմել է. «Սոր էի մտել անկողին, երբ մի ձայն ինձ ասաց. «Վեր կաց և տեղափոխիր կառքը»: Դա ոչ թե ամպրոպի, կայծակի կամ երկրաշարժի, այլ Աստծո Հոգու, այսինքն Սուրբ Հոգու ցածր, հանդարտ ձայնն էր: . . . Ես վեր կացա և տեղափոխեցի կառքը . . . կանգնեցնելով տան կողքին: Երբ կրկին անկողին էի վերադառնում, նույն Հոգին ինձ ասաց. «Գնա և ջորիներին հեռացրու այդ կաղնու ծառից»: . . . Ես նրանց տեղափոխեցի մատղաշ ծառերի խմբի մոտ և նրանց կապեցի այնտեղ: Որից հետո գնացի քնելու: Կես ժամ անց պտտահողմը պոկեց ծառը, որին կապված էին իմ ջորիները, և հարվածեց գետնին քարշ տալով մոտ հարյուր մետր՝ ճանապարհին ջարդուփշուր անելով երկու ցանկապատերը և գցեց այնտեղ ... որտեղ մեր կառքն էի սկզբում կանգնեցրել: . . . Աստծո Հոգու հայտնությանը հնազանդվելով ես փրկեցի իմ, կնոջս և երեխայիս կյանքը, ինչպես նաև մեր կենդանիներին» (“Leaves from My Journal,” *Millennial Star,* 12 Dec. 1881, pp. 790–91):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Այս դասից մեկ շաբաթ առաջ խնդրեք երեխաների ծնողներին, որ իրենց երեխաներին թույլ տան դասարան բերել մի «հանգստացնող իր»: Դա կարող է լինել մի հատուկ ծածկոց, խաղալիք կամ հատուկ երգ, որ երգում են: Բերեք մի քանի ավել իրեր նրանց համար, ովքեր կմոռանան բերել իրենցը:

   Դասարանում երեխաների հետ խոսեք, թե ինչպես են այդ իրերը օգնում իրենց ապահով և սիրված զգալ: Բացատրեք, որ Երկնային Հոր և Հիսուսի կարևոր օգնականներից մեկը կարող է մեզ ապահովության և սիրված լինելու զգացում պարգևել: Այդ անձնավորությունը երբեմն կոչվում է Մխիթարիչ, որովհետև Երկնային Հայրը ուղարկել է նրան, որ մեզ հետ լինի, երբ մենք տխուր ենք կամ անհանգստացած: Այդ անձնավորությունը Սուրբ Հոգին է՝ մի հրաշալի ընկեր:

2. Երգեք կամ կարդացեք “The Still Small Voice” (*Children’s Songbook,* p. 106) և օգնեք երեխաներին կատարել նշված շարժումները.

   Լսիր, լսիր, *(դրեք ձեռքերի ականջների մոտ):*
   Շշշնջում է Սուրբ Հոգին *(ցուցամատը դրեք շուրթերին):*
   Լսիր, լսիր *(դրեք ձեռքերի ականջների մոտ)*
   Ցածր հանդարտ ձայնին *(դրեք ձեռքը սրտին):*

Ես շնորհակալ եմ օրվա և գիշերվա համար

Դաս
8

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ հետևելով Երկնային Հոր ծրագրին Հիսուս Քրիստոսը ստեղծեց օրը, որպեսզի մենք կարողանանք աշխատել և խաղալ, և գիշերը, որպեսզի մենք հանգստանանք:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Ա.1, 3–5, 14–18; Հելաման 14.1–13; և 3 Նեփի 1.15–23:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Կտրվող նկար 1-1՝ արև; կտրվող նկար 1-2՝ լուսին; Կտրվող նկար 1-3՝ աստղեր (նմանատիպ կտրվող նկարներ կարող եք նաև գտնել Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածու 3-ում):
   գ. Նկար 1-21՝ Սամուել Լամանացին պատի վրա (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 314; 62370):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ասեք երեխաներին, որ դուք մտածում եք մի բանի մասին, որը Երկնային Հայրը պլանավորել է և Հիսուս Քրիստոսը ստեղծել: Խնդրեք երեխաներին կռահել, թե ինչի մասին եք դուք մտածում: Հերթով տվեք հետևյալ հուշումները.

1. Այն մեզ ջերմացնում է:
2. Կլոր է և դեղին:
3. Այն երկնքում է:
4. Երբեմն այն կարծես թաքնվում է ամպերի տակ կամ սարի ետևում:

Երբ երեխաները կկռահեն, որ դա «արևն» է, ցուցադրեք արևի կտրված նկարը:

- Ո՞վ է ստեղծել արևը:

Մենք աշխատում և խաղում ենք ցերեկը

Պատմություն

Երեխաներին պատմեք ցերեկվա և գիշերվա ստեղծման պատմությունը Ծննդոց Ա.1, 3–5-ից, արևի, լուսնի և աստղերի ստեղծման պատմությունը Ծննդոց Ա.14–18-ից:

- Ո՞վ է ստեղծել ցերեկն ու գիշերը:

- Երկնային Հայրը ի՞նչ պատվիրեց, որ Հիսուսը դնի երկնքում, որպեսզի բաժանեն ցերեկը գիշերից:

Ասեք երեխաներին, որ արևը մեզ լույս է տալիս, որպեսզի մենք տեսնենք: Արևը նաև մեզ ջերմացնում է և օգնում է, որ բույսերն աճեն: Մենք չենք կարող ապրել երկրի վրա առանց արևի:

- Ի՞նչ ենք մենք անվանում օրվա այն ժամանակահատվածը, երբ արևը դուրս է եկել: (Ցերեկ:)

Բացատրեք, որ մենք կարող ենք շատ բաներ անել օրվա ընթացքում: Մենք կարող ենք աշխատել, խաղալ և օգնել մյուսներին:

Վարժություն

Խնդրեք երեխաներին ասել, թե ինչ են անում ցերեկը, օրինակ՝ ճաշում են, խաղում են կամ հատակն են ավլում: Խնդրեք նրանց կանգնել և իրենց միտքը գործողությամբ արտահայտել: Ցանկության դեպքում կարող եք որոշ գործողություններ անել նրանց հետ:

- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի օրվա ընթացքում օգնեք ինչ-որ մեկին: (Պատասխանները կարող են ներառել՝ խաղալիքները հավաքել, ամանները լվանալ, փոքր եղբոր կամ քրոջ հետ խաղալ:)

Գիշերը մենք հանգստանում ենք

- Արդյո՞ք մենք միշտ ենք տեսնում արևը:

Բացատրեք, որ ամեն երեկո արևը մայր է մտնում և երկինքը մթնում է: Գիշերը մենք չենք կարող տեսնել արևը:

- Ի՞նչ ենք մենք կոչում օրվա այն մասը, երբ մութ է: (Գիշեր:)
- Ի՞նչ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուսին դնել երկնքում, որ լուսավորի գիշերը: (Լուսին և աստղեր:)

Խնդրեք երեխաներին ցույց տալ լուսնի և աստղերի կտրված նկարները, աստղերը դնելով արևի կողքը:

Վարժություն

Խնդրեք երեխաներին ասել կամ շարժումներով ցույց տալ, թե ինչ են անում գիշերը, օրինակ՝ քնելուց առաջ աղոթում են, պատմություններ են լսում, ատամներն են մաքրում կամ քնում են:

Բացատրեք, որ որոշ մարդիկ, օրինակ բժիշկները, բուժքույրերը և հրշեջները աշխատում են գիշերը, սակայն մեզանից շատերը գիշերը՝ քնում եմ: Շատ կենդանիներ ևս քնում են գիշերը:

- Ինչո՞ւ ենք մենք քնում:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ քունը օգտակար է մեր մարմնի համար, և Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք հոգ տանենք մեր մարմինների համար: Եթե բավարար չափով քնենք, մենք մեզ լավ կզգանք և ավելի առողջ կլինենք: Եթե բավարար չափով չքնենք, հոգնած և թույլ կզգանք:

Եթե ձեր տարածքում եղանակներից կախված օրերի տևողությունը շատ է տարբերվում, բացատրեք, որ տարվա որոշ եղանակների գիշերն ավելի երկար է տևում, իսկ որոշ եղանակների՝ ավելի կարճ է տևում: Մեր ծնողները օգնում են մեզ ասելով, թե երբ պետք է քնենք և երբ արթնանանք ու մեր գործերով զբաղվենք:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և կատարել հետևյալ մատերով խաղը.

Այս փոքր տղան

Այս փոքր տղան գնում և անկողին է մտնում *(բարձրացրեք մի մատը):*
Փափուկ բարձի վրա է գլուխը դնում *(դրեք մատը մյուս ձեռքի ափի վրա):*
Վերմակով տաքուկ ծածկվում *(մյուս մատերով ծածկեք ափի մեջ դրված մատը),*
Եվ այսպես է նա ամեն գիշեր քնում:

Առավոտյան արթնանում և աչքերն է բացում:
Վերմակը արագ մի կողմ է նետում *(բացեք մատը ծածկող չորս մատերը):*
Ոտքի է կանգնում ու հագնվում *(բարձրացրեք մատը),*
Ամեն օրն ուրախ ժպիտով է դիմավորում:

Երկնային Հայրն օգտագործեց ցերեկն ու գիշերը, որպեսզի հայտարարի Հիսուսի ծնունդը

Պատմություն

Ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը ցերեկն ու գիշերը օգտագործել է Հիսուսի ծննդյան մասին պատմելու համար: Ցույց տվեք նկար 1-21՝ Սամուել Լամանացին պատի վրա, և բացատրեք, թե ինչ է տեղի ունենում նկարում: Բացատրեք, որ Սամուել մարգարեն Նեփիացիներին ասում էր, թե ինչ է տեղի ունենալու երկնքում Հիսուսի ծննդյան օրերին: Արևը մայր էր մտնելու, սակայն երկինքը չէր մթնելու: Բացատրեք, որ շատերը չէին հավատում Սամուելին, սակայն նրա ասածներն իրականացան (տես Հելաման 14.1–13 և 3 Նեփի 1.15–23):

Օգնեք երեխաներին հասկանալ, որ Հիսուսի ծնունդը այնքան կարևոր էր, որ հեռու Ամերիկայում, որտեղ Նեփիացիներն ու Լամանցիներն էին ապրում, Երկնային Հայրը Հիսուսի ծննդյան գիշերը վերածեց ցերեկվա:

- Ի՞նչ կարևոր իրադարձության մասին էր Սամուել Լամանացին պատմում մարդկանց:
- Ի՞նչ տեսան Նեփիացիները երկնքում այն գիշեր, երբ Հիսուսը ծնվեց:

Վկայություն

Ձեր վկայությունը բերեք, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ցերեկ և գիշեր ստեղծել, որ մեզ օգնի: Խրախուսեք երեխաներին շնորհակալություն հայտնել Երկնային Հորը ցերեկվա և գիշերվա համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք սպիտակ մեկ թուղթ և սև կամ մուգ կապույտ կես թուղթ: Սպիտակ թղթի մի մասի վրա սոսնձեք մուգ գույնի թուղթը, որը կպատկերի ցերեկը և գիշերը: Թղթից փոքր շրջանակներ կտրեք, որոնք կներկայացնեն արևը և լուսինը, և օգնեք երեխաներին սոսնձել դրանք իրենց ճիշտ տեղերում: Օգտագործեք կպչուն կամ կտրված նկար աստղեր գիշերվա մասում փակցնելու համար: Երեխաների թղթերի վրա գրեք՝ *Ես շնորհակալ եմ ցերեկվա և գիշերվա համար*:
2. Երեխաների հետ երգեք կամ կարդացեք the words to “The World Is So Lovely” (*Children’s Songbook,* p. 233), “Because God Loves Me” (*Children’s Songbook,* p. 234), կամ “The World Is So Big” երգի երկրորդ տունը (*Children’s Songbook,*

p. 235):”The World Is So Big” երգի համար կատարեք ստորև նշված շարժումները.

Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը *(ձեռքերով մեծ շրջան կազմեք),*
Այնտեղ Աստծո ստեղծածներն են ապրում:
Ողջ գիշեր աստղերն են պայծառ փայլում *(ուղղեք ձեռքերը և մատները շարժեք),*
Ցերեկը արևն է պայծառ ջերմացնում *(ձեռքերով մեծ շրջան կազմեք):*
Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը:
Աստված բոլորիս սիրում և լիուլի օրհնում է *(ձեռքերով ամուր գրկեք ինքներդ ձեզ):*

3. Երգեք “Fun to Do” (*Children’s Songbook,* p. 253), ուտանավորի համար օգտագործելով երեխաների առաջարկները: Յուրաքանչյուր տունը երգելուց առաջ, հարցրեք երեխաներին, թե տվյալ գործողությունը, որ նրանք առաջարկեցին, կատարվում է ցերեկը, թե գիշերը: Երգելիս խոսքերին համապատասխան շարժումներ կատարեք:

4. Պատմություն հորինեք մի եղբոր և քրոջ մասին, ովքեր օրվա վերջում խաղում էին դրսում: Օգտագործեք ձեր դասարանի երեխաներին ծանոթ անուններ և իրավիճակներ: Նկարագրեք, թե ինչ արեցին երեխաներն օրվա վերջում: Ներկայացրեք այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են՝ արևը սկսեց մայր մտնել, մայրիկը նրանց տուն կանչեց, և երեխաներն անհրաժեշտ գործերը կատարեցին, մաքրեցին, պատրաստվեցին ճաշին, օգնեցին ամանները լվանալ, պատրաստվեցին քնելու, քնելուց առաջ պատմություն լսեցին և նախքան քնելը աղոթեցին: Նկարագրեք, ինչպես են այդ քույրը և եղբայրը, մյուս մարդիկ, թռչունները, միջատները և կենդանիները հանգստանում և գնում քնելու:

   Օգնեք երեխաներին հասկանալ, որ գիշերը պետք է փակենք աչքերը և քնենք, որպեսզի մենք մեծանանք առողջ և ուժեղ: Սա մեզ համար Երկնային Հոր ծրագրի մի մասն է:

   Պատմությունը ներկայացրեք կտրած նկարներով, կամ պատմության մասերը հանձնարարեք երեխաներին և թող նրանք դերերով կատարեն այն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցուցադրեք արևի, լուսնի և աստղերի կտրված նկարները: Տվեք հետևյալ հարցերը.

   - Որտե՞ղ ենք տեսնում այս ամենը:
   - Մենք գիշերը տեսնո՞ւմ ենք արև:
   - Մենք ցերեկը տեսնո՞ւմ ենք աստղեր:

   Բացատրեք, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուսին արև ստեղծել, որ լույս ու ջերմություն ունենանք ցերեկը, և լուսին ու աստղեր ստեղծել, որ մեզ լույս տան գիշերը:

2. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, մինչ դուք կարտասանեք խոսքերը.

   Աստված ստեղծեց

   Աստված ստեղծեց լուսինը *(ձեռքերով կլորակ արեք)*
   Եվ կայծկլտացող աստղերը *(բացեք և փակեք ձեռքերը),*
   Եվ դրանք երկնքում դրեց *(ձգվեք)*:
   Նա ստեղծեց արևը *(ձեռքերը կլորացնելով միացրեք գլխավերևում),*
   Ծառերը *(ձեռքերը պարզեք վեր)*
   Եվ ծաղիկները *(ձեռքերի ափերը կլորացրեք բաժակի նման),*
   Ծիտիկներին, որ թռչում են շուրջբոլորը *(ձեռքերով թափահարեք):*

   (From *Fascinating Finger Fun* by Eleanor Doan. © 1951. Օգտագործվել է թույլտվությամբ:)

3. Երգեք կամ կարդացեք “I Am like a Star” (*Children’s Songbook,* p. 163) կամ “Jesus Wants Me for a Sunbeam” (*Children’s Songbook,* p. 60):

Դաս 9

Ես շնորհակալ եմ ջրի համար

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի երախտապարտ լինել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին ջրի համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Ա.9–10; Ելից ժէ.1–6; և Մատթեոս Գ.13–17:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Հնարավորության դեպքում, ձեռք բերեք ջրային տարբեր պատկերներով, օրինակ՝ լճերի, գետերի կամ օվկիանոսի նկարներ:
   գ. Նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը (62021); նկար 1-11՝ Մկրտվող տղան (62018); նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 208; 62133).
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի գալ դասարանի առաջ: Նրա ականջին շշնջացեք մի գործողություն, որի համար անհրաժեշտ է ջուր, օրինակ՝ ատամները խոզանակով մաքրելը, ձեռքերը լվանալը կամ բույսերը ջրելը: Թող այդ երեխան ցույց տա այդ գործողությունը, իսկ մյուս երեխաները կռահեն, թե ինչ է նա անում: (Անհրաժեշտության դեպքում, երեխաներին ցույց տվեք, թե ինչպես կատարել յուրաքանչյուր գործողությունը:) Թող բոլոր երեխաները հերթով մի գործողություն կատարեն:

Նշեք, որ կատարված յուրաքանչյուր գործողության համար հարկավոր է ջուր: Ասեք երեխաներին, որ մենք պետք է շնորհակալ լինենք Երկնային Հորը և Հիսուսին մեզ ջուր տալու համար:

Ջուրը արարման կարևոր մասն էր

Բարձրաձայն կարդացեք և բացատրեք Ծննդոց Ա.9–10:

- Ինչո՞ւ է ջուրն այդքան կարևոր մեզ համար:
- Ինչպե՞ս ենք մենք ջուր ստանում:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ ջուրը գալիս է տարբեր աղբյուրներից, ներառյալ՝ լճերը, գետերը, օվկիանոսները, անձրևը և ձյունը: Բացատրեք, որ ձյունը և սառույցը սառած ջուրն են: Ցույց տվեք ջրի նկարները, որ ձեռք եք բերել և խոսեք, թե որտեղից է գալիս ջուրը ձեր տարածքում:

Ասեք երեխաներին, որ դուք շնորհակալ եք, որ ջուրը Երկնային Հոր ծրագրի մի մասն է:

Երգ

Երգեք “Fun to Do” (*Children’s Songbook,* p. 253)։ Երգի համար խնդրեք երեխաներին ասել՝ ինչպես են ջուրն օգտագործում, օրինակ՝ շոր են լվանում, լողանում են, կամ ատամներն են խոզանակով մաքրում։ Երգի համար խոսքերին համապատասխան շարժումներ կատարեք։

Ուրախությամբ եմ շոր լվանում,
Շոր լվանում, լվանում, լվանում։
Ուրախությամբ եմ շոր լվանում,
Լվանում, լվանում, լվանում։

(© 1963 by D. G. Heath և Company. Տպագրվել է թույլտվությամբ։)

Ջուրը մեզ անհրաժեշտ է շատ բաների համար

- Ինչո՞ւ է մեզ ջուր անհրաժեշտ։ Ինչի՞ համար ենք մենք այն օգտագործում։

Բացատրեք, որ բոլոր կենդանի էակներին, ներառյալ մարդկանց, կենդանիներին և բույսերին, ջուր է անհրաժեշտ ապրելու համար։ Հնարավորության դեպքում, յուրաքանչյուր երեխայի տվեք փոքր բաժակով ջուր, որ խմի։ Խոսեք այն մասին, թե ինչպես մեր մարմինները չեն կարող ապրել առանց ջրի։

- Ինչպե՞ս են կենդանիներն ու բույսերը ստանում իրենց համար անհրաժեշտ ջուրը։

Բացատրեք, որ մենք նաև ջրի կարիք ունենք այլ բաներ անելու, օրինակ լվացվելու և ճաշ պատրաստելու համար։

Հիսուսը Մովսեսին և Իսրայելցիներին ջուր տվեց անապատում

Պատմություն

Պատմեք ինչպես է Մովսեսը ջուր ստանում ժայռից պատմությունը, որը տրված է Ելից ժէ.1–6։ Բացատրեք, որ մարդիկ տոթ, չոր անապատում էին և այնտեղ ջուր չկար։

- Ի՞նչ տեղի կունենար, եթե Իսրայելցիները ջուր չստանային։
- Երբևէ շատ ծարավ եղե՞լ եք։ Ինչպե՞ս եք զգում, երբ ծարավ ժամանակ սառը ջուր եք ըմպում։

Ջուրը կարևոր է Եկեղեցում

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին։ Պատմեք Հիսուսի մկրտության պատմությունը, ինչպես տրված է Մատթեոս Գ.13–17-ում

- Որտե՞ղ է Հիսուսը մկրտվել։
- Ինչպե՞ս է Հիսուսը մկրտվել։

Ցույց տվեք նկար 1-11՝ Մկրտվող տղան։

- Որտե՞ղ ենք մենք մկրտվում, երբ ութ տարեկան ենք դառնում։
- Երբևէ տեսե՞լ եք ինչ-որ մեկին մկրտվելիս։

Թող երեխաները խոսեն, ինչ տեղի ունեցավ այդ մկրտության ժամանակ։ Բացատրեք, որ մենք պետք է ջուր ունենանք մկրտվելու համար։

Ցույց տվեք նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը։

- Հաղորդության ժողովին ինչպե՞ս ենք ջուրն օգտագործում։

Ձեր երախտագիտությունը հայտնեք ջրի համար, որ կարողանում ենք մկրտվել և հաղորդությունը ընդունել:

Վկայություն

Վկայություն բերեք Երկնային Հոր Ծրագրի և մեր հանդեպ նրա սիրո մասին, որ մեզ ջուր է տվել: Ասեք երեխաներին, որ դուք երախտապարտ եք Երկնային Հորը և Հիսուսին այս հրաշալի պարգևի համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երեխաների հետ արտասանեք հետևյալ ոտանավորը՝ կատարելով նշված շարժումները.

   Անձրևի կաթիլները

   Երբ ծաղիկներն են ծարավում
   Եվ տերևներն են չորանում *(բացեք ձեռքերը և տարածեք վեր),*
   Ուրախ փոքրիկ անձրևի կաթիլները
   Երկնքից ցած են իջնում *(ձեռքերն իջեցրեք ներքև, մատերը շարժելով)*
   Եվ ուրախ խաղով ամենուր ցողում *(մատերը տարբեր կողմեր շարժեք):*
   Իսկ երբ արևի ջերմ ճառագայթները *(գլխավերևում ձեռքերով շրջան կազմեք)*
   Դուրս են շողում,
   Նրանք արագ են անհետանում *(մատերը մեջքի ետևում պահեք):*

2. Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Rain Is Falling All Around” (*Children’s Songbook,* p. 241) կամ “‘Give,’ Said the Little Stream” (*Children’s Songbook,* p. 236):

3. Խնդրեք երեխաներին նկարել ջրի նկար, օրինակ՝ լիճ, գետ կամ անձրևի կաթիլներ: Երեխաների թղթերի վրա գրեք՝ *Ես շնորհակալ եմ ջրի համար:*

4. Խնդրեք երեխաներին ասել կամ մնջախաղով ներկայացնել ինչպես են խաղում ջրում կամ ջրով, օրինակ՝ լողանում են, չմուշկներով սահում են, ձմեռպապ են սարքում կամ ջրափոսերի մեջ չփչփացնում են:

5. Օգնեք երեխաներին հասկանալ, որ ջուրն օգնում է մեզ մաքուր լինել: Թող մնջախաղով ցույց տան մաքրելու գործողություններ, որի ժամանակ ջուր է օգտագործվում, օրինակ՝ շորերը լվանալը կամ ձեռքերը լվանալը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Կատարեք մի քանի կամ բոլոր տրված վարժությունները օգնելով երեխաներին սովորել, թե որքան տարբեր եղանակներով ենք օգտագործում ջուրը.

   ա. Յուրաքանչյուր երեխայի տվեք, որ մի փոքր ջուր խմի: Երբ երեխաները խմում են, բացատրեք, որ ջուրը երկրի համար Երկնային Հոր Ծրագրի մի մասն է: Ծարավելիս մենք ջուր ենք խմում:

   բ. Մի փոքր ջուր լցրեք պնակի մեջ և օգնեք, որ երեխաները լվանան իրենց ձեռքերը: Հիշեցրեք երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը Ծրագրել

են, որ մենք ջուր ունենանք: Բացատրեք, որ մենք ջուր ենք օգտագործում տարբեր բաներ լվանալու համար:

գ. Հնարավորության դեպքում, տարեք երեխաներին դուրս և թող յուրաքանչյուրը մի բույս ջրի: Կամ բույս բերեք դասարան և թող յուրաքանչյուր երեխա մի փոքր ջրի բույսը: Բացատրեք, որ բույսերին անհրաժեշտ է ջուր՝ ապրելու և աճելու համար:

2. Կատարեք հետևյալ գործողությունները, երբ երեխաները ներկայացնում են, թե իբր անձրևում է—որը սկզբում կամաց է, իսկ հետո աստիճանաբար՝ ուժեղանում է:

ա. Թեթև թփթփացրեք մատերի ծայրերով:
բ. Թեթև թփթփացրեք ձեռքերով:
գ. Թեթև թփթփացրեք ծնկներով և ապա ձեռքերով, հաջորդաբար փոփոխելով ձեռքերը և ծնկները:
դ. Թեթև դոփեք ոտքերով:

Դաս
10

Ես շնորհակալ եմ ծառերի, բույսերի և ծաղիկների համար

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի երախտապարտ լինել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին ծառերի, բույսերի և ծաղիկների համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Ա.11–13:
2. Միրգ, բանջարեղեն կամ մի փոքր ճյուղ դրեք կտորից կամ թղթից տոպրակի մեջ:
3. Պատրաստեք մրգերի, բանջարեղենի կամ հացի փոքր չափաբաժիններ: Ծնողներից պարզեք, թե երեխաները ինչ ուտելիքի հանդեպ են ալերգիկ:
4. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ.
   բ. Հնարավորության դեպքում, ձեռք բերեք ձեր տեղանքի ծառերի, բույսերի և ծաղիկների նկարներ, տնից բերեք մի քանի փայտե առարկաներ, օրինակ՝ մատիտ, գդալ և պնակ:
   գ. Կտրվող նկար 1-4՝ Ծաղիկներ (նմանատիպ կտրվող նկարներ կարող եք նաև գտնել Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածու 3-ում):
   դ. Նկար 1-22՝ Ծաղկած ծառ, նկար 1-23՝ Ծիտիկներով բույն:
5. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Հերթով փոխանցեք մրգով, բանջարեղենով կամ ճյուղով փակ տոպրակը, որ երեխաները չկարողանան տեսնել ներսը: Խնդրեք երեխաներին շոշափել տոպրակը և զուշակել, թե ինչ է դրանում: Ասեք նրանց, որ բարձրաձայն չասեն, մինչև որ բոլորը հերթով կշոշափեն տոպրակը: Այնուհետև թող երեխաները ասեն, թե իրենց կարծիքով ինչ է տոպրակում: Հանեք այդ իրը տոպրակից և խոսեք դրա տեսքի և օգտակարության մասին:

Ծառերը, բույսերը և ծաղիկները երկիրը դարձնում են ապրելու համար գեղեցիկ վայր

Հիշեցրեք երեխաներին, որ ամեն ինչ երկրի վրա ստեղծվել է Երկնային Հոր ծրագրով: Արարման երրորդ օրը Հիսուսը ստեղծեց ծառեր, բույսեր և ծաղիկներ (տես Ծննդոց Ա.11–13): Բացատրեք, որ Երկնային Հայր և Հիսուսը ցանկանում էին երկիրը գեղեցկացնել ծառերով, բույսերով և ծաղիկներով:

Ցույց տվեք ծաղիկների կտրված նկարը և ծառերի, բույսերի կամ ծաղիկների ցանկացած նկար, որ կկարողանաք ձեռք բերել: Թող երեխաները խոսեն ծառերի, բույսերի կամ ծաղիկների հետ ունեցած իրենց փորձառությունների մասին:

Պատմություն

Մի պատմություն պատմեք, որն ուսուցանում է երեխաներին, որ ծառերը, բույսերը և ծաղիկները ապրելու համար երկիրը գեղեցիկ վայր են դարձնում: Խոսեք այն գեղեցիկ բույսերի մասին, որոնք աճում են ձեր բնակավայրում: Եթե կիրառելի է ձեր տարածքի համար, կարող եք օգտագործել նկար 1-22՝ Ծաղկած ծառ, և հետևյալ մտքերը.

Քելին սիրելի ծառ ունի, որի տակ խաղում է: Մի առավոտ մայրիկը նրան արթնացնում է և ասում, որ անակնկալ ունի Քելիի համար: Քելիի սիրելի ծառը ծածված է ադիբուդիի նման գեղեցիկ սպիտակ ծաղիկներով: Քելին հարցնում է, ինչպես է ադիբուդի աճել իր սիրելի ծառի վրա, իսկ մայրիկը բացատրում է ծաղկելու կարևորության մասին:

Երգ

Խնդրեք երեխաներին կանգնել և երգել “Popcorn Popping” (*Children’s Songbook,* p. 242), կատարելով ձեռքերով գործողություններ՝ խոսքերին համապատասխան: Բացատրեք, որ գարնանը ծիրանենիները ծաղկում են սպիտակ ծաղիկներով, որոնք ադիբուդիի են նման:

Պատուհանից նայում, և ի՞նչ եմ տեսնում,
Ծիրանի ծառի վրա ադիբուդի է աճել:
Գարունը գեղեցիկ անակնկալ է բերել,
Իմ աչքի առաջ ծառն է ծաղկել:
Ադիբուդին հոտավետ կարող եմ
Պոկել և հյուրասիրել,
Իրականում այդպես չէ, բայց ասես՝
Ծիրանի ծառն ադիբուդիով է ծածկվել:

Բացատրեք, որ որոշ ծաղիկներ աճում են ծառերին, որոշ ծաղիկներ աճում են թփերի և ողկույզների վրա, որոշ ծաղիկներ հողից են բուսնում: Խնդրեք երեխաներին պատմել իրենց տեսած ծաղիկների մասին:

- Ինչպե՞ս ենք օգտագործում ծաղիկները մեր աշխարհը գեղեցկացնելու համար: (Մենք տնկում ենք ծաղիկները պարտեզում, փնջեր ենք անում, և մեր մազերի կամ զգեստի վրա ենք դնում:)
- Ինչո՞ւ ենք մենք ծաղիկներ նվիրում: (Հատուկ առիթներով և մարդկանց ուրախացնելու համար:)

Բույսերը և ծառերը անհրաժեշտ են մեզ ապրելու համար

Պատմություն

Բացատրեք, որ բույսերն ու ծառերը անհրաժեշտ են մեզ ապրելու համար: Ցույց տվեք նկար 1-22, Ծաղկած ծառ, և պատմեք ծառերի տարբեր կիրառությունների մասին: Օգտագործեք հետևյալ մտքերը կամ խոսեք, թե էլ ինչի համար են մարդիկ օգտագործում ծառերը.

Նախ թռչունները ծառերն օգտագործում են որպես իրենց տուն: Նրանք զգուշորեն բույն են հյուսում, և մայր թռչունը ձվեր է դնում: (Ցույց տվեք նկար 1-23՝ Ծիտիկներով բույն:) Երբ ծիտիկները դուրս են գալիս ձվերից, ծառը լավ տուն է դառնում նրանց համար: Այն պաշտպանում է նրանց կիզիչ արևից, անձրևից և ներքևում գտնվող կենդանիներից, որոնք կարող են վնասել նրանց: Ծառը նաև

միրգ է տալիս մոտակայքում ապրող ընտանիքին: Երեխաները խաղում են ծառի ստվերում և հաստ ճյուղից ճոճանակ են կապում: Երբ ծառի մի մասը չորանում է, ընտանիքը կտրում է այն և գցում վառարանի մեջ՝ տունը տաքացնելու համար:

- Ինչո՞ւ են ծառերը կարևոր մեզ համար: (Նրանք միրգ, փայտ, ստվեր և խաղալու տեղ են ապահովում:)

Ցույց տվեք ձեր տնից բերված կամ դասարանում գտնվող իրեր, որոնք փայտից են պատրաստված, և խոսեք փայտի տարբեր կիրառումների մասին:

- Փայտից պատրաստված ուրիշ ի՞նչ իրեր գիտեք:

Բացատրեք, որ մենք նաև բույսերն ենք տարբեր եղանակներով օգտագործում: Մեզ համար ամենակարևորն այն է, որ բույսերը սննունդ են հանդիսանում մեզ համար:

- Ինչպիսի՞ բույսեր ենք մենք ուտում:

Եթե ձեռքի տակ ունեք, ապա ցույց տվեք տեղական նկարներ, որտեղ պատկերված են բույսեր, որ ուտելու համար են օգտագործվում:

Վարժություն

Երեխաների հետ խոսեք ձեր տարածքում աճող հատիկների, մրգերի և բանջարեղենների մասին: Բացատրեք, որ հատիկներից հիմնականում պատրաստում են հաց և շիլա: Խնդրեք յուրաքանչյուր երեխայի ասել, թե որն է իր սիրելի ուտելիքը, որը պատրաստվում է բանջարեղենից: Թող երեխաները փորձեն ձեր բերած մրգերից, բանջարեղենից կամ հացից: Նրանց պատմեք այն բույսի կամ ծառի մասին, որի վրա աճում է այն:

Բացատրեք, որ Երկնային Հայրը պատվիրել էր Հիսուսին ստեղծել բազմազան բույսեր և ծառեր, որպեսզի մենք լավ ու բավարար սննդամթերք ունենայինք:

- Ինչպե՞ս կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը մեր ուտելիքի համար: (Հիշելով, որ պետք է նախքան ուտելը օրհնություն խնդրել ուտելիքի համար:)

Վկայություն

Կիսվեք ձեր վկայությամբ մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Երկնային Հոր և Հիսուսի տածած սիրո մասին: Հիշեցրեք երեխաներին, որ ամեն օր պետք է հիշեն այդ սիրո մասին, երբ տեսնում են գեղեցիկ ծառեր, բույսեր և ծաղիկներ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Բոլոր երեխաների համար բերեք սերմեր (օրինակ՝ ծաղիկի սերմեր, լոբի կամ ցորեն) և հողով լի թղթե բաժակ, որ նրանք տանեն տուն: Երեխաներին ցույց տվեք, թե ինչպես պետք է ցանեն սերմը, և նրանց հիշեցրեք, որ անհրաժեշտ է ջուր և արևի լույս, որպեսզի սերմերն աճեն:
2. Խնդրեք երեխաներին ձեզանից հետո կրկնել “Little Seeds Lie Fast Asleep” երգի խոսքերը (*Children’s Songbook*, p. 243): Այնուհետև խնդրեք երեխաներին ձևացնել իբր իրենք փոքր սերմեր են, որոնք զարթնում են և ձգվում են, մինչ դուք մեկ անգամ ևս երգում եք կամ կարդում եք երգի բառերը:

3. Գունավոր թթից կտրեք թերթիկներ, տերևներ և ցողուններ, և թող յուրաքանչյուր երեխա մեկ այլ թղթի վրա դրանք սոսնձելով ստանա ծաղիկ: Այդ թղթերի վրա վերևում գրեք *Ես շնորհակալ եմ գեղեցիկ ծաղիկների համար:*

4. Բերեք միրգ կամ բանջարեղեն, որն իր մեջ սերմեր ունի: Ասեք երեխաներին, որ ներսում անակընկալ կա: Միգը կամ բանջարեղենը կտրեք այնպես, որ երեխաները տեսնեն սերմերը: Բացատրեք, որ երբ սերմերը տնկվում են և ջրվում, արևի լույսի ներքո նրանք աճում են և ավելի շատ պտուղ տալիս:

5. Երեխաներին տարեք բնության գիրքը, որպեսզի քայլեն և նայեն տարբեր տեսակի բույսերին: Եթե եղենակը թույլ չի տալիս, երեխաները կարող են պատուհանից դուրս նայել և թող հերթով ասեն, թե ինչ բույսեր են տեսնում: Կարող եք նաև բացատրել, թե եղանակային փոփոխություններն ինչ ազդեցություն են թողնում բույսերի և ծառերի վրա:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցույց տվեք նկար 1-22՝ Ծաղկած ծառ: Ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ստեղծել բույսեր և ծառեր (տես Ծննդոց Ա.11–13): Բացատրեք, որ ծառերից մենք փայտ և միրգ ենք ստանում: Բույսերից մենք միրգ և բանջարեղեն ենք ստանում:

2. Բերեք բույս կամ բույսի մի մաս (օրինակ՝ ծաղիկ կամ որոշ տերևներ) որ երեխաները տեսնեն, զգան և հոտ քաշեն: Թող յուրաքանչյուր երեխա շոշափի կամ բռնի այդ բույսը: Նշեք, թե ինչ գույն կամ հոտ ունի, կամ որքան գեղեցիկ է այն: Ձեր երախտագիտությունը հայտնեք բույսերի, ծաղիկների և ծառերի համար:

3. Արտասանեք հետևյալ ոտանավորը, ցույց տվեք շարժումները: Ապա խնդրեք երեխաներին ձեզ հետ կատարել շարժումները, իսկ դուք միևնույն ժամանակ կրկին արտասանեք ոտանավորը:

   Ես փորում եմ

   Ես փորում եմ ու փորում, *(կատարեք փորելու շարժումներ),*
   Եվ ապա սերմեր եմ ցանում *(կռացեք և ցույց տվեք իբր բույսի սերմեր եք ցանում):*
   Ես փոցխում եմ ու փոցխում *(փոցխելու շարժումներ կատարեք),*
   Եվ ապա մոլախոտեր հանում *(կռացեք և կատարեք քաշելու շարժումներ):*
   Արևը պայծառ փայլում է *(ձեռքերով շրջան կազմեք),*
   Անձրևը կաթկթում է *(ձեռքերը իջեցրեք՝ մատերը շարժելով),*
   Եվ հենց իմ աչքի առաջ,
   Սերմերն աճում են *(ձախ ձեռքի մատերը անցկացրեք աջ ձեռքի մատերի միջով):*

4. Երեխաների հետ երգեք “In the Leafy Treetops” (*Children’s Songbook,* p. 240):

Դաս
11

Ես շնորհակալ եմ ձկների համար

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի երախտապարտ լինել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին ձկների և ջրային այլ կենդանիների համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Ա.20–23; Հովնան Հովնան Ա–Գ; Մատթեոս ԺԴ.15–21; և Ղուկաս Ե.1–11:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Թղթե ձուկ (տես օրինակը դասի վերջում):
   գ. «Ձկնորսական կարթ»—ձող որին ամրացված է թել և թելի ծայրին ամրացված թղթի սեղմիչ, կպչուն ժապավենի մի կտոր կամ մագնիս: (Այս կարթը պահեք հետագայում դասերին օգտագործելու համար:)
   դ. Տարա թղթե ձկները պահելու համար:
   ե. Հնարավորության դեպքում ձեռք բերեք ձկների կամ ջրային այլ կենդանիների նկարներ:
   զ. Կտրվող նկար 1-5՝ ձուկ (նմանատիպ կտրվող նկարներ կարող եք նաև գտնել Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածու 4-ում):
   է. Նկար 1-1՝ Աշխարհը (62196); նկար 1-24՝ Հիսուսը և ձկնորսները (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 210; 62138); նկար 1-25՝ Ձուկ; նկար 1-26՝ Գորտ; նկար 1-27՝ Կրիա:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Խնդրեք երեխաներին ձևացնել իբր կանգնել են կամրջի վրա և նայում են գետին կամ լճին:

- Ի՞նչ եք տեսնում նայելով ջրի մեջ:

Խնդրեք երեխաներին կանգնել և ձևացնել իբր ձկան նման լողում են ջրում:

Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ստեղծել ձկներ և ջրային այլ կենդանիներ

Ցույց տվեք նկար 1-1՝ Աշխարհը, և վերանայեք ուրիշ ինչ էր Երկնային Հայրը պատվիրել Հիսուսին ստեղծել, որոնց մասին քննարկել եք նախորդ դասերին: Ասեք երեխաներին, որ Հիսուսը նաև ստեղծել է ձուկ (տես Ծննդոց Ա.20–23): Ձկները Երկնային Հոր ծրագրի մի մասն էր երկրի համար: Ցույց տվեք նկար 1-25՝ Ձուկ, և խոսեք այն մասին, թե որտեղ են ձկներն ապրում:

- Երբևէ ձուկ տեսե՞լ եք:

Թող երեխաները խոսեն իրենց տեսած ձկների մասին:

Ցույց տվեք կտրվող նկար 1-5 և ձեր գտած ձկների այլ նկարները: Խոսեք ձկների տարբեր տեսակների մասին, օրինակ՝ ոսկե ձկնիկի, իշխանի, թառափի, շնաձկների կամ դասարանի երեխաներին ծանոթ ձկների մասին:

- Ձկների հետ ուրիշ ի՞նչ կենդանիներ են ապրում ջրում:

Ցույց տվեք նկար 1-26՝ Գորտ, և նկար 1-27՝ Կրիա: Խոսեք գորտերի և կրիաների մասին և որտեղ են նրանք ապրում: Սաև խոսեք կետերի, խեցգետինների, փոկերի և այլ ջրային կենդանիների մասին: Բացատրեք, որ որոշ ջրային կենդանիներ ապրում են օվկիանոսներում, որոշները՝ լճերում և գետերում:

Վարժություն

Օգնեք յուրաքանչյուր երեխայի մտածել մի ջրային կենդանու մասին և թող փորձի դրա պես քայլել, թռչկոտել կամ լողալ:

Պատմություն

Ցույց տվեք Աստվածաշունչը և բացատրեք, որ մենք կարող ենք ձկների մասին կարդալ սուրբ գրություններում: Պատմեք Հովնանի պատմությունը, ինչպես տրված է Հովնան Ա–Գ: Բացատրեք, որ Հիսուսը պատրաստել էր մի մեծ ձկան, որ կուլ տա Հովնանին, որ Հովնանը չխեղդվի: Հիսուսը աշխատանք էր պատրաստել Հովնանի համար կատարելու: Պատմությունը պատմելիս կարող եք բարձրաձայն կարդալ մեկ կամ երկու հատված, օրինակ՝ Հովնան Ա.17 կամ Հովնան Բ.1: (Հատվածը բարձրաձայն կարդալիս բացատրեք, որ Հիսուսին երբեմն կոչում են «Տեր»:)

- Ո՞վ ուղարկեց մեծ ձկանը, որ կուլ տա Հովնանին: (Տես Հովնան Ա.17:)
- Ի՞նչ արեց Հովնանը, երբ ձուկը կուլ տվեց նրան: (Տես Հովնան Բ.1:)
- Ի՞նչ արեց Հովնանը, երբ նա դուրս եկավ ձկան միջից: (Տես Հովնան Գ.1–3:)
- Արդյո՞ք մարդիկ հավատացին Հովնանին և ապաշխարեցին: (Տես Հովնան Գ.5, 10:)

Ասեք երեխաներին, որ որոշ ձկներ շատ մեծ են, ինչպես այն ձուկը, որը կուլ տվեց Հովնանին, իսկ որոշ ձկներ էլ այնքան փոքր են, որ կարող են ապրել ապակե փոքր տարայի մեջ:

Վարժություն

Օգնեք երեխաներին կատարել մատերով հետևյալ խաղը.

Ոսկե ձկնիկը

Ոտքեր չունի իմ սիրելի ոսկե ձկնիկը *(ձեռքով հպվեք ոտքերին):*
Նա անձայն լող է տալիս և այսուայնտեղ խփում իր քիթը *(մատով ցույց տվեք քիթը):*
Նա չի կարող խաղալ ինձ հետ, ոչ էլ ես կարող եմ լողանալ *(կատարեք լողանալու շարժումներ):*
Իսկ երբ ես ասում եմ՝ «Դուրս արի խաղանք»,
Նա կարծես ասում է՝ «Դու արի խաղանք» *(ձեռքով կատարեք «ինձ մոտ արի» շարժումը):*

Պատմություն

Կրկին ցույց տվեք Աստվածաշունչը, երբ պատմեք Սիմոն Պետրոսի պատմությունը, որը տրված է Ղուկաս Ե.1–11:

Հարմար պահին ցույց տվեք նկար 1-24՝ Հիսուսը և ձկնորսները:

- Ինչո՞ւ Հիսուսը մտավ Սիմոն Պետրոսի նավը: (Տես Ղուկաս Ե.3:)
- Ի՞նչ Հիսուսը պատվիրեց Սիմոն Պետրոսին անել: (Տես Ղուկաս Ե.4:)
- Ի՞նչ Սիմոն Պետրոսը բռնեց իր ցանցով: (Տես Ղուկաս Ե.6:)

Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ստեղծել ձկներ և ջրային կենդանիներ մեր օգտագործման համար

Բացատրեք, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուսին ստեղծել ձկներ և ջրային կենդանիներ, որոնք կարող էինք օգտագործել սննդի և այլ նպատակներով:

Պատմություն

Կրկին անդրադառնալով Աստվածաշնչին, պատմեք պատմությունը, որը գտնվում է Մատթեոս ԺԴ.15–21-ում: Պատմությունը պատմելիս կարող եք բարձրաձայն կարդալ մեկ կամ երկու հատված, օրինակ Մատթեոս ԺԴ.16–17-ը:

- Ի՞նչ արեց Հիսուսը, երբ մարդիկ քաղցած էին: (Տես Մատթեոս ԺԴ.15–16:)
- Ինչո՞վ կերակրեց մարդկանց Հիսուսը: (Տես Մատթեոս ԺԴ.19:)

Վարժություն

Դասարանին ցույց տվեք ձեր պատրաստած ձկնորսական կարթը, և երեխաներից մեկին կանչեք մոտենալ և ձուկ բռնել: Մի քանի կտրված-նկար ձկներ գցեք տարայի մեջ և, երբ երեխան կախի թելը տարայի վրա, ձուկը ամրացրեք թղթի սեղմակին, կպչուն ժապավենին կամ մագնիսին, և թող երեխան այն դուրս քաշի: Թող բոլոր երեխաները հերթով ձուկ որսան:

Թող երեխաները պատմեն այն մասին, որ ձուկ են որսացել կամ ձուկ են կերել:

Վկայություն

Ձեր երախտագիտությունը հայտնեք ձկների և ջրային կենդանիների համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Թող երեխաները գունավորեն թղթե ձուկը, որ որսացել էին ձուկ որսալու վարժության մեջ (ցանկության դեպքում կրկնեք այդ վարժությունը): Յուրաքանչյուր երեխայի ձկան ետևում գրեք՝ *Ես շնորհակալ եմ ձկան համար:*
2. Խնդրեք երեխաներին կիսաշրջանով նստել: Նրանց դիմաց հատակին դրեք ձուկը, որ նրանք գունավորել էին: Միասին ասեք հետևյալ երկտողը.

   Փոքրիկ ձկնի՛կ առվակում,
   Առանց կարթ եմ քեզ որսում:

   Կանչեք մի երեխայի, որ իր ձուկն ընտրի՝ օգտագործելով ձկնորսական կարթը կամ ցույց տալով ձուկը: Այդ երեխան նշելով ձկան գույնը ասում է. «Ես բռնեցի _____ ձուկ»: Եվ երեխան պետք է վերցնի այդ ձուկը, որ իր հետ տուն տանի: Շարունակեք, մինչև որ յուրաքանչյուր երեխա կբռնի իր ձուկը:
3. Երեխաների հետ երգեք “Thanks to Our Father” (*Children’s Songbook,* p. 20):
4. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղը:

   Փոքրիկ կրիան

Ես մի փոքրիկ կրիա ունեմ,
Որն ապրում է արկղում *(ձեռքի ափերը կլորացրեք):*
Այն լողում է գետակում *(կատարեք լողանալու շարժումներ),*
Եվ ժայռերը մագլցում *(մատերը շարժեք ասես ժայռ եք մագլցում):*

Նա ձկնիկ է բռնում *(ձեռքերով ծափ տվեք):*
Նա լու է բռնում *(ձեռքերով ծափ տվեք):*
Նա մոծակ է բռնում *(ձեռքերով ծափ տվեք),*
Եվ ինձ է բռնում *(ձեռքերով ծափ տվեք):*

Նա ձկնիկ է որսում *(ձեռքերով ծափ տվեք),*
Նա լու է որսում *(ձեռքերով ծափ տվեք),*
Նա մոծակ է որսում *(ձեռքերով ծափ տվեք),*
Բայց ինձ չի որսում:

(Vachel Lindsay, from *Collected Poems of Vachel Lindsay.* © 1920 by Macmillan Publishing Co., Inc., renewed 1948 by Elizabeth C. Lindsay. Օգտագործվել է թույլտվությամբ:)

5. Օգնեք երեխաներին ասել հետևյալ ոտանավորի խոսքերը: Բացատրեք, որ առվակը դա փոքր գետակ է, իսկ թաքստոցը թաքնվելու տեղ է:

Հինգ ձկնիկներ

Թող հինգ երեխաներ կանգնեն դասարանի կենտրոնում՝ յուրաքանչյուրի ձեռքին մեկ թղթե ձուկ:

Հինգ ձկնիկներ լողում են առվակում:
Մեկը թաքնվում է թաքստոցում *(մեկ երեխան «լողնալով» գնում նստում է իր տեղը)*:
Ձկնիկներն ուրախ խաղում են,
Ձկնիկներն ողջ օրը լողանում են:

Երգեք նույն երգը այս անգամ չորս ձկնիկով, ապա երեք, հետո՝ երկու: Ամեն անգամ մեկ երեխան լողանալով հեռանում է: Երբ մեկ երեխա է մնում, օգտագործեք հետևյալ խոսքերը.

Ձկնիկը լողում է առվակում,
Նա թաքնվում է թաքստոցում:
Ձկնիկն ուրախ խաղում է,
Ձկնիկն ողջ օրը լողանում է:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցույց տվեք նկար 1-25՝ Ձուկ; նկար 1-26՝ Գորտ; և նկար 1-27՝ Կրիա: Ձեր խոսքերով պատմեք ձկների և ջրային կենդանիների ստեղծման պատմությունը (տես Ծննդոց Ա.20–23): Ձեր երախտագիտությունը հայտնեք ձկների և ջրային այլ կենդանիների համար:

2. Ասեք երեխաներին, որ շատ կենդանիներ ապրում են ջրի մեջ կամ ջրերի մոտ: Թող նրանք գուշակեն, թե որ կենդանուն եք ձեր մտքում պահել: Նրանց տվեք հետևյալ հուշումները.

ա. Իմ կաշին կանաչ գույն է, փափուկ է ու ողորկ: Ես թռչկոտում եմ: Ես ապրում եմ լճերի, առվակների կամ ջրամբարների մոտ: Կարո՞ղ եք գուշակել, թե ով եմ ես:

(Երբ երեխաները գուշակեն, որ դա «Գորտն» է, ցույց տվեք նկար 1-26՝ Գորտ, կամ գրատախտակին գորտ նկարեք:)

բ. Ես շատ դանդաղ եմ շարժվում: Մեջքիս վրա ունեմ պատյան: Երբ վախենում եմ, գլուխս, ձեռքերս և ոտքերս քաշում եմ պատյանի տակ: Ո՞վ եմ ես:

(Երբ երեխաները գուշակեն, որ դա «Կրիան» է, ցույց տվեք նկար 1-27՝ Կրիա, կամ գրատախտակին կրիա նկարեք:)

Երբ երեխաները գուշակեն երկու կենդանիներին, թող գորտերի նման թռչկոտեն, ապա կրիայի նման դանդաղ քայլերով շարժվեն:

3. Երեխաներ հետ երգեք “Oh, What Do You Do in the Summertime?“ (*Children’s Songbook,* p. 245):









Դաս
12

Ես շնորհակալ եմ կենդանիների համար

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի երախտապարտ լինել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին կենդանիների համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Ա.24–25 և Զ.5–Ը.19:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Կտրվող նկար 1-6—1-19՝ կենդանիներ (նմանատիպ կտրվող նկարներ կարող եք նաև գտնել Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածու 4 և 5-ում):
   գ. Նկար 1-28՝ Արարում՝ կենդանի էակներ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 100; 62483); նկար 1-29՝ Տապանի կառուցումը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 102; 62053); նկար 1-30՝ Նոյը և կենդանիներով տապանը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 103; 62305):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Կենդանիների կտրված նկարները դրեք երեխաների առաջ հատակին կամ սեղանի վրա: Օգնեք մի երեխայի, որ վերցնի մի նկար, ասի ինչ կենդանի է այնտեղ պատկերված և նկարը ցույց տա դասարանին: Շարունակեք մինչև բոլոր երեխաները առնվազն մեկ անգամ մասնակցեն:

Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին կենդանիներ ստեղծել

Երեխաների հետ կրկնեք, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ստեղծել մեր գեղեցիկ երկիրը, ներառյալ՝ ցերեկը և գիշերը, օվկիանոսները և ցամաքը, բույսերն ու ծառերը: Ցույց տվեք Աստվածաշունչը և հիշեցրեք երեխաներին, որ մենք Արարման մասին կարդում ենք այս գրքում: Բացատրեք, որ Աստվածաշունչը մեզ ասում է, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուսին ստեղծել բոլոր կենդանիներին և դնել դրանց երկրի վրա:

Ցույց տվեք նկար 1-28՝ Արարում—կենդանի էակներ:

- Ո՞վ ստեղծեց այն ամենը, ինչ տեսնում եք նկարում:
- Ի՞նչ են այս նկարում պատկերված կենդանիների անունները:

Բացատրեք, որ Հիսուսը ստեղծեց երկրի վրա ապրող բոլոր տեսակի կենդանիներին: Որոշ կենդանիներ ապրում են ագարակներում և մեր տներում: Որոշ կենդանիներ ապրում են անտառում, սարերում և անապատում: Որոշ կենդանիներ ապրում են երկրի ցուրտ տարածքներում, որոշներն էլ՝ տաք տարածքներում:

- Ի՞նչ կենդանիներ են ապրում ագարակում:
- Ի՞նչ կենդանիներ են ապրում անտառում, սարերում կամ անապատում:
- Ո՞րն է ձեր սիրելի կենդանին:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և շարժումներով ցույց տալ, թե որոնք են իրենց սիրած կենդանիները:

Կենդանիներն օգնում են մեզ

Բացատրեք, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուսին կենդանիներ դնել երկրի վրա՝ մեզ օգնելու համար: Մենք որոշ կենդանիների օգտագործում ենք որպես սննդամթերք, որոշ կենդանիներ աշխատում են մեզ համար, իսկ որոշ կենդանիների էլ հետաքրքրությամբ նայում ենք կամ նրանց հետ խաղում:

- Ինչպե՞ս են կենդանիները մեզ օգնում:
- Ո՞ր կենդանիներից ենք մենք ուտելիք ստանում, օրինակ՝ կաթ, ձու կամ միս:
- Ո՞ր կենդանիներից ենք մենք հագուստի համար հումք ստանում:
- Ո՞ր կենդանիներին ենք մենք տանը ուրախությամբ պահում:
- Ի՞նչ կենդանիներ կարող ենք մենք հեծնել:

Թող երեխաները պատմեն ինչ փորձառություններ են ունեցել տարբեր տեսակի կենդանիների հետ:

Կենդանիները փրկվեցին ջրհեղեղից

Պատմեք Նոյի և տապանի պատմությունը, ինչպես տրված է Ծննդոց Զ.5–Ը.19: Ցույց տվեք նկար 1-29՝ Տապանի կառուցումը, և նկար 1-30, Նոյը և կենդանիներով տապանը: Դուք կարող եք նաև օգտագործել պատկերներով կտրվածքները պատմությունը պատկերավոր ներկայացնելու համար:

- Ինչպե՞ս Նոյը և իր ընտանիքը օրհնվեցին Հիսուսին հնազանդվելու համար:
- Ինչպե՞ս կենդանիները փրկվեցին:
- Երբ մենք ծիածան ենք տեսնում, ի՞նչ է այն մեզ հիշեցնում:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և ձեզ հետ կատարել շարժումները, երբ դուք կարտասանեք հետևյալ ոտանավորը.

Նոյը

Նոյը մեծ տապան կառուցեց *(լայն բացեք ձեռքերը);*
Նա գիտեր, ինչ պետք է աներ *(մատը դրեք ճակատի քունքի մոտ):*
Նա մեխում էր, սղոցում ու չափում *(կատարեք նշված գործողությունները),*
Նա անում էր, ինչ իրեն պատվիրվեց *(գլխով հաստատող շարժում կատարեք):*

Եվ Նոյն իր ընտանիքին կանչեց *(ձեռքով նշան արեք)*
Որ տապան մտնեն *(հանգիստ տեղում)*—
Զույգ-զույգ կենդանիներն եկան *(երկու մատեր ցույց տվեք)*
Որ միասին տապանով նավարկեն *(ձեռքերով լողալու շարժում կատարեք)*:

Մութ-մութ ամպեր հավաքվեցին *(ձեռքերը գլխավերևում դրեք)*,
Սկսեց անձրև տեղալ *(մատերը շարժեք անձրև ներկայացնելով)*—
Ողջ երկիրը ջուրը պատեց *(ձեռքով և բազկով արագ շարժում կատարեք)*,
Եվ հողն այլևս չերևաց *(գլուխը մի կողմից մյուս կողմ թեքեք)*:

Տապանն ապահով նավարկեց *(ձեռքերով լողալու շարժում կատարեք)*,
Օրեր ու գիշերներ անցան *(երկու ձեռքերը դրեք երեսի մի կողմը)*,
Մինչև որ արևը կրկին ծագեց *(ձեռքերով գլխավերևում շրջան կազմեք)*
Եվ իր տաք ճառագայթներով ջերմացրեց:

Եվ ջուրը սկսեց չորանալ *(ձեռքերը խաչեք կրծքի վրա)*,
Հողը կրկին երևաց *(բացեք և տարածեք ձեռքերը)*:
Նոյի ընտանիքը գոհացավ *(խոնարհեք գլուխը և ձեռքերը ծալեք)*,
Որ միշտ իրենց հետ էր Աստված:

(Վերցված է Բեվերլի Սպենսերի բանաստեղծությունից:)

Վկայություն

Կիսվեք երախտագիտության ձեր զգացումներով այս գեղեցիկ աշխարհի համար, որ Հիսուս Քրիստոսը ստեղծեց Երկնային Հոր ծրագրով: Հայտնեք, թե որքան երախտապարտ եք այն կենդանիների համար, որոնք դրվել են այս երկրի վրա մեր օգտագործման համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Խաղացեք «Կենդանի, կենդանի, ո՞վ ես դու» խաղը: Խնդրեք երեխաներին շրջան կազմել: Թող մի երեխա կանգնի շրջանի մեջտեղում ձևացնի իբր մի կենդանի է: Մյուս երեխաները պետք է ձեռք բարձրացնեն և գուշակեն, թե ինչ կենդանում է նմանակում այդ երեխան: Որ երեխան որ ճիշտ է գուշակում, նա է գնում շրջանի կենտրոն և նմանակում մեկ այլ կենդանու: Ավելի լավ կլինի, որ երեխաները սկզբում ձեր ականջին շշնջան, թե ինչ կենդանու են նմանակելու, որպեսզի դուք իմանաք, որ նա իր մտքում հստակ գիտի, որ կենդանուն է ներկայացնելու:
2. Խաղացեք «Ո՞րն է այս կենդանին» խաղը: Երեխաներին որոշ բաներ ասեք տվյալ կենդանու մասին: Դա կարող է լինել, թե որտեղ է ապրում այդ կենդանին, ինչպիսին է նա չափերով, ինչ ձայն է հանում, ինչ գույն ունի և ինչպես է այն օգնում մարդկանց: Երեխաներին ասեք, որ ձեռք բարձրացնեն, եթե գիտեն, թե որ կենդանու մասին եք դուք խոսում: Ամեն անգամ տարբեր կենդանիների ներկայացրեք և խաղացեք որքան կցանկանաք:
3. Երեխաների հետ երգեք կամ կարդացեք “The World is So Big” (*Children’s Songbook,* p. 235): Կատարեք ստորև նշված շարժումները.

   Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը *(ձեռքերով մեծ շրջան կազմեք)*,
   Այնտեղ Աստծո ստեղծածներն են գտնվում:
   Լեռներ *(գլխավերևում ձեռքերով լեռ ցույց տվեք)*
   Հովիտներ *(ձեր առջև ձեռքերի ափերով հովիտ ցույց տվեք)*

Բարձրահասակ ծառեր *(ձեռքերը ձգեք վեր),*
Մեծ կենդանիներ *(տարածեք ձեռքերը)*
Եվ փոքր միջատներ *(ձեռքերը իջեցրեք):*
Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը:
Աստված բոլորիս սիրում և լիուլի օրհնում է *(ձեռքերով ամուր գրկեք ինքներդ ձեզ):*

4. Խնդրեք երեխաներին պատմել որևէ տնային կենդանու մասին, որ ունեն կամ կցանկանային ունենալ: Երեխաների հետ քննարկեք, թե ինչպես պետք է վերաբերվել և խնամել տնային կենդանիներին:

5. Երեխաներին տվեք թուղթ ու մատիտներ: Թող յուրաքանչյուր երեխա նկարի իր սիրելի կենդանուն: Բոլոր նկարների վերևում գրեք *Ես շնորհակալ եմ կենդանիների համար:*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցույց տվեք նկար 1-28, Արարում—կենդանի էակներ: Ձեր խոսքերով պատմեք կենդանիների ստեղծման պատմությունը (տես Ծննդոց Ա.24–25): Ձեր երախտագիտությունը հայտնեք կենդանիների համար:

2. Ընտրեք մի քանի կենդանիներ, որոնց երեխաները ծանոթ են: Խնդրեք երեխաներին նմանակել այդ կենդանիներին: Քննարկեք, թե որ կենդանիներին են շարժումներով և ձայնով լավ նմանակում, և ինչով են այդ կենդանիներն օգտակար:

3. Օգնեք երեխաներին երգել “All Things Bright and Beautiful” երգի առաջին տողերը (*Children’s Songbook,* p. 231):

Դաս
13

Ես շնորհակալ եմ թռչունների և միջատների համար

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի երախտապարտ լինել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին՝ թռչունների, միջատների և սողունների համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Ա.20–25 և Գ Թագավորաց ԺՁ.29–ԺԷ.6:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Հնարավորության դեպքում, ձեռք բերեք ձեր տարածքում հանդիպող թռչունների, միջատների և սողունների նկարներ:
   գ. Կտրվող նկարներ 1-20—1-25՝ թռչուններ և միջատներ (նմանատիպ կտրվող նկարներ կարող եք նաև գտնել Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածու 4 և 5-ում):
   դ. Նկար 1-31՝ Եղիան կերակրվում է ագռավների միջոցով, նկար 1-32՝ Ճայերի հրաշքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 413, 62603):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Տվեք հետևյալ հուշումները և խնդրեք երեխաներին գուշակել «Ի՞նչ եմ ես» հարցի պատասխանը:

1. Ես ունեմ կտուց:
2. Ես փետուրներ ունեմ:
3. Ես թևեր ունեմ:
4. Ես թռնում եմ օդում:

Երբ երեխաները գուշակեն, որ դա «թռչուն է», թող հետևեն ձեզ և ձևացնեն իբր սենյակում թռչող թռչուններ են: Անյուհետև նրանց խնդրեք նստել:

Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին թռչուններ ստեղծել

Բացատրեք, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին թռչուններ ստեղծել, որպեսզի մենք ուրախանանք և երկիրը ապրելու համար գեղեցիկ վայր լինի: Ցույց տվեք Աստվածաշունչը և ասեք երեխաներին, որ Աստվածաշունչը պատմում է մեզ թռչունների արարման մասին (տես Ծննդոց Ա.20–23):

Բացատրեք, որ տարբեր տեսակի թռչուններ են ապրում ողջ աշխարհում: Հաջորդաբար ցույց տվեք ձեր ձեռքի տակ եղած թռչունների նկարները և կտրված նկարները:

- Սա թռչո՞ւն է:
- Ինչի՞ց եք իմանում, որ թռչուն է: (Այն ունի թևեր, փետուրներ և կտուց:)

Թող երեխաները խոսեն թռչունների հետ ունեցած իրենց փորձառությունների մասին:

Թռչունները կարող են օգնել մեզ

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-31՝ Եղիան կերակրվում է ագռավների միջոցով, և պատմեք պատմությունը, ինչպես տրված է Գ Թագավորաց ժէ.1–6-ում: Օգնեք երեխաներին հասկանալ, որ Երկնային Հայրը և Հիսուսը զորություն ունեն ամեն ինչի, անգամ՝ թռչունների վրա: Հիսուսը հրամայեց թռչուններին, որ կերակրեն Եղիային, երբ նա պետք է թաքնվեր չար թագավոր Աքաաբից:

- Ինչպե՞ս ագռավներն իմացան, որ պետք է ուտելիք բերեն Եղիային: (Տես Գ Թագավորաց ժէ.4:)
- Ի՞նչ ուտելիք էին բերում ագռավները: (Հաց և միս, տես Գ Թագավորաց ժէ.6:)

Վարժություն

Մի երեխայի ընտրեք, որ լինի Եղիան: Մյուս երեխաները թող ձևացնեն իբր իրենք ագռավներն են և ուտելիք են բերում առավոտյան և երեկոյան:

Պատմություն

Ձեր խոսքերով պատմեք ճայերի և մորեխների մասին հետևյալ պատմությունը.

Երբ պիոներները հասան Սոլթ Լեյքի Հովիտ, նրանք ցորեն և այլ ահտիկներ ցանեցին: Սրանց հատիկեղեն էր անհրաժեշտ հաց թխելու և շիլա պատրաստելու համար: Ցորենը հասել էր, և երբ արդեն հնձելու ժամանակն էր, մի մեծ ամպ ծածկեց երկինքը: Դա ոչ թե անձրևի, այլ հազարավեր սոված սև մորեխների ամպ էր: Մորեխներն իջան ցորենի դաշտի վրա և սկսեցին ուտել այն:

Պիոներներն արեցին ամեն ինչ, որպեսզի չթողնեն մորեխներն ուտեն իրենց ցորենը: Նրանք խառույկներ էին վառում, ավելներով և ծածկոցներով խփում էին մորեխներին, և անգամ փորձում էին մորեխներին ջրով ծածկել: Սակայն ոչինչ չէր օգնում: Պիոներները վախեցել էին, որ ձմեռվա համար ոչ մի պաշար չեն ունենա: Նրանք ծնկի իջան աղոթքով և օգնություն խնդրեցին Երկնային Հորից:

Շուտով ճայերի մի մեծ երամ եկավ և սկսեց ուտել մորեխներին: (Ցույց տվեք նկար 1-32՝ Ճայերի հրաշքը:) Շատ չանցած, մորեխների մեծ մասը ոչնչացել էր: Պիոներները շնորհակալություն հայտնեցին Երկնային Հորը ճայերին ուղարկելու և իրենց բերքը փրկելու համար (տես William E. Berrett, *The Restored Եկեղեցի* [Salt Lake City: Deseret Book Co., 1961], pp. 283–85):

- Ինչպե՞ս ճայերն օգնեցին պիոներներին:

Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ստեղծել միջատներ և սողուններ

Ասեք երեխաներին, որ Հիսուս Քրիստոսը նաև ստեղծեց միջատներ և սողուններ, ինչպիսին են՝ սարդերը և օձերը: Դրանք Երկնային Հոր Ծրագրի մի մասն են:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կռահել, թե ինչ միջատներ և սողուններ են տրված հետևյալ հանելուկներում: Երբ երեխաները կռահում են ճիշտ պատասխանը, ցույց տվեք և քննարկեք համապատասխան կտրված նկարը:

1. Ես դեղին եմ և բզզում եմ:
   Իմ փորիկը պատված է աղվամազով:
   Ես մեղր եմ պատրաստում:
   Ո՞վ եմ ես՝ _____: (Մեղու, բզզոց հանեք:)

2. Ես ցանց եմ գործում, որ իմ կերը որսամ:
   Ես ութ ոտ ունեմ:
   Մարդիկ հաճախ ինձ չեն սիրում:
   Կարո՞ղ եք ասել, թե ես ով եմ: (Սարդ, մատերը շարժեք սարդի ոտքերի նման:)

3. Մի ժամանակ ես թրթուր էի:
   Կարող եմ դեպի երկինք թռնել:
   Ես ունեմ գեղեցիկ թևեր:
   Ո՞վ եմ ես՝ _____: (Թիթեռ, նուրբ շարժեք մատերը թևերի նման:)

- Ի՞նչ գիտեք այդ միջատների մասին:

Բացատրեք, որ միջատները ստեղծվել են տարբեր պատճառներով: Որոշ միջատներ կեր են թռչունների, կենդանիների և այլ միջատների համար, իսկ որոշներն էլ՝ հետաքրքիր տեսարան են ստեղծում նայելու և լսելու համար: Մեղուները մեղր են պատրաստում, և օգնում են, որ մրգերը, ծաղիկներն ու բանջարեղենը աճեն:

Վարժություն

Ցույց տվեք մեղվի կտրված նկարը և մեղվի կամ մեղվանոցի ձեռք բերած ցանկացած նկար: Նկարագրեք, թե ինչպես են մեղուները ծաղիկներից նեկտար հավաքում մեղր պատրաստելու համար, իսկ հետո թող երեխաները ձևացնեն իբր մեղուներ են և ծաղկից ծաղիկ են գնում նեկտար հավաքելու և մեղր պատրաստելու համար:

- Ի՞նչ միջատներ եք դուք սիրում: Ինչո՞ւ:

Ցույց տվեք ձեր գտած միջատների նկարները: Բացատրեք, որ որոշ միջատներ անհանգստացնում են մեզ: Նրանք ուտում են մեր ուտելիքը և կարող են կծել մեզ: Հիշեցրեք երեխաներին ճայերի և մորեխների պատմությունը: Մորեխները ուտում էին պիոներների ողջ բերքը:

Բացատրեք, որ սովորաբար, երբ միջատները վնասում կամ անհանգստացնում են մեզ, նրանք պարզապես փորձում են պաշտպանվել:

Վկայություն

Հիշեցրեք երեխաներին, որ թռչունները, միջատները և սողունները մեր երկրի կարևոր մասն են: Հայտնեք ձեր երախտագիտությունը այդ միջատների համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Խաղացեք թիթեռնիկ խաղը: Խնդրեք երեխաներին շրջանով նստել: Ընտրեք մի երեխայի, որ թիթեռնիկը լինի: Այդ երեխան շրջանի մեջ պտտվելով թղթե թիթեռնիկը թռցնում է մյուս երեխաների գլխավերևում: Այդ ընթացքում արտասանեք այս ոտանավորը.

Ամառային մի պայծառ օր
Դեպի երկինքը կապույտ
Մի թիթեռնիկ թռավ:
Իսկ երբ իջավ, քեզ վրա իջավ:

Երբ ասում եք՝ «Քեզ վրա իջավ», երեխան, որը թիթեռնիկն է, թղթե թիթեռնիկը դնում է մեկ այլ երեխայի ծնկին: Այժմ այդ երեխան է թիթեռնիկը: Կրկնեք այնքան անգամ, մինչև որ բոլոր երեխաները թիթեռնիկ դառնան:

2. Պարզ բառերով բացատրեք, թե ինչպես է թրթուռը թիթեռնիկ դառնում: Թող երեխաները ձևացնեն, թե իբր իրենք բոժոժ մանող թրթուռներ են: Թող նստեն իրենց աթոռներին կամ հատակին և ձեռքով գրկեն իրենց ոտքերը, ձևացնելով իբր քնած են: Նրանց ասեք, որ երբ թրթուռը փոխակերպվում է թիթեռնիկի, նրա թևերը սկսում են շարժվել և ձգվել: Խնդրեք երեխաներին ձգել իրենց թևերը: Հիշեցրեք երեխաներին, որ թիթեռնիկները շատ հանգիստ են, անգամ երբ նրանք շարժվում են: Խնդրեք երեխաներին կանգնել և ձևացնել, անաղմուկ թռնում են սենյակում:

3. Երեխաների հետ երգեք կամ կարդացեք “In the Leafy Treetops” (*Children’s Songbook,* p. 240) կամ “The World Is So Big” (*Children’s Songbook,* p. 235): «Որքան մեծ է աշխարհը» երգի համար կատարեք ստորև նշված շարժումները.

Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը *(ձեռքերով մեծ շրջան կազմեք),*
Այնտեղ Աստծո ստեղծածներն են գտնվում:
Լեռներ *(գլխավերևում ձեռքերով լեռ ցույց տվեք)*
Հովիտներ *(ձեր առջև ձեռքերի ափերով հովիտ ցույց տվեք)*
Բարձրահասակ ծառեր *(ձեռքերը ձգեք վեր),*
Մեծ կենդանիներ *(բարձարցրեք ձեռքերը)*
Եվ փոքր միջատներ *(ձեռքերը իջեցրեք):*
Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը:
Աստված բոլորիս սիրում և լիուլի օրհնում է *(ձեռքերով ամուր գրկեք ինքներդ ձեզ):*

4. Երգեք կամ կարդացեք “All Things Bright and Beautiful” (*Children’s Songbook,* p. 231), օգտագործելով ստորև տրված շարժումները.

Պայծառ և գեղեցիկ է շուրջբոլորը *(ձեռքերով մեծ շրջան կազմեք),*
Մեծ ու փոքր էակները բոլոր *(լայն տարածեք ձեռքերը, ապա ձեռքերը մոտեցրեք իրար),*
Իմաստուն և հրաշալի է ամեն բան *(մատով ցույց տվեք գլուխը),*
Տեր Աստված ստեղծեց այդ ամենը *(ձեռքերը ծալեք ինչպես անում եք աղոթելիս):*

Ամեն փոքր ծաղիկ, որ բացվում է *(բռունցք արեք, և հետո բացեք ձեռքերը),*
Ամեն փոքր ծիտիկ, որ երգում է *(մատերն ու բութ մատերը միացրեք ինչպես ծիտիկի կտուց),*
Նա տվեց նրանց այդ փայլուն գույները *(ձեռքը շարժեք ասես ծիածան եք ներկայացնում),*
Նա ստեղծեց նրանց փոքր թևերը *(թռչունի թևերի նման թափահարեք ձեռքերը):*

5. Մի փոքր տարայով մեղր բերեք, որ երեխաները տեսնեն կամ համտեսեն: (Երեխաների ծնողներից տեղեկացեք, որ երեխաներն ալերգիկ չեն մեղրի հանդեպ:)

6. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղերից մեկը կամ երկուսը.

Երկու ծլվլացող ծիտիկ

Պատի վրա նստեցին երկու ծլվլացող ծիտիկ *(ամեն ձեռքի մատը դրեք այդ ուսի վրա),*
Մեկի անունը Պետրոս *(բարձրացրեք ձախ մատը),*
Իսկ մյուսինը՝ Պողոս *(բարձրացրեք աջ մատը):*
Թռի գնա Պետրոս *(ձախ մատը դրեք մեջքի ետևում),*
Թռի գնա Պողոս *(աջ մատը դրեք մեջքի ետևում):*
Ետ արի Պետրոս *(ձախ մատը կրկին դրեք ուսի վրա),*
Ետ արի Պողոս *(աջ մատը կրկին դրեք ուսի վրա):*

Մեղվանոց

Ահա մեղվանոցը *(ձախ ձեռքը կիսակլոր պահեք ափով ներքև):*
Իսկ մեղուներն ո՞ւր են:
Թաքնվել են, որ իրենց չտեսնեն *(աջ ձեռքի մատերը թաքցրեք ձախ ձեռքի ափի տակ):*
Շուտով մեղվանոցից կթռնեն դեպ երկինք *(աջ ձեռքը առաջ բերեք և ամեն անգամ մի մատը ծալեք, երբ երեխաները կհաշվեն):*
Մեկ, երկու, երեք, չորս, հինգ: ԲԶԶԶ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցույց տվեք թռչունի սովորական նկար, կտրված նկար կամ ձեռքով նկարված նկար: Ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին թռչուններ ստեղծել (տես Ծննդոց Ա.20–23): Ձեր երախտագիտությունը հայտնեք թռչունների համար:

2. Բացատրեք, որ թռչուններն ունեն հատուկ կտուց, որն օգնում է նրանց կեր հայթհայթել: Թող երեխաները իրենց ձեռքերը բերանի մոտ պահեն այնպես, որ կտուցի նմանվի և ձևացնեն իբր կեր են վերցնում և ուտում: Բացատրեք, որ թռչուններն ունեն նաև թևեր, որոնք օգնում են իրենց թռնել: Խնդրեք երեխաներին թափահարել իրենց ձեռքերը և ձևացնել իբր թռնում են:

3. Երգեք կամ կարդացեք “Birds in the Tree” (*Children’s Songbook,* p. 241), կատարելով ստորև տրված շարժումները.

   Փոքր բույն կգտնենք *(ձեռքերի ափերը միացրեք իրար)*
   Ծառի ճյուղերի մեջ *(ձեռքերը կլորացրած պահեք գլխավերևում):*
   Եկեք ձվերը հաշվենք,
   Մեկ, երկու, երեք *(ծալեք մեկ, երկու, երեք մատեր):*

   Մայր ծիտիկը բնում *(ձախ ձեռքի ափը կլորացրեք, իսկ աջ ձեռքը դրեք ձախի վրա)*
   Թուխս է նստում *(երեք մատերը ծալեք):*
   Հայր ծիտիկը շուրջը թռնում *(թևերով թռնելու շարժում կատարեք),*
   Իր ընտանիքն է պաշտպանում:

4. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղը.

Ճշտիկ-պստիկ սարդը

Ճշտիկ-պստիկ սարդը ջրի շիթին մոտեցավ *(մի ձեռքի երկու մատերով «մագլցեք» մյուս ձևի վրայով):*
Անձրև եկավ և սարդին քշեց տարավ *(ձեռքերը բարձրացրեք գլխից վերև և ապա մատերը շարժելով ձեռքերն իջացրեք):*
Արևը դուրս եկավ և անձրևը չորացավ *(շրջան արեք գլխավերևում):*
Ճշտիկ-պստիկ սարդը կրկին ջրին մոտեցավ *(կրկնեք առաջին տողի շարժումը):*

Դաս
14

Ադամն ու Եվան ստեղծվեցին Երկնային Հոր պատկերով

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Ադամն ու Եվան ստեղծվեցին Երկնային Հոր պատկերով:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Ա, Բ.15–25 և Գ: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխs 5 և 6:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Կտրվող նկարներ 1-1—1-25 (նմանատիպ կտրվող նկարներ կարող եք նաև գտնել Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածու 3, 4, և 5-ում):
   գ. Նկար 1-33՝ Ադամն ու Եվան (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 101, 62461), նկար 1-34՝ Ադամն ու Եվան ուսուցանում են իրենց երեխաներին:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք կանգնել բոլոր նրանց, ովքեր Երկնային Հոր զավակներն են: Հիշեցրեք երեխաներին, որ մենք բոլորս Երկնային Հոր զավակներն ենք, այնպես որ ամենոք պետք է կանգնի:

Երգ

Երեխաների հետ երգեք «Աստծո զավակն եմ» (*Հիմներ և մանկական երգեր*, էջ 58): Նշեք, որ այս երգն ասում է մեզ, որ Երկնային Հայրը մեզ երկրային տուն է տվել:

Զավակն եմ ես Աստծո,
Նա է ինձ կյանք տվել,
Տվել է ինձ տուն երկրային
Եվ ծնողներ բարի:

Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
Որ ուղին գտնեմ,
Սովորեցրու՝ ինչ անել,
Որ մի օր Քեզ հասնեմ:

Երկիրը ստեղծվել է Երկնային Հոր ծրագրով

Վարժություն

Կտրված պատկերները հակառակ կողմով դրեք սեղանին կամ ձեր ծնկներին:

- Ինչե՞ր ստեղծեց Հիսուսը երկրի համար:

Երբ երեխան պատասխանում է, խնդրեք նրան ցույց տալ համապատասխան պատկերը:

- Ի՞նչ ստեղծված բաների համար եք դուք երախտապարտ:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ երկիրը և դրա վրա գտնվող ամեն ինչ ստեղծվել են մեր օգտագործման համար: Հիշեցրեք երեխաներին, որ երկիրը և դրա վրա գտնվող ամեն ինչ Երկնային Հոր ծրագրի մի մասն է:

Երգ

Երեխաների հետ կրկին երգեք «Աստծո զավակն եմ»:

Ադամն ու Եվան Երկնային Հոր ծրագրի մի մասն էին

Խնդրեք երեխաներին նայել ցուցադրվող կտրված պատկերներին:

- Էլ ի՞նչ պետք է լինի երկրի վրա:

Ցույց տվեք նկար 1-33՝ Ադամն ու Եվան: Բացատրեք, որ երբ ամեն ինչ արարված էր, Ադամն ու Եվան ստեղծվեցին: Պատմեք մարդկանց ստեղծման մասին, ինչպես տրված է Ծննդոց Ա.26–28-ում: Բացատրեք, որ Ադամն ու Եվան երկրի վրա ապրած առաջին երկու մարդն էին: Նրանք մսից և ոսկորներից մարմին ունեին, որը նման էր Երկնային Հոր մարմնին:

- Ո՞վ էր առաջին տղամարդը, որ ապրեց երկրի վրա:
- Ո՞վ էր առաջին կինը:
- Ինչպիսի՞ մարմին ունեին Ադամն ու Եվան:

Խնդրեք երեխաներին շոշափել իրենց ձեռքերը, և հիշեցրեք նրանց, որ իրենց մարմինը Ադամի և Եվայի մարմնի նման է:

Պատմություն

Ցույց տալով նկար 1-33՝ Ադամն ու Եվան, ձեր խոսքերով պատմեք Ադամի ու Եվայի պատմությունը, նշելով հետևյալ կետերը (տես Ծննդոց Բ.15–25, 3):

1. Ադամն ու Եվան ֆիզիկական մարմին ստանալուց հետո ապրում էին Եդեմի Պարտեզ կոչվող գեղեցիկ վայրում:
2. Ադամն ու Եվան ամուսնացան հավերժության համար Երկնային Հոր կողմից:
3. Պտուղներ և ծաղիկներ էին աճում Եդեմի Պարտեզում, և բոլոր կենդանիները մեղմ ու հնազանդ էին:
4. Ադամն ու Եվան չէին տարբերում լավն ու վատը:
5. Ադամն ու Եվան չէին կարող երեխաներ ունենալ:
6. Ադամն ու Եվան կարող էին ուտել բոլոր ծառերի պտուղներից, բացի մեկից:
7. Ադամն ու Եվան կերան այդ ծառի պտղից:
8. Ադամն ու Եվան ստիպված էին հեռանալ Եդեմի Պարտեզից:
9. Ողջ աշխարհը փոխվեց. Ադամն ու Եվան պետք է տքնաջան աշխատեին, որպեսզի ուտելիք հայթհայթեին, մոլախոտեր սկսեցին աճել, կենդանիները դարձան վայրի:
10. Այնուհետև Ադամն ու Եվան սկսեցին երեխաներ ունենալ:

Ցույց տվեք նկար 1-34՝ Ադամն ու Եվան ուսուցանում են իրենց երեխաներին: Բացատրեք, որ Ադամն ու Եվան օրհնվեցին շատ երեխաներով: Նրանք առաջին

ծնողներն էին երկրի վրա: Նրանք ուսուցանում էին իրենց երեխաներին Երկնային Հոր և Հիսուսի մասին: Նրանց ընտանիքը մեծացավ և սփռվեց երկրի վրա:

- Ի՞նչ էին անում Ադամն ու Եվան Եդեմի Պարտեզից հեռանալուց հետո:

Բացատրեք, որ Ադամն ու Եվան և իրենց երեխաները օգտագործում էին բույսերն ու կենդանիները, որ երկրի համար էին ստեղծվել:

Վարժություն

Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղը.

Ադամն ու Եվան

Ադամն ու Եվան երկրի վրա են ապրել *(երկու ձեռքերի ափերը կլոր իրար միացրեք ցույց տալով երկիրը),*
Երբ այն նոր էր ստեղծվել:
Նրանք շատ կենդանիներ էին պահում *(մի ձեռքով փայփայեք մյուսը)*
Եվ մթերք աճեցնում *(մատերը տարեք բերանի մոտ, կարծես ուտում եք):*
Ադամն ու Եվան երեխաներ ունեին *(երկու մատեր իրար միացրեք)*
Որ իրենց երեխաներ էին *(երկու մատեր էլ ավելացրեք):*
Այժմ շատ երեխաներ են ծնվել *(բոլոր տաս մատերը շարժեք):*
Տես որքան է աշխարհը մեծացել *(երկու ձեռքով մեծ շրջան կազմեք, ապա ձեռքերը լայն բացեք)*:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ Ադամն ու Եվան առաջին ծնողներն էին երկրի վրա, և մենք բոլորս նրանց ընտանիքի մասն ենք:

Երկնային Հայրը և Հիսուսը ասացին, որ երկիրը բարի էր

Բարձրաձայն կարդացեք Ծննդոց Ա.31-ի առաջին նախադասությունը: Խնդրեք երեխաներին ձեզ հետ կրկնել նախադասությունը: Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը զգացին, որ իրենց բոլոր արարումները բարի էին: Ամենակարևորն այն էր, որ նրանք զգացին, որ մենք բարի էինք, և նրանք շատ սիրեցին մեզանից յուրաքանչյուրին:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Երկնային Հոր և Հիսուսի սիրո մասին: Բացատրեք, որ երկիրը և դրանում գտնվող ամեն ինչ նախատեսված է մեր օգտագործելու և վայելելու համար: Ամեն անգամ լինի դա ծաղիկ, աստղ, թե մեկ այլ արարչագործություն, մեզ հիշեցնում են մեր հանդեպ Երկնային Հոր և Հիսուսի սիրո մասին:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. 8–13 դասերից ոտանավորներով մի քանի վարժություններ ընտրեք, օրինակ՝ «Աստված ստեղծեց» կամ «Նոյը», երեխաների հետ կատարելու համար:
2. Վերանայեք, թե ինչ պատահեց Արարման յուրաքանչյուր օր, իսկ երեխաները թող այդ օրերը հաշվեն իրենց մատերի վրա:
3. Երեխաների հետ երգեք կամ կարդացեք «Իմ Երկնային Հայրը սիրում է ինձ» (*Children's Songbook,* p. 228):

4. Թող երեխաները նկարեն կամ գունավորեն մի բան, որը Երկնային Հոր ծրագրի մի մասն է: Երեխաների նկարների վերևում գրեք *Ես շնորհակալ եմ երկրի համար:*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երգեք կամ կարդացեք “The World is So Big” (*Children’s Songbook,* p. 235): Օգնեք երեխաներին կատարել ստորև նշված շարժումները.

   Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը *(ձեռքերով մեծ շրջան կազմեք),*
   Այնտեղ Աստծո ստեղծածներն են գտնվում:
   Լեռներ *(գլխավերևում ձեռքերով լեռ ցույց տվեք)*
   Հովիտներ *(ձեր առջև ձեռքերի ափերով հովիտ ցույց տվեք)*
   Բարձրահասակ ծառեր *(ձեռքերը ձգեք վեր),*
   Մեծ կենդանիներ *(բարձրացրեք ձեռքերը)*
   Եվ փոքր միջատներ *(ձեռքերը իջեցրեք):*
   Ողջ գիշեր աստղերն են պայծառ փայլում *(ուղղեք ձեռքերը և մատերը շարժեք),*
   Ցերեկը արևն է պայծառ ջերմացնում *(ձեռքերով մեծ շրջան կազմեք):*
   Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը:
   Աստված բոլորիս սիրում և լիուլի օրհնում է *(ձեռքերով ամուր գրկեք ինքներդ ձեզ):*

2. Օգնեք երեխաներին կատարեն հետևյալ մատերով խաղի շարժումները, մինչ դուք կարտասանեք խոսքերը.

   Աստված ստեղծեց

   Աստված ստեղծեց լուսինը *(ձեռքերով կլորակ արեք),*
   Եվ կայծկլտացող աստղերը *(բացեք և փակեք ձեռքերը),*
   Եվ դրանք երկնքում դրեց *(ձգվեք)*:
   Նա ստեղծեց արևը *(ձեռքերը կլորացնելով միացրեք գլխավերևում),*
   Ծառերը *(ձեռքերը պարզեք վեր)*
   Եվ ծաղիկները *(ձեռքերի ափերը կլորացրեք բաժակի նման),*
   Ծիտիկներին, որ թռչում են շուրջբոլորը *(ձեռքերով թափահարեք):*

   (From *Fascinating Finger Fun* by Eleanor Doan. © 1951. Օգտագործվել է թույլտվությամբ:)

Դաս 15 Կիրակին երկրպագության օր է

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Կիրակին երկրպագության և հանգստանալու օր է:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Բ.1–3 և Ելից ԺԶ.11–31: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 24:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-6՝ Ընտանեկան երեկո (62521), նկար 1-7՝ Սիրող ընտանիք, նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը (62021), նկար 1-9՝ Առավոտյան աղոթք (62310), նկար 1-10՝ Ընտանեկան աղոթք (62275), նկար 1-35՝ Մանանա հավաքելը, նկար 1-36՝ Երեխաները և ծնողները սուրբ գրության պատմություն են կարդում:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Օգնեք երեխաներին դերերով ներկայացնել Արարման ամեն օրը, մինչ դուք հիշեցնում եք նրանց, թե ինչ է արարվել յուրաքանչյուր օրը (տես Ծննդոց Ա):

Օր 1 Զնացրեք քնած եք և ապա արթնանում եք, գիշեր և ցերեկ ցույց տալով:

Օր 2 Կանգնեք, նայեք, և ձեռքերը լայն տարածեք՝ ցույց տալով երկինքը:

Օր 3 Կռացեք, որ ծաղիկ հավաքեք և այնուհետև ծաղկից հոտ քաշեք:

Օր 4 Ձեռքերով մեծ շրջան կազմեք, որպեսզի արև ցույց տաք, և ձեռքի ափերով ավելի փոքր շրջան կազմեք լուսնի համար, և հետո մատերը շարժեք միևնույն ժամանակ թևերը շարժելով, որ ներկայացնեք փայլփլող աստղերը:

Օր 5 Զնացրեք թռչուն եք և թռնում եք սենյակում, կամ ձուկ եք, որ լողանում է ծովում:

Օր 6 Զնացրեք մի որևէ կենդանի եք: Սենյակում քայլեք նմանակելով այդ կենդանուն: Ապա մի գծով կանգնեք և թող յուրաքանչյուրն ասի. «Իմ անունն է (երեխայի անունը): Ես Աստծո զավակ եմ»:

Խնդրեք երեխաներին հանգիստ նստել:

Ասեք երեխաներին, որ յոթերորդ օրը Երկնային Հայրը և Հիսուսը հանգստացան: Նրանք այդ օրն անվանեցին Կիրակի:

Խնդրեք երեխաներին մի քանի անգամ կրկնել *Կիրակի* բառը:

Կիրակին սուրբ օր է

Բարձրաձայն կարդացեք Ծննդոց Բ.1–2 և հատված 3-ը մինչև *օր* բառը: Բացատրեք, որ երբ Երկնային Հայրը և Հիսուսը ավարտեցին երկրի ստեղծումը և այն ամենի, ինչ կա երկրի վրա, օրհնեցին յոթերորդ օրը: Այն պետք է լիներ սուրբ օր, և տարբերվեր շաբաթվա մյուս օրերից: Կիրակին մեզ համար մեր աշխատանքից հանգստանալու և Երկնային Հորը և Հիսուսին երկրպագելու օր է:

- ·Շաբաթվա ո՞ր օրն է Կիրակին:
- ·Ի՞նչ արեցին Կիրակի օրը Երկնային Հայրը և Հիսուսը: (Տես Ծննդոց Բ.2:)

Վարժություն

Խնդրեք երեխաներին ցույց տալ յոթ մատը: Այդ մատերով հաշվեք մինչև յոթը՝ ամեն անգամ շարժելով մի մատը: Բացատրեք, որ վեցերորդ օրերին (*շարժեք վեց մատերը*), մենք կատարում ենք մեր աշխատանքը: Յոթերորդ օրը (*շարժեք միայն յոթերորդ մատը*) մենք հանգստանում ենք մեր աշխատանքից, քանի որ այդ օրը Կիրակի է:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-35՝ Մանանա հավաքելը, և պատմեք Իսրայելցիների և մանանայի մասին պատմությունը, ինչպես տրված է Ելից ԺՁ.11–31-ում:

Օգնեք երեխաներին հասկանալ մանանայի հրաշքը: Բացատրեք, որ ամեն օր Իսրայելցիները մանանա էին հավաքում այդ օրվա համար, իսկ վեցերորդ օրը երկու օրվա համար էին մանանա հավաքում: Եթե Իսրայելցիները շաբաթվա ցանկացած օր, բացի վեցերորդ օրվանից, ավել մանանա էին հավաքում, այն փչանում էր: Յոթերորդ օրը, որը Կիրակին էր, մանանա չկար հավաքելու համար: Այդ օրը Իսրայելցիները ուտում էին վեցերորդ օրը հավաքած մանանայից:

- Ինչպե՞ս Իսրայելցիները ուտելիք ստացան:
- Ինչո՞ւ Կիրակի օրը նրանք մանանա չէին հավաքում:

Բարձրաձայն կարդացեք Ելից ԺՁ.26: Բացատրեք, որ Իսրայելցիներին ուսուցանվել էր, որ չպետք է աշխատեին Կիրակի օրը: Կիրակի օրը Երկնային Հայրը և Հիսուսը ուզում են, որ մենք մտածենք ոչ թե մեր աշխատանքի, այլ իրենց մասին: Կիրակին շատ սուրբ օր է Երկնային Հոր և Հիսուսի համար:

Շեշտեք, որ Կիրակին ոչ թե աշխատանքային կամ սովորական գործեր կատարելու, այլ Երկնային Հորը և Հիսուսին երկրպագելու օր է: *Երկրպագել* նշանակում է մտածել Երկնային Հոր և Հիսուսի մասին և կատարել այնպիսի գործեր, որոնք ցույց կտան, թե որքան շատ ենք մենք սիրում նրանց:

Կիրակին երկրպագության օր է

Օգնեք երեխաներին հասկանալ, որ Կիրակին ուրախ օր է, որովհետև մենք կարող ենք տարբեր միջոցներով երկրպագել Երկնային Հորը և Հիսուսին:

- Ի՞նչ ես արել այսօր Երկնային Հորը և Հիսուսին ցույց տալու համար, որ սիրում ես իրենց:

Բացատրեք, որ Երկնային Հորը և Հիսուսին երկրպագելու կամ նրանց հանդեպ մեր սերը ցույց տալու համար կարևոր միջոց է եկեղեցի գալը և հաղորդություն ընդունելը: Ցույց տվեք նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը: Երկնային Հայրը և Հիսուսը երջանիկ են, երբ մենք երգում ենք և լսում, երբ հանգիստ ենք և լավ ենք մեզ պահում, որպեսզի լսենք մեր ուսուցիչներին և զգանք Երկնային Հոր և Հիսուսի սերը մեր հանդեպ:

Վարժություն

Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղը.

Ես ուրախ եմ, որ այսօր եկեղեցի եմ եկել

Ես ուրախ եմ, որ այսօր եկեղեցի եմ եկել *(ձեռքերը միացրեք մատերն իրար մեջ հագցնելով և ցուցամատերը միացնելով իրար ներկայացրեք եկեղեցու սրածողը):*
Ես սիրում եմ լսել *(ձեռքի ափը կլորացրած դրեք ականջի մոտ)*
Եվ աղոթել *(ձեռքերը ծալեք և գլուխը խոնարհեք):*
Ես Հիսուսի մասին եմ սովորում *(մատով վերև ցույց տվեք),*
Հիսուսի և նրա սիրո մասին մտածում *(գրկեք ինքներդ ձեզ):*

Մենք նաև ցույց ենք տալիս Երկնային Հորը և Հիսուսին, որ մենք սիրում ենք իրենց, երբ մաքուր ու կոկիկ գալիս ենք եկեղեցի: Մենք պետք է լվանանք մեր երեսը և մազերը, և հագնենք մեր ամենաավ շորերը:

Վարժություն

Խնդրեք երեխաներին մնջախաղով ցույց տալ ինչպես ենք պատրաստվում եկեղեցուն:

- Ի՞նչ ենք մենք անում Երկնային Հորը և Հիսուսին երկրպագելու համար, երբ մենք եկեղեցում ենք:
- Ի՞նչ ենք մենք անում Երկնային Հորը և Հիսուսին երկպագելու համար, երբ մենք տանն ենք:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ Կիրակի օրը մենք չպետք է փող ծախսենք կամ գնումներ կատարենք: Կիրակի օրը մենք չպետք է մարզումների գնանք կամ զվարճալի միջոցառումների մասնակցենք: Կիրակի օրը մենք չպետք է աշխատենք մեր պարտեզում կամ բակում, գնանք ձկնորսության կամ որսորդության:

Բացատրեք, որ Կիրակին սուրբ պահելու համար շատ բաներ կան տանը անելու: Այս քննարկման ընթացքում հարմար պահին ցույց տվեք «Նախապատրաստություն» բաժնում նշված նկարները: Մենք կարող են հանգիստ խաղեր խաղալ ընտանիքի անդամների հետ, խնդրենք մեզ համար սուրբ գրությունների պատմություններ կարդալ, ընտանեկան ալբոմներ պատրաստել, այցելել բարեկամներին կամ նրանց, ովքեր հիվանդ են, նկարենք այնպիսի բաներ, որոնց համար մենք շնորհակալ ենք, ընտանիքի անդամի հետ գնանք զբոսնելու, աղոթենք, երգեր երգենք և լավ երաժշտություն լսենք:

Վարժություն

Թող երեխաները հերթով մնջախաղով ցույց տան, թե ինչ են հաճույքով անում տանը՝ Կիրակին սուրբ պահելու համար:

Վկայություն

Ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը երջանիկ են, երբ մենք կիրակի օրը գալիս ենք եկեղեցի, որտեղ երգում, աղոթում և լսում ենք մեր ուսուցիչներին: Նրանք նաև երջանիկ են, երբ մենք տանը ճիշտ ձևով ենք պահում Կիրակին: Նշեք մի քանի ակնածալից բաներ, որ դուք ցանկանում եք անել Կիրակի օրը, և հայտնեք, թե որքան երջանիկ եք ձեզ զգում Կիրակի օրը: Խրախուսեք երեխաներին իրենց ընտանիքների հետ կիսվել այս դասին իրենց սովորածով:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Կատարեք հետևյալ վարժությունը՝ ձեր դասարանի ամեն մի երեխայի համար ստեղծելով առանձին ոտանավոր: Հրավիրեք երեխաներին ձեզ հետ միասին կատարել շարժումները:

   Որովհետև այսօր Կիրակի է

   Ցույց տվեք ձեր դասարանի մի երեխայի և այս երկտողն ասելիս նշեք այդ երեխայի անունը և կատարեք նշված շարժումները.

   (Երեխայի անունը) այսօր սուրբ գրությունները լսեց *(ձեռքի ափը կլորացրած պահեք ականջի մոտ)*:
   (Երեխայի անունը) այսօր սուրբ գրությունները լսեց, որովհետև այսօր կիրակի է:

   Ասեք երկտողը յուրաքանչյուր երեխայի համար, օգտագործելով հետևյալ գաղափարները վերը նշված ձևով.

   (Երեխայի անունը) այսօր Երեխաների խմբում աղոթեց *(ձեռքերը ծալեք, գլուխը խոնարհեք, աչքերը փակեք):*
   (Երեխայի անունը) այսօր նկար նկարեց *(ձևացրեք նկար եք նկարում):*
   (Երեխայի անունը) այսօր այցելեց մեկին, որ միայնակ է *(սեղմեք այն երեխայի ձեռքը, ում անունն եք տալիս):*
   (Երեխայի անունը) այսօր ընտանիքի պատմության մասին սովորեց *(ձևացրեք էջեր եք թերթում և նկարներ նայում)*:
   (Երեխայի անունը) այսօր տատիկին և պապիկին գրեց *(ձեռքը շարժեք այնպես, ասես գրում եք)*:
   (Երեխայի անունը) այսօր մի պատմություն լսեց *(ձեռքի ափը կլորացրած պահեք ականջի մոտ)*:

2. Ձեր խոսքերով երեխաներին պատմեք հետևյալ պատմությունը.

   Պիոներները երկար ճանապարհ անցան Սոլթ Լեյքի Հովիտ հասնելու համար, որպեսզի այնտեղ բնակվեին: Նրանք տեղ հասան Կիրակիից մի քանի օր առաջ: Թեպետ նրանք պետք է տներ կառուցեին և ցանքս անեին, որոշեցին չաշխատել Կիրակի օրը: Նրանք շատ տքնաջան աշխատեցին և հողը շատ արագ փորեցին ու պատրաստեցին ցանքսի համար: Հողը շատ պինդ էր, և նրանք հողը ջրեցին, որպեսզի գութանը կարողանար վարել այն: Մինչև շաբաթ երեկո նրանք բանջարեղենի մի ընդարձակ դաշտ էին ցանել: Կիրակի առավոտյան նրանք հավաքվեցին Կիրակնօրյա ժողովին և շնորհակալություն հայտնեցին Երկնային Հորը՝ իրենց նոր բնակավայր բերելու համար:

3. Թող երեխաները նկար նկարեն, որտեղ կպատկերեն իրենց՝ Կիրակնօրյա մի գործ անելիս: Թող երեխաները միմյանց պատմեն իրենց նկարի մասին: Նրանց նկարների վերևում գրեք, թե ինչ են անում նշելով տվյալ երեխայի անունը, ինչպես հետևյալ օրինակում՝ *Դեյվիդը մանկական երգ է երգում կիրակի օրը:*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Օգնեք երեխաներին կատարել շարժումներ հետևյալ ոտանավորի համար, մինչ դուք արտասանում եք բառերը.

   Արարում

   Հիսուսն ասաց՝ արևը թող շողա *(ձեռքերով մեծ շրջան կազմեք գլխավերևում ձեռքերով մեծ շրջան կազմեք գլխավերևում)*,
   Անձրև թող գա *(ձեռքերն իջեցրեք մատերը շարժելով)*,
   Ծաղիկները թող ծաղկեն *(ձեռքի ափերը կլորացրեք՝ ափերը վերև):*.
   Թռչունները թող երգեն *(մատերը բացեք և փակեք թռչնի կտուցի նման)*,
   Եվ այդպես եղավ *(ծալեք ձեռքերը):*

   (Johnie B. Wood, in *Sing, Look, Do, Action Songs for Children,* ed. Dorothy M. Peterson [Cincinnati: Standard Publishing Co., 1965].)

   Բացատրեք, որ երկրի ստեղծումն ավարտելուց հետո, Երկնային Հայրը և Հիսուսը հանգստացան: Կիրակի օրը մենք հանգստանում ենք և հիշում Երկնային Հորը և Հիսուսին:

2. Ասեք երեխաներին, որ երբ մեր աշխատանքը կատարում ենք շաբաթ օրը, ավելի հեշտ է հիշել Հիսուսին և Երկնային Հորը Կիրակի օրը: Երգեք “Saturday” (*Children’s Songbook,* p. 196), ինքներդ կատարելով շարժումներ խոսքերին համապատասխան:

Ես մարմին ունեմ

Դաս
16

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի գնահատել և հարգել իր ֆիզիկական մարմինը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Դանիել Ա և Վարդապետություն և Ուխտեր 89. Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 29:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Վարդապետություն և Ուխտեր:
   բ. Նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ (62307), նկար 1-37՝ Դանիելը հրաժարվում է թագավորի առաջարկած մսից և գինուց (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 114, 62094), նկար 1-38՝ Երեխաները խաղում են գնդակով:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Նրբանկատ եղեք ձեր դասարանի հաշմանդամ երեխաների հանդեպ: Կենտրոնացեք ոչ թե նրանց արատների, այլ այն ամենի վրա, ինչ *կարող են* նրանք անել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել: Օգնեք նրանց երգել և շարժումներ կատարել “Head, Shoulders, Knees, and Toes” (*Children’s Songbook,* p. 275) երգի համար: Երգը կատարեք այնքան դանդաղ, որպեսզի կարողանաք շարժել մարմնի մասերը, երբ դրանք նշվում են: Օրինակ, գլուխը շարժեք, ուսերը թոթվեք, ծնկները ծալեք և ոտքերի ծայրերին կանգնեք:

Գլուխ, ուսեր, ծնկներ և ոտքեր, ծնկներ և ոտքեր, ծնկներ և ոտքեր,
Գլուխ, ուսեր, ծնկներ և ոտքեր, աչքեր, ականջներ, բերան և քիթ:

Բացատրեք երեխաներին, որ նրանք օգտագործեցին իրենց մարմինն այս երգը երգելու համար:

Երկնային Հայրը ծրագրել է, որ մեզանից յուրաքանչյուրը ֆիզիկական մարմին ունենա

Երեխաների հետ վերանայեք, որ երբ մենք ապրում էինք երկնքում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ, մենք ֆիզիկական մարմին չունեինք: Մենք ունեինք հոգի: Եվ ֆիզիկական մարմին ստանալու համար, մենք պետք է երկիր գայինք: Երկնային Հայրը ծրագրել է, որ մենք ծնվենք երկրի վրա և երկրային ծնողներ ունենանք, որոնք հոգ կտանեն մեզ համար:

Ցույց տվեք նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ:

- Ովքե՞ր են այս նկարում պատկերված:
- Ո՞վ է ծրագրել մեզ համար՝ գալ երկիր մարմին ստանալ և ընտանիք ունենալ:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և կրկնել ձեր շարժումները, երբ դուք կբացատրեք, որ մեր գլխի ծայրից *(դիպչեք գլխին)* մինչև մեր ոտքերի մատները *(դիպչեք ոտքերի մատերին)* մեր մարմինն է: Մեր դեմքը *(ժպտացեք)* և մեր մատները *(շարժեք մատները)* մեր մարմնի մասերն են: Խնդրեք երեխաներին մեկ անգամ պտտվել և նստել:

Բացատրեք, որ մեր մարմինը կարող է շատ բաներ կատարել: Մարմնի ամեն մի մասը հատուկ աշխատանք ունի կատարելու:

- Ի՞նչ կարող եք անել ձեր աչքերով:
- Ի՞նչ կարող եք անել ձեր ականջներով:
- Ի՞նչ կարող եք անել ձեր բերանով:
- Ի՞նչ կարող եք անել ձեր ձեռքերով:
- Ի՞նչ կարող եք անել ձեր ոտքերով:

Վարժություն

Թող երեխաները կանգնեն և կատարեն հետևյալ շարժումներով ոտանավորը.

Ես հրաշալի մարմին ունեմ

Ես հրաշալի մարմին ունեմ *(ձեռքերը դրեք կրծքին)*
Որ Երկնային Հայր է ինձ տվել:
Նա ինձ ականջներ է տվել, որ լսեմ *(ձեռքի ափը կլորացրած պահեք ականջի մոտ),*
Եվ աչքեր է տվել, որ տեսնեմ *(ցույց տվեք աչքերը):*

Ես ունեմ երկու ձեռք, որ ծափ տամ *(ծափ տվեք),*
Ես ունեմ երկու ոտք, որ պտտվեմ *(պտտվեք):*
Երբ ցանկանամ, կարող եմ խոնարհվել
Եվ ոտքերիս մատերին դիպչել *(կքվեք և դիպչեք ոտքի մատերին):*

Իմ մարմնի մասին մտածելիս *(մատը դրեք գլխի վրա),*
Ուրախանում եմ նրանով *(նստեք հանգիստ),*
Որ Երկնային Հայրն է ստեղծել
Իմ մարմինն իր կերպարով:

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ցանկանում են, որ մենք հոգ տանենք մեր մարմնի համար

Բացատրեք, որ որովհետև մեր մարմինները կարևոր են, Երկնային Հայրը և Հիսուսը մեզ տվել են օրենքներ, որոնք օգնում են մեզ հոգ տանել մեր մարմնի համար և պահել դրանք ամուր և առողջ: Այդ կանոնները կոչվում են Իմաստության Խոսք: Ցույց տվեք Վարդապետություն և Ուխտերը (կամ ցույց տվեք, թե որտեղից է սկսվում Վարդապետություն և Ուխտերը եռյակ հատորյակում): Բացատրեք, որ Իմաստության Խոսքը գրվել է սուրբ գրությունների այս գրքում:

Քննարկեք, թե ըստ Իմաստության Խոսքի ինչպիսի ուտելիքն է առողջ պահում մեր մարմինը, օրինակ՝ մրգերը, բանջարեղենը և հատիկեղենը: Այնուհետև քննարկեք, թե ինչ են պատվիրել մեզ Երկնային Հայրը և Հիսուսը չօգտագործել,

օրինակ՝ ծխախոտ, ալկոհոլ և սուրճ: Օգնեք երեխաներին հասկանալ, որ երբ մենք հնազանդվում ենք Իմաստության Խոսքին և ճիշտ ենք սնվում, Երկնային Հայրը և Հիսուսը գոհ են լինում մեզանից և օրհնում են մեզ:

Պատմություն

Պատմեք Դանիել Ա-ում տրված պատմությունը, թե ինչպես Դանիելը կերավ այն ուտելիքը, որը Երկնային Հայրն էր պատվիրել իրեն: Այդ ընթացքում ցույց տվեք նկար 1-37՝ Դանիելը հրաժարվում է թագավորի առաջարկած մսից և գինուց:

- Ի՞նչ արեց Դանիելը, երբ թագավորը նրան պատվիրեց ուտել այն, ինչը օգուտ չէր իրեն: (Տես Դանիել Ա.8, 12–13:)
- Ինչպե՞ս Դանիելը և նրա ընկերները օրհնվեցին ուտելու վերաբերյալ Երկնային Հոր կանոններին հետևելու համար: (Տես Դանիել Ա.15, 17, 20:)
- Ի՞նչ առողջարար սնունդ եք դուք ուտում:
- Ինչո՞ւ պետք է առողջարար սնունդ ուտեք:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ուտում եք այն, ինչը լավ է ձեզ համար:

Բացատրեք, որ մենք նաև պետք է այլ բաներ անենք մեր մարմինը առողջ ու ամուր պահելու համար:

Ցույց տվեք նկար 1-38՝ Երեխաները խաղում են գնդակով:

- Ի՞նչ են այս երեխաներն անում:
- Ինչո՞ւ է կարևոր մեր մարմինը մարզելը:
- Ուրիշ ինչպե՞ս կարող ենք մարզել մեր մարմինը:

Ձեր երկու ձեռքերը միասին դրեք դեմքի մի կողմում և աչքերը փակեք, կարծես քնած եք:

- Ի՞նչ եմ ես անում:
- Ինչո՞ւ է կարևոր բավարար չափով քնելը:

Ձևացրեք, իբր ձեր ձեռքերն եք լվանում:

- Ի՞նչ եմ ես անում:
- Ե՞րբ պետք է լվանանք մեր ձեռքերը:
- Ե՞րբ պետք է լոգանք ընդունենք:
- Ե՞րբ պետք է մաքրենք մեր ատամները:
- Ինչո՞ւ պետք է մենք մաքուր լինենք:

Քննարկեք այլ կարևոր առողջապահական կանոններ, օրինակ՝ բոլոր եղանակներին համապատասխան հագնվել, ապահովության լավ սովորություններ զարգացնել և մաքուր օդին լինել:

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ցանկանում են պաշտպանել մեր մարմինը

Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք պաշտպանենք մեր մարմինը վնասվելուց: Հարցրեք երեխաներին, թե ինչպիսի վնասներ կարող են կրել, օգտագործելով հետևյալ հարցերը կամ ինքներդ հարցեր կազմեք.

- Ի՞նչ կարող է լինել, եթե դուք խաղում եք լուցկիով:

- Ի՞նչ կարող է պատահել, եթե խաղում եք փողոցում կամ մեքենաների մոտ:
- Ի՞նչ կարող է պատահել, եթե զգույշ չեք վարվում սուր իրերի, օրինակ՝ դանակների և մկրատների հետ:
- Մեքենայով երթևեկելիս ինչո՞ւ ենք մենք ամրագոտի կապում:

Բացատրեք, որ մենք պետք է պաշտպանենք մեր մարմինները: Մենք չպետք է անենք բաներ, որոնք կվտանգավոր են մեր մարմնի համար և կվնասեն այն: Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք ապահով և երջանիկ լինենք: Նրանք ցանկանում են, որ մենք հոգ տանենք մեր մարմնի համար, որպեսզի առողջ լինենք:

Վկայություն

Ձեր երախտագիտությունը հայտնեք ձեր ֆիզիկական մարմնի համար, և որ երեխաները հոգ են տանում իրենց մարմնի համար, որպեսզի լինեն առողջ և ուժեղ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երգեք “Do As I’m Doing” (*Children’s Songbook*, p. 276) կամ “Hinges” (Children’s Songbook, p. 277), խոսքերին համապատասխան շարժումներ կատարելով: Ասեք երեխաներին, թե որքան երախտապարտ եք այն մարմնի համար, որը կարող է այդքան շատ բաներ անել:

2. Բերեք տարբեր տեսակի սննդամթերքների և ըմպելիքների նկարներ: Խնդրեք երեխաներին որոշել, թե դրանցից որն է լավ և որը վատ իրենց մարմնի համար: Բացատրեք, որ որոշ բաներ լավ են, սակայն չպետք է չարաշահել: Օրինակ, կոնֆետը լավ համ ունի, սակայն շատ ուտելու դեպքում մեզ վատ կզգանք: Ցույց տվեք երեխաների համար լավ սնունդ պատկերող նկարներ:

3.Բերեք պարկի կամ տուփի մեջ դրված իրեր, որոնք օգնում են մեզ լավ խնամք տանել մեր մարմինի համար: Ընդգրկեք նաև պարագաներ, որոնք անհրաժեշտ են մաքուր լինելու համար, օրինակ՝ օճառ, փոքր սրբիչ կամ ատամի խոզանակ: Ընդգրկեք նաև օգակար սննդամթերք, փոքր ծածկոց, որը կխորհրդանշի քունը, և փոքր գնդակ, որը կխորհրդանշի մարզվելը: Երեխաներին տվեք հուշումներ մի իրի վերաբերյալ և թող նրանք գուշակեն, թե ինչ է դա: Ցույց տվեք տվյալ իրը, երբ նրանք ճիշտ կգուշակեն: Սույնը կրկնեք մյուս բոլոր իրերի համար:

4. Խնդրեք երեխաներին կանգնել և մնջախաղով ցույց տալ, ինչպես են պահում իրենց մարմինը կոկիկ ու մաքուր: Թող ձևացնեն, որ լվանում են իրենց ձեռքերը, խոզանակով մաքրում են իրենց ատամները և սանրում են իրենց մազերը: Այնուհետև թող մնջախաղով ցույց տան իրենց սիրելի վարժությունը, օրինակ՝ թռչկոտել, ցատկել կամ գնդակ նետել:

5. Երեխաներին ասեք, որ որոշ մարդկանց մարմիններ թերություններ ունեն: Մենք չպետք է ծաղրենք այդ մարդկանց կամ ծիծաղենք նրանց վրա: Խոսեք այն մասին, թե մենք ինչպես պետք է վերաբերվենք ֆիզիկական արարտներ ունեցող մարդկանց (խոսել նրանց հետ, լինել նրանց ընկերը, նրանց նորմալ վերաբերվել, կարիքի դեպքում օգնել նրանց):

6. Թող երեխաները նկարեն իրենք իրենց: Յուրաքանչյուր նկարի վերևում գրեք՝ *Ես շնորհակալ եմ իմ մարմնի համար:*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցույց տվեք նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ, և թող երեխաները խոսեն այդ մասին:

   - Երբևէ եղե՞լ եք նորածին մանուկ:
   - Կարո՞ղ են նորածին երեխաները քայլել կամ խոսել:

   Հիշեցրեք երեխաներին, որ ժամանակին նրանք մանչուկներ էին, սակայն այժմ իրենց մարմինը աճել է և նրանք ավելի շատ բաներ կարող են անել: Որքան նրանց մարմինը մեծանա, նրանք կկարողանան անգամ ավելին անել:

   Ցույց տվեք նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ, և հիշեցրեք երեխաներին, որ անգամ Հիսուսն է նորածին եղել:

2. Ցույց տվեք ձեր բերանը և ասեք. «Սա իմ բերանն է»: Այնուհետև հարցրեք. «Կարո՞ղ եք ինձ ցույց տալ ձեր բերանը» և օգնեք երեխաներին ցույց տալ իրենց բերանը: Նույնը կրկնեք աչքերի, քթի, ականջների, ձեռքերի և ոտքերի համար: Այնուհետև ցույց տվեք մարմնի որևէ մաս և թող երեխաներն ասեն այդ մասի անունը: Եթե երեխաները ասեն մարմնի բոլոր մասերի անունները, կարող եք նրանց հարցնել մարմնի այն մասերի անունները, որոնց այնքան էլ քաջածանոթ չեն երեխաները, օրինակ, արմունկ, ծունկ, դաստակ և կոճ:

3. Մի պատմություն հորինեք ձեր տարածքում ապրող մի երեխայի մասին: Պատմեք, որ այդ երեխան առավոտյան արթնանում է, հագնվում է, նախաճաշում է, և շարունակեք, թե ինչ է անում ամբողջ օրը: Յուրաքանչյուր գործողությունը ներկայացնելիս հարցրեք երեխաներին, թե մարմնի որ մասն է օգտագործում այդ երեխան:

4. Խնդրեք երեխաներին կանգնել և երգել հետևյալ երգը հարմարեցնելով “Once There Was a Snowman” (*Children’s Songbook,* p. 249) երգի երաժշտությանը: Կքանստեք առաջին տան համար և ձգվեք երկրորդ տան համար:

   Երբ մանչուկ էի, փոքրիկ մանչուկ,
   Ես շատ փոքր էի, փոքրիկ մանչուկ:

   Այժմ մեծանում եմ ու մեծանում,
   Եվ հասակս է բարձրանում:

Դաս
17

Ես շնորհակալ եմ իմ ձեռքերի համար

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի գնահատել իր ձեռքերը և այն, ինչ կարող են դրանք անել:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մատթեոս ԺԹ.13–15 և Վարդապետություն և Ուխտեր 20.70, 35.6, 42.43–44:
2. Պատրաստեք մի տոպրակ կամ տուփ և մեջը դրեք տարբեր նյութերի և ձևերի առարկաներ, օրինակ՝ քար, տերև, գործվածքի կտոր, գդալ, սանր և մատիտ: Այնպես արեք, որ այդ իրերի քանակը համապատասխանի դասարանի երեխաների թվին:
3. Հնարավորության դեպքում, յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք նշանների լեզվով թերթիկը (թղթերի վրա պատճենահանեք այս դասի վերջում տրված նշանների լեզվի մասը):
4. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Փոքր իր՝ կոճակ կամ կոպեկ:
   գ. Նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը (62021), նկար 1-11՝ Մկրտվող տղան (62018), նկար 1-12՝ Հաստատվող աղջիկը (62020), նկար 1-39՝ Երեխային օրհնելը, նկար 1-40՝ Հիվանդներին սպասավորելը (62342):
5. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Նրբանկատ եղեք ձեր դասարանի հաշմանդամ երեխաների հանդեպ: Կենտրոնացեք ոչ թե նրանց արատների, այլ այն ամենի վրա, ինչ *կարող են* նրանք անել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի ձեռքը մտցնել ձեր պատրաստած տոպրակի կամ տուփի մեջ՝ առանց ներսը նայելու: Թող երեխան շոշափի առարկաներից մեկը և ասի, թե ինչպիսին է այն (թեթև, պինդ, հարթ, կոպիտ), և փորձի գուշակել, թե դա ինչ է: Այնուհետև թող երեխան այդ առարկան հանի տոպրակից կամ տուփից և ցույց տա դասարանին: Թող մյուս երեխաները շոշափեն այն: Շարունակեք մինչև բոլոր երեխաները մասնակցեն:

- Ի՞նչ օգտագործեցիք տոպրակի (տուփի) մեջ մտցնելու համար:
- Ի՞նչ օգտագործեցիք առարկան շոշափելու համար:

Բացատրեք, որ մեր ձեռքերը մեծ օրհնություն են մեզ համար: Մենք կարող ենք մեր ձեռքերը օգտագործել տարբեր կերպ:

Մենք կարող ենք շատ բաներ անել մեր ձեռքերով

Խնդրեք երեխաներին պարզել իրենց ձեռքերը և նայել դրանց: Խոսեք այն մասին, թե ինչ կարող են երեխաներն անել իրենց ձեռքերով: Նրանք կարող են որևէ իր վերցնել իրենց մատերով, պահել իրենց ափի մեջ, կարող են թափահարել և տարբեր կողմեր շրջել իրենց ձեռքերը:

Վարժություն

Օգտագործելով փոքր առարկա, օրինակ՝ կոճակ կամ կոպեկ, խնդրեք երեխաներին հերթով վերցնել այն՝ առանց բթամատն օգտագործելու: Հիշեցրեք երեխաներին, որ մեր մարմնի յուրաքանչյուր մասը կարևոր է:

Վարժություն

- Ինչպե՞ս են ձեր ձեռքերն օգնում ձեզ պատրաստվել եկեղեցի գալուն:

Խնդրեք երեխաներին մնջախաղի միջոցով ցույց տալ, թե ինչ են անում ամեն առավոտ, օրինակ՝ լվանում են իրենց դեմքը, հագնվում են, սանրում են մազերը, ուտում են և խոզանակով մաքրում են ատամները:

- Ինչպե՞ս են ձեր ձեռքերն օգնում ձեզ խաղալիս:

Խնդրեք երեխաներին մնջախաղով ցույց տալ ինչպես են օգտագործում իրենց ձեռքերը խաղալիս, օրինակ՝ գնդակ են խաղում, բլոկներով կառուցում են, տիկնիկին են կերակրում, կամ թմբուկ են նվագում:

- Ինչպե՞ս են ձեր ձեռքերն օգնում ձեզ գործ անելիս:

Խնդրեք երեխաներին մնջախաղով ցույց տալ ինչպես են իրենց ձեռքերի օգնությամբ գործեր կատարում, օրինակ՝ խաղալիքներն են հավաքում, սեղանն են դնում, անկողինն են հարդարում կամ տնային կենդանուն են կերակրում:

- Ինչպե՞ս են ձեր ձեռքերն օգնում ձեզ եկեղեցում:

Խնդրեք երեխաներին մնջախաղով ցույց տալ, թե ինչպես ենք օգտագործում մեր ձեռքերը, օրինակ՝ ձեռք ենք սեղմում, նկար ենք պահում, ձեռք ենք բարձրացնում հարցի պատասխանելու համար, կամ հաղորդություն ենք ընդունում:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ մեր ձեռքերը մեծ օրհնություն են մեզ համար, և որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք օգտագործենք մեր ձեռքերը հոգուտ մեզ և մյուսների: Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը չեն ցանկանում, որ մենք օգտագործելով մեր ձեռքերը չարակամ բաներ անենք մյուսների հանդեպ՝ խփենք, կսմթենք կամ ճանկռենք: Նրանք ցանկանում են, որ մենք սովորենք ճիշտ ձևով օգտագործել մեր ձեռքերը:

Մարդիկ օգտագործում են իրենց ձեռքերը, որ օգնեն մեզ

- Ինչպե՞ս են ձեր ծնողները և ընտանիքի մյուս անդամներն օգտագործում իրենց ձեռքերը, որ օգնեն ձեզ:

Խոսեք այն մասին, թե ինչպես են մեր ընտանիքները պատրաստում մեր ուտելիքը, լվանում մեր հագուստը, կապում կոշիկները, խաղում մեզ հետ և շատ այլ բաներ անում մեզ համար:

Բացատրեք, որ քահանայություն կրող տղամարդիկ կարող են օգնել մեզ ձեռնադրումով: Հերթով ցույց տվեք «Նախապատրաստություն» բաժնում տրված նկարները, և թող երեխաները թվարկեն, թե ինչպիսի օրհնություններ կարող ենք ստանալ քահանայություն կրողների ձեռքերի շնորհիվ: Օգնեք նրանց հասկանալ, որ մենք օրհնություն ենք ստանում մանուկ հասակում, մկրտվում ենք, երբ ութ տարեկան ենք, մկրտությունից հետո հաստատվում ենք և մեզ շնորհվում է Սուրբ Հոգու պարգևը, ամեն շաբաթ հաղորդության ընթացքում հաց ու ջուր ենք ընդունում, որը օրհնվում և բաժանվում է քահանայություն կրողների կողմից, և հիվանդ ժամանակ մենք օրհնություն ենք ստանում:

Պատմություն

Բացեք ձեր Աստվածաշունչը, Մատթեոս ԺԹ.13–15 և պատմեք, թե ինչպես Հիսուսն օրհնություն տվեց երեխաներին: Բարձրաձայն կարդացեք հատված 13-ի առաջին մասը (մինչև *աղոթք անե*): Խոսեք այն մասին, թե ինչպես Հիսուսն օգտագործեց իր ձեռքերը, որպեսզի օրհնի երեխաներին:

Բացատրեք, որ Հիսուսը նաև օգտագործեց իր ձեռքերը այլ կերպ օգնելով մարդկանց, օրինակ օրհնություն տալով, երբ նրանք հիվանդ, կույր կամ համր էին:

Մեր ձեռքերը կարող են խոսել

Օգտագործեք ձեր ձեռքերը թափահարելով կամ ձեռքով ինչ-որ բան ցույց տալով: Հարցրեք երեխաներին, թե ինչ եք դուք ասում ձեր ձեռքերով:

Բացատրեք, որ որոշ մարդիկ, ովքեր խուլ են և չեն կարող լսել կամ խոսել, իրենց ձեռքերով նշաններ են ցույց տալիս, որոնք խոսքեր են նշանակում: Նրանք խոսում են իրենց ձեռքերով: Դա կոչվում է նշանների լեզու:

Վարժություն

Դասի վերջում տրված նյութն օգտագործելով, երեխաներին ուսուցանեք, թե նշանների լեզվով ինչպես պետք է ասել «հայրիկ», «մայրիկ» և «Ես սիրում եմ քեզ»: Հնարավորության դեպքում յուրաքանչյուր երեխայի տվեք այդ նյութի պատճենը, որ տուն տանի և կիսվի իր ընտանիքի հետ:

Վկայություն

Պարզեք ձեր ձեռքերը և ձեր երախտագիտությունը հայտնեք դրանց համար: Խրախուսեք երեխաներին շնորհակալություն հայտնել Երկնային Հորը իրենց ձեռքերի համար և դրանք օգտագործել հոգուտ իրենց և մյուսների:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Թղթի վրա նկարեք յուրաքանչյուր երեխայի ձեռքը: Թղթերի վերևում գրեք՝ *Ես շնորհակալ եմ իմ ձեռքերի համար,* և թող երեխաները ներկեն դրանք և տանեն տուն:
2. Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “I Have Two Little Hands” (*Children’s Songbook,* p. 272) կամ “My Hands” (*Children’s Songbook,* p. 273): Խոսքերին համապատասխան շարժումներ կատարեք:

3. Եթե վայրը և եղանակը թույլ են տալիս, երեխաներին տարեք զբոսանքի, որպեսզի շոշափեն և զգան տարբեր առարկաները, օրինակ՝ աղյուս, ծեփ, ծառի բուն և խոտ:

4. Կատարեք հետևյալ վարժությունը օգնելով երեխաներին հաշվել իրենց մատները.

   Մատերը հաշվենք

   Պարզեք մի ձեռքը և օգտագործելով ձեր մյուս ձեռքի մատը ցույց տվեք և հաշվեք՝ սկսելով ճկույթից:

   Մեկ մատ, երկու մատ, երեք մատ, չորս մատ:
   Այժմ բութը՝ որ դառնա հինգ մատ:
   Այս ձեռքիս վրա հինգ մատ ունեմ,
   Ինչպես Երկնային Հայրն է ասել, որ լինեն: planned.

   Պարզեք մյուս ձեռքը և նույն ձևով ցույց տվեք ու հաշվեք:

   Մեկ մատ, երկու մատ, երեք մատ, չորս մատ:
   Այժմ բութը՝ որ դառնա հինգ մատ:
   Այս ձեռքիս վրա էլ հինգ մատ ունեմ:
   Կարող եմ սովորեցնել, թե ինչ անեն:

   Պարզեք երկու ձեռքերը և հաշվելիս ծալեք յուրաքանչյուր մատը:

   Միասին լինում են տաս, եկեք նորից հաշվենք
   Մեկ, երկու, երեք, չորս,
   Հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տաս, ահա բոլորը:
   (Բոլոր մատերը ուղղեք:)
   Կարող են կանգնել ամբողջ հասակով:

5. Մի քանի անգամ երգեք “Fun to Do” (*Children’s Songbook,* p. 253): Ամեն տան համար, թող երեխաներն ասեն մի բան, որ կարող են իրենց ձեռքերն անել, օրինակ՝ գնդակ նետել, ծաղիկ քաղել, տիկնիկին օրորել, դաշնամուր նվագել կամ ձեռքով ցտեսություն անել:

6. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորը՝ խոսքերին համապատասխան շարժումներ կատարելով.

   Ես ձգվում եմ վեր

   Ես ձգվում եմ վեր
   Եվ թեքվում եմ վար
   Եվ երկու ձեռքով բարևում եմ:
   Ես մատերս եմ բացում,
   Եվ այժմ բռունցք եմ անում:
   Ես առաջ եմ ձգվում,
   Եվ ետ եմ թեքվում:
   Այսպես ես ծափ եմ տալիս:
   Ապա նստում և ձեռքերս դնում եմ ծնկներիս,
   Որտեղ նրանք մնում են հանգիստ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, մինչ դուք կասեք բառերը.

   Ես սիրում եմ իմ ձեռքերը

   Ես սիրում եմ իմ ձեռքերը, նրանք իմ ընկերներն են *(պահեք ձեռքերը ձեր առջև և նայեք դրանց):*
   Նրանք զբաղված են և ողջ օրն ինձ օգնում են *(ցույց տվեք իբր ձեռքերն աշխատում են):*
   Նրանք հանգիստ ծալվում *(ծալեք ձեռքերը)* կամ բարձր ծափահարում են *(ծափ տվեք):*
   Երբ լավ գործեր են անում, ես հպարտանում եմ:

2. Խնդրեք երեխաներին շրջանաձև նստել: Նկարագրեք իրավիճակը և խնդրեք երեխաներին մնջախաղով ցույց տալ, թե այդ իրավիճակում ինչ պետք է կատարեն իրենց ձեռքերը:

   Օրինակներ՝

   Ցույց տվեք, թե ինչ պետք է անեն ձեր ձեռքերը նախքան ուտելը:
   Ցույց տվեք, թե ինչ պետք է անեն ձեր ձեռքերը, երբ պատմություն եք լսում:
   Ցույց տվեք, թե ինչ պետք է անեն ձեր ձեռքերը, երբ ձեզ խնդրում են հավաքել ձեր խաղալիքները:
   Ցույց տվեք, թե ինչ պետք է անեն ձեր ձեռքերը, երբ դուք աղոթում եք:

   Բացատրեք, որ մենք պետք է օգնենք մեր ձեռքերին՝ միշտ անել այն, ինչ պետք է անեն:

3. Երեխաների հետ արտասանեք հետևյալ ոտանավորը՝ խոսքերին համապատասխան շարժումներ կատարելով.

   Ծափ տվեք

   Ծափ տվեք, ծափ տվեք,
   Ծափ տվեք ինչպես ես:

   Դիպչեք ձեր ուսերին, դիպչեք ձեր ուսերին,
   Դիպչեք ինչպես ես:

   Թփթփացրեք ձեր ծնկներին, թփթփացրեք ձեր ծնկներին,
   Թփթփացրեք ճիշտ ինչպես ես:

   Շարժեք ձեր գլուխը, շարժեք ձեր գլուխը,
   Շարժեք ճիշտ ինչպես ես:

   Ծափ տվեք, ծափ տվեք,
   Այժմ թող հանգստանան ձեռքերը:

ԵՍ

ՍԻՐՈՒՄ ԵՄ

ՔԵԶ



ՀԱՅՐԻԿ

ՄԱՅՐԻԿ

Մեր ձեռքերը կարող են խոսել

Դաս
18

Ես շնորհակալ եմ իմ ականջների համար

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի գնահատել իր ականջները և այն, ինչ նրանք անում են:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մարկոս է.32–35 և Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Թանկագին Մարգարիտ,
   բ. Նկար 1-4՝ Առաջին տեսիլքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 403, 62470), նկար 1-41՝ խողական ապարատով երեխան, մեր օրերում ապրող մարգարեի նկար:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Նրբանկատ եղեք ձեր դասարանի հաշմանդամ երեխաների հանդեպ: Կենտրոնացեք ոչ թե նրանց արատների, այլ այն ամենի վրա, ինչ *կարող են* նրանք անել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Շշնջալով կատարեք հետևյալը.

Ողջունեք յուրաքանչյուր երեխայի: Պատվիրեք երեխաներին մի քանի բան կատարել, օրինակ՝ նստել, բարձրացնել ձեռքերը, իջեցնել ձեռքերը և ցույց տալ երկու մատը:

Ձեր նորմալ ձայնով հարցրեք երեխաներին, թե ինչպես հասկացան ձեզ, երբ դուք շշնջում էիք:

- Ձեր մարմնի ո՞ր մասն օգնեց ձեզ ընկալել իմ խոսքը:

Մեր ականջներն օրհնություն են մեզ համար

Երգ

Երեխաների հետ երգեք կամ կարդացեք “Thanks to Our Father” երգի 1 և 2 տուները *Children’s Songbook,* p. 20):

Շնորհակալություն քեզ, մեր Հայր,
Մեզ ամեն ինչ տալու համար:

Աչքեր և ականջներ, ձեռքեր և ոտքեր,
Ուտելիք, որ ուտենք, և շորեր, որ հագնենք:

- Ըստ այս երգի, ի՞նչ է մեզ տվել Երկնային Հայրը:
- Ի՞նչն է օգնում մեզ լսել: (Մեր ականջները:)

Թող երեխաները զգուշորեն շոշափեն իրենց ականջները: Բացատրեք, որ իրենք ականջների այդ արտաքին մասով չեն լսում: Այդ մասի օգնությամբ ձայնը ականջով հասնում է թմբկաթաղանթին և ականջի այլ մասերին, որոնց միջոցով էլ նրանք լսում են:

- Ինչպե՞ս կարող ենք պահել մեր ականջները:

Բացատրեք, որ մենք պետք է պաշտպանենք մեր ականջները բարձր ձայներից և այն առարկաներից, որոնք կարող են վնասել դրանց:

Բացատրեք, որ տարբեր պատճառներով որոշ մարդկանց ականջները լավ չեն գործում, և նրանք չեն կարողանում լսել բոլոր ձայները, որ հիմնականում մարդիկ լսում են: Եթե երեխաները ճանաչում են թույլ լսողություն ունեցող որևէ մեկին, կարող եք բացատրել այդ անձնավորության լսողական ապարատի մասին: Բացատրելիս ցույց տվեք նկար 1-41՝ լսողական ապարատով երեխան: Օգնեք երեխաներին հասկանալ, որ հաճախ թույլ լսողություն ունեցող մարդիկ նաև լավ չեն կարողանում խոսել, որովհետև մարդիկ սովորում են խոսել իրենց լսած ձայները կրկնօրինակելով:

Վարժություն

Նշանների լեզվով ասեք՝ «Ես սիրում եմ քեզ» (տես Դաս 17):

- Հիշո՞ւմ եք, ինչ է դա նշանակում:

Խնդրեք երեխաներին կատարել այդ նշանները:

Հիշեցրեք երեխաներին, որ անցյալ շաբաթ դուք քննարկել եք, թե ինչպես կարող են ձեռքերը խոսել նշանների լեզվով: Օգնեք երեխաներին հասկանալ, որ խուլ մարդիկ այլ միջոցներով են հաղորդակցվում, օրինակ՝ նշանների լեզվով, գրելով և բերանի շարժումները կարդալով:

Պատմություն

Պատմեք Հիսուսի և խուլ մարդու պատմությունը, ինչպես տրված է Մարկոս է.32–35-ում:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս խուլ մարդը զգաց, երբ հասկացավ, որ լսում է:

Շեշտեք, թե ինչպիսի մեծ օրհնություն է, երբ կարողանում ես լսել:

Մենք կարող ենք ձայներ լսել մեր ականջներով

Վարժություն

Ասեք երեխաներին, որ իրենց ականջները պետք է օգտագործեն ձայներ տարբերելու համար:

Խնդրեք երեխաներին հերթով գալ սենյակի կենտրոն: Երեխաների ականջին շշնջացեք իրենց ծանոթ կենդանու կամ ձայն հանող առարկայի անուն: Խնդրեք երեխային դասարանի համար հանել այդ կենդանու կամ առարկայի ձայնը, և թող մյուս երեխաները կռահեն, թե ինչն է հանում այդ ձայնը: (Կարող է լինել կովի բառաչ, շան հաչոց, հեռախոսի զանգ կամ մեքենայի ազդանշան:)

Երեխաների հետ քննարկեք մի քանի կարևոր ձայների մասին, որ կարող են լսել իրենց ականջներով, օրինակ՝ երբ ծնողները կանչում են և վտանգի դեպքում զգուշացնող ձայները:

- Որո՞նք են ձեր սիրելի ձայները:

Մենք կարող ենք լսել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ուսմունքները

Խնդրեք երեխաներին հանգիստ նստել և լսել:

- Ի՞նչ եք դուք լսում:

Քննարկեք տարբեր ձայներ, որ կարող են նրանք լսել, օրինակ՝ դռան բացվելու և փակվելու ձայնը, մարդիկ խոսակցություն միջանցքում, երգեհոնային երաժշտություն կամ քամու ձայն:

- Ուրիշ ի՞նչ ձայներ ենք մենք լսում եկեղեցում:

Բացատրեք, որ մենք լսում ենք մեր ուսուցիչներին, ծնողներին, Երեխաների Խմբի ղեկավարներին, եպիսկոպոսին և եկեղեցու այլ ղեկավարներին:

- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր լսել այդ մարդկանց:

Բացատրեք, որ այդ մարդիկ օգնում են մեզ սովորել, թե ինչ են Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում, որ մենք անենք:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-4՝ Առաջին տեսիլքը, և թող երեխաները պատմեն, թե ինչ են հիշում այդ նկարի մասին: Բացեք սուրբ գրություններում Թանկագին Մարգարիտը և բարձրաձայն կարդացեք, թե ինչ ասաց Երկնային Հայրը Ջոզեֆ Սմիթին Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17-ում. «Սա է իմ Սիրելի Որդին: Լսիր Նրան»:

Խնդրեք երեխաներին ձեզ հետ միասին մի քանի անգամ կրկնել այս խոսքերը: Բացատրեք, որ Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք լսենք ինչ են ինքը և Հիսուսն ասում: Օգնեք երեխաներին հասկանալ, որ Երկնային Հայրը և Հիսուսը ուղղակիորեն չեն խոսում բոլորի հետ, բայց մենք կարող ենք լսել մեր ծնողներին, ուսուցիչներին և Եկեղեցու ղեկավարներին: Նրանք կարող են մեզ ասել այն, ինչ Երկնային Հայրը և Հիսուսը ուզում են, որ մենք իմանանք: Սուրբ Հոգին կարող է նաև օգնել մեզ իմանալ այն, ինչ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք անենք:

Ցույց տվեք ապրող մարգարեի նկարը:

- Ո՞վ է սա:

Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը մեզ հետ խոսում են մեր Եկեղեցու ղեկավարների, հատկապես մեր մարգարեի և մեր եպիսկոպոսի միջոցով: Այդ ղեկավարները մեզ կասեն, թե Երկնային Հայրը և Հիսուսը ինչ են ուզում, որ մենք անենք: Մենք պետք է ուշադիր լսենք նրանց:

Վկայություն

Ձեր երախտագիտությունը հայտնեք ձեր ականջների և լսելու պարգևի համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Խնդրեք երեխաներին փակել աչքերը և ձեռքերով ծածկել դրանք: Մի երեխայի գլխին գլխին դիպչեք: Այդ երեխան պետք է ասի. «Ես շնորհակալ եմ իմ աչքերի համար»: Թող մյուս երեխաները գուշակեն, թե ում ձայնն էր դա: Շարունակեք մինչև բոլոր երեխաները կմասնակցեն:

2. Երեխաների հետ կատարեք հետևյալ ոտանավորը.

   Ես հրաշալի մարմին ունեմ

   Ես հրաշալի մարմին ունեմ *(ձեռքերը դրեք կրծքին)*
   Որ Երկնային Հայրն է ինձ տվել:
   Նա ինձ ականջներ է տվել, որ լսեմ *(ձեռքի ափը կլորացրած պահեք ականջի մոտ),*
   Եվ աչքեր է տվել, որ տեսնեմ *(ցույց տվեք աչքերը):*

   Ես ունեմ երկու ձեռք, որ ծափ տամ *(ծափ տվեք),*
   Ես ունեմ երկու ոտք, որ պտտվեմ *(պտտվեք):*
   Երբ ցանկանամ, կարող եմ խոնարհվել
   Եվ ոտքերիս մատներին դիպչել *(կքվեք և դիպչեք ոտքի մատերին):*

   Իմ մարմնի մասին մտածելիս *(մատը դրեք քունքի մոտ),*
   Ուրախանում եմ նրանով *(նստեք հանգիստ),*
   Որ Երկնային Հայրն է ստեղծել
   Իմ մարմինն իր կերպարով:

3. Խնդրեք երեխաներին կանգնել մի ուղղությամբ, իսկ դուք կանգնեք նրանց ետևում: Զայն հանեք ձեր ձեռքերով կամ ձայն արձակող առարկաներով, և խնդրեք երեխաներին գուշակել, թե ինչ եք դուք անում այդ ձայնը հանելու համար: Կարող եք ծափ տալ, մատերով ճտացնել կամ զանգակով զնգացնել: Թող երեխաները փորձեն իրենք հանել այդ ձայնը:

4. Ձեր տարածքում ձայներ ձայնագրեք, օրինակ՝ շան հաչոց, ծիտիկների ճռվողյուն, կամ ծիծաղ: Դասարանում միացրեք ձեր ձայնագրությունը և խնդրեք երեխաներին լսել և գուշակել ձայները:

5. Երեխաներին ուսուցանեք մի պարզ երգ կամ նշանների լեզվով մի պարզ արտահայտություն: Եթե ճանաչում եք ինչ-որ մեկի, որը գիտի նշանների լեզուն, կարող եք նրան հրավիրել դասարան, որպեսզի երբ դասարանը երգում է «Աստծո զավակն եմ», նա նշաններով արտահայտի երգի խոսքերը:

6. Երեխաների հետ նստեք շրջանով: Մի կարճ արտահայտություն շշնջացեք ձեր կողքի երեխայի ականջին: Ապա այդ երեխան թող շշնջա այդ արտահայտությունը իր կողքի երեխայի ականջին և այդպես մինչև շրջանն ավարտվի: Վերջին երեխան պետք է բարձրաձայն ասի այդ արտահայտությունը: Դասարանին ասեք, թե ինչ արտահայտություն եք ասել առաջին երեխային և տեսեք, թե ինչպես է փոխվել այն:

   Վարժությունից հետո հարցրեք երեխաներին ինչի օգնությամբ նրանք լսեցին ուղերձը: (Ականջների:) Հիշեցրեք նրանց շնորհակալություն հայտնել Երկնային Հորը իրենց ականջների համար:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Հնարավորության դեպքում, երեխաներին դուրս տարեք: Խրախուսեք նրանց հանգիստ լսել իրենց ականջներով: Ի՞նչ ձայներ են նրանք լսում: Վերադառնալով դասարան, վերհիշեք իրենց լսած բոլոր ձայները:

2. Խնդրեք երեխաներին կանգնել և ասել հետևյալ ոտանավորը՝ կատարելով խոսքերին համապատասխան շարժումներ.

Դիպչեք ձեր աչքերին

Դիպչեք ձեր աչքերին,
Դիպչեք ձեր քթին,
Դիպչեք ձեր ականջներին,
Դիպչեք ձեր ոտնաթաթին:

Ձեռքերով ձգվեք վեր,
Շատ վեր,
Մի փոքր էլ ձգվեք,
Որ երկնքին հասնեք:

Ձեռքերը դրեք
Ձեր մազերին,
Հանգիստ նստեք
Ձեր աթոռին:

Ես շնորհակալ եմ իմ աչքերի համար

Դաս
19

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի գնահատել իր աչքերը և այն, ինչ դրանք անում են:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Հովհաննես Թ.1–7 և 3 Նեփի 11.1–17:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Մեծ անցքով կոճ և կոշիկի թել կամ ուղղակի թել: (Եթե դասարանը մեծ է, դուք կարող եք բերել դրանցից մի քանի հատ:)
   գ. Շարֆ կամ աչքերը կապելու կտոր:
   դ. Նկար 1-43՝ Հիսուսը բուժում է կույրին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 213, 62145), նկար 1-44՝ Հիսուսը ուսուցանում է արևմտյան կիսագնդում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 316, 62380):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Սրբանկատ եղեք ձեր դասարանի հաշմանդամ երեխաների հանդեպ: Կենտրոնացեք ոչ թե նրանց արատների, այլ այն ամենի վրա, ինչ *կարող են* նրանք անել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաներին ցույց տվեք, թե որքան հեշտ է բաց աչքերով կոշիկի թելը կամ ուղղակի թելը անցկացնել կոճի անցքով: Ապա փակեք ձեր աչքերը և փորձեք թելը կրկին անցկացնել կոճի միջով: Թող բոլոր երեխաները հերթով փորձեն:

Մեր աչքերը օրհնություն են մեզ համար

Բացատրեք, որ մենք աչքեր ունենք, որ կարողանանք կարդալ և սովորել, աշխատել և խաղալ, և տեսնել գեղեցիկ երկիրը:

Երեխաների հետ քննարկեք, թե ինչպես կփոխվեր իրենց կյանքը, եթե չկարողանային տեսնել:

- Ինչպե՞ս կուտեիք ձեր ճաշը:
- Ինչպե՞ս կիմանայիք որ հագուստը հագնել:
- Ինչպե՞ս կգտնեիք ձեր տուն տանող ճանապարհը:

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Two Little Eyes” (*Children’s Songbook,* p. 268):

Երկու փոքր աչքեր, որ թարթում են,
Երկու փոքր աչքեր, որ տեսնում են,
Գլուխ, ուս, ծնկներ և ոտքեր,
Եվ շատ ուրիշ բաներ ես ունեմ:
Տրա լյա լյա լյա լյա լյա,
Երկու փոքր աչքեր, որ տեսնում են,
Երկու փոքր աչքեր, որ թարթում են,
Եվ շատ ուրիշ բաներ ես ունեմ:

(From *Merrily We Sing,* © 1948, 1975 by Pioneer Press, Inc. [a division of Jackman Music]. Օգտագործվել է թույլտվությամբ:)

Վարժություն

Խնդրեք երեխաներին նայել պատուհանից դուրս (կամ գեղեցիկ նկարին) և ձևացնել առաջին անգամն է, որ կարողանում են տեսնել: Խնդրեք նրանց պատմել՝ ինչ են տեսնում: Խոսեք գույների և ձևերի մասին: Օգնեք երեխաներին հասկանալ, թե ինչպիսի օրհնություն է տեսնելը:

- Որո՞նք են ձեր սիրելի բաները, որ ուզում եք տեսնել:

Բացատրեք, որ կան մարդիկ, ովքեր լավ չեն տեսնում: Այդ մարդիկ ստիպված են ակնոց կրել, որը օգնում է նրանց տեսնել: Ոմանք էլ կույր են և չեն կարողանում ոչինչ տեսնել:

Վարժություն

Քննարկեք, թե ինչպես են կույրերը սովորում ինքնուրույն գնալ տարբեր տեղեր ուղեկցող շան կամ ձեռնափայտի օգնությամբ: Կապեք մի երեխայի աչքերը և ձևացրեք, որ դուք ուղեկցող շուն եք: Թող այդ երեխան բռնի ձեր ձեռքը ինչպես կբռներ շան կապը: Երեխային ուղեցեք ամբողջ սենյակով: Թող մյուս երեխաներն էլ հերթով մասնակցեն ձևացնելով կույր են կամ ուղեկցող շուն են:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-43՝ Հիսուսը բուժում է կույրին, և պատմեք ինչպես Հիսուսը բժշկեց կույրին, ինչպես որ այն տրված է Հովհաննես Թ.1–7:

- Ի՞նչ արեց Հիսուսը ցեխով: (Տես Հովհաննես Թ.6:)
- Ի՞նչ տեղի ունեցավ, երբ կույրը լվացվեց ավազանում: (Տես Հովհաննես Թ.7:)
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կույրը զգաց, երբ արդեն կարողանում էր տեսնել:

Ես շնորհակալ եմ Երկնային Հորը իմ աչքերի համար

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և ձեզ հետ միասին կրկնել հետևյալ տունը, ամեն անգամ ցույց տալով տվյալ մարմնի մասը.

Շնորհակալություն իմ աչքերի համար

Շնորհակալություն իմ աչքերի համար,
Իմ ականջների, քթի ու բերանի համար,
Շնորհակալություն իմ ձեռքերի համար,
Եվ նաև իմ ոտքերի համար:

(Վերցված է Լյուսի Պիկոյի բանաստեղծությունից:)

Պատմություն

Բոլորին հերթով փոխանցեք նկար 1-44՝ Հիսուսն ուսուցանում է արևմտյան կիսագնդում, և խնդրեք յուրաքանչյուր երեխայի ասել մեկ բան, որ տեսնում է նկարում: Պատմեք արևմտյան կիսագունդ Հիսուսի այցելության մասին, ինչպես այն տրված է 3 Նեփի 11.1–17-ում:

- Ո՞ւմ տեսան մարդիկ:
- Ինչպե՞ս նրանք զգացին տեսնելով Հիսուսին: (Տես 3 Նեփի 11.16–17:)
- Ի՞նչ գույնի էր Հիսուսի պարեգոտը: (Տես 3 Նեփի 11.8:)

Բացատրեք, որ Նեփիի ժողովրդի պես մենք միգուցե չենք կարող տեսնել Հիսուսին, սակայն ամեն անգամ տեսնելով այս գեղեցիկ աշխարհը, կարող ենք հիշել մեր հանդեպ նրա սիրո մասին:

Վկայություն

Երեխաների հետ կիսվեք ձեր երախտագիտությամբ ձեր աչքերի հանդեպ: Ասեք, որ ամեն օր գեղեցիկ արարումներ տեսնելիս հիշում եք ձեր հանդեպ Հիսուսի և Երկնային Հոր սիրո մասին: Հիշեցրեք երեխաներին՝ շնորհակալություն ասել Երկնային Հորը իրենց աչքերի համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Խնդրեք երեխաներին ուշադիր նայել միմյանց աչքերին, կոպերին, հոնքերին և թարթիչներին: Բացատրեք, որ մեր կոպերը, հոնքերը և թարթիչները պաշտպանում են մեր աչքերը կեղտից, փոշուց և քրտինքից:
2. Դասից առաջ սուր առարկայի, օրինակ՝ քորոցի օգնությամբ ծակելով շրջան և քառակուսի նկարեք թղթի վրա: Դասի ժամանակ հերթով կապեք երեխաների աչքերը և խնդրեք, որ շոշափեն և ասեն, թե ինչ ուրվագծեր են դրանք: Բացատրեք, որ դա նման է բրեյլի լեզվին, այդպես են կույր մարդիկ կարդում:
3. Օգտագործելով թղթե տոպրակներ, յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք բացվող-փակվող աչքեր (տես Դասի վերջում տրված նկարը): Յուրաքանչյուր տոպրակի վրա գրեք՝ Շնորհակալություն իմ աչքերի համար: Խնդրեք երեխաներին գունավորել աչքերը և մազեր նկարել իրենց տոպրակների վրա: Օգտագործելով թղթե տոպրակի աչքերը, երեխաների հետ մնջախաղով ցույց տվեք երբ ենք մենք բացում և փակում մեր աչքերը, օրինակ՝ երբ արթնանում ենք կամ գնում քնելու, երբ աղոթում ենք, և երբ վախեցած ենք:
4. Հնարավորության դեպքում, երեխաներին տարեք բնության գիրք քայլելու: Խնդրեք նրանց քայլելիս ծալել ձեռքերը և լինել շատ հանգիստ, որպեսզի կենտրոնանան շրջապատը դիտելու վրա: Դասարան վերադառնալուց հետո խնդրեք նրանց հերթով ասել, թե ինչ տեսան:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երգեք կամ կարդացեք “Popcorn Popping” (*Children’s Songbook,* p. 242): Բացատրեք, որ ծիրանենու ծաղկած ծաղիկները ադիբուիի նման են:
   - Եթե դուք նայում եք պատուհանից դուրս, ինչպես ասվում է երգում, դուք կտեսնե՞ք ադիբուդի ծիրանենու վրա: Ի՞նչ եք տեսնում, երբ նայում եք պատուհանից դուրս:

Թող երեխաները նայեն պատուհանից դուրս կամ նրանց մի փոքր ժամանակով դուրս տարեք: Վերադարձեք դասարան և քննարկեք, թե ինչ տեսան դրսում:

•Ինչի՞ օգնությամբ դուք տեսաք այդ ամենը: (Աչքերի:)

Բացատրեք, որ մենք պետք է շնորհակալ լինենք Երկնային Հորը մեր աչքերի համար:

2. Խնդրեք երեխաներին կանգնել և ասել հետևյալ ոտանավորը՝ կատարելով խոսքերին համապատասխան շարժումներ.

Դիպչեք ձեր աչքերին,
Դիպչեք ձեր քթին,
Դիպչեք ձեր ականջներին,
Դիպչեք ձեր ոտնաթաթին:

Ձեռքերով ձգվեք վեր,
Շատ վեր,
Մի փոքր էլ ձգվեք,
Որ երկնքին հասնեք:

Ձեռքերը դրեք
Ձեր մազերին,
Հանգիստ նստեք
Ձեր աթոռին:

3. Երեխաներին մի փոքր առարկա ցույց տվեք: Բացատրեք, որ դուք պատրաստվում եք դնել այն սենյակում մի տեղ, իսկ նրանք օգտագործելով իրենց աչքերը պետք է գտնեն այն: Խնդրեք երեխաներին փակել աչքերը և դրեք այդ առարկան տեսանելի, բայց ոչ շատ աչքի ընկնող տեղում: Թող երեխաները բացեն իրենց աչքերը և գտնեն առարկան առանց տեղից վեր կենալու և աղմուկ հանելու: Ասեք նրանց, որ ծալեն ձեռքերը, եթե գտել են առարկան: Երեխաներին հիշեցրեք, որ պետք է հանգիստ նստեն և թույլ տան, որ մյուսներն էլ իրենց տեսողությունը լարելով գտնեն առարկան: Խաղը կրկնեք որքան ցանկանում եք:



Ես շնորհակալ եմ իմ հոտառության և համի զգացողության համար

Դաս
20

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի գնահատել իր հոտառությունը և համի զգացողությունը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ելից ԺՁ.11–15, 31 և Վարդապետություն և Ուխտեր 59.18–19:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Վարդապետություն և Ուխտեր:
   բ. Հաճելի հոտով փոքր բաժիններով ուտելիք՝ յուրաքանչյուր երեխայի համար (օրինակ՝ միրգ, հաց, թխվածքաբլիթ կամ ադիբուդի): Դրեք այդ ուտելիքը առանձին բաժիններով տոպրակի մեջ: Ծնողներից հավաստիացեք, որ երեխաները ալերգիկ չեն այդ ուտելիքների հանդեպ:
   գ. Թթու ուտելիք (օրինակ՝ լիմոնի հյութ), աղի (օրինակ՝ աղ), և քաղցր (օրինակ՝ շաքար) որպեսզի երեխաները համտեսեն: Ծնողներից հավաստիացեք, որ երեխաները ալերգիկ չեն դրանց հանդեպ:
   դ. Նկար 1-35՝ Մանանա հավաքելը:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Նրբանկատ եղեք ձեր դասարանի հաշմանդամ երեխաների հանդեպ: Կենտրոնացեք ոչ թե նրանց արատների, այլ այն ամենի վրա, ինչ *կարող են* նրանք անել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք երեխաներին փակել իրենց աչքերը: Թող յուրաքանչյուր երեխա հոտ քաշի տոպրակի մեջ դրված ուտելիքներից և գուշակի, թե ինչ ուտելիքներ են դրանք: Մինչ նրանց աչքերը դեռևս փակ են, երեխաներին տվեք, որ համտեսեն փոքր բաժիններով ուտելիքները: Խնդրեք երեխաներին բացել իրենց աչքերը, և ցույց տվեք կամ ասեք, թե հենց նոր ինչ կերան:

- Ի՞նչ հոտ ուներ այդ ուտելիքը:
- Ի՞նչ համ ուներ այդ ուտելիքը:

Ասեք երեխաներին, որ անգամ չտեսնելով այդ ուտելիքը, նրանք կարող են հաճույքով ուտել այն, քանի որ Երկնային Հայրն օրհնել է նրանց հոտառության և համի զգայարաններով:

Մենք բոլորս ունենք քիթ, որ կարողանանք հոտերը զգալ

- Ինչպե՞ս ենք մենք հոտերը զգում:

Քննարկեք երեխաների հետ, թե ինչի հոտ են զգացել այս շաբաթվա ընթացքում, օրինակ՝ եփվող ճաշի, անձրևից հետո թարմ օդի կամ ծաղիկների: Ասեք երեխաներին, որ մենք պետք է շնորհակալություն հայտնենք Երկնային Հորը մեր հոտառության համար:

- Ինչի՞ց եք սիրում հոտ քաշել:

Վարժություն

Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորը.

Ես քիթ ունեմ

Ես քիթ ունեմ *(ցույց տվեք քիթը):*
Որ դեմքիս վրա է գտնվում *(ձեռքերը դրեք թշերի վրա)*,
Ստած է հենց մեջտեղում,
Ամենալավ տեղում *(քթի մոտ մատով շրջան գծեք):*

Քիթս կարող է ֆսֆսացնել *(ֆսֆսցարեք),*
Եվ կարող է հոտ քաշել *(քթով խորը շնչեք և թողեք):*
Երկնային Հայր, շնորհակալություն, *(ձեռքերը ծալեք)*
Որ քիթս այդքան լավ է գործում:

Մենք ունենք լեզու, որ համ տեսնենք

Բացատրեք, որ Երկնային Հայրը մեզանից յուրաքանչյուրին օրհնել է լեզվով, որ համ զգանք: Թող երեխաները ցանկության դեպքում համտեսեն թթու, աղի և քաղցր բաներ:

- Ո՞րն է թթու:
- Ո՞րն է աղի:
- Ո՞րն է քաղցր:
- Ի՞նչ եք սիրում համտեսել:

Ցույց տվեք Վարդապետություն և Ուխտեր (կամ Վարդապետություն և Ուխտերի տիտղոսաթերթը եռյակ հատորյակում): Բացատրեք, որ այս սուրբ գրքում մեզ ասվում է, որ այն ամենը, ինչ լավ հոտ ու համ ունեն, մեր օգտագործման համար են նախատեսված (տես ՎևՈւ 59.18–19):

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-35՝ Մանանա հավաքելը: Պատմեք մանանայի պատմությունը, ինչպես տրված է Ելից ԺՁ.11–15, 31-ում:

- Ի՞նչ համ ուներ մանանան: (Տես Ելից ԺՁ.31:)
- Երբևէ դուք մեղր համտեսե՞լ եք:
- Ի՞նչ համ ունի այն:

Բացատրեք, որ շատ բաներ կան, որոնք վտանգավոր են համտեսելու համար՝ որոշ հատապտուղներ, մաքրող միջոցներ, անհայտ շշերի կամ տարաների պարունակություն, կամ դեղեր և դեղահաբեր առանց ծնողների թույլտվության: Դրանցից կարող ենք թունավորվել: Շեշտեք, որ նախքան երեխաները կհամտե-

սեն կամ կուտեն իրենց գտածը, նրանք անպայման պետք է ստանան չափահասի թույլտվությունը:

Վկայություն

Ձեր երախտագիտությունը հայտնեք քթի համար, որ հոտեր ենք զգում, և լեզվի համար, որ համեր ենք զգում: Հիշեցրեք երեխաներին, որ շնորհակալություն հայտնեն Երկնային Հորը իրենց հոտառության և համի զգացողությունների համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Բերեք ուժեղ դուրեկան հոտ ունեցող մի քանի բաներ, օրինակ՝ օճառ, ծաղիկ և լիմոն, և հոտ չունեցող բաներ, օրինակ՝ թուղթ և խաղալիք: Խնդրեք երեխաներին առանձնացնել հոտ ունեցող բաները: Խնդրեք ամեն անգամ մի երեխա փակի իր աչքերը, դրանցից մեկից հոտ քաշի և կռահի, թե ինչ է այն: Թող որ բոլոր երեխաները մասնակցելու հնարավորություն ունենան:
2. Թող երեխաները հայելու մեջ նայեն իրենց լեզվին: Բացատրեք, որ մեր լեզվի մակերեսին կան համի բազմաթիվ գնդիկներ, որոնց օգնությամբ մենք զգում ենք քաղցր, թթու և աղի համերը: Խնդրեք երեխաներին մի փոքր ջուր խմել: Բացատրեք, որ լեզով մենք զգում ենք հեղուկի առկայությունը կամ սառնությունը:
3. Թող յուրաքանչյուր երեխա նկարի իր սիրելի ուտելիքը: Խնդրեք երեխաներին ցույց տալ իրենց նկարածը և ասել, թե որն է իրենց սիրելի ուտելիքը:
4. Հանեք տեսքով միմյանց նման, բայց համով տարբեր ուտելիքներ, օրինակ՝ աղ և շաքարավազ կամ ալյուր և օսլա: Յուրաքանչյուր երեխայի տվեք դրանցից մի փոքր բաժին, որ համտեսեն: Այնուհետև հարցրեք երեխաներին, թե ինչ համ ունեն դրանք: Քննարկեք այն մասին, որ կան բաներ, որ միևնույն տեսքն ունեն, սակայն համերով խիստ տարբերվում են: (Ծնողներից տեղեկացեք, որ երեխաներն ալերգիկ չեն ձեր բերած ուտելիքի հանդեպ:)
5. Երգեք “A Song of Thanks” (*Children’s Songbook,* p. 20) կամ “For Health and Strength” (*Children’s Songbook,* p. 21):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Գրատախտակին կամ թղթի վրա օվալ նկարեք: Բացատրեք, որ այդ օվալը դեմք է:
   - Ի՞նչ է պակասում:

   Լրացրեք նկարը, երբ երեխաները նշում են՝ աչքեր, ականջներ, քիթ և բերան: Այնուհետև վերանայեք, թե ինչ է ամեն մի օրգանն անում: Հայտնեք, թե որքան երախտապարտ եք Երկնային Հորը ձեր մարմնի համար:
2. Ցույց տվեք ձեր բերանը և ասեք. «Սա իմ բերանն է»: Այնուհետև հարցրեք. «Կարո՞ղ եք ինձ ցույց տալ ձեր բերանը», և օգնեք երեխաներին ցույց տալ իրենց բերանը: Նույնը կրկնեք աչքերի, քթի, ականջների, ձեռքերի և ոտքերի համար: Այնուհետև ցույց տվեք մարմնի որևէ մաս և թող երեխաներն ասեն այդ

մասի անունը: Եթե երեխաները ասեն մարմնի բոլոր մասերի անունները, կարող եք նրանց հարցնել մարմնի այն մասերի անունները, որոնց այնքան էլ քաջածանոթ չեն երեխաները, օրինակ, արմունկ, ծունկ, դաստակ և կոճ:

3. Խնդրեք երեխաներին կանգնել և ասել հետևյալ ոտանավորը՝ կատարելով խոսքերին համապատասխան շարժումներ.

Դիպչեք ձեր աչքերին

Դիպչեք ձեր աչքերին,
Դիպչեք ձեր քթին,
Դիպչեք ձեր ականջներին,
Դիպչեք ձեր ոտնաթաթին:

Ձեռքերով ձգվեք վեր,
Շատ վեր,
Մի փոքր էլ ձգվեք,
Որ երկնքին հասնեք:

Ձեռքերը դրեք
Ձեր մազերին,
Հանգիստ նստեք
Ձեր աթոռին:

Ես զգացմունքներ ունեմ

Դաս
21

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի, որ բացահայտի իր զգացմունքները և սովորի երջանիկ լինել:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ԺԵ.11–32:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. ժպտացող/խոժոռված դեմքի պատկերներ (տես օրինակը դասի վերջում):
   գ. Կավիճ և ջնջոց:
   դ. Նկար 1-45՝ Սպասք լվանալը, նկար 1-46՝ Երեխաները մայրիկին ծաղիկներ են նվիրում, նկար 1-47՝ Կռվող երեխաները, նկար 1-48՝ Երեխաները խաղում են բլոկներով, նկար 1-49՝ Անառակ որդին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 220, 62155):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք ժպտացող/խոժոռ դեմքի պատկերը: Երեխաների հետ մի քանի անգամ երգեք կամ կարդացեք “Smiles” (*Children’s Songbook,* p. 267) երգի բառերը: Թող համապատասխան պահին մի քանի երեխաներ դեմքին ժպտացող կամ խոժոռված արտահայտություն տան:

Եթե հանկարծ խոժոռվեցիր,
Այդպես մի մնա:
Արագ սթափվիր,
Եվ կրկին ժպտա:

Ոչ ոք խոժոռ դեմք չի սիրում:
Փոխարենը դու ժպտա:
Աշխարհն ավելի լավ վայր է դառնում,
Եթե միշտ ես ժպտում:

Մեր զգացմունքները արտահայտվում են մեր դեմքի վրա և մեր գործողություններում

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ժպտում եք:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ձեր դեմքը խոժոռված է:

Բացատրեք, որ նայելով մեր դեմքերին մարդիկ հաճախ կարողանում են ասել, թե ինչպես ենք մենք մեզ զգում: Խնդրեք երեխաներին ձեզ ցույց տալ իրենց ուրախ դեմքը:

Վարժություն

Գրատախտակի վրա գծեք չորս մեծ շրջաններ: Հասարակ գծեր քաշելով նկարեք դեմքեր, որոնք արտահատում են տարբեր զգացմունքներ՝ երջանիկ, տխուր, բարկացած և վախեցած (տես ստորև տրված նկարը): Յուրաքանչյուր նկար նկարելիս խնդրեք երեխաներին նկարագրել այդ դեմքի վրա արտահայտված զգացմունքները, ապա խնդրեք իրենք արտահայտեն երջանիկ, տխուր, բարկացած և վախեցած դեմքեր:



- Ի՞նչն է ձեզ երջանկացնում:
- Ի՞նչն է ձեզ տխրեցնում:
- Ի՞նչն է ձեզ զայրացնում:
- Ի՞նչն է ձեզ վախեցնում:

Երեխաներին պատմեք, թե երբ եք ձեզ տխուր, բարկացած կամ վախեցած զգացել, իսկ երբ եք ձեզ երջանիկ զգացել:

Մենք կարող ենք սովորել վերահսկել մեր զգացմունքները

Բացատրեք, որ լավ է, երբ մենք ցույց ենք տալիս մեր տարբեր զգացմունքները, սակայն պետք է սովորենք ճիշտ ձևով ցույց տալ դրանք, հատկապես երբ մենք բարկացած ենք:

Ցույց տվեք նկար 1-47՝ Կռվող երեխաները:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս են այս երեխաները զգում:
- Ձեր կարծիքով, ի՞նչ են նրանք ասում միմյանց:
- Ի՞նչ պետք է անեք, երբ բարկացած եք:

Բացատրեք, որ թեև բարկացած ժամանակ ուզում ենք խփել, գոռալ կամ վիրավորել ինչ-որ մեկին, մենք կարող ենք մեր զգացմունքները արտահայտել քաղաքավարի ձևով և բարյացակամորեն: Երբ խփում կամ գոռում ենք, մենք միայն ավելի ենք բարկանում, իսկ բարի վերաբերմունք դրսևորելով մենք ավելի լավ ենք մեզ զգում:

Վարժություն

Թող երեխաները հերթով լինեն այս նկարի երեխաները: Օգնեք նրանց մտածել, թե այդ նկարի երեխաները ինչ կարող են ասել միմյանց բղավելու կամ խփելու փոխարեն, օրինակ՝ «Կարո՞ղ եմ ես այժմ փորձել», «Եկեք հերթով խաղանք», «Ես տխրում եմ, երբ դու ինձ վատ մականուններ ես տալիս» կամ «Ես չեմ սիրում, երբ դու այդպես ես անում»:

Ցույց տվեք նկար 1-48՝ Երեխաները խաղում են բլոկներով: Մատնանշեք, որ այս երեխաները միասին համերաշխ խաղում են՝ ուրախ դեմքերով, որովհետև կիսվում են և բարյացակամորեն են խոսում միմյանց հետ:

- Ո՞վ կարող է օգնել ձեզ ավելի լավ զգալ, երբ դուք տխուր եք, բարկացած կամ վախեցած:

Բացատրեք, որ երբ մենք խոսում ենք մեր մայրիկների, հայրիկների և այլոց հետ, ովքեր սիրում են մեզ, նրանք կարող են մեզ օգնել հասկանալ, թե ինչու ենք մենք այսպես զգում: Եթե աղոթում ենք Երկնային Հորը, Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ ավելի լավ զգալ: Սուրբ Հոգին կօգնի մեզ իմանալ, թե ինչ պետք է անենք, որպեսզի կարողանանք երջանիկ լինել:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և մի քանի անգամ կատարել հետևյալ գործողություններով ոտանավորը.

Իմ զգացմունքները

Երբեմն, երբ ես տխրում եմ *(տխուր դեմք ընդունեք)*,
Մայրիկս ինձ գրկում է, և ես ուրախանում եմ *(գրկեք ինքներդ ձեզ և ուրախ դեմք ընդունեք):*

Երբեմն, երբ ես շատ եմ բարկանում *(բարկացած դեմք ընդունեք)*,
Գնում և հայրիկիս հետ եմ խոսում *(քայլեք տեղում և գլուխը շարժեք, կարծես թե զրուցում եք):*

Երբ ինչ-որ բանից վախենում եմ *(վախեցած դեմք ընդունեք)*,
Հանգստանալու համար ես աղոթում եմ *(ձեռքերը ծալեք)*:

Իսկ երբ դուրս եմ գնում և խաղում,
Ողջ օրն ուրախ է անցնում *(ուրախ դեմք ընդունեք)*:

Մենք երջանիկ ենք, երբ օգնում ենք մյուսներին

Ցույց տվեք նկար 1-46՝ Երեխաները մայրիկին ծաղիկներ են նվիրում:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս են իրենց զգում այս նկարում պատկերված մարդիկ:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են իրենց այդպես զգում:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ մի բան եք տալիս ինչ-որ մեկին:

Ցույց տվեք նկար 1-45՝ Սպասք լվանալը:

- Ի՞նչ է այս աղջիկն անում:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս է այս նկարի աղջիկն իրեն զգում: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ օգնում եք ինչ-որ մեկին:

Վարժություն

Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորը.

Ես ուրախ եմ, երբ օգնում եմ

Ես սիրում եմ, երբ մայրիկիս եմ օգնում *(ձևացրեք իբր գոգնոց եք հագնում)*,
Նա անելու շատ գործեր ունի:
Ես ամաններն եմ չորացնում *(ձևացրեք ամաններ եք չորացնում)*
Եվ փոքրիկին եմ կերակրում *(ձևացրեք երեխային շշով կերակրում եք):*

Ես սիրում եմ, երբ հայրիկիս եմ օգնում *(ձևացրեք աշխատանքային ձեռնոցներ եք հագնում)*,
Նա անելու շատ գործեր ունի *(ձևացրեք թփերն եք հարդարում կամ մոլախոտերն եք հանում):*
Ես օգնում եմ նրան պարտեզում *(ձևացրեք բույսերն եք ջրում),*
Մինչև իր գործն է ավարտում:

Ես ուրախ եմ, երբ օգնում եմ *(մատով ժպտացող դեմք ցույց տվեք):*
Ես ինձ շատ լավ եմ զգում *(ձեռքերը դրեք հակառակ ուսերին և գրկեք ինքներդ ձեզ):*
Քանզի երբ մյուսներին եմ օգնում *(ձեռքերը լայն տարածեք)*,
Իմ պարտականությունն եմ կատարում *(գլխով հաստատող շարժում արեք և ձեռքերը ծալեք):*

Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք երջանիկ լինենք

Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք ուրախ լինենք: Նրանք գիտեն, որ մենք կարող ենք ուրախ լինել, եթե անում ենք այն, ինչ նրանք պատվիրում են մեզ:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-49՝ Անառակ որդին, և պատմեք անառակ որդու պատմությունը, որը գտնվում է Ղուկաս ԺԵ.11–32-ում: Մատնանշեք այն տարբեր զգացմունքները, որ ապրեցին հայր ու որդի: Յուրաքանչյուր զգացողության համար խնդրեք մի երեխայի գրատախտակի վրա ցույց տալ համապատասխան դեմքը: Օրինակ, կարող եք ասել՝ տղան ցանկանում էր տնից հեռանալ և գնալ հեռավոր երկիր: Երբ նա հեռացավ, հայրը շատ *տխրեց*: Մի որոշ ժամանակ անց, այդ տղայի ընկերները լքեցին իրեն: Նա *տխրեց*: Շուտով նա այլևս փող չուներ: Նա *վախեցավ*, որովհետև քաղցած էր և նրան ոչ ոք ուտելիք չէր տալիս . . . և այլն:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս որդին իրեն զգաց, երբ տուն վերադարձավ:
- Ինչո՞ւ էր հայրն ուրախ, երբ որդին վերադարձավ: (Տես Ղուկաս ԺԵ.24:)
- Ինչո՞ւ էր ավագ եղբայրը բարկացել, երբ փոքր եղբայրը վերադարձավ: (Տես Ղուկաս ԺԵ.28–30:) Ի՞նչ կարող էր անել, որպեսզի կրկին ուրախ լիներ:

Վկայություն

Երեխաներին հավաստիացրեք, որ բոլորն էլ երբեմն ուրախ, տխուր, բարկացած կամ վախեցած են զգում: Մենք պետք է սովորենք այդ զգացմունքները ճիշտ ձևով արտահայտել: Հիշեցրեք երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք ուրախ լինենք: Երեխաներին ասեք, թե որքան երջանիկ եք լինում, երբ անում եք այն, ինչ Երկնային Հայրը և Հիսուսն են պատվիրում մեզ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Խնդրեք երեխաներին շրջան կազմել: Խնդրեք նրանց, որ շրթունքները չշարժեն և չժպտան: Այնուհետև սկսեք ժպտալ ամբողջ շրջանով և ասել հետևյալ խոսքերը. «Ես ժպտում եմ (երեխայի անունը)-ին»: Այժմ պետք է ժպտա այն երեխան, որի անունը տվեցիք, և կրկնի նույն արտահայտությունը՝ հաջորդ երեխայի անունը տալով: Շարունակեք, մինչև շրջանում կանգնած բոլոր երեխաները կժպտան:

Հիշեցրեք երեխաներին, որ երբ մենք ժպտանք այլ մարդկանց, նրանք հաճախ ժպիտով մեզ կպատասխանեն: Երբ մենք ժպտում ենք, դժվար է տխուր, բարկացած կամ վախեցած լինել:

2. Երգեք “When We’re Helping” (*Children’s Songbook,* p. 198) կամ “Jesus Wants Me for a Sunbeam” (*Children’s Songbook,* p. 60):

3. Խնդրեք երեխաներին մտածել մի բան, որն անելիս կարող են ուրախ լինել: Լոբով տոպրակը կամ փափուկ առարկան նետեք մի երեխայի և ասեք. «(Երեխայի անունը) ուրախ է, երբ »: Խնդրեք այդ երեխային լրացնել նախադասությունը նշելով, թե ինչն է իրեն ուրախացնում և ապա թող լոբով տոպրակը ետ նետի ձեզ: Շարունակեք մինչև յուրաքանչյուր երեխա մասնակցի այս խաղին:

4. Պատմեք մի երեխայի մասին, որը հաճելի գործ կատարեց իր մայրիկի համար, օրինակ՝ տնային գործ: Մայրիկը չգիտեր, թե ով է օգնել իրեն, այնպես որ նա ընտանիքի յուրաքանչյուր երեխային հարցրեց, թե ով է օգնել իրեն: Երբ նա հասավ բարի գործը կատարած երեխային, նա իմացավ, որ այդ երեխան է արել դա, քանի որ այդ նա լայն ժպտում էր: Երեխան երջանիկ էր իրեն զգում, որովհետև նա լավ արարք էր կատարել:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երբ ասեք հետևյալ ոտանավորը, երեխաներին օգնեք կատարել շարժումները: Կրկնեք, եթե երեխաները ցանկանում են:

   Ուրախ օրեր

   Երկու աչք, որ լավ բաներ են տեսնում *(ցույց տվեք աչքերը)*,
   Երկու շուրթ, որ միշտ են ժպտում *(լայն ժպտացեք):*
   Երկու ականջ, որ մյուսների խոսքերն են լսում *(ձեռքի ափերը կլորացրած դրեք ականջների մոտ)*,
   Երկու ձեռք, որ խաղալիքներն են դասավորում *(ձևացրեք, որ խաղալիքներ եք հավաքում):*

   Լեզու, որ ամեն օր բարի խոսքեր է ասում *(ցույց տվեք բերանը)*,
   Սիրող սիրտ, որ աշխատում է և խաղում *(ձեռքերը դրեք սրտի վրա):*
   Երկու ոտք, որ ուրախությամբ են վազում *(ցույց տվեք ոտքերը)*—
   Եվ բոլորին ուրախացնում:

2. Երգեք “If You’re Happy” (*Children’s Songbook,* p. 266) և կատարեք խոսքերի մեջ նշվող շարժումները: Կրկնեք լրացուցիչ տունները ևս, օրինակ Երգարանի էջի վերջում տրված տունները:

3. Խնդրեք երեխաներին ընդունել ուրախ դեմք, տխուր դեմք, բարկացած դեմք և հոգնած դեմք: Բացատրեք, որ նրանք կարող են լացելու կամ նեղվելու փոխարեն խոսքերով ասել, թե ինչպես են իրենց զգում: Երբ խոսում ենք մեր զգացմունքների մասին, մենք հաճախ ավելի լավ ենք զգում:



Ես կարող եմ շատ բաներ անել

Դաս
22

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի իմանալ, որ որպես Երկնային Հոր երեխաներ մեզանից յուրաքանչյուրը կարող է շատ բաներ անել:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ա Թագավորաց ժէ:
2. Երեխաների ծնողներից իմացեք մի բան, որ կարող է անել դասարանի յուրաքանչյուր երեխա կամ սովորում է անել:
3. Պատրաստեք թերթիկներ վրան գրված պարզ հրահանգներ, օրինակ՝ ծափ տվեք, հաշվեք երեքը, քայլեք սենյակում, ցատկեք, շրջան նկարեք (գրատախտակին կամ թղթի վրա), կանգնեք մեկ ոտքի վրա, ձեռքերը ծալեք կամ ցույց տվեք մի բան, որ կապույտ գույնի է: Պատրաստեք դասարանի երեխաների թվին համապատասխան թղթեր: Եթե ձեր դասարանում կան հաշմանդամ երեխաներ, ներառեք այնպիսի գործողություններ, որ նրանք կարող են անել:
4. Առանձին թերթիկների վրա գրեք յուրաքանչյուր երեխայի անունը:
5. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Փոքր ձկնորսական կարթ (պարտադիր չէ, տես դաս 11):
   գ. Տարա անուններով թերթիկները մեջը լցնելու համար (պարտադիր չէ):
   դ. Նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ (62307), նկար 1-10, Ընտանեկան աղոթք (62275), նկար 1-38՝ Երեխաները խաղում են գնդակով, նկար 1-50՝ Ես կարող եմ հագնվել, նկար 1-51՝ Միասին աշխատող ընտանիքը (62313), նկար 1-52՝ Դավիթը սպանում է Գողիաթին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 112, 62073):
6. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Սրբանկատ եղեք ձեր դասարանի հաշմանդամ երեխաների հանդեպ: Կենտրոնացեք ոչ թե նրանց արատների, այլ այն ամենի վրա, ինչ կարող են նրանք անել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաների անուններով թերթիկները ծալեք և լցրեք մի տարայի մեջ կամ հատակին: Թող մի երեխա ձկնորսական կարթով կամ ձեռքով հանի այդ թղթերից մեկը: Խնդրեք այն երեխային, որի անունը գրված է այդ թերթիկի մեջ, կանգնե ձեր կողքին: Դասարանին ասեք, այդ երեխան թե ինչ է կարողանում լավ անել կամ սովորում է անել: Կրկնեք, մինչև որ բոլոր երեխաների անունները դուրս կգան

և մի բան կնշեք յուրաքանչյուրի մասին: Շնորհավորեք երեխաներին այն ամենի համար, ինչ կարող են նրանք անել կամ սովորում են անել:

Մեր մարմինները կարող են շատ բաներ անել

Երգ

Երեխաների հետ երգեք «Աստծո զավակն եմ» (Հիմներ և մանկական երգեր, էջ 58):

Զավակն եմ ես Աստծո,
Նա է ինձ կյանք տվել,
Տվել է ինձ տուն երկրային
Եվ ծնողներ բարի:

Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
Որ ուղին գտնեմ,
Սովորեցրու՝ ինչ անել,
Որ մի օր Քեզ հասնեմ:

- Ո՞վ է ձեր հոգու հայրը:
- Ո՞վ է ձեզ ուղարկել երկիր՝ մարմին ստանալու:

Երեխաների հետ կրկնեք, որ Երկնային Հայրը ծրագրել է, որ մենք գանք երկիր և մարմին ստանանք: Բացատրեք, որ նա ցանկանում է՝ մենք սովորենք շատ բաներ անել մեր մարմնով և ճիշտ օգտագործել մեր մարմինը, որպեսզի նրա նման դառնանք:

- Ի՞նչ կարող եք անել ձեր ձեռքերով, ոտքերով, բերանով, աչքերով:

Ցույց տվեք նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ կարող է այս մանկիկն անել:

Տվեք հետևյալ կամ նմանատիպ հարցեր, որպեսզի նշեք, թե որքան շատ բաներ են սովորել անել երեխաները մանուկ հասակից ի վեր:

- Կարո՞ղ է մանկիկը քայլել:
- Կարող է մանկիկը խոսել:
- Կարո՞ղ է մանկիկը ինքնուրույն ուտել:
- Կարո՞ղ է մանկիկն ինքնուրույն հագնվել:
- Կարո՞ղ է մանկիկն օդում գլուխկոնծի տալ:
- Կարո՞ղ է մանկիկը երգեր երգել:
- Կարո՞ղ է մանկիկը եռանիվ հեծանիվ վարել:

Բացատրեք, որ երեխաները մեծանում են և կսովորեն ավելի շատ բաներ անել: Մեկ առ մեկ, ցույց տվեք նկարներ՝ 1-10, 1-38, 1-50 և 1-51: Թող մի երեխա ցուցադրի նկարը, իսկ մյուսները բացատրեն, թե ինչ է կատարվում նկարում: Երբ երեխաները կպատասխանեն, գովասանքի խոսքեր ասեք նրանց, որ հասկանում են, թե ինչեր կարող է անել մեր մարմինը:

Վարժություն

Թող յուրաքանչյուր երեխա ընտրի հրահանգով մի թուղթ: Բարձրաձայն կարդացեք այդ հրահանգը և թող այդ երեխան կատարի այնտեղ գրվածը: Թող բոլորը հերթով մասնակցեն:

- Ի՞նչ եք սովորում անել այժմ:
- Ի՞նչ եք ցանկանում սովորել անել, երբ մեծանաք:

Ասեք երեխաներին, որ դուք շնորհակալ եք Երկնային Հորը, որ ունենք մարմիններ, որոնք կարող են շատ բաներ անել:

Երկնային Հայրը կարող է օգնել մեզ շատ բաներ անել

Ասեք երեխաներին, որ երբեմն մեզ խնդրում են դժվար բաներ անել:

- Ի՞նչ եք փորձել անել, որը դժվար է եղել:
- Ո՞վ կարող է օգնել մեզ անել նման բաներ: (Ծնողները, եղբայրները և քույրերը, ուսուցիչները:)
- Ո՞ւմ կարող ենք մենք աղոթել օգնության համար, երբ պետք է մի դժվար գործ կատարենք: (Երկնային Հայրը:)

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը նաև կարող է օգնել մեզ, երբ մենք դժվար գործ պետք է կատարենք:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-52՝ Դավիթը սպանում է Գողիաթին, և պատմեք Դավթի և Գողիաթի պատմությունը, որը տրված է Ա Թագավորաց ժէ: Բացատրեք, որ Հիսուսն օգնեց Դավթին դժվար խնդիր կատարել:

- Ումի՞ց էր սարսափում Իսրայելցիների բանակը: (Տես Ա Թագավորաց ժէ.4–8:)
- Ո՞ւմ օգնությունն էր ակնկալում Դավիթը: (Տես Ա Թագավորաց ժէ.37:)

Վկայություն

Ասեք, թե որքան երախտապարտ եք Երկնային Հորը ձեր մարմնի և շատ բաների համար, որ կարող է այն անել: Խրախուսեք երեխաներին խնդրել Երկնային Հորն օգնել իրենց օգտագործել իրենց մարմինը բարիք գործելու համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երեխաների հետ երգեք կամ կարդացեք “Do As I’m Doing” (*Children’s Songbook,* p. 276) կամ “Fun to Do” (*Children’s Songbook,* p. 253) և կատարեք համապատասխան շարժումներ: Թող երեխաներն առաջարկեն շարժումներ մյուս տուների համար:
2. Երեխաներին բաժանեք թուղթ ու մատիտներ, և թող երեխաները նկարեն մեկ կամ մի քանի բաներ, որ իրենք կարող են անել: Յուրաքանչյուրի թղթի վերևում գրեք՝ *Ես կարող եմ շատ բաներ անել*:
3. Օգնեք երեխաներին որոշել, թե ինչ կարող են անել տանը օգնելով ինչ-որ մեկին, օրինակ՝ սեղան պատրաստել, հատակը ավլել կամ տնային կենդանուն կերակրել: Հիշեցրեք նրանց, որ դասից հետո իրենց ծնողներին ասեն այդ մասին, որպեսզի նրանք հիշեցնեն երեխաներին այդ մասին:
4. Կրկնեք դաս 16–20-ի համապատասխան վարժություններից մի քանիսը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Խնդրեք երեխաներին կանգնել և հետևյալ բառերով կատարել “Once There Was a Snowman” (*Children’s Songbook,* p. 249) երգը: Կքանստելու շարժումներ կատարեք առաջին տան համար, և ձգվելու շարժումներ՝ երկրորդ տան համար:

   Երբ մանչուկ էի, փոքրիկ մանչուկ,
   Ես շատ փոքր էի, փոքրիկ մանչուկ:

   Այժմ ես մեծանում եմ ու մեծանում,
   Եվ հասակս է բարձրանում:

   Թող երեխաները խոսեն, թե ինչ են սովորել անել մանուկ հասակից ի վեր:

2. Ցույց տվեք մի շարժում, օրինակ՝ թռչկոտել կամ ցատկել, և խնդրեք երեխաներին ասել, թե ինչ եք դուք անում: Այնուհետև խնդրեք երեխաներին կատարել նույն շարժումը: Թող հերթով յուրաքանչյուր երեխա ցույց տա մի շարժում, իսկ մյուսները ասեն, թե ինչ շարժում է դա և ապա կրկնեն այն:

Ես պատկանում եմ ընտանիքի

Դաս
23

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Երկնային Հայրը նախատեսել է մեզանից յուրաքանչյուրի համար՝ ունենալ ընտանիք, որը մեր կարիքն ունի և սիրում է մեզ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս Ա.26–35:
2. Ծանոթացեք ձեր դասարանի երեխաների ընտանիքների հետ և պատրաստվեք հիշատակել յուրաքանչյուրի ընտանիքում տեղի ունեցող մի դրական իրադարձություն, օրինակ՝ նորածին ընտանիքում, միսիայում ծառայող եղբայր կամ քույր, կամ ընտանեկան զբոսանք:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Կավիճ և ջնջոց:
   գ. Նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ (62307), նկար 1-7՝ Սիրող ընտանիք, նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 201, 62495), նկար 1-23, Ծիտիկներով բույն, նկար 1-51՝ Միասին աշխատող ընտանիքը (62313), նկար 1-53՝ Ընտանեկան զվարճանք (62384):
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Սրբանկատ եղեք ձեր դասարանի երեխաների ընտանեկան դրության վերաբերյալ: Օգնեք երեխաներին հասկանալ, որ կարևորը ոչ թե ընտանիքի անդամների թիվն է, այլ այն, որ ընտանիքի անդամները սիրեն միմյանց և հոգ տանեն միմյանց մասին:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք նկար 1-23՝ Ծիտիկներով բույն: Թող երեխաները խոսեն նկարի մասին և գտնեն ծիտիկներին և բույնը:

- Ո՞վ է բույն շինել ծիտիկների համար:
- Ինչո՞ւ ծիտիկները մայրիկի և հայրիկի կարիք ունեն, որոնք հոգ են տանում նրանց համար: (Որպեսզի կերակրեն նրանց, տաք պահեն և պաշտպանեն վտանգից:)
- Երբ ծիտիկները մի փոքր մեծանում և ամրանում են, ո՞վ է նրանց թռչել սովորեցնում:

Բացատրեք, որ ծիտիկները պատկանում են ընտանիքին, որը հոգում է նրանց կարիքները:

Ես պատկանում եմ ընտանիքի

- Դու ունե՞ք ընտանիք:
- Ինչո՞ւ դուք ընտանիքի կարիք ունեք, որ հոգա ձեր մասին:

Ցույց տվեք նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ: Վերանայեք, թե ինչպես է Երկնային Հայրը պլանավորել, որ մեզանից յուրաքանչյուրը երկիր գա և ընտանիքի անդամ լինի: Բացատրեք, որ երբ մանուկը ծնվում է, նա չի կարող իր մասին հոգալ: Փոքրիկ երեխան չի կարող ինքնուրույն ուտել կամ հագնվել: Նա ընտանիքի կարիք ունի, որ իր մասին հոգ տանի:

- Ո՞վ է ձեր մասին հոգ տարել, երբ դուք ծնվել եք:
- Ի՞նչ է արել ձեր ընտանիքը ձեզ համար, երբ դուք փոքր երեխա եք եղել:
- Ի՞նչ է ձեր ընտանիքն անում ձեր համար այժմ:
- Ո՞վ պլանավորեց, որ դուք պատկանեք ընտանիքի:

Օգնեք երեխաներին հասկանալ, թե որքան ուրախ են եղել իրենց ընտանիքները, երբ իրենք ծնվել են: Շեշտեք, թե որքան են իրենց ծնողները և ընտանիքի այլ անդամները սիրում իրենց և ցանկանում, որ իրենք երջանիկ լինեն:

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ «Աստծո զավակն եմ» երգը (Հիմներ և մանկական երգեր, էջ 58):

Զավակն եմ ես Աստծո,
Նա է ինձ կյանք տվել,
Տվել է ինձ տուն երկրային
Եվ ծնողներ բարի:

Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
Որ ուղին գտնեմ,
Սովորեցրու՝ ինչ անել,
Որ մի օր Քեզ հասնեմ:

Ցույց տվեք նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ, և բացատրեք, որ երբ Հիսուսը եկավ երկիր, նա ծնվեց ընտանիքում (տես Ղուկաս Ա.26–35):

- Ովքե՞ր են այս նկարի մարդիկ:
- Ո՞վ է Հիսուսի մայրը:
- Ո՞վ է Հիսուսի հայրը: (Հիշեցրեք երեխաներին, որԵրկնային Հայրն է Հիսուսի հայրը, իսկ Հովսեփը բարի մարդ էր՝ ընտրված Երկնային Հոր կողմից, որ հոգ տանի Մարիամի և Հիսուսի մասին:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ զգացմունքներ էին տածում Մարիամն ու Հովսեփը Հիսուսի հանդեպ:
- Ձեր կարծիքով, ի՞նչ արեցին Մարիամն ու Հովսեփը, որպեսզի հոգ տանեն մանուկ Հիսուսի մասին:
- Ո՞վ ծրագրեց Հիսուսի համար, որ ունենա ընտանիք, որը կսիրի և հոգ կտանի նրա մասին:

Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են բոլոր ընտանիքներին

Ցույց տվեք նկար 1-7՝ Սիրող ընտանիք: Բացատրեք, որ որոշ ընտանիքներ ունեն մայր և հայր, իսկ որոշ ընտանիքներ էլ ունեն միայն մեկ ծնող: Որոշ ընտանիքներ ունեն տատիկ և պապիկ կամ մեկ այլ անձնավորություն, որը օգնում է հոգ տանել երեխաների համար: Որոշ ընտանիքներ ունեն շատ երեխաներ, մինչդեռ որոշ ընտանիքներ էլ ունեն մեկ երեխա կամ չունեն երեխաներ: Օգնեք երեխաներին հասկանալ, որ ընտանիքները տարբեր են, և Երկնային Հայրն ու Հիսուսը սիրում են բոլոր ընտանիքներին:

Վարժություն

Խնդրեք երեխաներին պատմել իրենց ընտանիքների մասին: Հերթով թող ամեն երեխա գրատախտակի վրա պարզ գծիկներով նկարի իր ընտանիքի անդամներին: Թող այդ երեխան բարձրաձայն ասի իր ընտանիքի յուրաքանչյուր անդամի անունը և ապա հաշվի ընտանիքի անդամներին: Ամեն անգամ, դասարանի հետ կիսվեք, թե ինչ սովորեցիք տվյալ երեխայի ընտանիքի մասին:

Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ ընտանիքի անդամները սիրեն միմյանց

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “A Happy Family” երգը (*Children’s Songbook,* p. 198):

Ես սիրում եմ մայրիկին, նա սիրում է ինձ:
Մենք սիրում ենք հայրիկին, նա սիրում է մեզ,
Եվ ինչպես տեսնում եք,
Մենք երջանիկ ընտանիք ենք:

(From *Merrily We Sing,* © 1948, 1975 by Pioneer Music Press, Inc. [a division of Jackman Music]. Օգտագործվել է թույլտվությամբ:)

- Ինչպե՞ս եք իմանում, որ ձեր ընտանիքը սիրում է ձեզ:
- Ի՞նչ եք անում, որպեսզի ձեր ընտանիքի անդամներին ցույց տաք, որ սիրում եք նրանց:

Ցույց տվեք նկար 1-53՝ Ընտանեկան զվարճանք:

- Արդյո՞ք սա երջանիկ ընտանիք է: Ինչպե՞ս գիտեք:
- Ի՞նչ եք սիրում անել ձեր ընտանիքի հետ:
- Երբ ամեն ոք բարյացակամ է մեկը մյուսի հանդեպ, ինչպե՞ս եք դուք ձեզ զգում:

Ցույց տվեք նկար 1-51՝ Միասին աշխատող ընտանիքը:

- Ի՞նչ է այս ընտանիքն անում:
- Ի՞նչ եք անում, որպեսզի օգնեք ձեր ընտանիքին:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ օգնում եք ձեր ընտանիքին:

Վարժություն

Խնդրեք երեխաներին մտածել, թե ինչպիսի տարբեր եղանակներով կարող են օգնել իրենց ընտանիքներին տանը, օրինակ՝ հավաքել իրենց խաղալիքները, խաղալ փոքրիկի հետ կամ օգնել ամանները լվանալիս: Թող երեխաները դերերով ցույց տան իրենց մտքերը: Խրախուսեք երեխաներին շաբաթվա ընթացքում օգնել իրենց ընտանիքներին:

Վկայություն

Կիսվեք Երկնային Հոր հանդեպ ձեր երախտագիտությամբ այն օրհնությունների համար, որ ընտանիքի մաս եք:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Կրկին երգեք «Երջանիկ ընտանիք» երգը: Ընտրեք չորս երեխաների, որ լինեն երգի մեջ նշված ընտանիքը: Թող որ նրանք բռնեն նշանները, ցույց տալով թե ընտանիքի որ անդամն են իրենք: Կանգնեք այդ չորս երեխաների ետևում և ցույց տվեք համապատասխան երեխային, երբ երեխաների հետ երգում կամ կարդում եք խոսքերը: Կրկնեք երգը, թույլ տալով այլ երեխաներին լինել ընտանիքի անդամները: Շարունակեք, մինչև բոլոր երեխաները կմասնակցեն:
2. Երեխաներին պատմեք ընտանիքներին ուղղված Բենյամին թագավորի հրահանգների մասին, ինչպես տրված է Մոսիա 4.14–15-ում: Բարձրաձայն կարդացեք 15-րդ հատվածի վերջին մասը: Խնդրեք երեխաներին առաջարկել եղանակներ, թե ինչպես ընտանիքի անդամները կարող են սիրել և ծառայել միմյանց:
3. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղը.

   Իմ ընտանիքը

   Ահա իմ գեղեցիկ մայրիկը *(ցույց տվեք ցուցամատը),*
   Ահա իմ բարձրահասակ հայրիկը *(ցույց տվեք միջնամատը):*
   Ահա իմ ավագ քույրիկը *(ցույց տվեք մատնեմատը),*
   Սա դեռ ամենը չէ:
   Ահա եղբայրս փոքրիկ *(ցույց տվեք ճկույթը),*
   Փոքրիկ, շատ փոքրիկ:
   Իսկ ո՞վ է այս մյուսը *(ցույց տվեք բութը),*
   Իհարկե, ես եմ կռահեցիք:
   Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, տեսեք, *(հաշվելիս բռնեք յուրաքանչյուր մատը),*
   Մի շատ լավ ընտանիք:

   Օգնեք յուրաքանչյուր երեխայի մատերով ցույց տալ, թե իր ընտանիքում քանի անդամ կա (եթե երեխայի ընտանիքը բաղկացած է տասից ավելի անձից, թող մեկ այլ երեխա օգնի): Օգնեք յուրաքանչյուր երեխայի կրկնել ոտանավորի վերջին երկու տողերը, հաշվելով իր ընտանիքի անդամներին՝ նախքան «մի շատ լավ ընտանիք» ասելը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ցույց տվեք նկար 1-23՝ Ծիտիկներով բույն: Օգնեք երեխաներին կատարել շարժումներ “Birds in the Tree” (*Children’s Songbook,* p. 241), մինչ դուք երգում կամ կարդում եք բառերը.

Փոքր բույն կգտնենք *(ձեռքերի ափերը միացրեք իրար)*
Ծառի ճյուղերի մեջ *(ձեռքերը կլորացրած պահեք գլխավերևում):*
Եկեք ձվերը հաշվենք,
Մեկ, երկու, երեք *(ծալեք մեկ, երկու, երեք մատեր):*
Մայր ծիտիկը բնում *(ձախ ձեռքի ափը կլորացրեք, իսկ աջ ձեռքը դրեք ձախի վրա)*
Թուխս է նստում *(երեք մատերը ծալեք):*
Հայր ծիտիկը շուրջը թռնում *(թևերով թռնելու շարժում կատարեք),*
Իր ընտանիքն է պաշտպանում:

2. Երգեք “Here We Are Together” *(Children’s Songbook,* p. 261), օգտագործելով *հայրիկ, մայրիկ, քույր* և *եղբայր,* որտեղ ըստ երգի պետք է անունները նշել: Թող երեխաները ծափ տան կամ պարեն, մինչ դուք երգում եք:

   Ահա մենք հավաքված ենք միասին,
   Օ՞, մեր ընտանիքում ենք միասին:
   Կա հայրիկ, մայրիկ, քույր և եղբայր,
   Օ՞, այս պայծառ օրը հավաքված ենք միասին:

3. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորը, մինչ դուք կարտասանեք խոսքերը.

   Իմ ընտանիքը

   Ծառի վրայի թռչունների նման *(ձեռքերը թռչունի թևերի նման թափահարեք)*,
   Ես իմ ընտանիքն ունեմ *(ցույց տվեք ինքներդ ձեզ):*
   Նրանք ինձ կերակրում են *(ձևացրեք ուտում եք)*
   Եվ խաղալ են սովորեցնում *(ցատկեք)*,
   Եվ ողջ օրը ես ուրախ ու երջանիկ եմ լինում *(լայն ժպտացեք):*

4. Ասեք հետևյալ խոսքերը կամ երգեք ցանկացած համընկնող երաժշտության տակ.

   Մայրիկը սիրում է ձեզ, մայրիկը սիրում է ձեզ:
   Հայրիկը նույնպես սիրում է ձեզ:
   Ձեր ընտանիքը նույնպես սիրում է ձեզ,
   Շատ-շատ է սիրում ձեզ:

Դաս
24

Ես սիրում եմ իմ եղբայրներին և քույրերին

ՆՊԱՏԱԿ

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի սիրով վերաբերվել իր եղբայրներին և քույրերին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ելից Ա.22–Բ.10:
2. Երեխաների Խմբի ձեր նախագահության թույլտվությամբ հրավիրեք մի մայրիկի, որ դասարան բերի իր փոքրիկ մանկանը: Խնդրեք նրան պատմել, թե ինչպես է հոգ տանում իր երեխայի համար, ինչպես նաև ինչ է անում իրենց ընտանիքը երեխային ապահով պահելու համար: Խրախուսեք նրան նշել նաև մանկան հանդեպ տածած իր սիրո մասին: Եթե նորածին երեխայով մայրիկ չունեք, կարող եք հրավիրել մի մայրիկի, որ դասարան գա իր երեխայի փոքր տարիքի նկարներով:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Երեխա տիկնիկ:
   գ. Նկար 1-2՝ Մովսեսը եղեգների մեջ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 106, 62063), նկար 1-13՝ Ջոզեֆ Սմիթ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 400, 62449):
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Այս դասը մատուցելիս նրբանկատ եղեք այն երեխաների հանդեպ, ովքեր եղբայր կամ քույր չունեն:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Մայրիկին ներկայացրեք դասարանին և խնդրեք նրան երեխաներին պատմել իր փոքրիկ մանկան մասին: Թող երեխաները երեխայի մասին հարցեր տան մայրիկին: Թող մայրիկը բացատրի, թե որքան ոգևորված էր ընտանիքը նորածնի ծնունդով:

Մենք կարող ենք սիրել մեր եղբայրներին և քույրերին

- Ձեզանից ովքե՞ր ունեն փոքր եղբայր կամ քույր:

Թող փոքր եղբայր կամ քույր ունեցող երեխաները պատմեն այդ երեխայի մասին և, թե ինչպես են իրենց ընտանիքները պատրաստվել նոր երեխայի համար:

- Ձեզանից ովքե՞ր ունեն ավագ եղբայրներ կամ քույրեր:

Թող երեխաները մի քանի րոպե խոսեն իրենց եղբայրների և քույրերի մասին: Հիշեցրեք երեխաներին, որ նախորդ դասին խոսել եք այն մասին, որ բոլոր ընտանիքները տարբեր են: Ոմանք շատ եղբայրներ և քույրեր ունեն, իսկ ոմանք էլ ունեն

մի քանի եղբայր և կամ քույր, կամ ընդհանրապես չունեն: Անկախ նրանից, թե քանի եղբայր կամ քույր ունենք, մենք պետք է սիրենք նրանց և բարյացակամորեն վերաբերվենք նրանց:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-13՝ Ջոզեֆ Սմիթ, և բացատրեք, որ Եկեղեցու առաջին Նախագահը Մարգարե Ջոզեֆ Սմիթը, Հայրում անունով մի եղբայր ուներ, որին նա շատ էր սիրում: Հայրումը և Ջոզեֆը լավ ընկերներ էին և կյանքում միշտ օգնում էին միմյանց: Ձեր խոսքերով պատմեք, ինչպես մի անգամ Հայրումն օգնեց Ջոզեֆին.

Երբ Ջոզեֆ Սմիթը փոքր տղա էր, նա ծանր հիվանդացավ: Նրա ոտքը բորբոքվել էր և անտանելի ցավում էր: Մայրը նրան օր ու գիշեր խնամելուց հետո հիվանդացել էր և հանգստի կարիք ուներ: Ջոզեֆի մեծ եղբայրը՝ Հայրումը, հարցրեց, թե արդյոք կարող է մայրիկին փոխարինել: Հայրումի ծնողները համաձայնեցին, քանի որ գիտեին, որ կարող են վստահել նրան, և նա լավ կխնամեր Ջոզեֆին: Հայրումը մի քանի օր շարունակ անընդմեջ մնաց հիվանդ եղբոր կողքին: Նա իր ձեռքերի մեջ էր պահում Ջոզեֆի ոտքը, քանի որ միայն այդպես կարող էր մի փոքր մեղմել սոսկալի ցավը (տես Lucy Mack Smith, *History of Joseph Smith,* ed. Preston Nibley [Salt Lake City: Bookcraft, 1954], p. 55):

- Ինչպե՞ս եք իմանում, որ Հայրումը սիրում էր իր եղբայր Ջոզեֆին:

Բացատրեք, որ մեր եղբայրներին և քույրերին օգնելով մենք ցույց կտանք, որ սիրում ենք նրանց:

Մենք կարող ենք օգնել մեր եղբայրներին և քույրերին

- Ինչպե՞ս կարող եք օգնել ձեր եղբայրներին և քույրերին:
- Ինչպե՞ս են ձեր եղբայրներն ու քույրերն օգնում ձեզ:

Վարժություն

Ներկայացրեք մի քանի իրավիճակներ, թե ինչպես կարող են երեխաներն արձագանքել իրենց եղբայրներին և քույրերին: Խնդրեք երեխաներին իրենց բութը վեր պարզել, եթե իրենց վերաբերմունքով օգնում են եղբորը կամ քրոջը, և թող բութը ներքև իջեցնեն, եթե տվյալ դեպքում նրանք չեն օգնում եղբորը կամ քրոջը: Դուք կարող եք օգտագործել հետևյալ գաղափարներից մի քանիսը.

- Թույլ եք տալիս, որ ձեր քույրը խաղա ձեր նոր խաղալիքով:
- Վերցնում եք ձեր եղբոր գնդակն առանց նրա թույլտվությունը հարցնելու:
- Օգնում եք ձեր քրոջը, որ հավաքի իր խաղալիքները:
- Հարցնում եք ձեր եղբոր թույլտվությունը նրա գնդակով խաղալու համար:
- Մերժում եք ձեր քույրիկի հետ խաղ խաղալ:
- Բարյացակամ եք ձեր եղբոր հանդեպ, երբ նա տխուր է:
- Խաղում եք ձեր քրոջ հետ, երբ նա միայնակ է:

Մենք կարող ենք օգնել խնամել մեր փոքրիկ եղբայրներին և քույրերին

Բացատրեք, որ երբեմն դժվար է, երբ նոր երեխա է ծնվում ընտանիքում, որովհետև այդ երեխան խլում է ծնողների ողջ ժամանակը և ուշադրությունը: Օգնեք երեխաներին հասկանալ, որ թեև ծնողները շատ զբաղված են նոր երեխայով, նրանք դեռևս սիրում են իրենց մյուս երեխաներին: Հիշեցրեք երեխաներին, որ այդ նորածինը գրեթե միշտ օգնության կարիք ունի, մինչ մյուս երեխաները (օրինակ՝ ձեր

դասարանի երեխաները) կարող են շատ բաներ անել իրենք իրենց և փոքր եղբոր կամ քրոջ համար:

- Ինչպե՞ս կարող եք օգնել ձեր ծնողներին փոքր եղբոր կամ քրոջ խնամքի հարցում:

Վարժություն

Երեխաներին ցույց տվեք, թե ինչպես պետք է զգույշ գրկել մանկիկ-տիկնիկին: Նրանց մի պարզ օրորոցային սովորեցրեք կամ երգեք «Աստծո զավակն եմ» երգը (Հիմներ և մանկական երգեր, էջ 58), մինչ նրանք հերթով գրկում են տիկնիկին:

Զավակն եմ ես Աստծո,
Նա է ինձ կյանք տվել,
Տվել է ինձ տուն երկրային
Եվ ծնողներ բարի:

Առաջնորդիր, քայլիր ինձ հետ,
Որ ուղին գտնեմ,
Սովորեցրու՝ ինչ անել,
Որ մի օր Քեզ հասնեմ:

Պատմություն

Բացատրեք, որ Մովսեսը մեծ քույր ուներ, որը սիրում էր իրեն և օգնեց նրան, երբ նա մանուկ էր: Օգտագործելով նկար 1-2՝ Մովսեսը եղեգների մեջ, վերահիշեք մանուկ Մովսեսի պատմությունը, ինչպես տրված է Ելից Ա.22–Բ.10-ում: Շեշտեք, թե ինչպես էր Միրիամը հսկում իր փոքր եղբորը:

- Ինչպե՞ս Միրիամն օգնեց մանուկ Մովսեսին:

Վկայություն

Կիսվեք եղբայրներին և քույրերին օգնելու և միմյանց սիրելու կարևորության մասին ձեր զգացմունքներով: Հնարավորության դեպքում, կիսվեք մանկությունից ձեր անձնական փորձառությամբ, երբ դուք և ձեր եղբայրը կամ քույրը օգնել եք միմյանց: Հիշեցրեք երեխաներին, որ երբ մենք օգնում ենք մեր եղբայրներին և քույրերին, սեր ենք դրսևորում նրանց հանդեպ: Հայտնեք, թե որքան երախտապարտ եք Երկնային Հորը մեզ ընտանիք պարգևելու համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երեխաներին թուղթ ու մատիտներ տվեք, և խնդրեք, որ իրենց եղբայրներին և քույրերին նկարեն: Թող երեխաները հերթով ցույց տան իրենց նկարները և պատմեն իրենց եղբայրների և քույրերի մասին: Խրախուսեք երեխաներին պատմել, թե ինչ են սիրում անել իրենց եղբայրների և քույրերի մասին:

2. Ձեռք բերեք յուրաքանչյուր երեխայի մանուկ հասակի մի նկար և խնդրեք երեխաներին գուշակել, թե ով է յուրաքանչյուր նկարում պատկերված մանկիկը: (Զգույշ եղեք, որ նկարները անվնաս վերադարձնեք ծնողներին:) Հիշեցրեք երեխաներին, ովքեր եղբայրներ և քույրեր ունեն, որ իրենց եղբայրները և քույրերը հոգ են տարել իրենց մասին, երբ նրանք նորածին մանչուկներ էին:

3. Երգեք կամ կարդացեք “Fun to Do” երգը (*Children’s Songbook,* p. 253), օգտագործելով օրինակ այսպիսի խոսքեր «Ուրախությամբ եմ երեխային օրորում» կամ «Ուրախությամբ եմ քույրիկիս օգնում»: Երգի համար խոսքերին համապատասխան հանպատրաստից շարժումներ կատարեք:

4. Երգեք կամ կարդացեք “When We’re Helping” երգի առաջին տան խոսքերը (*Children’s Songbook,* p. 198), *մայրիկի* փոխարեն օգտագործելով *քույր* կամ *եղբայր*, կամ երգել “A Happy Family” երգի երկրորդ տունը (*Children’s Songbook,* p. 198):
5. Բերեք ձեր ընտանիքի նկարը և երեխաներին պատմեք ձեր եղբայրների և քույրերի մասին: Կարող եք նրանց պատմել միասին ունեցած ձեր ուրախ փորձառությունների մասին:
6. Օգտագործելով հասարակ իրեր, օրինակ՝ մանուկ-տիկնիկ, փոքր զամբյուղ կամ տուփ, ծածկոց և շարֆ, օգնեք երեխաներին դերերով ներկայացնել Միրիամի և եղեգների մեջ դրված մանուկ Մովսեսի պատմությունը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մանկական մի փոքր իր դրեք տոպրակի կամ մեծ գուլպայի մեջ: Խնդրեք երեխաներին առանց նայելու ձեռքը մտցնել ներս և շոշափելով այն փորձել գուշակել, թե ինչ է:
2. Երգեք կամ կարդացեք “A Happy Family” (*Children’s Songbook,* p. 198): Երգելիս երեխաների հետ ձեռքերը բռնեք և շրջանով շարժվեք, կամ երգին համապատասխան պարզ շարժումներ կատարեք:
3. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղի շարժումները, մինչ դուք կասեք խոսքերը.

   Փոքրիկ մանչուկը ծափ է տալիս՝
   Ծափիկ, ծափիկ, ծափիկ *(ծափ տվեք):*
   Փոքրիկ մանչուկը խաղում է՝
   Ծիկ - ծիկ - ծիկ *(ձեռքերի ետևից ծիկրակեք):*
   Փոքրիկ մանչուկը չոչ է անում՝
   Չոչ - չոչ - չոչ *(մատերով օդի մեջ «քայլեք»):*
   Փոքրիկ մանչուկը քնում է՝
   Նանիկ - նանիկ - նանիկ *(գլուխը դրեք ափերը միացրած ձեռքերի վրա):*
4. Օգնեք երեխաներին շարժումներ կատարել հետևյալ վարժության համար, մինչ դուք կարտասանեք խոսքերը.

   Մանուկ Մովսեսը

   Մանուկ Մովսեսի համար անկողինը նավակն էր *(մի ձեռքի ափը կլորացրեք և մյուս ձեռքի ցուցամատը դրեք այդ ձեռքի մեջ):*

   Իր սիրելի քույրը թփերի մեջից հետևում էր *(ծիկրակեք աչքերի առաջ պահած մատերի արանքից):*

   Մի օր արքայադուստրը նրան գտավ *(առաջ թեքվեք՝ ներքև նայելով)* և իր գիրկն առավ *(ցույց տվեք իբր երեխայի եք բարձրացնում),*

   Նա ասաց. «Ես կվերցնեմ այս մանկանը և կփայփայեմ նրան» *(ցույց տվեք իբր փոքր մանկիկ եք ձեռքերի մեջ օրորում):*

   (From *Fascinating Finger Fun* by Eleanor Doan. © 1951.Օգտագործվել է թույլտվությամբ:)

Դաս
25

Ես սիրում եմ իմ ողջ ընտանիքին

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի սիրել իր ընտանիքի անդամներին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս Ա.36–44, 56:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-7՝ Սիրող ընտանիք, նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 208, 62133), նկար 1-54՝ Սոլթ Լեյքի Տաճարը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 502, 62433), կամ ձեր տարածքի տաճարի նկարը:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաների հետ երգեք “A Happy Family” (*Children’s Songbook,* p. 198):

Ես սիրում եմ մայրիկիս, նա սիրում է ինձ,
Մենք սիրում ենք հայրիկին, իսկապես, սիրում ենք,
Նա սիրում է մեզ, և ինչպես տեսնում եք,
Մենք երջանիկ ընտանիք ենք:

Ես սիրում եմ քույրիկիս, նա սիրում է:
Մենք սիրում ենք եղբորս, իհարկե սիրում ենք,
Նա սիրում է մեզ, և ինչպես տեսնում եք,
Մենք երջանիկ ընտանիք ենք:

(From *Merrily We Sing,* © 1948, 1975 by Pioneer Music Press, Inc. [a division of Jackman Music]. Օգտագործվել է թույլտվությամբ:)

Թող երեխաները պատմեն, թե անցյալ հանգստյան օրերին ինչ են արել իրենց ընտանիքների հետ: Թող յուրաքանչյուր երեխա նշի իր ընտանիքից մեկին, օրինակ՝ հայրիկ, մայրիկ, եղբայր կամ քույր:

- Է՞լ ով է ձեր ընտանիքի մաս կազմում:

Տատիկները, պապիկները, հորաքույրները, մորաքույրները, հորեղբայրները, քեռիները և զարմիկները մեր ընտանիքների կարևոր մասն են

Ցույց տվեք նկար 1-7՝ Սիրող ընտանիք:

- Ինչո՞վ է այս ընտանիքը նման ձեր ընտանիքին:
- Ինչո՞վ է այս ընտանիքը տարբերվում ձեր ընտանիքից:

- Այս նկարում կարո՞ղ եք գտնել տատիկին ու պապիկին:

Բացատրեք, որ տատիկներն ու պապիկները մեր մայրիկների և հայրիկների ծնողներն են: Մենք բոլորս ունենք տատիկներ և պապիկներ, թեև երբեմն մենք լավ չենք ճանաչում նրանց, որովհետև նրանք մահացել են կամ հեռու են ապրում:

- Ձեզանից քանի՞սն են ճանաչում իրենց տատիկներին և պապիկներին:
- Ձեր տատիկները և պապիկները ապրում են ձեզ մոտ, թե՞ հեռու:
- Ի՞նչ եք սիրում անել նրանց հետ:

Երգ

Երգեք կամ կարդացեք “Grandmother” երգի առաջին երկու տունները (*Children’s Songbook,* p. 200), օգտագործելով հետևյալ շարժումները: Ցանկության դեպքում կրկնեք, յուրաքանչյուր տան վերջին երկու տողերում *տատիկի* փոխարեն *պապիկ* օգտագործելով:

Դու ինձ համբուրում ես *(մատները դրեք շուրթերին, ապա ձեռքը պարզեք առաջ):*
Դու ինձ գրկում ես *(ձեռքերով գրկեք ինքներդ ձեզ):*
Ինձ տեսնելիս ժպտում ես *(ժպտացեք):*
Ուզում եմ ողջ աշխարհում ամեն երեխա *(տարածեք ձեր ձեռքերը)*
Քեզ պես տատիկ ունենա *(մատով ցույց տվեք):*

Դու ինձ համար կարդում ես *(ձևացրեք ձեռքերի մեջ գիրք ունեք):*
Դու ինձ համար երգում ես *(բերանը լայն բացեք իբր երգում եք):*
Եվ շշնջում, որ ինձ սիրում ես *(ձեռքի ափերը կլորացրեք բերանի մոտ):*
Ուզում եմ ողջ աշխարհում ամեն երեխա *(տարածեք ձեռքերը)*
Քեզ պես տատիկ ունենա *(մատով ցույց տվեք):*

- Էլ ո՞վ ունեք ձեր ընտանիքում: (Մորաքույր, հորաքույր, հորեղբայր, քեռի և զարմիկներ:)

Հակիրճ բացատրեք, թե ինչպես են ձեզ հետ կապված ձեր հորաքույրները, մորաքույրները, հորեղբայրները, քեռիները և զարմիկները (օրինակ՝ ձեր հորեղբայրը ձեր հայրիկի եղբայրն է, քեռին՝ մայրիկի եղբայրը:) Թող երեխաները պատմեն իրենց հորաքույրների, մորաքույրների, հորեղբայրների, քեռիների և զարմիկների մասին:

Պատմություն

Ցույց տվեք Աստվածաշունչը և հիշեցրեք երեխաներին, որ այս գրքում կարող ենք կարդալ Հիսուսի կյանքի մասին: Բացեք Ղուկաս Ա.36–44, 56 և բացատրեք, որ նախքան Հիսուսի ծնվելը Մարիամը այցելեց իր զարմուհուն՝ Եղիսաբեթին, որը նույնպես հղի էր: Եղիսաբեթի որդու անունը դրեցին Հովհաննես, և նա Հիսուսի զարմիկը և ընկերն էր: Երբ Հովհաննեսը և Հիսուսը մեծացան, Հովհաննեսը մկրտեց Հիսուսին: Ցույց տվեք նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին, և խնդրեք երեխաներին ցույց տալ Հիսուսին և Հովհաննեսին:

Ընտանիքի անդամները մեր լավ ընկերներն են

Բացատրեք, որ մեր ընտանիքի բոլոր անդամները կարող են մեր լավ ընկերները լինել: Եթե բարեկամ ունեք, որի հետ մոտ եք, երեխաներին ասեք, թե ինչ եք զգում այդ անձնավորության հանդեպ:

- Ինչո՞ւ եք սիրում լինել ձեր ընտանիքի հետ:

Երգ

Երեխաների հետ կրկին երգեք «Երջանիկ ընտանիք» երգը: Այս անգամ ընդգրկեք տուներ հորաքրոջ, մորաքրոջ, հորեղբոր, քեռու, զարմիկների և տատիկ-պապիկների մասին:

- Ի՞նչ եք անում ձեր հորաքույրների, մորաքույրերի, հորեղբայրների, քեռիների, զարմիկների և տատիկների ու պապիկների հետ:

Երեխաներին պատմեք ընտանեկան վերամիավորման կամ իրադարձությունների մասին, երբ ձեր ընտանիքը հավաքվել է հատուկ առիթով: Թող երեխաները պատմեն իրենց ընտանեկան խնջույք-հավաքների կամ այցերի մասին:

Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը մեզ համար պլանավորել են, որ հավերժ մեր ընտանիքների հետ լինենք: Ցույց տվեք նկար 1-54՝ Սոլթ Լեյքի Տաճարը, կամ ձեր տարածքի տաճարի մի նկար: Հակիրճ բացատրեք, որ եթե մենք ամուսնանանք տաճարում և արդար ապրենք, կարող ենք հավերժ մեր ընտանիքների հետ լինել:

Վկայություն

Երեխաներին ասեք, որ դուք սիրում եք ձեր ընտանիքի անդամներին: Շեշտեք, որ մեր ընտանիքներն օրհնություն են մեզ համար: Խրախուսեք երեխաներին, որ սիրեն իրենց ընտանիքի անդամներին և բարյացակամ վերաբերվեն նրանց:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Ձեր Երեխաների Խմբի նախագահի թույլտվությամբ խնդրեք երեխաներից մեկի տատիկը կամ պապիկը կամ ծխի որևէ անդամ, ով տատիկ կամ պապիկ է, այցելի ձեր դասարան: Խնդրեք հյուրին, որ երեխաներին պատմի թոռնիկների հանդեպ իր սիրո մասին: (Կամ կարող եք հրավիրել հորաքույր, մորաքույր, հորեղբայր, քեռի կամ զարմիկ, և թող նա պատմի ընտանիքի բոլոր անդամների հանդեպ սիրո մասին:)

2. Բերեք ձեր ընտանեկան նկարներից, հատկապես այն նկարները, որտեղ կան տատիկ կամ պապիկ, հորաքույր, մորաքույր, հորեղբայր, քեռի կամ զարմիկներ: Խնդրեք երեխաներին նկարներում գտնել ձեզ և նրան, ում ճանաչում են (օրինակ՝ ձեր ամուսնուն կամ երեխաներին): Երեխաներին պատմեք նկարներում պատկերված այլ անձանց մասին:

3. Յուրաքանչյուր երեխայի տվեք կրծքանշան, որի վրա գրված կլինի ընտանիքի մեկ անդամի անունը, օրինակ՝ «Մայրիկ», «Հայրիկ», «Եղբայր», «Քույր», «Տատիկ», «Պապիկ», «Հորեղբայր», «Քեռի», «Հորաքույր», «Մորաքույր» կամ «Զարմիկ»: (Եթե ձեր դասարանում քիչ երեխա կա, օգտագործեք այդ անուններից մի քանիսը, իսկ եթե դասարանում շատ երեխաներ կան, մեկից ավելի երեխաներ կարող են ունենալ նույն անունը:) Թող յուրաքանչյուր երեխա գա դասարանի կենտրոն, երբ դուք կտաք նրա կրծքանշանի վրա գրված անունը: Բացատրեք, որ ընտանիքները կարևոր են և պետք է միասին լինեն: Խնդրեք երեխաներին շրջան կազմել և իրար ձեռք բռնել: Խնդրեք նրանց ձեռքերը բռնած մի քանի շարժումներ կատարել, օրինակ՝ ճոճել իրենց ձեռքերը, շրջանով քայլել և երգել «Երջանիկ ընտանիք»:

4. Երգեք կամ կարդացեք “I Have a Family Tree” (*Children’s Songbook,* p. 199):

5. Խնդրեք, որ երեխաները նկարեն իրենց տատիկներին և պապիկներին, կամ այլ ազգականներին: Նկարի վրա գրեք *Իմ տատիկը և պապիկը* կամ այն ազգականի անունը, ում նկարել է տվյալ երեխան:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մի տուփ կամ պարկ պատրաստեք և վրան սիրտ փակցրեք, որը սեր է ներկայացնում: Կտրեք ընտանիքի անմիջական և հեռավոր անդամների նկարները: Հարցրեք երեխաներին՝ «Ո՞վ է սիրում ձեզ»: Երբ երեխաները պատասխանում են, հերթով համապատասխան նկարները դրեք տուփի կամ պարկի մեջ: Երբ բոլոր նկարները տուփի կամ պարկի մեջ են, ցույց տվեք այն և երեխաներին ասեք. «Այս բոլոր մարդիկ շատ են սիրում ձեզ»:
2. Սեղանի կամ հատակի վրա շարեք ընտանիքի անդամների կտրվող նկարները (տես Վարժություն 1, վերևում): Խնդրեք երեխաներին շրջվել կամ փակել իրենց աչքերը, այդ ժամանակ պահեք այդ նկարներից մեկը: Թող երեխաները գուշակեն, թե ով է բացակայում: Կրկնեք որքան ցանկանում եք: Բոլոր նկարները ետ դրեք և ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը ցանկանում է, որ ընտանիքները կրկին իր հետ լինեն և ոչ ոք չբացակայի:
3. Երգեք “When We’re Helping” (*Children’s Songbook,* p. 198), *մայրիկի* փոխարեն օգտագործելով ընտանիքի անդամների անունները: Թող երեխաները մնջախաղով ցույց տան, ինչ կարող են անել ընտանիքի անդամներին օգնելու համար:

Դաս
26

Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ տաճարները սուրբ վայրեր են, որտեղ ընտանիքները կնքվում են միասին, և խրախուսեք երեխաներին պատրաստվել տաճար մտնելուն:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 97:15–17 և 124:37–41. Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 36, և «Տաճար» Աստվածաշնչի բառարանում:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Վարդապետություն և Ուխտեր:
   բ. Նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ (62307), նկար 1-7՝ Սիրող ընտանիք, նկար 1-54՝ Սոլթ Լեյքի Տաճարը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 502, 62433), այլ տաճարների նկարներ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 505, 62434–62448, 62566–62569, 62583–62601, 62613–62619), դասի վերջում տրված նկարները:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք նկար 1-54՝ Սոլթ Լեյքի Տաճարը, և մի քանի այլ տաճարների, ներառյալ ձեր տարածքի տաճարի նկարները: Թող երեխաները պատմեն՝ ինչ գիտեն տաճարների մասին:

- Երբևէ տեսե՞լ եք տաճար:
- Ի՞նչ եք մտածում տաճար տեսնելիս:

Քննարկեք տաճարների գեղեցկությունը՝ մանանշելով սրածողերը, պատուհանները և դռները: Բացատրեք, որ բոլոր տաճարների դրսի պատի վրա գրված է հետևյալ բառերը՝ *Տիրոջ Տուն:* Եկեղեցու անդամները գնում են տաճար՝ սովորելու Երկնային Հոր և Հիսուսի և մեր հանդեպ նրանց սիրո մասին:

Վարժություն

Խնդրեք երեխաներին իրենց ձեռքերը պահել գլխավերևում՝ ներկայացնելով տաճարի սրածողը: Խնդրեք նրանց կանգնել ուղիղ իրենց ողջ հասակով և ձևացնել իբր իրենք գեղեցիկ տաճար են: Այնուհետև խնդրեք նրանց հանգիստ նստել:

Տաճարը սուրբ վայր է

Բացատրեք, որ տաճարը սուրբ վայր է (տես ՎևՈւ 97.15–17): Խնդրեք երեխաներին կրկնել *սուրբ* բառը: Դա նշանակում է, որ տաճարը առանձնահատուկ վայր է, որտեղ ամեն ինչ հիշեցնում է մեզ Երկնային Հորը և Հիսուսին:

Ասեք երեխաներին, որ եթե նրանք պահեն Երկնային Հոր պատվիրանները, երբ մեծանան կարող են գնալ տաճար: Բացատրեք, որ տաճարում մենք հատուկ խոստումներ ենք տալիս Երկնային Հորը՝ հնազանդվել նրա պատվիրաններին: Մենք կարող ենք նաև ամուսնանալ տաճարում, և մկրտվել այն մարդկանց համար, ովքեր երկրի վրա ապրելու ընթացքում չեն մկրտվել:

Խնդրեք երեխաներին պահել երեք մատը և կրկնել երեք բան, որ կարող են անել տաճարում, երբ մեծանան.

«Տաճարում ես կարող եմ հատուկ խոստումներ տալ Երկնային Հորը»:

«Տաճարում ես կարող եմ ամուսնանալ»:

«Տաճարում ես կարող եմ մկրտվել ուրիշների համար»:

Երգ

Խնդրեք երեխաներին կանգնել և երգել կամ կարդալ "I Love to See the Temple" (*Children's Songbook,* p. 95) երգի առաջին մասի խոսքերը՝ օգտագործելով հետևյալ շարժումները.

Ես սիրում եմ տեսնել տաճարը *(մատերն իրար մեջ հագցրեք և երկու ձեռքի ցուցամատերը միացնելով իրար ներկայացրեք սրածողը):*
Մի օր այնտեղ կգնամ *(տեղում քայլեք)*
Սուրբ Հոգին ես կզգամ *(ձեռքերը դրեք սրտին),*
Կլսեմ ու կաղոթեմ *(ձեռքը դրեք ականջի ետևում, այնուհետև ձեռքերը ծալեք):*

(© 1980 by Janice Kapp Perry. Օգտագործվել է թույլտվությամբ:)

Բացատրեք, որ քանի որ տաճարը սուրբ վայր է, մենք հագնում ենք սպիտակ զգեստ, երբ տաճար ենք մտնում: Այդ հագուստը մեզ հիշեցնում է, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք լինենք մաքուր, պարզ և միշտ ընտրենք ճիշտը:

- Ի՞նչ գույնի հագուստ եք դուք հագնում այսօր:
- Ի՞նչ գույնի հագուստ կհագնեք տաճարի ներսում:

Բացատրեք, որ քանի որ տաճարը սուրբ վայր է, մենք ակնածանքով լի ենք ներսում: Մենք շշնջում կամ մեղմ ենք խոսում: Խնդրեք երեխաներին շշնջալ. «Ես սիրում եմ Երկնային Հորը և Հիսուսին»: Բացատրեք, որ մենք կարող ենք երջանկություն և խաղաղություն զգալ տաճարում, որովհետև մենք մոտ ենք զգում Երկնային Հորը և Հիսուսին:

Պատմություն

Ձեր խոսքերով պատմեք Նախագահ Լորենզո Սնոուի մասին հետևյալ պատմությունը.

Լորենզո Սնոուն գիտեր, որ շուտով պետք է լիներ Եկեղեցու մարգարեն: Նա գնաց տաճար, հագավ իր սպիտակ հագուստը, և հատուկ սենյակում ծնկի իջավ աղոթելու: Նա ցանկանում էր, որ Երկնային Հայրն իրեն ասեր, թե ինչ պետք է անի Եկեղեցին ղեկավարելու համար: Նա աղոթեց ու աղոթեց, սակայն պատասխան չստացավ: Երբ Նախագահ Սնոուն հեռանում էր սենյակից, որտեղ աղոթում էր, Հիսուսը հայտնվեց նրա առաջ: Հիսուսի հագին կար գեղեցիկ սպիտակ պատմուճան և այնքան պայծառ էր շողում, որ Նախագահ Սնոուն չէր կարողանում նրա վրա նայել: Հիսուսը կարծես ոսկե պատվանդանի վրա էր կանգնած: Նա ասաց Նախագահ Սնոուին այն ամենը, ինչ նա աղոթքի մեջ ցանկացել էր իմանալ (տես LeRoi C. Snow, "An Experience of My Father's," *Improvement Era,* Sept. 1933, p. 677):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ նախագահ Սնոուն աղոթեց ոչ թե մեկ այլ վայրում, այլ տաճարում: (Որովհետև տաճարի ներսում նա իրեն մոտ էր զգում Երկնային Հորը և Հիսուսին:)

Տաճարներն օգնում են ընտանիքներին հավերժ միասին լինել

Ցույց տվեք նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ, և նկար 1-7՝ Սիրող ընտանիք: Բացատրեք, որ տաճարները կարող են օգնել ընտանիքներին հավերժ միասին լինել: Երբ տղամարդը և կինը ամուսնանում են տաճարում և հնազանդվում են պատվիրաններին, Երկնային Հայրը նրանց խոստանում է, որ կարող են հավերժ լինել միասին և իրենց բոլոր զավակների հետ: Մենք սա կոչում ենք կնքվել որպես ընտանիք:

- Ովքե՞ր են ձեր ընտանիքի անդամները:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ձեր ընտանիքի հետ եք:
- Ինչպե՞ս կարող է ընտանիքը հավերժ միասին լինել:

Երեխաներին հավաստիացրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են բոլոր ընտանիքներին և ցանկանում են, որ յուրաքանչյուր ընտանիք հավերժ միասին կնքվի: Բացատրեք, որ այն ընտանիքները, որոնք չեն կնքվել տաճարում, կարող են պատրաստվել հնազանդվելով Երկնային Հոր պատվիրաններին: Այնուհետև նրանք կարող են գնալ տաճար՝ կնքվելու որպես ընտանիք:

Երգ

Երեխաների հետ մի քանի անգամ երգեք կամ կարդացեք “Families Can Be Together Forever” երգի կրկներգը (*Children’s Songbook,* p. 188):

Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել
Երկնային Հոր ծրագրով:
Ես միշտ ուզում եմ ընտանիքիս հետ լինել,
Եվ Տերն ինձ ցույց է տվել,
Ինչպես կարող եմ դրան հասնել:

Ես կարող եմ պատրաստվել տաճար գնալուն

Հիշեցրեք երեխաներին, որ ով հնազանդվում է Երկնային Հոր պատվիրաններին, կարող է գնալ տաճար: Ցույց տվեք դասի վերջում տրված նկարների էջը և թող երեխաները քննարկեն նկարներով ներկայացված պատվիրանները: Բացատրեք, որ այդ պատվիրաններին հնազանդվելը կօգնի երեխաներին, որ երբ մեծանան արժանի լինեն տաճար գնալուն:

- Աղոթել:
- Հնազանդվել ծնողներին:
- Սիրել միմյանց:
- Եկեղեցի հաճախել:
- Տասանորդ վճարել:
- Ճիշտ սնվել (հնազանդվել Իմաստության Խոսքին):
- Ազնիվ լինել:

Վկայություն

Կիսվեք ընտանիքները հավերժ միասին լինելու կարևորության և տաճարային օրհնությունների մասին ձեր զգացումներով: Հիշեցրեք երեխաներին, որ իրենց

ծնողներին հնազանդվելը և Երկնային Հոր պատվիրաններին հնազանդվելը կարևոր պայմաններ են տաճար գնալուն պատրաստվելու համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Օգնեք երեխաներին հասկանալ, որ հավերժությունը երկար ժամանակ է: Կարող եք ասել նրանց, որ դա ավելի երկար է, քան այն ժամանակը, որ պետք է սպասեն մինչև իրենց ծննդյան օրը կամ հաջորդ տոները, այն ավելի երկար է, քան իրենց ծանոթ ամենատարեց մարդու տարիքը, դա ավելի երկար է, քան եթե ետ գնանք Ադամի և Եվայի ժամանակները: Բացատրեք, որ *հավերժ* նշանակում է մի բան, որը երբեք չի ավարտվում:

   Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, երբ դուք կարտասանեք խոսքերը.

   Որքա՞ն է տևում հավերժությունը

   Որքա՞ն է տևում հավերժությունը *(մատը դրեք գլխին կարծես մտածում եք):*
   Այն երկար է, քան տարին *(բռունքը դրեք կզակի տակ, իսկ արմունկը դրեք մյուս ձեռքի վրա):*
   Այն երկար է, քան ժամանակը *(այժմ մյուս ձեռքի բռունցքը դրեք կզակի տակ, իսկ արմունքը դրեք մյուս ձեռքին),*
   Որ սպասում ես Սուրբ Ծննդին:
   Որքա՞ն է հավերժությունը տևում *(մատը դրեք գլխին կարծես մտածում եք):*
   Այն շատ երկար է ձգվում *(մատը ետ ու առաջ թափահարեք)*
   Քո ընտանիքի հետ սիրելի *(գրկեք ինքներդ ձեզ),*
   Այն երբեք չի ավարտվի:

2. Ձեր Երեխաների Խմբի նախագահի թույլտվությամբ, ձեր դասին հրավիրեք մի երեխայի ծնողների, որպեսզի կիսվեն տաճարում կնքվելու կարևորության մասին իրենց զգացողություններով:

3. Դասի վերջում տրված նկարների էջի պատճենը պատրաստեք յուրաքանչյուր երեխայի համար: Թող երեխաները գունավորեն այդ նկարները:

4. Ձեր Երեխաների Խմբի նախագահի թույլտվությամբ հրավիրեք ձեր ծխի մի ընտանիք, որը վերջերս է կնքվել տաճարում, որպեսզի դասարանին պատմեն այդ փորձառության մասին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, մինչ դուք արտասանում եք խոսքերը:

   Ես օգնական եմ,

   Այժմ, երբ արդեն մեծ եմ *(կանգնեք ոտքի մատերին և ձեռքերը ձգեք վեր)*,
   Ես լավ օգնական կլինեմ:
   Ես հայրիկին կօգնեմ *(բարձրացրեք առաջին մատը),*

Որը լավն է ու բարի,
Ես մայրիկին կօգնեմ *(բարձրացրեք երկրորդ մատը)*
Ինչով որ կարող եմ:
Ես քույրիկին կօգնեմ *(բարձրացրեք երրորդ մատը),*
Եղբորս նույնպես կօգնեմ *(բարձրացրեք չորրորդ մատը),*
Իմ ողջ ընտանիքին կօգնեմ *(բարձրացրեք բութը):*
Սաս Աստծո օգնականը կլինեմ
Սիրելով մյուսներին, ինչպես ինձ է սիրում *(ձեռքերը ծալեք):*
Ես բոլորին օգնել եմ ուզում *(ձեռքերը լայն բացել),*
Այժմ երբ արդեն մեծ եմ *(կանգնեք ոտքի մատերին և ձեռքերը ձգեք վեր):*

2. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, մինչ դուք արտասանում եք խոսքերը: Կրկնեք որքան ցանկանում եք:

   Բոլորի հետ կանգնելով շրջան կազմեք, ձեռքերը բռնելով: Վարժության ընթացքում ձեռքերը բռնած պահեք:

   Մենք բոլորս միասին Երկնային Հոր հետ ենք ապրել *(թող բոլորը մոտենան իրար, ձեռքերը բերելով շրջանի կենտրոն):*
   Նա մեզ ուղարկել է, որ երկրի վրա ապրենք *(բացվեք մեծ շրջան ստեղծելով):*
   Նա ընտանիքներ է տվել, որ մեզ ուսուցանեն և սիրեն *(կրկին մոտեցեք իրար):*
   Մեր ընտանիքները կօգնեն, որ կրկին նրա հետ ապրենք *(կրկին բացվեք մեծ շրջան ստեղծելով):*

3. Թղթի վրա տաճարի պարզ գծապատկերը արեք, որպեսզի երեխաները գունավորեն:

Ես պատրաստվում եմ գնալ տաճար

Աղոթել

Հնազանդվել ծնողներին

Սիրել միմյանց



Գնալ եկեղեցի



Տասանորդ վճարել

Առողջ սնվել

Ազնիվ լինել

Դաս
27

Մենք կարող ենք աղոթել որպես ընտանիք

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ կանոնավոր ընտանեկան աղոթքն օգնում է ընտանիքին մոտ մնալ Երկնային Հորը և միմյանց:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ալմա 34.19–27 և 3 Նեփի 18.17–21: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 8:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Մորմոնի Գիրք:
   բ. Կտրվող նկար 1-26՝ հայր, կտրվող նկար 1-27՝ մայր, կտրվող նկար 1-28՝ փոքր աղջնակ, կտրվող նկար 1-29՝ միսիոներական տարիքի տղա (նմանատիպ կտրվող նկարներ կարող եք նաև գտնել Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածու 1-ում):
   գ. Նկար 1-10՝ Ընտանեկան աղոթք (62275), նկար 1-15՝ Ուտելիքի օրհնումը, նկար 1-44՝ Հիսուսը ուսուցանում է արևմտյան կիսագնդում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 316, 62380):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք երեխաներին պատմել, թե ինչ են անում իրենց ընտանիքների հետ: Յուրաքանչյուր երեխայի պատասխանելու հնարավորություն տվեք: Այնուհետև ցույց տվեք նկար 1-10՝ Ընտանեկան աղոթք:

- Ի՞նչ է այս ընտանիքն անում:

Բացատրեք, որ երբ ընտանիքով աղոթում ենք, անում ենք մի բան, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք անենք: Ընտանիքով աղոթելը կոչվում է ընտանեկան աղոթք:

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ցանկանում են, որ աղոթենք մեր ընտանիքի հետ

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-44՝ Հիսուսն ուսուցանում է արևմտյան կիսագնդում: Պատմեք, ինչպես Հիսուս Քրիստոսն այցելեց Նեփիացիներին և նրանց պատվիրեց աղոթել, որը տրված է 3 Նեփի 18.17–21-ում: Երեխաներին ցույց տվեք Մորմոնի Գիրքը և բարձրաձայն կարդացեք 3 Նեփի 18.21-ում: Օգնեք երեխաներին հասկանալ, որ Հիսուսը ցանկանում է, որ մենք մեր ընտանիքներով աղոթենք: Ինչպես Նեփիացի երեխաները օրհնվեցին ընտանեկան աղոթքով, մենք էլ կարող ենք օրհնվել ընտանեկան աղոթքով:

Մենք կարող ենք ամեն օր ընտանիքով աղոթել

Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք աղոթենք մեր ընտանիքների հետ ամեն առավոտ և երեկո: Սովորաբար հայրը կամ ընտանիքի գլխավորն է խնդրում ընտանիքի անդամներից մեկին աղոթել: Ընտանիքի ցանկացած անդամ կարող է ընտանեկան աղոթք ասել:

- Ե՞րբ պետք է մեր ընտանիքով աղոթենք:
- Ո՞վ կարող է ընտանեկան աղոթք ասել:

Երգ

Երգեք կամ կարդացեք “Family Prayer” երգը (*Children’s Songbook,* p. 189):

Եկեք միասին շրջան կազմենք
Եվ ընտանեկան աղոթքով ծնկի իջնենք,
Մեր Երկնային Հորը շնորհակալություն ասենք,
Օրհնությունների համար, որ ունենք:

- Ի՞նչ ենք ասում ընտանեկան աղոթքի ժամանակ:

Բացատրեք, որ մենք ընտանեկան աղոթքների ժամանակ ասում ենք նույն բաները, ինչը մենք ասում ենք մեր առավոտյան և երեկոյան աղոթքների ժամանակ: Բայց այն տարբերությամբ, որ ընտանեկան աղոթքի ժամանակ մենք ասում ենք այն, ինչ վերաբերում է ոչ թե պարզապես մեզ, այլ ողջ ընտանիքին:

Երգ

Վերանայեք ինչ ենք ասում մենք աղոթելիս երգելով կամ կարդալով “I Pray in Faith” երգի երկրորդ տունը (*Children’s Songbook,* p. 14):

Ես սկսում եմ ասելով՝ Սիրելի Երկնային Հայր,
Շնորհակալություն՝ օրհնությունների համար,
Ապա խոնարհ խնդրում եմ, ինչ ուզում եմ,
Հիսուս Քրիստոսի անունով, Ամեն:

(© 1987 by Janice Kapp Perry. Օգտագործվել է թույլտվությամբ:)

- Ի՞նչ ենք մենք ասում աղոթքի սկզբում:
- Ի՞նչ ենք ասում աղոթքի վերջում:
- Ի՞նչ պետք է ամեն ոք անի, մինչ աղոթք է ասվում:

Բացատրեք, որ երբ աղոթքի վերջում ասում ենք «ամեն», նշանակում է մենք համաձայն ենք այն ամենի հետ, ինչ ասվեց աղոթքում:

Ցույց տվեք նկար 1-15՝ Ուտելիքի օրհնումը: Բացատրեք, որ մենք նաև աղոթում ենք որպես ընտանիք, երբ օրհնություն ենք խնդրում ուտելիքի համար:

- Ի՞նչ ենք մենք ասում, երբ օրհնություն ենք խնդրում ուտելիքի համար: (Մենք շնորհակալություն ենք խնդրում Երկնային Հորը ուտելիքի համար և խնդրում ենք, որ նա օրհնի այն:)
- Մենք կարող ենք աղոթել խնդրելով, որ Երկնային Հայրն օրհնի ուտելիքը:

Երգ

Կրկին երգեք «Ես աղոթում եմ հավատքով» երգի երկրորդ տունը:

Մենք բազմաթիվ օրհնություններ ենք ստանում՝ որպես ընտանիք միասին աղոթելով

Պատմություն

Օգտագործելով կտրվող նկարներ 1-26–1-29, պատմեք մի ընտանիքի մասին, որը միասին աղոթեց ընտանիքի անդամի համար, որը ծառայում էր միսիայում: Կարող եք օգտագործել հետևյալ պատմությունը.

Քեթրինը փոքր աղջնակ էր: Նա սիրում էր իր ընտանիքը և գիտեր, որ նրանք էլ իրեն են սիրում: Երբեմն նրա մեծ եղբայրը Պողոսը պատմություններ էր պատմում Աստվածաշնչից և Մորմոնի Գրքից: Պողոսը ուսումնասիրում էր այդ գրքերը, որովհետև նա ցանկանում էր, որ միսիա գնար և մարդկանց պատմեր դրանց մասին:

Մի օր Պողոսը նամակ ստացավ: Երբ նամակը բացեց, նա ուրախ բացականչեց՝ «Ես միսիա եմ գնում»: Մի քանի շաբաթ անց Պողոսը վերջապես պատրաստ էր մեկնելու: Նախքան մեկնելը, ընտանիքը ծնկի իջավ ընտանեկան աղոթքով: Քեթրինի հայրը շնորհակալություն հայտնեց Երկնային Հորը իրենց ընտանիքի բազում օրհնությունների և Պողոսի միսիա գնալու հնարավորության համար: Նա խնդրեց Երկնային Հորը, որ օրհնի Պողոսին, նրան ապահով պահի և օգնի, որ նա լավ միսիոներ լինի: Աղոթքը ուրախություն պարգևեց Քեթրինին: Նա գիտեր, որ Երկնային Հայրը կօգնի Պողոսին իր միսիայի ժամանակ: Ամեն օր Քեթրինն ու իր ընտանիքը աղոթում էին Պողոսի համար, մինչ նա միսիա էր ծառայում:

Բացատրեք, որ ընտանիքները կարող են միասին աղոթել ինչ-որ մեկի համար, ով հիվանդ է, ընտանեկան խնդիրը լուծելու, միսիոների համար, ով Երկնային Հոր օգնության կարիքն ունի և շատ այլ պատճառներով: Բացատրեք, որ մենք կարող են աղոթել մեզ համար կարևոր բաների համար: Օգտագործեք Ալմա 34.19–27, որպեսզի օգնեք երեխաներին հասկանալ, երբ պետք է աղոթել:

Կրկին բարձրաձայն կարդացեք 3 Նեփի 18.21: Հիշեցրեք երեխաներին, որ Հիսուսը խոստացավ, որ մենք կօրհնվենք, եթե ընտանիքով աղոթենք:

Վկայություն

Ձեր վկայությունը բերեք ընտանեկան աղոթքի մասին: Կարող եք պատմել այն ժամանակի մասին, երբ ընտանեկան աղոթքն ամրացրել է ձեր ընտանիքը:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երեխաների հետ կատարեք հետևյալ ոտանավորը.

   Սա իմ մայրիկն է, որ խաղալիս ինձ օգնում է, *(բարձրացրեք առաջին մատը),*
   Սա իմ հայրիկն է, որ ողջ օրն աշխատում է *(բարձրացրեք երկրորդ մատը):*
   Սա իմ եղբայրն է, որ մեծ ու ամրակազմ է *(բարձրացրեք երրորդ մատը),*
   Սա իմ քույրիկն է, որ գնդակով խաղում է *(բարձրացրեք չորրորդ մատը):*
   Իսկ սա ես եմ, և ուրախությամբ եմ ասում *(բարձրացրեք բութը)՝*
   Մենք ընտանիքով միասին ենք աղոթում *(բռունցք արեք):*

2. Ամեն անգամ փափուկ առարկան, օրինակ՝ լոբով տոպրակը կամ գնդակը, մի երեխայի նետեք կամ փոխանցեք: Երբ երեխան բռնում է առարկան, խնդրեք նրան նշել մի բան, որի համար ընտանեկան աղոթքի ժամանակ կարող է շնորհակալություն հայտնել Երկնային Հորը: Երբ բոլոր երեխաները կմասնակցեն, կրկնեք վարժությունը, խնդրելով երեխաներին այս անգամ նշել, թե ընտանեկան աղոթքի ժամանակ ինչ կարող են խնդրել Երկնային Հորից:

3. Երեխաներին թուղթ ու մատիտներ բաժանեք: Թող երեխաները նկարեն իրենց ընտանիքին աղոթելիս: Նկարների վերևում գրեք՝ *Ես երջանիկ եմ, երբ իմ ընտանիքը միասին աղոթում է:*

4. Երգեք կամ կարդացեք “A Song of Thanks” (*Children’s Songbook,* p. 20) կամ “A Prayer Song” (*Children’s Songbook,* p. 22):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Օգնեք երեխաներին կրկնել այս ոտանավորը տող առ տող.

   Երկնային Հորը մենք սիրում ենք,
   Աղոթելիս նրան շնորհակալություն ենք ասում:
   Երկնային Հայրն էլ մեզ է սիրում,
   Նա լսում է այն, ինչ մենք ասում ենք:

2. Պատմեք մի ընտանիքի պատմություն, որ միասին աղոթելով անհրաժեշտ օգնություն են ստանում: Օրինակ, կարող է մի ընտանիք կորցնի ճանապարհը և ապա գտնի, նրանք կարող են կորցնել մի բան և ապա գտնել այն, կամ ընտանիքի որևէ անդամ կարող է հիվանդանալ և ապա ապաքինվել: Ավելացրեք, որ օգնության համար աղոթելուց բացի ընտանիքը պետք է հիշի, որ շնորհակալության աղոթք ասի անհրաժեշտ օգնությունը ստանալուց հետո: Հիշեցրեք երեխաներին, որ Երկնային Հայրը ուրախ է, երբ մենք շնորհակալություն ենք ասում իր տված օրհնությունների համար:

3. Երգեք կամ կարդացեք “Thanks to Our Father” երգի առաջին և երրորդ տուների խոսքերը (*Children’s Songbook,* p. 20):

Դաս
28

Ես կարող եմ հնազանդ լինել

ՆՊԱՏԱԿ

Ամրապնդեք յուրաքանչյուր երեխայի ցանկությունը՝ հնազանդվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին և հնազանդվել իրենց ծնողներին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Դանիել Գ, Հովհաննես ԺԴ.15 և Եփեսացիս Զ.1: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 35:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Սուրբ գրություններ:
   բ. Նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ (62307), Նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը (62021), Նկար 1-9՝ Առավոտյան աղոթք (62310), Նկար 1-46՝ Երեխաները մայրիկին ծաղիկներ են նվիրում, Նկար 1-55՝ Սարի վրայի քարոզը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 212, 62166), Նկար 1-56՝ Երեք տղամարդ թեժ հնոցում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 116, 62093):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Քաղաքավարի խնդրեք երեխաներին մի քանի շարժումներ կատարել, օրինակ՝ կանգնել, պտտվել, ձգվել վեր, դիպչել ոտքի մատերին և նստել: Շնորհակալություն ասեք նրանց, որ կատարեցին այն, ինչ խնդրեցիք: Բացատրեք, որ նրանք հնազանդվեցին: Նրանք հնազանդվեցին ձեր հրահանգներին:

Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք հնազանդվենք մեր ծնողներին

Ցույց տվեք նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ:

- Ի՞նչ է ցույց տալիս այս նկարը:

Ցույց տվեք նկարի երեխային և խոսեք այն մասին, որ մեզանից յուրաքանչյուրը աշխարհ է եկել որպես փոքր երեխա: Հիշեցրեք երեխաներին, որ քանի որ երեխաները շատ փոքր են և անօգնական, նրանք տարիքով ավելի մեծ մեկի կարիքն ունեն, որը հոգ կտանի իրենց համար:

- Ո՞վ է ձեզ խնամել, երբ դուք նորածին էիք:
- Ո՞վ է այժմ ձեր մասին հոգ տանում:

Բացատրեք երեխաներին, որ մարդիկ, ովքեր հոգ են տանում իրենց մասին, օրինակ՝ իրենց ծնողները և ընտանիքի այլ անդամները, սիրում են իրենց և ցանկանում են, որ նրանք ապահով և երջանիկ լինեն:

- Ի՞նչ են ձեր ծնողները սովորացնում, որ դուք չանեք:

Խոսեք այն մասին, որ երեխաները կարող են վնաս պատճառել իրենք իրենց, եթե օրինակ՝ փողոցում խաղան, տաք գազօջախին դիպչեն, սուր դանակ վերցնեն, զառիվայր բլրով վազեն, կամ իրենց եղբայրների և քույրերի հետ կռվեն:

- Ինչո՞ւ ձեր ծնողները չեն ցանկանում, որ դուք նման բաներ անեք:

Խոսեք այն մասին, որ երեխաները կարող են ապահով և երջանիկ լինել, եթե օրինակ՝ իրենց խաղալիքներով խաղան, իրենց ծնողների հետ ուրիշ տեղ գնան և բարյացակամորեն վերաբերվեն իրենց եղբայրներին և քույրերին:

- Ինչո՞ւ են ձեր ծնողները թույլ տալիս ձեզ նման բաներ անել:
- Ինչո՞ւ պետք է դուք հնազանդվեք ձեր ծնողներին:

Բացատրեք, որ մեր ծնողները սիրում են մեզ և ցանկանում են, որ մենք անենք այն, ինչը մեզ վնաս չի պատճառի, և մենք ապահով և ուրախ կլինենք:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և կատարել հետևյալ ոտանավորը.

Իմ ոտքերը սիրում են վազել *(տեղում վազեք)*,
Իմ ձեռքերը սիրում են խաղալ *(ձեռքերը շարժեք)*,
Իսկ երբ մայրիկն [կամ հայրիկն] ինձ կանչում է, *(ձեռքով կանչելու շարժում արեք)*,
Ես իսկույն հնազանդվում եմ:

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ հնազանդվում եք ձեր ծնողներին և լսում նրանց, երբ ձեզ կանչում են:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ անում եք այն, ինչ ձեր ծնողները խնդրում են ձեզ:

Բացատրեք, որ երբ մենք հնազանդվում ենք մեր ծնողներին, կարող ենք մեզ երջանիկ զգալ: Մեր ծնողները ևս երջանիկ են, երբ մենք հնազանդվում ենք:

Ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք հնազանդվենք մեր ծնողներին: Երեխաների համար կարդացեք և բացատրեք Եփեսացիս Զ.1 հատվածը:

Երգ

Երգեք կամ կարդացեք “Quickly I’ll Obey” (*Children’s Songbook,* p. 197) երգի բոլոր երեք տունները:

Երբ մայրիկս ինձ կանչում է,
Ես հնազանդվում եմ միշտ:
Ես ուզում եմ լավը լինել
Այժմ և ընդմիշտ:

Երբ հայրիկս ինձ կանչում է,
Ես հնազանդվում եմ միշտ:
Ես ուզում եմ լավը լինել
Այժմ և ընդմիշտ:

Երկնային Հայրն ինձ սիրում է,
Եվ օրհնում է միշտ:
Ես ուզում եմ լավը լինել
Այժմ և ընդմիշտ:

Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք հնազանդվենք պատվիրաններին

Ցույց տվեք նկար 1-55՝ Սարի վրայի քարոզը:

- Ո՞վ է այս նկարում:

Բացատրեք, որ երբ Հիսուսը երկրի վրա էր, նա մարդկանց ուսուցանում էր, թե ինչ է Երկնային Հայրը ցանկանում իրենք անեն: Այդ ուսմունքները կոչվում են պատվիրաններ: Ցույց տվեք սուրբ գրությունները: Ասեք երեխաներին, որ պատվիրանները գրված են սուրբ գրություններում:

Վարժություն

Բացեք ձեր Աստվածաշունչը և կարդացեք Հովհաննես ԺԴ.15: Բացատրեք, որ Հիսուսն ասաց այդ խոսքերը: Բացատրեք, որ *պահել* նշանակում է հնազանդվել: Խնդրեք երեխաներին ձեզ հետ միասին մի քանի անգամ կրկնել այդ հատվածը:

- Նշեք մի քանի պատվիրաններ, որոնց Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք հնազանդվենք:

Օգտագործելով հետևյալ նկարները, խոսեք մի քանի պատվիրանների մասին, որոնց երեխաները կարող են հնազանդվել:

Նկար 1-5՝ Ընտանիքը մանկան հետ—սիրել մեր ընտանիքները
Նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը—հաճախել Եկեղեցու ժողովներին
Նկար 1-9, Առավոտյան աղոթք—աղոթել Երկնային Հորը
Նկար 1-46՝ Երեխաները մայրիկին ծաղիկներ են նվիրում—լինել բարի մյուսների հանդեպ

- Ի՞նչ է անում Երկնային Հայրը, երբ մենք հնազանդվում ենք նրա պատվիրաններին:

Երկնային Հայրն օրհնում է մեզ, երբ մենք հնազանդվում ենք

Պատմություն

Հակիճ պատմեք Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի մասին պատմությունը, որը գտնվում է Դանիել Գ-ում: Հարմար պահին ցույց տվեք նկար 1-56՝ Երեք տղամարդ թեժ հնոցում: Բացատրեք, որ Երկնային Հոր պատվիրաններից մեկն է, որ մենք աղոթենք միայն իրեն: Մենք չենք աղոթում այլ մարդկանց կամ կուռքերի, որոնք նման են արձանների: Բացատրեք, որ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը գիտեին Երկնային Հոր պատվիրանները և ցանկանում էին հնազանդվել դրանց: Երկնային Հայրը պաշտպանեց նրանց կրակից, որովհետև նրանք հնազանդվեցին իրեն: Կրակը չայրեց նրանց:

- Ինչո՞ւ կրակը չվնասեց Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էին զգում Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը, երբ Երկնային Հայրը նրանց կրակից պաշտպանեց:

Վկայություն

Հայտնեք, թե որքան կարևոր է մեր ծնողներին և Երկնային Հորն ու Հիսուսին հնազանդվելը: Երեխաներին պատմեք, թե ինչպես է պատվիրաններին հնազանդվելն օգնում, որ մենք երջանիկ լինենք:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երգեք կամ կարդացեք “Keep the Commandments” (*Children’s Songbook,* p. 146) երգի առաջին տունը կամ “I Have Two Little Hands” (*Children’s Songbook,* p. 272) երգի երկրորդ տունը:
2. Թող երեխաները հերթով հրահանգներ տան դասարանին, օրինակ՝ «կանգնեք» և «ձեռքերը դրեք ձեր գլխին»: Խնդրեք երեխաներին հնազանդվել հրահանգներին:
3. Օգտագործեք դաս 11-ի ձկնորսական կարթը և պատրաստեք թղթե ձկներ, որոնց վրա գրված կլինեն պարզ հրահանգներ, օրինակ՝ «ծալեք ձեռքերը», «կրկնեք՝ Հիսուսն ասել է՝ եթե սիրում եք ինձ, իմ պատվիրանները պահեք», «հանգիստ շրջեք դասարանում», ժպտացեք մյուս երեխաներին» և «օգնեք դասարանին երգել «Աստծո զավակն եմ» երգը»: Թող երեխաները հերթով մի ձուկ բռնեն և հնազանդվեն ձկան վրա գրված հրահանգներին:
4. Վերանայեք Նոյի պատմությունը, շեշտելով, որ Նոյը և իր ընտանիքը փրկվեցին ջրհեղեղից, որովհետև հնազանդվեցին պատվիրաններին:
5. Յուրաքանչյուր երեխայի տվեք մի թղթի կտոր, որի վրա դուք նկարել եք ուրախ դեմք և գրել եք՝ *Ես երջանիկ եմ, երբ հնազանդվում եմ*: Թող երեխաներիը գունավորեն այդ դեմքերը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղի շարժումները.

   Զբաղված փոքրիկ մատեր *(ցույց տվեք բռունցք)*,
   Ո՞վ կօգնի մեզ հնազանդվել:
   «Ես», «ես», «ես», «ես», «ես» *(ամեն անգամ «ես» ասելիս մի մատը բարձրացրեք, մինչև որ բոլոր մատերը բացված կլինեն)*,
   Ասում են զբաղված փոքրիկ մատերը:
2. Մի քանի իրեր բերեք, որոնք պաշտպանիչ դեր ունեն, օրինակ՝ կոշիկներ, գլխարկներ և ձեռնոցներ: Հարցրեք երեխաներին, թե ինչպիսի պաշտապանիչ դեր են խաղում դրանք (օրինակ՝ կոշիկները պաշտպանում են մեր ոտքերը, գլխարկը պաշտպանում է մեր գլուխը ցրտից կամ մեր աչքերը արևից): Ասեք երեխաներին, որ մենք նաև պաշտպանված ենք, երբ հնազանդվում ենք մեր ծնողներին: Խոսեք մի քանի կանոնների մասին, և թե ինչպես են դրանք պաշտպանում մեզ:
3. Պարզեք ձեր ձեռքերը և ցույց տվեք երեխաներին, թե ինչպես կարող եք շարժել ձեր մատերը: Խնդրեք երեխաներին պարզել իրենց ձեռքերը, շարժել մատերը և բացել ու փակել իրենց ձեռքերը: Բացատրեք, որ մենք կարող ենք շարժել ոչ թե ուրիշի, այլ մեր ձեռքերն ու մատերը: Բացատրեք, որ մենք ենք մեր ձեռքերը հնազանդեցնում, երբ ինչ-որ մեկը մեզ խնդրում է ինչ-որ բան անել: Դա անելիս մենք ներքուստ ուրախանում ենք:

4. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, մինչ դուք արտասանում եք այն.

   Ես սիրում եմ իմ ձեռքերը

   Ես սիրում եմ իմ ձեռքերը, դրանք իմ ընկերներն են *(պահեք ձեռքերը ձեր առջև և նայեք դրանց)*:
   Սրանք զբաղված են և ողջ օրն ինձ օգնում են *(մնջախաղով ցույց տվեք ձեռքերն աշխատում են)*:
   Սրանք հանգիստ ծալվում *(ձեռքերը ծալեք)* կամ բարձր ծափահարում են *(ծափահարեք)*:
   Հպարտանում եմ, երբ նրանք լավ գործեր են անում:

Ես կարող եմ ներողություն խնդրել

Դաս
29

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ երբ սխալ բան ենք անում, պետք է ներողություն խնդրենք և փորձենք ուղղել մեր կատարած սխալը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մոսիա 27.8–37:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Մորմոնի Գիրք:
   բ. Գրպանի մեջ տեղավորվող փոքր խաղալիք:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երբ երեխաները մտնում են սենյակ կամ հավաքվում դասին, սենյակը դասավորելիս կամ դասին պատրաստվելիս դիտավորյալ սխալներ թույլ տվեք: Դուք կարող եք—

- Ինչ-որ բան գցել հատակին:
- Աթոռը հակառակ դնել:
- Նկարը թարս ցուցադրել:
- Սկսեք ինչ-որ բան գրել գրատախտակին կամ թղթի վրա, և ապա ջնջեք այն կամ գիծ քաշեք վրան:

Յուրաքանչյուր սխալից հետո, ասեք՝ «Կներեք, ես սխալվեցի»: Ապա սխալն ուղղեք:

Հարցրեք երեխաներին, թե արդյոք նկատեցին ձեր կատարած բոլոր սխալները: Մատնանշեք, որ ամեն ոք սխալներ է գործում:

Երբեմն մենք սխալներ ենք կատարում

Բացատրեք, որ մեծանալով և սովորելով ճիշտ ընտրություն կատարել, երբեմն մենք սխալ ընտրություններ ենք կատարում: Դրանք պարզապես սխալներ չեն, ինչպես՝ նկարը թարս դնելը, այլ մենք անում են այն, ինչ Երկնային Հայրը և Հիսուսը և մեր ծնողները չեն ցանկանում, որ մենք անենք: Սխալ ընտրություններ կատարելով մենք կարող ենք դժբախտացնել մեզ և ուրիշներին:

Պատմություն

Ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը՝ օգտագործելով մի փոքր խաղալիք այն ներկայացնելու համար.

Թրեյվիսն ու Մաթը ուրախ խաղում էին Մաթենց տանը: Թրեյվիսը սիրեց Մաթի խաղալիքները և ցանկացավ, որ դրանք իրենը լինեին: Թրեյվիսը որոշեց վերցնել որոշ խաղալիքներ և առանց Մաթին հարցնելու դրանք դրեց իր գրպանը:

Երբ Թրեյվիսը տանը խաղում էր այդ խաղալիքներով, այդքան ուրախ չէր: Նրա մայրը հարցրեց, թե ինչու է տխուր: Թրեյվիսն ասաց մայրիկին, որ առանց թույլտվության վերցրել է Մաթի խաղալիքները և այժմ դրա համար իրեն վատ է զգում:

Թրեյվիսի մայրիկն ասաց, որ լավ չէ, երբ վերցնում ես այն, ինչ ուրիշին է պատկանում: Նա հարցրեց Թրեյվիսին, թե ինչ պետք է անի իր սխալ ընտրությունը շտկելու համար: Թրեյվիսը ցանկացավ խաղալիքները ետ տանել, սակայն վախեցավ, որ Մաթը կբարկանա իր վրա: Թրեյվիսի մայրն ասաց, որ թեև Մաթը կարող է բարկանալ, ճիշտը՝ խաղալիքները վերադարձնելն է: Նա նաև ասաց Թրեյվիսին, որ եթե ներողություն խնդրի Մաթից, սխալ գործելու արդյունքում ունեցած վատ զգացողությունները կվերանան:

Թրեյվիսը վերադարձրեց Մաթի խաղալիքները: Նա ներողություն խնդրեց առանց թույլտվության խաղալիքները վերցնելու համար և խոստացավ, որ երբեք նման բան չի անի: Մաթը ուրախ էր, որ Թրեյվիսը խաղալիքները ետ բերեց: Թրեյվիսն ուրախ էր, որ ճշմարտությունն ասաց և իր սխալն ուղղեց (adapted from Pat Graham, “Travis Repents,” *Friend*, Mar. 1987, pp. 40–41):

- Ի՞նչ սխալ գործեց Թրեյվիսը:
- Ինչպե՞ս Թրեյվիսը զգաց, երբ վերցրեց Մաթի խաղալիքները:

Բացատրեք, որ երբ սխալ ենք գործում, մենք ներքուստ մեզ վատ ենք զգում: Այդպես Երկնային Հայրն օգնում է մեզ իմանալ, որ սխալ ենք գործել:

- Ի՞նչ արեց Թրեյվիսը, որ վատ զգացողությունները վերանան:
- Ինչպե՞ս Թրեյվիսը զգաց, երբ վերադարձրեց Մաթի խաղալիքները և ներողություն խնդրեց:

Մենք պետք է ներողություն խնդրենք

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ սխալ եք գործում:
- Ի՞նչ կարող եք անել վատ զգացողությունները հեռացնելու համար:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ երբ գիտենք, որ սխալ ենք գործել, պետք է ընդունենք դա: Այնուհետև պետք է ներողություն խնդրենք: Մենք նաև պետք է փորձենք շտկել այդ սխալը և խոստանանք, որ դա այլևս չի կրկնվի:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և ձեզ հետ կատարել հետևյալ շարժումներով ոտանավորը.

Երբ սխալ բան եմ կատարում *(մատը այս ու այն կողմ շարժեք),*
Ներողություն եմ խնդրում:
Ես շատ եմ տխրում *(մատերով բերանի ծայրերը ներքև իջացրեք՝ տխուր դեմք ընդունելով),*
Որ սխալ եմ գործում:

Ես ավելի լավը կլինեմ *(ձեռքերը դրեք կոնքերին և գլխով հաստատող շարժում կատարեք),*
Ես միշտ կփորձեմ:
Ես ուրախ կլինեմ *(ժպտացեք),*
Եթե ճիշտ գործեմ *(ձեռքերը ծալեք և գլխով հաստատող շարժում արեք):*

Մենք պետք է հնարավորինս ամեն ինչ անենք սխալը շտկելու համար

Պատմություն

Երեխաներին ցույց տվեք Մորմոնի Գիրքը: Նրանց ասեք, որ Մորմոնի Գիրքը պատմում է մի մարդու մասին, որը սխալ էր կատարել:

Բացեք Մորմոնի Գիրքը և պատմեք Ալմայի պատմությունը, ինչպես տրված է Մոսիա 27.8–37-ում: Բացատրեք, որ Ալման չլսեց իր հորը: Նա չհնազանդվեց Երկնային Հորը և Հիսուսին: Նա շատ սխալներ գործեց: Նա Եկեղեցու մասին սխալ բաներ էր ասում մարդկանց: Շատ մարդիկ հավատացին նրան և չլսեցին Եկեղեցու ղեկավարներին:

Բացատրեք, որ Ալման փոխվեց և սկսեց ճիշտ գործել: Նա փորձում էր շտկել իր կատարած սխալները՝ մարդկանց ճշմարտությունը ուսուցանելով:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր Ալման զգում, երբ հասկացավ, որ սխալներ էր կատարել: (Տես Մոսիա 27.29:)
- Ինչպե՞ս Ալման փորձեց շտկել իր կատարած սխալները: (Տես Մոսիա 27.32, 35–36:)
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր Ալման զգում, երբ սկսեց մարդկանց ճշմարտությունն ուսուցանել:
- Երբ սխալ եք գործում, ինչո՞ւ պետք է փորձեք շտկել այն:

Կիսվեք անձնական պարզ օրինակով այն մասին, երբ ներողություն եք խնդրել: Երեխաներին պատմեք, թե ինչպես եք ձեզ զգացել և ինչպես եք փորձել ձեր կատարած սխալը շտկել:

Վերանայեք, թե ինչ պետք է անենք, երբ գիտենք, որ սխալ ենք գործել:

1. Ընդունենք, որ սխալ ենք կատարել:
2. Ներողություն խնդրենք:
3. Խոստանանք, որ դա այլևս չի կրկնվի:
4. Հնարավորինս ամեն ինչ անենք մեր կատարած սխալը շտկելու համար:

Բացատրեք, որ այդ բոլոր քայլերը միասին կոչվում են ապաշխարություն: Երկնային Հայրը և Հիսուսը ուրախ են, երբ մենք ապաշխարում ենք մեր կատարած սխալներից:

Խնդրեք երեխաներին քննարկել, թե ինչպես կարող են հետևել ապաշխարության այդ քայլերին հետևյալ իրավիճակներում՝

- Ի՞նչ պետք է անեք, եթե վերցրել եք այն, ինչ ձեզ չի պատկանում:
- Ի՞նչ պետք է անեք, եթե ինչ-որ մեկին վատ խոսք եք ասել:
- Ի՞նչ պետք է անեք, եթե ստել եք ձեր ծնողներին:
- Ի՞նչ պետք է անեք, եթե մեկին հրել-գցել եք գետնին:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են մեզ, անգամ երբ մենք սխալներ ենք կատարում: Ասեք երեխաներին, որ նրանք ուրախ կլինեն, եթե իրենց կատարած սխալների համար ներողություն խնդրեն և փորձեն այլևս սխալ չգործել:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ "Repentance" (*Children's Songbook,* p. 98): Բացատրեք, որ ապաշխարել նշանակում է ներողություն խնդրել, խոստանալ այդ սխալն այլևս չկրկնել և փորձել սխալը շտկել:

2. Երեխաներին բաժանեք մի կտոր պլաստիլին կամ խաղալու խմոր: Ցույց տվեք նրանց ինչպես պետք է պլաստիլինից կամ խաղալու խմորից գնդակ պատրաստել, և ապա տափակացրեք այն: Օգնեք նրանց ժպտացող դեմք անել պլաստիլինի վրա, որը նրանց կհիշեցնի, որ երբ ներողություն են խնդրում, նրանք իրենց լավ են զգում: (Խաղալու խմորի բաղադրատոմսը կարող եք գտնել այս ձեռնարկի xv էջում:)

3. Յուրաքանչյուր երեխայի թուղթ ու մատիտ տվեք: Թող երեխաները ժպտացող դեմք նկարեն: Նկարների վրա գրեք՝ *Ես կարող եմ երջանիկ լինել, երբ ներողություն եմ խնդրում:*

4. Երգեք կամ կարդացեք "I Want to Live the Gospel" (*Children's Songbook,* p. 148):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. «Պատահաբար» մատիտների տուփը կամ այլ փոքր առարկաներ թափեք հատակին: Ասեք երեխաներին, որ ներողություն եք խնդրում մատիտները գետնին թափելու համար, և ապա հարցրեք, թե ինչ պետք է անեք իրավիճակը շտկելու համար: Մատիտները հավաքելիս, ասեք երեխաներին, որ դուք ձեզ ավելի լավ զգաք, երբ հատակը կրկին մաքուր լինի: Խնդրեք երեխաներին օգնել ձեզ հատակը մաքրելիս:

   Բացատրեք, որ երբեմն մենք անում ենք բաներ, որի արդյունքում մենք կամ ուրիշները տխրում են: Այդ դեպքում մենք պետք է ասենք՝ «Ներողություն», և փորձենք շտկել մեր կատարածը: Երեխաներին շնորհակալություն ասեք, որ օգնեցին ձեզ մաքրել հատակը, և հիշեցրեք նրանց, որ նրանք ուրախ են լինում, երբ օգնում են մյուսներին:

2. Երգեք կամ կարդացեք "Jesus Said Love Everyone" (*Children's Songbook,* p. 61):

3. Խնդրեք երեխաներին մի բարդ բառ ասել, օրինակ՝ *գետնաձի:* Ասեք նրանց, որ երբեմն դժվար է բարդ բառեր արտասանել: Բացատրեք, որ դժվար է ասել «Ներողություն», երբ մենք սխալ ենք գործում: Բացատրեք, որ անգամ երբ դժվար է ներողություն խնդրելը, դա կօգնի տխուր զգացումները փոխել լավ զգացումների:

4. Մի կարճ պատմություն պատմեք միասին խաղացող երկու երեխաների մասին: Երբ երեխաներից մեկն ուժգին բախվում է մյուսին, առաջին երեխան ներողություն է խնդրում և փորձում է օգնել մյուսին, ով վնասվել է, որ նա իրեն լավ զգա: Միտք հղացեք, որպեսզի վատ զգացողությունը փոխեք ուրախության: Կարող եք օգտագործել Դաս 21-ի ժպտացող/Խոժոռված դեմքի պատկերը: Թող մի երեխա պահի այդ պատկերը և շրջի այն՝ ցույց տալով այս պատմության երեխաների զգացողությունները:

Ես կարող եմ ներել մյուսներին

Դաս
30

ՆՊԱՏԱԿ

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի ներողամիտ լինել:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Լէ.12–28, ԽԱ.38–43, ԽԲ.1–8, ԽԵ.1–15, Մատթեոս ԺԸ.21–22 և Ղուկաս ԻԳ.33–34:
2. Պատրաստեք թղթի փոքր կտորներ և յուրաքանչյուրի վրա մի իրավիճակ նկարագրեք, օրինակ ստորև տրված իրավիճակներից մեկը.
   - Ինչ-որ մեկը ձեզ հրում զցում է գետնին:
   - Ինչ-որ մեկը թույլ չի տալիս ձեզ խաղ խաղալ:
   - Ինչ-որ մեկը կոտրել է ձեր խաղալիքը:
   - Ինչ-որ մեկը տհաճ անունով է ձեզ դիմում:
   - Ինչ-որ մեկը վերցրել է այն, ինչով խաղում էիք, և չի ցանկանում տալ ձեզ:

   Դասարանի յուրաքանչյուր երեխայի համար մի թղթի կտոր պատրաստեք (անհրաժեշտության դեպքում ավելի շատ իրավիճակներ մտածեք): Թղթերը լցրեք տուփի մեջ, որի վրա գրված է «Սերման տուփ»:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-47՝ Կռվող երեխաները, նկար 1-57՝ Եղբայրները վաճառեցին Հովսեփին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 109, 62525), նկար 1-58՝ Հովսեփը իրեն հայտնում է իր եղբայրներին, նկար 1-59՝ Խաչելություն (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 230, 62505):
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ցույց տվեք նկար 1-47՝ Կռվող երեխաները:

- Ի՞նչ են այդ երեխաներն անում:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են նրանք կռվում:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս են նրանք զգում:
- Ի՞նչ կարող էին այդ երեխաներն ասել միմյանց կռվին վերջ տալու համար, որի արդյունքում ավելի լավ կզգային իրենց:

Նախորդ դասից վերհիշեք, թե որքան կարևոր է ասել՝ կներես: Բացատրեք, որ կներես ասելուց հետո, երեխաները պետք է ներեն միմյանց: Դա նշանակում է, որ այլևս չպետք է զայրանան միմյանց վրա և պետք է ընկերներ լինեն: Հիշեցրեք

երեխաներին նախորդ դասից Մաթի և Թրեյվիսի պատմությունը: Մաթը ներեց Թրեյվիսին իր խաղալիքները վերցնելու համար: Նրանք ընկերներ մնացին:

Հովսեփը ներեց իր եղբայրներին

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-57՝ Եղբայրները վաճառեցին Հովսեփին: Պատմեք Հովսեփի Եգիպտոս վաճառվելու պատմությունը, ինչպես տրված է Ծննդոց Լէ.12–28:

- Ձեր կարծիքով, ի՞նչ զգաց Հովսեփը, երբ եղբայրները նրան Եգիպտոս ստրկության վաճառեցին:

Բացատրեք, որ Հովսեփը կարևոր մարդ դարձավ Եգիպտոսում (տես Ծննդոց ԽԱ.38–43): Տարիներ անց Հովսեփի եղբայրները եկան Եգիպտոս ուտելիք հայթհայթելու համար, քանի որ իրենց երկրում բավականաչափ ուտելիք չկար: Նրանք պարզեցին, որ Հովսեփը կենդանի էր և կարևոր մարդ էր Եգիպտոսում (տես Ծննդոց ԽԲ.1–8, ԽԵ.1–15):

Ցույց տվեք նկար 1-58՝ Հովսեփը իրեն հայտնում է իր եղբայրներին:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր Հովսեփն իրեն զգում կրկին իր եղբայրների հետ լինելով: (Տես Ծննդոց ԽԵ.14–15:)
- Հովսեփը բարկացա՞ծ էր իր եղբայրների վրա: (Տես Ծննդոց ԽԵ.5:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ էին Հովսեփի եղբայրները նրա հանդեպ զգում:
- Ինչպե՞ս Հովսեփը ցույց տվեց, որ ներել է իր եղբայրներին: (Տես Ծննդոց ԽԵ.5–15:)

Վարժություն

Թող մի երեխան լինի Հովսեփը, իսկ մյուս երեխաները՝ Հովսեփի եղբայրները: Օգնեք երեխաներին դերերով ներկայացնել պատմությունը, որտեղ Հովսեփը կրկին միացավ եղբայրներին և ներեց նրանց:

Հիսուսը մեզ պատվիրեց՝ ներող լինել

Ցույց տվեք Աստվածաշունչը: Բացատրեք, որ Աստվածաշնչում Հիսուսը պատվիրում է, որ մենք ներենք: Հիսուսի առաքյալներից մեկը նրան հարցրեց մյուսներին ներելու մասին (տես Մատթեոս ԺԸ.21–22): Հիսուսն ասաց նրան, որ մենք պետք է միշտ ներող լինենք: Բացատրեք, որ Աստվածաշունչը նաև մեզ պատմում է, որ Հիսուսը ներում էր:

Ցույց տվեք նկար 1-59՝ Խաչելություն: Բացատրեք, որ զինվորները շատ դաժան էին վարվում Հիսուսի հետ: Նրանք խփում էին և թքում նրա վրա: Զինվորները մեխերով գամեցին Հիսուսի ձեռքերը և ոտքերը և նրան կախեցին խաչից, որ մեռնի: Բացատրեք, որ Հիսուսը ներեց զինվորներին: Նա բարկացած չէր զինվորների վրա այն ամենի համար, ինչ նրանք արեցին իր հետ: (Զգույշ եղեք, որ շատ ծանր չներկայացնեք այս պատմությունը: Որոշ երեխաներ կարող է շատ նրբազգաց լինեն և ցավագին ընդունեն այն միտքը, որ մարդիկ ցավ են պատճառել Հիսուսին:)

Անդրադարձեք Ղուկաս ԻԳ.34-ին և երեխաներին պատմեք, թե ինչ ասաց Հիսուսը, երբ մահանալուց առաջ աղոթեց Երկնային Հորը. «Հայր, ներիր նրանց»: Խնդրեք երեխաներին մի քանի անգամ բարձրաձայն կրկնել այդ խոսքերը:

- Թեև զինվորները դաժան վարվեցին Հիսուսի հետ, ի՞նչ արեց նա:
- Ի՞նչ է ցանկանում Հիսուսը, որ մենք անենք, երբ ինչ-որ մեկը մեզ բարկացնում կամ վշտացնում է:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կրկնել այն, ինչ դուք եք անում: Թող նրանք հետևեն ձեզ, երբ դուք կանգնում եք, ձգվում եք, ժպտում եք, նստում եք և ձեր ձեռքերը ծալում եք: Բացատրեք, որ նրանք հետևում էին ձեզ, քանի որ կրկնում էին այն, ինչ դուք էիք անում: Եթե դուք հետևում եք ինչ-որ մեկին, դուք կատարում եք նույն բաները, ինչ այդ անձնավորությունն է կատարում: Երբ ներում ենք մյուսներին, մենք հետևում ենք Հիսուսին: Մենք անում ենք այն, ինչ նա էր անում: Հիսուսը ցանկանում է, որ մենք ներենք նրանց, ովքեր մեզ տխրեցնում կամ վշտացնում են:

Մենք կարող ենք ներել մյուսներին

Վարժություն

Ցույց տվեք «Ներելու տուփը» և ամեն անգամ հրավիրեք մի երեխայի, որ այդ տուփից մի թուղթ հանի:

Կարդացեք յուրաքանչյուր իրավիճակը և հարցեր տվեք, օրինակ՝ այսպիսի հարցեր.

- Արդյո՞ք այսպիսի բան պատահել է ձեզ հետ:
- Ինչպե՞ս եք ձեզ զգացել:
- Ի՞նչ պետք է ասի ձեզ այն անձնավորությունը, որը ձեզ վշտացրել կամ բարկացրել է:
- Ի՞նչ պետք է դուք անեք կամ ասեք այն մարդուն, ով անբարյացակամ է եղել ձեր հանդեպ, կամ վշտացրել ու բարկացրել է ձեզ:

Պատմեք այն մասին, երբ ներել եք ինչ-որ մեկին և ասեք, թե ինչպես եք ձեզ զգացել: Օգնեք երեխաներին հասկանալ, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք ներողամիտ լինենք:

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Help Me, Dear Father” (*Children’s Songbook,* p. 99).

Օգնիր ինձ, սիրելի Հայր, որ ազատորեն ներեմ,
Նրանց, ովքեր իմ հանդեպ անբարյացակամ են:
Օգնիր ինձ ամեն օր, Հայր, ես աղոթում եմ,
Օգնիր ինձ, որ ավելի մոտ քեզ լինեմ:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք ներողամիտ լինենք: Խրախուսեք երեխաներին աղոթել և խնդրեք Երկնային Հորը, որ օգնի նրանց ներել մյուսներին:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Վերանայեք անառակ որդու պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս ԺԵ.11–32: Օգտագործեք նկար 1-49՝ Անառակ որդին: Օգնեք երեխաներին հասկանալ, որ հայրը սիրում էր իր որդուն և ներեց նրան:
2. Կատարեք հետևյալ մատերով խաղը: Հրավիրեք երեխաներին ձեզ հետ միասին կատարել շարժումները:

Երկու փոքր ընկեր՝ մեկը ձախում, իսկ մյուսը աջում *(երկու ձեռքերը բռունցք արեք և իրար դեմ պահեք)*,
Սկսեցին վիճել և միմյանց հետ կռվել *(մի բռունցքը մյուսի վրա թափահարեք):*
Այժմ տխուր են այդ փոքր ընկերները,
Քանի որ նրանց սովորեցրել էին խաղալու ճիշտ ձևը:
Այժմ մի ընկերը գլուխն ամոթից կախեց *(աջ բռունցքը իջեցրեք և մի կողմ շրջեք),*
Մյուսը նույնկերպ զգաց իրեն *(ձախ բռունցքը նույնպես իջեցրեք և մի կողմ շրջեք):*
Առաջին փոքր ընկերն ասաց. «Ես գիտեմ ինչ կանեմ *(ծափ տվեք),*
Ցույց կտամ, որ զղջում եմ, ներողություն կխնդրեմ»:
«Ես նույնպես զղջում եմ,- մյուսը կրկնեց,-
Արի միասին խաղանք և ուրախ լինենք» *(ձեռքերը ծալեք և նստեք):*

3. Մի պարզ կրծքանշան պատրաստեք յուրաքանչյուր երեխայի համար, որ տանը կրեն իրենց վրա: Բոլոր կրծքանշանների վրա գրեք՝ *Ես կարող եմ ներել:*

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Վերանայեք Դաս 29-ից միասին խաղացող երկու երեխաների մասին պատմությունը (տես Լրացուցիչ վարժություններ ավելի փոքր երեխաների համար, Վարժություն 4): Պատմեք, ինչպես վնասված երեխան ներեց մյուսին:

2. Երգեք կամ կարդացեք “Jesus Said Love Everyone” (*Children’s Songbook,* p. 61) կամ “Jesus Wants Me for a Sunbeam” (*Children’s Songbook,* p. 60):

3. Երգեք կամ կարդացեք “If You’re Happy” (*Children’s Songbook,* p. 266): Երեխաներին բացատրեք, որ երբ մենք ներում ենք նրանց, ովքեր մեր հանդեպ անբարյացակամ են եղել, մենք երջանիկ ենք լինում:

Ես շնորհակալ եմ իմ տան համար

Դաս
31

ՆՊԱՏԱԿ

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի՝ երախտապարտ լինել իր տան համար և օգնել հոգ տանել դրա համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք 1 Նեփի 2.2–6, 17.7–8 և 18.6, 23:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Մորմոնի Գիրք:
   բ. Ջրով տարա, հողով տարա և փոքր ճյուղ: Ցանկության դեպքում, կարող եք լճի, հողի կամ ծառի նկարներ բերել:
   գ. Թուղթ ու մատիտներ:
   դ. Նկար 1-60՝ Լեքին և իր մարդիկ հասնում են խոստացված երկիրը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 304, 62045), նկար 1-61՝ Նավուից մեկնումը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 410, 62493):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք ջրով տարան կամ ջրի նկարը և հարցրեք, թե ինչ կենդանիներ կամ միջատներ են ապրում ջրում: Օգնեք երեխաներին մտածել հնարավորինս շատ կենդանիների մասին: Ցույց տվեք հողը և ապա ճյուղը, և օգնեք երեխաներին մտածել, թե ինչ կենդանիներ և միջատներ են ապրում հողի մեջ կամ ծառերի վրա:

- Ձեր կարծիքով, ի՞նչ կլիներ, եթե ձեր տունը լիներ ջրի մեջ:
- Ի՞նչ կլիներ, եթե ձեր տունը լիներ ծառի վրա:

Կան տարբեր տեսակի տներ

Բացատրեք, որ կենդանիները և միջատները ապրում են տարբեր տեսակի տներում: Մարդիկ ևս ապրում են տարբեր տեսակի տներում:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-60՝ Լեքին և իր մարդիկ հասնում են խոստացված երկիր, ցույց տվեք Մորմոնի Գիրքը և պատմեք Լեքիի և նրա ընտանիքի մասին, և թե ինչպիսի տներում էին նրանք ապրում (տես 1 Նեփի 2.2–6, 17.7–8, և 18.6, 23): Լեքիի ընտանիքը հարմարավետ տուն ուներ Երուսաղեմում, սակայն երբ Տերը պատվիրեց, որ նրանք հեռանան Երուսաղեմից, նրանք ճամփորդեցին անապատով և ապրում էին վրաններում: Տարիներ անց Տերը պատվիրեց, որ Նեփիին, Լեքիի որդին, նավ կառուցի: Լեքին և նրա ընտանիքն ապրում էին նավի մեջ, մինչ նրանք ճամփորդում էին դեպի խոստացված երկիր, մի վայր, որը Երկնային Հայրը և Հիսուսը պատրաստել

էին նրանց համար: Խոստացված երկիր հասնելուց հետո Լեքին և իր ընտանիքը կրկին ապրում էին վրաններում, մինչև որ կարողացան հիմնական տներ կառուցել:

- Ինչպիսի՞ տներում էին ապրում Լեքին և նրա ընտանիքը:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-61՝ Նավուից մեկնումը: Պատմեք Եկեղեցու վաղ անդամների մասին, ովքեր կառուցեցին Նավու քաղաքը: Նրանք տքնաջան աշխատում էին կառուցելու համար իրենց տները և գեղեցիկ տաճարը: Սակայն Նավուի շրջակայքում որոշ մարդիկ չէին սիրում Եկեղեցու անդամներին և ստիպեցին նրանց հեռանալ այդտեղից: Եկեղեցու անդամները ճամփորդում էին իրենց ունեցվածքից վերցնելով այն, ինչը կտեղավորվեր ծածկ ունեցող սայլերում: Քանի որ ծածկով սայլերը փոքր էին, շատ երեխաներ ստիպված թողեցին իրենց խաղալիքները: Որոշ մարդիկ երկար ժամանակ ապրում էին իրենց փակ սայլակներում և վրաններում:

- Ինչո՞ւ էր դժվար փակ սայլերում կամ վրաններում ապրելը:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և կատարել հետևյալ ոտանավորը.

Պիոներ երեխաները քայլում էին և զրուցում (տեղում քայլեք),
Ապա նրանք խաղում էին և պարան թռնում (տեղում ցատկեք):
Երբ գիշերը գալիս էր, և աստղերն էին փայլում (փակեք և բացեք ձեռքերը),
Կառքերի մեջ նրանք քնում էին և երազներ տեսնում (փակեք աչքերը, գլուխը դրեք ձեռքերին):

Տունն այն վայրն է, որտեղ մեզ սիրում են

Բացատրեք, որ կարևոր է չէ, թե ինչպիսի տան մեջ ենք մենք ապրում: Մենք կարող ենք ապրել մեծ տան մեջ, փոքր տան մեջ, բնակարանում, վրանում կամ նավակում: Կարևորն այն է, մեր տներն այն վայրերն են, որտեղ ընտանիքի անդամները սիրում են միմյանց: Պատմեք ձեր տան մասին և ինչ եք անում՝ այն սիրող վայր դարձնելու համար:

- Ինչո՞ւ եք սիրում տանը լինել:
- Ինչպե՞ս գիտեք, որ ձեր ընտանիքը սիրում է ձեզ:
- Երբևէ գիշերե՞լ եք տնից հեռու:
- Որտե՞ղ եք քնել:
- Ինչպե՞ս եք ձեզ զգացել, երբ ձեր տուն եք վերադարձել:

Հիշեցրեք երեխաներին, թե որքան հաճելի էր տուն վերադառնալ և քնել ձեր անկողնում:

Երգ

Խնդրեք երեխաներին կանգնել և լսել, երբ դուք կերգեք կամ կկարդաք «Տուն» երգը (“Home,” *Children’s Songbook*, p. 192): Երեխաներին ասեք, որ տուն բառը լսելիս գրկեն իրենք իրենց: Ցանկության դեպքում կարող եք կրկնել այս քառյակը և խնդրեք երեխաներին ձեզ հետ միասին երգել կամ կարդալ խոսքերը:

Տունն այնտեղ է, ուր սիրտն է,
Եվ ջերմություն ու սեր լիուլի:
Տունն այնտեղ է, ուր տաք ձեռքերը,
Քեզ գրկում են ամուր ու պինդ:

(© 1975 by Sonos Music, Orem, Utah. Բոլոր իրավունքները վերապահված են: Օգտագործվել է թույլտվությամբ:)

Մենք կարող ենք օգնել մեր ընտանիքներին հոգ տանել մեր տների համար

Բացատրեք, որ մենք պետք է հոգ տանենք մեր տների համար, որպեսզի դրանք բնակվելու համար լավ վայր լինեն: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է տունը մաքուր ու կոկիկ պահի:

Վարժություն

Խնդրեք երեխաներին մնջախաղով ցույց տալ, թե ինչ կարող են իրենք անել իրենց տունը կոկիկ ու մաքուր պահելու համար, օրինակ՝ հավաքել իրենց խաղալիքները, ավլել հատակը, ծալել և տեղավորել իրենց հագուստները:

Խնդրեք երեխաներին մեկ-մեկ մոտենալ և կանգնել ձեր կողքին: Յուրաքանչյուր երեխային ներկայացրեք մի իրավիճակ, որտեղ նա կարող է լավ օգնական լինել տանը: Հարցրեք տվյալ երեխային, թե ինչ կարող է անել այդ իրավիճակում օգնելու համար: Օգտագործեք հետևյալ օրինակները կամ ձեզանից հորինեք դասարանի անդամներին համապատասխան իրավիճակներ.

- Դուք պատահաբար ջուր եսք թափել հատակին: Ի՞նչ պետք է անես:
- Ողջ օրը դու խաղաղել ես քո բլոկներով: Այժմ ուտելու ժամն է: Ի՞նչ պետք է անես քո բլոկների հետ:
- Մայրիկդ շտապ ճաշի սեղան է պատրաստում: Նա սեղանը պատրաստելու համար ինչ-որ մեկի օգնության կարիքն ունի, նախքան ընտանիքը կգա ճաշելու: Ի՞նչ կարող ես դու անել:
- Քո հագուստները լվացված և կոկիկ ծալված են: Ի՞նչ պետք է այժմ դու անես:
- Դու խաղացել ես դրսում և քո կոշիկները ցեխոտվել են: Ի՞նչ պետք է դու անես նախքան տուն մտնելը:
- Առավոտյան արթնանալուց հետո քո անկողինը խառնված է: Ի՞նչ պետք է անես:

Խրախուսեք երեխաներին պատմել, թե ինչ են անում, որպեսզի օգնեն իրենց տունը կոկիկ և մաքուր պահելու համար: Երեխաներին պատմեք, թե ինչ եք դուք անում ձեր տունը կոկիկ ու մաքուր պահելու համար:

Վարժություն

Երեխաներին թուղթ ու մատիտներ բաժանեք և թող նրանք նկարեն, թե այս շաբաթվա ընթացքում ինչ կանեն, որպեսզի օգնեն տանը: Նկարների վերևում գրեք՝ Ես շնորհակալ եմ իմ տան համար:

Վկայություն

Կիսվեք ձեր տան հանդեպ ունեցած ձեր զգացումներով և ձեր երախտագիտությունը հայտնեք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին ձեզ տնով օրհնելու համար:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Բերեք պարկի մեջ դրված տնային որոշ իրեր (երեխաների թվին համապատասխան): Թող յուրաքանչյուր երեխա պարկից մի իր ընտրի և բացատրի, թե ինչպես պետք է այն օգտագործել տանը օգնելու համար: Օրինակ՝ շորի փոքր կտորը կարող է օգտագործվել փոշիները մաքրելիս կամ ապսեները չորացնելիս, գդալը կարող է օգտագործվել ճաշի սեղան պատրաստելիս, և խաղալիքը կարող է իր տեղը դրվել սենյակը մաքրելիս:

2. Երգեք կամ կարդացեք “Fun to Do” (*Children’s Songbook*, p. 253), օգտագործելով այսպիսի խոսքեր, օրինակ՝ «Ուրախությամբ եմ անկողինս հարդարում» կամ «Ուրախությամբ եմ սեղան պատրաստում», միևնույն ժամանակ համապատասխան շարժումներ կատարելով:

3. Թղթերի վրա նկարեք յուրաքանչյուր երեխայի ձեռքը, որպեսզի տուն տանեն: Նկարների վերևում գրեք՝ Ես օգնող ձեռքեր ունեմ: Քննարկեք, թե երեխաների ձեռքերը ինչ կարող են անել օգնելու համար:

4. Խնդրեք երեխաներին ձևացնել իբր իրենց աթոռները ծածկով սայլեր են: Խնդրեք նրանց շրջանով քշել իրենց սայլերը, ինչպես պիոներները էին գիշերները քշում իրենց սայլերը՝ անգութ մարդկանցից և վայրի կենդանիներից պաշտպանվելու համար: Թող նրանք ցույց տան, ինչպես էին պիոներները խառույկ վառում և ճաշ պատրաստում, ճաշից հետո երգում ու պարում, և քնելու համար բարձրանում իրենց սայլերի (աթոռների) վրա:

5. Բերեք տարբեր տեսակի տների նկարներ կամ նկարեք գրատախտակին կամ թղթի վրա: Երեխաների հետ քննարկեք, թե ինչից է պատրաստված յուրաքանչյուր տունը և ինչպիսին են յուրաքանչյուրի ապրելու պայմանները: Դուք կարող եք ներառել վրան, խրճիթ, ամրոց, տնակ և փայտե ոտքերի վրա կանգնած տուն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երգեք կամ կարդացեք “When We’re Helping” (*Children’s Songbook*, p. 198): Թող երեխաները դերերով ներկայավնեն, թե ինչ կարող են անել տնային գործերում օգնելու համար:

2. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղի շարժումները:

   Զբաղված փոքրիկ մատեր (ցույց տվեք բռունցք),
   Ո՞վ կօգնի մեզ հնազանդվել:
   «Ես», «ես», «ես», «ես», «ես» (ամեն անգամ «ես» ասելիս մի մատը բարձրացրեք, մինչև որ բոլոր մատերը բացված կլինեն),
   Ասում են զբաղված փոքրիկ մատերը:

Ես շնորհակալ եմ ուտելիքի և հագուստի համար

Դաս
32

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի երախտագիտություն զգալ և հայտնել ուտելիքի և հագուստի համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Ա.11–12 և Գ Թագավորաց ժէ.8–16:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Սերմեր ունեցող միրգ կամ բանջարեղեն:
   գ. Լոբով տոպրակ կամ փափուկ առարկա:
   դ. Կտրվող նկար 1-5՝ Ձուկ, կտրվող նկար 1-7՝ Խոզ, կտրվող նկար 1-8՝ Ոչխար, կտրվող նկար 1-9՝ Կով, կտրվող նկար 1-22՝ Հավեր (նմանատիպ կտրվող նկարներ կարող եք նաև գտնել Երեխաների Խմբի Ցուցադրական նյութերի կտրվող նկարների հավաքածու 4-ում), կամ գտեք այն կենդանիների նկարները, որոնք ձեր տարածքում մթերքով և հագուստով են ապահովում:
   ե. Նկար 1-15՝ Ուտելիքի օրհնումը, նկար 1-50՝ Ես կարող եմ հագնվել:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Տվեք հետևյալ հրահանգները՝ նախաճաշի սովորական ուտելիքներով լրացնելով դատարկ մասերը.

Եթե դուք ուզում եք նախաճաշին ուտել _____, մի ձեռքը բարձրացրեք:

Եթե դուք ուզում եք նախաճաշին ուտել _____, մյուս ձեռքը բարձրացրեք:

Եթե դուք ուզում եք նախաճաշին ուտել _____, կանգնեք:

Շարունակեք առաջարկելով այլ շարժումներ, մինչև որ յուրաքանչյուր երեխա առնվազն մեկ ուտելիք սիրում է ուտել: Այնուհետև ասեք՝ «Եթե դուք շնորհակալ եք Երկնային Հորը ձեր ուտելիքի համար, նստեք և ծալեք ձեռքերը»:

Մենք որպես սննդամթերք բույսեր և կենդանիներ ենք օգտագործում

- Ուրիշ ի՞նչ եք սիրում ուտել:
- Որտեղի՞ց ենք ստանում մեր ուտելիքը:
- Ո՞վ է ստեղծել բույսերն ու կենդանիները, որոնք մեզ համար ուտելիք են ծառայում:

Խոսեք, թե ինչ ուտելիքներ եք դուք ուտում և որտեղից են դրանք գալիս: Բացատրեք, որ մենք շատ մթերքներ ենք ստանում բույսերից:

Կոտրեք կամ բացեք ձեր բերած միրգը կամ բանջարեղենը և ցույց տվեք սերմերը:

- Ի՞նչ են սրանք:
- Ինչո՞ւ բույսերը սերմեր ունեն:

Բացատրեք, որ Երկնային Հայրը ծրագրել էր, որ բույսերը սերմեր ունենան, և այդ սերմերից աճեն ավելի շատ բույսեր, որոնք մեզ համար սննդամթերք կապահովեն (տես Ծննդոց Ա.11–12): Երբ մի բույս, օրինակ՝ միրգ կամ բանջարեղեն է աճում, ավելի շատ սերմեր են առաջանում:

Վարժություն

Երեխաների հետ կատարեք հետևյալ ոտանավորը.

Սերմը խորը թաղվում է

Սերմը խորը թաղվում է (կքվեք և ձեռքով դիպչեք հատակին):
Հողի մեջ քնում է (մի ձեռքը դրեք մյուս ձեռքի վրա ափերը միասին):
Պայծառ արևը շողում է (ձեռքերը միացրեք գլխավերևում շրջան կազմելով):
Անձրևը դանդաղ կաթկթում է (մատերը շարժելով իջեցրեք ներքև):
Թույլ քամին փչում է (գլխավերևում ձեռքերը թեթև շարժեք):
Եվ փոքր սերմն աճում է (մատերը շարժեք ներքևից վերև):

- Երբևէ օգնե՞լ եք սերմեր ցանելիս:
- Ի՞նչ եք ցանել:
- Ի՞նչ մթերք ենք ստանում այդ բույսերից:

Օգնեք երեխաներին նշել մի քանի մրգեր, բանջարեղեն կամ հատիկներ: Բացատրեք, որ հացը և շիլան պատրաստվում են հատիկներից: Երեխաներին ասեք, թե որքան շնորհակալ եք Երկնային Հորը սերմերի համար, որոնք աճում են դառնալով մրգեր, բանջարեղեն և հատիկներ:

Կրկին ցույց տվեք սերմերը:

- Ի՞նչ է հարկավոր այդ սերմերին, որպեսզի աճեն:

Պատմություն

Պատմեք Եղիայի և Սարեփթայի այրու պատմությունը, ինչպես տրված է Գ Թագավորաց ժէ.8–16-ում: Օգնեք երեխաներին հասկանալ, որ բավականաչափ ուտելիք չկար, որովհետև անձրևներ չէին տեղում: Եթե անձրևներ չեն լինում, առանց ջրի ոչինչ չի աճում:

- Ինչպե՞ս կզգաք, եթե ուտելու ոչինչ չունենաք:
- Ինչպե՞ս այրին օրհնվեց Եղիայի հետ իր ուտելիքը կիսելով: (Տես Գ Թագավորաց ժէ.15–16:)

Բացատրեք, որ մթերքները միայն բույսերից չենք ստանում:

- Որտեղի՞ց ենք կաթ ստանում:
- Որտեղի՞ց ենք ձու ստանում:
- Որտեղի՞ց ենք միս ստանում:

Խոսեք, թե ինչպես ենք որոշ մթերքներ կենդանիներից ստանում: Օգտագործելով համապատասխան կտրվող նկարները կամ ուղղակի նկարներ, քննարկեք, թե ձեր տարածքում որ կենդանիներից եք մթերք ստանում:

Մենք բույսերից և կենդանիներից հագուստ ենք ստանում

Նշեք, որ բույսերից ու կենդանիներից մենք միայն մթերք չենք ստանում: Ցույց տվեք նկար 1-50՝ Ես կարող եմ հագնվել:

- Ի՞նչ է այս տղան անում:
- Հագնվելիս ի՞նչ եք հագնում:

Վարժություն

Խնդրեք երեխաներին մնջախաղով հագուստի մասեր հագնել, օրինակ՝ վերնաշապիկ, զգեստ, կոշիկ, վերարկու և գլխարկ:

- Ինչո՞ւ է մեզ հագուստ հարկավոր: (Որպեսզի ծածկենք մեր մարմինը, պաշտպանենք մեր մարմինը, տաքանանք՝ ցուրտ եղանակին:)
- Ինչի՞ց է պատրաստվում հագուստը:

Եթե երեխաները կարող են նշել մի քանի նյութեր, որոնցից պատրաստվում է հագուստը, հարցրեք, արդյոք գիտեն, թե որտեղի՞ց են ստանում այդ նյութերը: Բացատրեք, որ հագուստ և կոշիկ պատրաստելու համար մենք հումք ենք ստանում բույսերից և կենդանիներից: Երեխաներին պատմեք, թե ձեր տարածքում հագուստ պատրաստելու համար ինչ բույսերից կամ կենդանիներից ենք հումք ստանում: Օրինակ՝ բամբակը և սպիտակեղենը ստանում ենք բույսերից, իսկ մետաքսը ստանում ենք շերամի որդից: Բուրդը ստանում ենք ոչխարներից, իսկ կաշիների մեծ մասը ստանում ենք կովերից:

Մենք կարող ենք շնորհակալ լինել ուտելիքի և հագուստի համար

Վարժություն

Խնդրեք երեխաներին մտածել, թե ինչ ուտելիքի համար են իրենք շնորհակալ: Լոբով տոպրակը կամ փափուկ առարկան նետեք կամ տվեք ամեն անգամ մի երեխայի: Թող յուրաքանչյուր երեխա նշի մեկ ուտելիք, որի համար ինքը շնորհակալ է, և լոբով տոպրակը նետի ետ ձեզ: Նախքան լոբով տոպրակը մյուս երեխային նետելը, քննարկեք, թե որտեղից է ստացվում այդ ուտելիքը: Հիշեցրեք երեխաներին, որ յուրաքանչյուր բույս կամ կենդանի ստեղծվել է Հիսուսի կողմից՝ Երկնային Հոր ղեկավարությամբ:

Կրկնեք վարժությունը խնդրելով երեխաներին այս անգամ ուտելիքի փոխարեն նշել հագուստի մի մաս:

Ցույց տվեք նկար 1-15՝ Ուտելիքի օրհնումը:

- Ո՞ւմ պետք է շնորհակալություն հայտնենք մեր ուտելիքի համար:
- Ո՞ւմ պետք է շնորհակալություն հայտնենք մեր հագուստի համար:
- Ինչպե՞ս կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը այս ամենի համար: (Մի տարբերակն է՝ հիշատակել դրանք մեր ամենօրյա աղոթքներում:)

Վկայություն

Ձեր երախտագիտությունը հայտնեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը հնարավոր են դարձրել, որ մենք հագուստ և ուտելիք ունենանք:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երեխաներին թղթեր բաժանեք, որոնց մեջտեղով ուղղահայաց գիծ է քաշված, իսկ վերևում գրված է՝ Ես շնորհակալ եմ: Թող յուրաքանչյուր երեխա ուտելիք նկարի գծի մի կողմում, և հագուստի մի կտոր՝ գծի մյուս կողմում:
2. Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Thanks to Our Father” երգի առաջին երկու տուները (*Children’s Songbook*, p. 20):
3. Թող երեխաները ձևացնեն իրենք սերմեր են: Թող նրանք կքանստեն, կարծես տնկվել են հողի մեջ, ապա դանդաղ բարձրանան, երբ արևը շողա և թեթև անձրև տեղա իրենց վրա: Հերթով երեխաները կարող են արև և անձրև լինել:
4. Մրգի կամ բանջարեղենի փոքր բաժիններ բերեք և բաժանեք երեխաներին: Նկարագրեք, թե ինչպիսի սերմից և բույսից են այդ միրգը կամ բանջարեղենը աճում: (Երեխաների ծնողներից տեղեկացեք, որ երեխաներն ալերգիկ չեն ձեր բերած ուտելիքի հանդեպ:)
5. Նկարագրեք երեխաներին քաջածանոթ մթերք և խնդրեք նրանց գուշակել, թե ինչ ուտելիք է դա: Օրինակ, կարող եք ասել՝ այս ուտելիքը սպիտակ կամ դարձնագույն է և կեղև ունի: Այն լինում է բնի մեջ: Ի՞նչ է դա: (Ձու:) Կրկնեք որքան ցանկանում եք: Կարող եք ձեր նկարագրած յուրաքանչյուր ուտելիքի օրինակ բերել:
6. Բերեք հագուստի մասեր, օրինակ՝ սվիտեր, վերարկու և գլխարկ, և թող երեխաները հագնեն դրանք, երբ կխոսեք այն հագուստի մասին, որի համար նրանք շնորհակալ են:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “A Song of Thanks” (*Children’s Songbook*, p. 20) կամ “For Health and Strength” (*Children’s Songbook*, p. 21):
2. Խնդրեք երեխաներին մնջախաղով հագնվելու շարժումներ ցույց տալ, երբ դուք կարտասանեք հետևյալ ոտանավորը.

   Երեխաներ, ձեր տաբատները հագեք, ձեր տաբատները հագեք:
   Երեխաներ, ձեր տաբատները հագեք, մեկ, երկու, երեք:

   Երեխաներ, ձեր շրջազգեստը հագեք, ձեր շրջազգեստը հագեք:
   Երեխաներ, ձեր շրջազգեստը հագեք, մեկ, երկու, երեք:

   Երեխաներ, ձեր վերնաշապիկը հագեք, ձեր վերնաշապիկը հագեք:
   Երեխաներ, ձեր վերնաշապիկը հագեք, մեկ, երկու, երեք:

   Երեխաներ, հագեք ձեր գուլպաները, ձեր գուլպաները հագեք:
   Երեխաներ, հագեք ձեր գուլպաները, մեկ, երկու, երեք:

   Երեխաներ, ձեր կոշիկները հագեք, ձեր կոշիկները հագեք:
   Երեխաներ, ձեր կոշիկները հագեք, մեկ, երկու, երեք:

   Երեխաներն այժմ հագնված են, բոլորը հագնված են (ծափ տվեք):
   Այժմ երեխաները հագնված են, եկեք խաղանք:

Ես կարող եմ ընկեր լինել

Դաս
33

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի ցանկանալ լավ ընկեր լինել:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Հովհաննես Զ.1–13 և ԺԱ.1–7, 17–44:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240, 62572):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք ձեզ և ասեք՝ «Ո՞վ եմ ես»: Երեխաները կարող են պատասխանել՝ տալով ձեր անունը կամ ասելով՝ ուսուցիչ: Բացատրեք, որ դուք նաև նրանց ընկերն եք, նրանք էլ ձեր ընկերներն են: Բացատրեք, որ ընկերները մարդիկ են, ովքեր սիրում են միմյանց:

Երեխաների հետ շրջան կազմեք: Հերթով յուրաքանչյուր երեխայի նայելով ասեք՝ «(Երեխայի անունը) իմ ընկերն է»: Թող հերթով յուրաքանչյուր երեխա ասի սա, և հավաստիացեք, որ ամեն անգամ յուրաքանչյուր երեխա հիշատակվել է:

Մենք շատ ընկերներ ունենք

- Ովքե՞ր են ձեր ընկերները:

Թույլ տվեք երեխաները պատմեն իրենց ընկերների մասին: Նշեք, որ ընկերները կարող են լինել տարբեր տարիքի: Ընտանիքի անդամները կարող են լինել մեր լավագույն ընկերները: Շեշտեք, որ դասարանում յուրաքանչյուր ոք ընկեր է: Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը: Բացատրեք, որ նկարում պատկերված անձնավորությունը շատ լավ ընկեր է դասարանում բոլորի համար:

- Ո՞վ է մեր ընկերը այս նկարում:
- Ինչպե՞ս գիտեք, որ Հիսուսը ձեր ընկերն է:

Երգ

Երգեք կամ կարդացեք “Jesus Is Our Loving Friend” (*Children’s Songbook*, p. 58):

Հիսուսը մեր սիրող ընկերն է:
Նա միշտ մեզ մոտ է:
Նա կառաջնորդի մեզ, երբ աղոթենք,
Քանզի ամեն երեխա թանկ է:

Պատմություն

Պատմեք պատմությունը, որտեղ Հիսուսը վերակենդանացրեց Ղազարոսին, ինչպես տրված է Հովհաննես ԺԱ.1–7, 17–44: Շեշտեք, որ Ղազարոսը և իր քույրերը Հիսուսի ընկերներն էին: Երբ Հիսուսը Բեթանիայում էր, նա մնաց նրանց տանը և ճաշեց նրանց հետ:

- Ինչպե՞ս էր Հիսուսը վերաբերվում Ղազարոսին: (Տես Հովհաննես ԺԱ.3, 35–36:)
- Ի՞նչ արեց Հիսուսը Ղազարոսի համար: (Տես Հովհաննես ԺԱ.43–44:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ էին Ղազարոսը, Մարիամն ու Մարթան զգում Հիսուսի հանդեպ:

Մենք կարող ենք լավ ընկերներ լինել

- Ինչպե՞ս պետք է վերաբերվենք մեր ընկերներին:

Բացատրեք, որ երբ մենք լավ ընկերներ ենք, մենք օգնում ենք մյուսներին բարի գործերում: Մենք հոգ ենք տանում մեր ընկերների մասին և ուզում ենք, որ նրանք երջանիկ լինեն: Քննարկեք, որ կարևոր է մյուսներին վերաբերվել այնպես, ինչպես մենք ենք ցանկանում մեզ վերաբերվեն: Հարցրեք, թե ինչպես կարող են երեխաները լավ ընկերներ լինել հետևյալ իրավիճակներում.

- Դուք ձեր ընկերոջ հետ խաղում եք, և մեկ ուրիշ երեխա գալիս է և ուզում է խաղալ ձեզ հետ:
- Առաջին անգամ նոր երեխա է գալիս ձեր դասարան, և նա ամաչում ու վախենում է:
- Մի երեխայի ծաղրում են և նա իրեն վատ է զգում:

Երգ

Երգեք կամ կարդացեք «Բարին ինձնից պիտ գա» (Հիմներ և մանկական երգեր, էջ 63):

Բարի կլինեմ բոլորի հետ,
Քանզի ճիշտն է դա,
Ուստի կհիշեմ ես հավետ՝
Բարին ինձնից պիտ գա:

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ձեր ընկերները բարի են ձեր հանդեպ:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս են նրանք զգում, երբ դուք եք բարի նրանց հանդեպ:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ եթե նրանք ցանկանում են ընկերներ ունենալ, իրենք պետք է լավ ընկերներ լինեն:

Ընկերները կիսվում են միմյանց հետ

- Եթե դուք խաղում եք (նշեք մի խաղալիք կամ մի ուրիշ առանձնահատուկ բան), և մի ընկեր է գալիս ձեզ հետ խաղալու, ի՞նչ պետք է անեք դուք:

Բացատրեք, որ երբ մենք թողնում ենք, որ մեկ ուրիշը խաղա մեզ հետ, կամ երբ մենք մեր ունեցածից տալիս ենք մեկ ուրիշին, մենք կիսվում ենք: Երբեմն մենք չենք կարող կիսել այն, ինչ ունենք, այնպես որ մենք հերթով ենք խաղում կամ օգտագործում այն: Սա նույնպես կիսվել է:

- Եթե ձեր ընկերներից մեկը քաղցած է, իսկ դուք ուտելիք ունեք, ի՞նչ պետք է դուք անեք:

Պատմություն

Ցույց տվեք Աստվածաշունչը և պատմեք պատմությունը, որտեղ Հիսուսը կերակրում է հինգ հազար հոգու, ինչպես տրված է Հովհաննես Զ.1–13-ում: Շեշտեք՝ քանի որ մի տղա կիսվեց իր մոտ ունեցած ուտելիքով, Հիսուսը կարողացավ օգտագործել իր զորությունը այնքան ուտելիք ստեղծելու համար, որ բոլոր մարդկանց կերակրեին:

Երեխաներին հիշեցրեք Եղիայի և Սարեփթայի այրու մասին պատմությունը (տես Դաս 32): Այրին օրհնվեց, որովհետև կիսվեց իր ուտելիքով, չնայած որ նա շատ քիչ ուներ:

- Ինչո՞վ կարող ենք կիսվել մեր ընկերների հետ:
- Ինչո՞վ կարող ենք կիսվել մեր ընտանիքի հետ:

Երգ

Խնդրեք երեխաներին կանգնել և երգել “Fun to Do” (*Children’s Songbook*, p. 253), օգտագործելով «Ուրախությամբ եմ իմ (խաղալիքով, գրքով կամ ինչ-որ երեխաները կառաջարկեն) կիսվում»: Խնդրեք երեխաներին կատարել խոսքերին համապատասխան շարժումներ:

Ուրախությամբ եմ իմ խաղալիքով կիսվում,
Խաղալիքով կիսվում, կիսվում, կիսվում:
Ուրախությամբ եմ իմ խաղալիքով կիսվում,
Կիսվում, կիսվում, կիսվում:

(© 1963 by Դ. Գ. Heath և Company. Վերատպվել է թույլտվությամբ:)

Հիշեցրեք երեխաներին, որ ընկերներն օգնում են միմյանց, և խրախուսեք նրանց անհրաժեշտության դեպքում օգնել դասասենյակը մաքրելիս:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը լավ ընկեր լինելու կարևորության մասին: Կարող եք կիսվել ընկերոջ մասին ձեր անձնական փորձառությամբ: Հիշեցրեք երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը մեր ընկերներն են և նրանք սիրում են մեզ: Խրախուսեք երեխաներին այս շաբաթվա ընթացքում բարի լինել իրենց ընկերների հանդեպ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երգեք կամ կարդացեք “‘Give,’ Said the Little Stream” (*Children’s Songbook*, p. 236), “Jesus Said Love Everyone” (*Children’s Songbook*, p. 61), կամ “Friends Are Fun” (*Children’s Songbook*, p. 262):
2. Երգեք կամ կարդացեք “We Are Different” երգը (*Children’s Songbook*, p. 263): Օգնեք երեխաներին հասկանալ, որ մենք պետք է ընկերներ լինենք նրանց հետ, ովքեր կարծես թե տարբեր են մեզանից և նաև նրանց հետ, ովքեր մեզ նման են:

3. Խնդրեք երեխաներին կանգնել և կատարել «Սիրելի փոքր ընկեր» ոտանավորը.

   Ես շատ սիրելի ընկեր ունեմ (գրկեք ինքներդ ձեզ),
   Ես նրան ամեն օր տեսնում եմ:
   Ես սիրում եմ իմ լավ ընկերոջը:
   Մենք այսպես ենք խաղում՝
   Տիկնիկներով ենք խաղում (ձևացրեք ձեր ձեռքերով տիկնիկ եք օրորում),
   Մեր գնդակներն ենք նետում (ձևացրեք գնդակ եք նետում),
   Ձիավորների պես ենք քայլում (հանգիստ տեղում քայլեք):
   Պարան ենք խաղում (ձևացրեք պարան եք թռնում),
   Խոսում ենք ու երգում,
   Ինչպես լավ ընկերներն են անում (ձեռքերը ծալեք և գլխով հաստատող շարժում արեք):

4. Դասարան բերեք մի փոքր հյուրասիրություն (երեխաների ծնողներից տեղեկացեք, որ երեխաները ալերգիկ չեն այդ ուտելիքի հանդեպ): Հյուրասիրությունը դրեք այնպիսի տեղում, որ երեխաներին տեսնեն այն: Նշեք, թե որքան լավ տեսք ունի այն և հարցրեք երեխաներին, արդյոք կցանկանան, որ իրենց հետ կիսվեք դրանով: Հարցրեք երեխաներին, թե ինչպես կզգան իրենց, եթե միայն մի քանիսին հյուրասիրեք: Քննարկեք, թե ինչպես կզգան նրանք, ում բաժին չհանեք այդ հյուրասիրությունից: Երեխաներին հյուրասիրեք ձեր բերած ուտելիքը:

5. Թող յուրաքանչյուր երեխա նկարի իրեն՝ ընկերոջ հետ ինչ-որ բանով կիսվելիս: Նկարների վերևում գրեք՝ Ես կարող եմ կիսվել իմ ընկերոջ հետ:

6. Ձեր խոսքերով պատմեք հետևյալ իրական պատմությունը.

   Պղնձե քթերով կոշիկները

   Երբ պիոներները եկան Յուտա ապրելու, նրանցից շատերը աղքատ էին: Նրանք իրենց փողերը ծախսել էին երկար ճամփորդության ընթացքում գնելով ապրանքներ և գործիքներ, որոնք անհրաժեշտ էին տներ կառուցելու և հողամասեր մշակելու համար: Քանի որ մարդիկ շատ փող չունեին, շատ երեխաներ միայն մեկ զույգ կոշիկ ունեին, որը հագնում էին կիրակի օրերին: Շաբաթվա մյուս օրերին նրանք հաճախ ոտաբոբիկ էին մնում:

   Մելինդա անունով մի պիոներ աղջնակ մի զույգ ծանր, տգեղ, պղնձե քթերով կոշիկներ ուներ, որոնք նա մաշել էր ձմռանը: Ամռանը նրա ընտանիքը նրա համար մի զույգ նոր գեղեցիկ, հարմարավետ կիրակնօրյա կոշիկներ գնեց, և նա պատրաստվում էր դրանք հագնել շքերթի ժամանակ:

   Մելինդայի լավագույն ընկերուհին՝ Ամանդան, կոշիկ չուներ: Մելինդան խղճում էր Ամանդային և իր մայրիկի թույլտվությունը հարցրեց, որ իր կոշիկներից մեկը տար Ամանդային շքերթին հագնելու համար: Երբ Մելինդան իր հին, ծանր, պղնձե քթերով կոշիկները վերցրեց, որ տանի իր ընկերուհուն, մայրիկն ասաց. «Եթե դու ցանկանում ես կիսվել, դու պետք է տաս այն, ինչ ինքդ կուզենայիր ստանալ»:

   Մելինդան մի քանի րոպե մտածեց: Նա մտածեց, թե ինչ կաներ Հիսուսը: Նա մտածեց, թե որ կոշիկները ինքը կցանկանար հագնել, և ապա միտքը փոխեց: Նա իր ընկերուհուն տարավ իր նոր կիրակնօրյա կոշիկները, իսկ ինքը շքերթին հագավ իր հին, տգեղ, պղնձե քթերով կոշիկները: Սակայն Մելինդան շատ երջանիկ էր: Նա գիտեր, որ վարվել է այնպես, ինչպես Հիսուսը կցանկանար, որ ինքն աներ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Հանեք մի քանի խաղալիքներ, որ երեխաները խաղան: Քննարկեք «խնդրում եմ» և «շնորհակալություն» ասելու կարևորությունը: Խրախուսեք երեխաներին խաղալիս կիսվել խաղալիքներով, իսկ խաղից հետո միմյանց օգնել խաղալիքները դասավորելիս:

2. Այս ոտանավորը արտասանելիս երեխաներին ուղղորդեք շարժումներ անելիս: Կրկնեք, որքան երեխաները ցանկանում են:

   Ուրախ օրեր

   Երկու աչք, որ լավ բաներ են տեսնում (ցույց տվեք աչքերը),
   Երկու շուրթ, որ միշտ են ժպտում (լայն ժպտացեք):
   Երկու ականջ, որ մյուսների խոսքերն են լսում (ձեռքի ափերը կլորացրած դրեք ականջների մոտ),
   Երկու ձեռք, որ խաղալիքներն են դասավորում (ցույց տվեք իբր խաղալիքներ եք հավաքում):

   Լեզու, որ ամեն օր բարի խոսքեր է ասում (ցույց տվեք բերանը),
   Սիրող սիրտ, որ աշխատում է և խաղում (ձեռքերը դրեք սրտի վրա):
   Երկու ոտք, որ ուրախությամբ են վազում (ցույց տվեք ոտքերը)—
   Եվ բոլորին ուրախացնում:

3. Երգեք կամ կարդացեք “I Have Two Little Hands” (*Children’s Songbook*, p. 272):

Դաս
34

Ես կարող եմ սիրել մյուսներին

ՆՊԱՏԱԿ

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի իր սերն արտահայտել մյուսների հանդեպ բարի խոսքով և գործով:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մատթեոս է.12, Մարկոս ժ.13–16, Ղուկաս ժ.30–37, և Հովհաննես ժԳ.34:
2. Վերանայեք Դաս 19-ի պատմությունը, որտեղ Հիսուսը բժշկում է կույրին (տես Հովհաննես Թ.1–7):
3. Դասարանի յուրաքանչյուր երեխայի համար թղթե սիրտ պատրաստեք: Յուրաքանչյուր սրտի վրա գրեք՝ Ես սիրում եմ քեզ:
4. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240, 62572), նկար 1-43՝ Հիսուսը բուժում է կույրին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 213, 62145), նկար 1-48՝ Երեխաները խաղում են բլոկներով, նկար 1-62՝ Բարի Սամարացին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 218, 62156):
5. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք նկար 1-48՝ Երեխաները խաղում են բլոկներով:

- Ի՞նչ են այս երեխաներն անում:
- Արդյո՞ք այս երեխաները ընկերներ են:
- Ինչպե՞ս են ընկերները վերաբերվում միմյանց:

Հիշեցրեք երեխաներին, որ ընկերները բարի են միմյանց հետ: Երբ բարի ենք մյուսների հետ, մենք սեր ենք ցուցաբերում նրանց հանդեպ:

Երգ

Երեխաների հետ երգեք կամ կարդացեք “Jesus Said Love Everyone” երգի խոսքերը (*Children’s Songbook*, p. 61), կատարելով ստորև տրված շարժումները.

Հիսուսն ասաց՝ բոլորին սիրիր (ձեռքերը լայն տարածեք),
Նրանց հանդեպ բարի եղիր (գլուխը վերև և ներքև շարժեք):
Երբ սիրտդ սիրով լի է լինում (ձեռքերը դրեք սրտի վրա),
Մյուսներն էլ քեզ են սիրում (գրկեք ինքներդ ձեզ):

Հիսուսը սեր ցուցաբերեց՝ մյուսների հանդեպ բարի լինելով

Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը, և ասեք երեխաներին, որ Հիսուսը պատվիրել է մեզ՝ մյուսներին վերաբերվել այնպես, ինչպես մենք կուզենայինք մյուսները վերաբերվեին մեզ: Ցույց տվեք Աստվածաշունչը և կարդացեք Մատթեոս է.12 մինչև՝ այնպես էլ դուք արեք նրանց: Բացատրեք, որ այս սուրբ գրությունը նշանակում է, որ եթե ցանկանում ենք, որ մյուսները բարի լինեն մեր հանդեպ, ապա մենք պետք է բարի լինենք նրանց հանդեպ:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-43՝ Հիսուսը բուժում է կույրին: Թող երեխաներն օգնեն ձեզ պատմել նկարում պատկերված պատմությունը (տես Հովհաննես Թ.1–7):

- Ինչպե՞ս Հիսուսը բարի գտնվեց կույրի հանդեպ:

Պատմություն

Պատմեք, որ Հիսուսն օրհնեց մանուկներին, ինչպես տրված է Մարկոս ժ.13–16-ում:

- Ինչպե՞ս Հիսուսը բարի գտնվեց երեխաների հանդեպ:

Շեշտեք, որ Հիսուսն իր կյանքն անցկացրեց մյուսներին օգնելով: Բարի լինելով Հիսուսը սեր էր ցուցաբերում մյուսների հանդեպ: Բացատրեք, որ Հիսուսը մեզ պատվիրել է՝ սիրել միմյանց: Երեխաների համար կարդացեք Հովհաննես ԺԳ.34: Խնդրեք երեխաներին մի քանի անգամ կրկնել՝ «իրար սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի»:

Երգ

Երեխաների հետ երգեք կամ կարդացեք «Սիրեք բոլորին» (*Children's Songbook*, p. 136):

Ինչպես սիրում եմ,
Սիրեք բոլորին:
Այս նոր պատվիրան՝
Սիրեք բոլորին:
Այսպես կիմանան
Որ իմ աշակերտներն եք,
Եթե սիրում եք
Դուք բոլորին:

(© 1961, 1989 by Luacine C. Fox. Օգտագործվել է թույլտվությամբ:)

Մենք կարող ենք սեր ցուցաբերել մյուսների հանդեպ՝ բարի լինելով

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-62՝ Բարի Սամարացին, և պատմեք Բարի Սամարացու պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս ժ.30–37-ում:

- Այս պատմության մեջ ո՞վ էր բարի:
- Ի՞նչ արեց Սամարացին, որպեսզի օգներ վիրավոր մարդուն:

Օգնեք երեխաներին մտածել, թե ինչպես կարող են բարի լինել մյուսների հանդեպ: Խնդրեք նրանց դասարանի մյուս անդամների հետ կիսվել իրենց մտքերով:

Բացատրեք, որ երբեմն դժվար է բարի լինել ինչ-որ մեկի հանդեպ, որովհետև կարող է թվալ, թե այդ մարդը անբարյացակամ կամ մեզանից տարբեր է: Օգնեք երեխաներին հասկանալ, որ ամեն ոք բարի վերաբերմունքի կարիք ունի: Անգամ եթե թվում է մարդիկ անբարյացակամ են կամ մեզանից տարբեր են (օրինակ՝ եթե նրանք այլ մաշկի գույն ունեն կամ հաշմանդամ են), մենք պետք է նրանց բարյացակամորեն վերաբերվենք:

Խոսեք, թե որքան կարևոր է սեր և բարություն դրսևորել մեր ընտանիքներում:

- Ինչպե՞ս կարող եք սեր ցուցաբերել ձեր հայրիկի, մայրիկի, ձեր եղբայրների և քույրերի հանդեպ:

Շեշտեք, որ երբ մենք բարի ենք մեր ընտանիքների հետ, ուրախ են ոչ միայն մեր ընտանիքները, այլև Երկնային Հայրը և Հիսուսը:

Բացատրեք, որ երբեմն փոքր երեխաները վերցնում կամ կոտրում են մեզ պատկանող իրերը: Օգնեք երեխաներին հասկանալ, որ շատ փոքր երեխաները հիմնականում չեն հասկանում, թե ինչ են անում: Մենք պետք է նրանց հանդեպ բարի լինենք և չբարկանանք նրանց վրա: Եթե ունենք իրեր, որոնք կարող են կոտրվել, պետք է փորձենք պահել այնպես, որ դրանք փոքրիկների համար հասանելի չլինեն:

- Ինչպե՞ս կարող ենք սեր ցուցաբերել Երկնային Հոր և Հիսուսի հանդեպ:

Շեշտեք, որ կարող ենք սեր ցուցաբերել Երկնային Հոր և Հիսուսի հանդեպ՝ պահելով պատվիրանները, ակնածալից լինելով եկեղեցում, և բարի ու օգտակար լինելով մեր շրջապատի մարդկանց:

Մենք կարող ենք սեր ցուցաբերել՝ բարի խոսքով

Վարժություն

Խնդրեք երեխաներին հետևել ստորև տրված հրահանգներին: Ամեն անգամ, երբ երեխաները կկատարեն շարժումները, շնորհակալություն հայտնեք նրանց՝ հրահանգներին հետևելու համար:

1. Խնդրում եմ կանգնեք:
2. Նստեք, խնդրում եմ:
3. Խնդրում եմ, կանգնել և շրջվել: Խնդրում եմ նստել: Կրկին կանգնեք, խնդրում եմ:
4. Ձեռքերը բարձրացրեք գլխից վեր և ձգեք, խնդրում եմ:
5. Խնդրում եմ, հանգիստ նստեք:

- Ի՞նչ քաղաքավարի կամ բարի խոսքեր ես ասացի:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ինչ-որ մեկը ձեզ ասում է՝ «խնդրում եմ» և «շնորհակալություն»:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ եթե մենք ցանկանում ենք, որ մյուսները բարյացակամորեն խոսեն մեզ հետ, մենք պետք է բարյացակամորեն խոսենք նրանց հետ:

Հիշեցրեք երեխաներին այլ քաղաքավարի խոսքեր ևս, օրինակ՝ «Ներողություն» և «Կներեք ինձ, խնդրում եմ», և իրավիճակներ, որտեղ պետք է այդ խոսքերը օգտագործել: Տվեք հետևյալ հարցերը կամ ձեր մշակույթին համապատասխան նմանատիպ հարցեր.

- Քաղաքավարի ձևով ինչպե՞ս կխնդրեք խմելու ջուր:
- Ի՞նչ պետք է ասեք, եթե ինչ-որ մեկը ձեզ նվեր է բերում:
- Ի՞նչ կարող եք ասել, եթե ձեր պատճառով ինչ-որ մեկը տխրել է:
- Ի՞նչ կարող եք ասել, որպեսզի քաղաքավարի ձևով գրավեք ինչ-որ մեկի ուշադրությունը:

Բացատրեք, որ թեև մյուսները երբեմն անբարյացակամորեն են խոսում ձեզ հետ, այնուամենայնիվ մենք պետք է ի պատասխան բարյացակամորեն խոսենք:

Երգ

Երեխաների հետ կրկին երգեք «Հիսուսն ասաց բոլորին սիրիր» երգը:

Վկայություն

Գովասանքի խոսքեր ասեք երեխաներին, երբ նկատում եք, որ բարի վերաբերմունք են ցուցաբերում: Բացատրեք, որ քանի որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են բոլորին, նրանք գոհանում են, երբ տեսնում են, որ մենք բարի ենք միմյանց հանդեպ: Վկայություն բերեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք բարի լինենք: Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթե սիրտ: Երեխաներին ասեք, թե ինչ են ասում սրտերի վրա գրված խոսքերը, և ասեք երեխաներին, որ սիրում եք նրանց:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Կարդացեք հետևյալ օրինակները (կամ ինքներդ ստեղծեք), և խնդրեք երեխաներին բարձրացնել իրենց թղթե սրտերը, եթե նկարագրված արարքը բարի է կամ սեր է արտահայտում: Թող նրանք սրտերը դնեն իրենց ծնկներին, եթե արարքը բարի չէ և սեր չի արտահայտում:
   - Խաղ խաղալիս հերթով եք խաղում:
   - Փնթփնթում եք:
   - Օգնում եք երեխային, որը վնասվել է:
   - Խփում եք նրան, ով ձեզ բարկացնում է:
   - Ակնածանքով եք քայլում հավաքատանը:
   - Ասում եք «խնդրում եմ» և «շնորհակալություն»:
   - Դուռը բաց եք պահում մեկ ուրիշի համար:
   - Աղմկում եք եկեղեցում:
   - Օգնում եք մաքրություն անելիս:

   Հիշեցրեք երեխաներին, որ երբ մենք բարի ենք մյուսների հանդեպ, մենք սեր ենք ցուցաբերում, և Երկնային Հայրը և Հիսուսն ուրախանում են մեզ հետ:

2. Մտածեք մի քանի ծանոթ իրավիճակներ, որի ժամանակ երեխաները հնարավորություն ունեն բարի լինել և սեր ցուցաբերել մյուսների հանդեպ: Գրեք այս իրավիճակները թղթերի վրա և թող յուրաքանչյուր երեխա ընտրի մի թուղթ: Կարդացեք յուրաքանչյուր իրավիճակը և այն երեխան, որը հանել է այդ թուղթը, թող ասի, թե ինչպես պետք է վարվի տվյալ իրավիճակում: Կարող եք օգտագործել հետևյալ օրինակները.
   - Դուք ձեր ընկերոջ հետ խաղում եք, և մեկ ուրիշ երեխա է մտնում սենյակ: Ի՞նչ պետք է անեք:
   - Դուք և ձեր քույրը ուզում եք նույն խաղալիքով խաղալ: Ի՞նչ պետք է անեք:
   - Ձեր փոքր եղբայրը վերցրել է ձեր իրերից մեկը: Ի՞նչ պետք է անեք:

3. Օգտագործելով ձեր ծխի կամ տարածքի ծանոթ օրինակներ, քննարկեք ինչպես պետք է բարություն և սեր ցուցաբերեք հաշմանդամների հանդեպ: Օգնեք երեխաներին մտածել, թե ինչպիսի հատուկ եղանակներով կարող են օգնել հաշմանդամ անձնավորությանը:

   • Ինչպե՞ս կարող ենք սեր ցուցաբերել ինչ-որ մեկի հանդեպ, ով չի կարողանում տեսնել:

   • Ինչպե՞ս կարող ենք սեր ցուցաբերել ինչ-որ մեկի հանդեպ, ով չի կարողանում լսել:

   • Ինչպե՞ս կարող ենք սեր ցուցաբերել ինչ-որ մեկի հանդեպ, ով անվասայլակ կամ հենակներ է օգտագործում:

4. Օգնեք երեխաներին հասկանալ, որ թեև որոշ մարդիկ կարող են տարբեր լեզուներով խոսել կամ մաշկի այլ գույն ունենալ, մենք բոլորս էլ Երկնային Հոր զավակներն ենք: Մենք պետք է բոլորս բարի լինենք միմյանց հանդեպ: Մենք պետք է վերաբերվենք մյուսներին այնպես, ինչպես կուզենայինք նրանք մեզ վերաբերվեին: Բացատրեք, որ յուրաքանչյուր ոք ինչ-որ կերպ տարբերվում է մյուսներից:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երգեք կամ կարդացեք «Բարին ինձնից պիտ գա» (Հիմներ և մանկական երգեր, էջ 63) կամ “A Special Gift Is Kindness” երգերը (*Children’s Songbook*, p. 145):

2. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորը.

   ժպիտը շատ գրավիչ է (բերանի ծայրերը ձգեք վեր՝ ժպտացող դեմք ընդունելով),
   Երբ տխուր եմ (բերանի ծայրերը ձգեք ներքև՝ տխուր դեմք ընդունելով),
   Փորձում եմ ժպտալ (բերանի ծայրերը ձգեք վեր՝ ժպտացող դեմք ընդունելով),
   Եվ շուտով ուրախ եմ լինում (երկու ձեռքերը դրեք սրտին):

   (Adapted from Pat Graham, “Feeling Glad,” Friend, Mar. 1990, p. 21.)

Ես կարող եմ բարի լինել կենդանիների հանդեպ

Դաս
35

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ կենդանիների հանդեպ բարի լինելու կարևորությունը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ծննդոց Բ.19–20, 6–8:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ.
   բ. Նկար 1-28՝ Արարում՝ կենդանի էակներ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 100, 62483), նկար 1-30՝ Նոյը և կենդանիներով տապանը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 103, 62305):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ձևացրեք երեխաներին ծանոթ մի կենդանի եք: Խնդրեք երեխաներին կռահել, թե ինչ կենդանի եք դուք ներկայացնում: Թող յուրաքանչյուր երեխա հերթով ներկայացնի մի կենդանի, իսկ մյուսները գուշակեն, թե ինչ կենդանի է դա:

Ադամը կենդանիներին անուններ տվեց

Հիշեցրեք երեխաներին, որԵրկնային Հայրը ծրագրեց և Հիսուսը երկրի վրա ստեղծեց բոլոր կենդանիներին՝ ձկներին, թռչուններին և միջատներին: Ցույց տվեք Աստվածաշունչը և բացատրեք, որ սուրբ գրություններն ասում են մեզ, որ Ադամը անուններ տվեց բոլոր կենդանիներին (տես Ծննդոց Բ.19–20): Ցույց տվեք նկար 1-28՝ Արարում՝ կենդանի էակներ:

- Ի՞նչ անուններ ունեն այս նկարում պատկերված կենդանիները: (Թող երեխաները հերթով նկարի մեջ ցույց տան մի կենդանի նշելով նրա անունը:)

Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք բարի լինենք կենդանիների հանդեպ

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-30՝ Նոյը և կենդանիներով տապանը, և վերանայեք Նոյի և տապանի պատմությունը, ինչպես տրված է Ծննդոց Զ–Ը: Շեշտեք, որ բոլոր տեսակի կենդանիներից առնվազն երկուսը փրկվեցին խեղդվելուց: Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են կենդանիներին և ցանկանում են, որ նրանք լինեն երկրի վրա:

- Ինչո՞ւ Նոյը կենդանիներին դրեց տապանի մեջ:
- Ի՞նչ կենդանիների համար եք շնորհակալ, որ Նոյը դրեց տապանի մեջ:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս են Երկնային Հայրն ու Հիսուսը ցանկանում, որ մենք վերաբերվենք կենդանիներին:

Պատմություն

Ձեր խոսքերով պատմեք Եկեղեցու տասներկուերորդ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի պատմությունը.

Երբ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը պատանի էր, նրա գործն էր կովերին տանել արոտավայր, որն իրենց տնից մեկ մղոն հեռու էր գտնվում: Մի անգամ նա իր համար պարսատիկ սարքեց, մի խաղալիք, որով նա քարերով խփում էր ցանկապատերի փոստարկղերին և ծառերի բներին: Նա շատ վարպետացել էր և կարողանում էր խփել շատ հեռվում գտնվող ծառերին կամ ցանկապատերին:

Մեծ ծառեր կային ճամփեզրին, որտեղով նա տանում էր կովերին: Սպենսերը նկատեց, որ շատ ծիտիկներ կային այդ ծառերի վրա: Տեսնելով ծիտիկներին նա գայթակղվեց, որ իր պարսատիկով խփի այդ ծիտիկներին ցույց տալով, թե որքան լավ է նա այդ գործում: Սակայն այդ պահին հիշեց մի երգ, որ երգում էր Երեխաների խմբում: Այն ասում էր. «Մի սպանեք ծիտիկներին ... Երկիրն Աստծո տիրույթն է, և նա է կերակրում ինչպես փոքրերին, այնպես էլ մեծերին»: Սպենսերը մտածեց այդ երգի խոսքերի մասին: Նա որոշեց, որ ծիտիկները կարևոր էին Երկնային Հոր համար, և ճիշտ չէր լինի նրանց սպանելը: Այսպիսով նա միշտ զգույշ էր խաղում իր պարսատիկով, որպեսզի որևէ ծիտիկի չվնասեր (տես Conference Report, Apr. 1978, p. 71, or Ensign, May 1978, p. 47):

- Ինչպե՞ս Սպենսեր Վ. Քիմբալը բարություն ցուցաբերեց թռչունների հանդեպ:

Ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք բարի լինենք բոլոր կենդանիների հանդեպ:

Երգ

Երգեք կամ կարդացեք «Բարին ինձնից պիտ գա» երգը (Հիմներ և մանկական երգեր, էջ 63):

Բարի կլինեմ բոլորի հետ,
Քանզի ճիշտն է դա,
Ուստի կհիշեմ ես հավետ՝
Բարին ինձնից պիտ գա:

- Դուք տանը ունե՞ք կենդանիներ:

Վարժություն

Խնդրեք երեխաներին պատմել իրենց տնային կենդանիների մասին, և թե ինչպես են իրենք խնամում նրանց: Կարդացեք այս արտահայտությունները և խնդրեք երեխաներին իրենց բութ մատը պահել վերև, եթե տվյալ արտահայտությունը ներկայացնում է կենդանիների հանդեպ բարի վերաբերմունք: Թող բութ մատը ներքև պահեն, եթե տվյալ արտահայտությունը ներկայացնում է անգութ վերաբերմունք կենդանիների հանդեպ:

- Ամեն օր նրանց լավ կեր եք տալիս:
- Մոռանում եք կերակրել նրանց:
- Մոռանում եք ջուր տալ նրանց:
- Մաքուր ջուր եք լցնում, որ նրանք խմեն:
- Ապահով, հարմարավետ տեղ եք պատրաստում նրանց քնելու համար:
- Ամբողջ օրը նրանց պահում եք շոգ տեղում փակված:
- Սիրալիր և ուշադիր եք վերաբերվում նրանց:

Վկայություն

Հիշեցրեք երեխաներին, որ կենդանիները ստեղծվել են Հիսուսի կողմից և Երկնային Հոր ծրագրի մասն են: Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք բարյացակամ լինենք կենդանիների հետ: Կիսվեք ձեր զգացումներով տնային կենդանու կամ կենդանիների հանդեպ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Յուրաքանչյուր երեխայի համար պատճենահանեք դասի վերջում տրված նապաստակի նկարը, և թող երեխաները գունավորեն իրենց նապաստակները: Բամբակի գնդիկ սոսնձեք յուրաքանչյուր նապաստակի պոչին, որ այն փափկամազ լինի:

2. Երգեք կամ կարդացեք “My Heavenly Father Loves Me” (*Children’s Songbook*, p. 228):

3. Օգտագործելով Դաս 11-ից ձկնորսական կարթը և կենդանիների կտրվող նկարները, որոնք եկել են ձեռնարկի հետ, թող երեխաները հերթով ձկորսական կարթով կենդանի բռնեն: Երբ յուրաքանչյուր երեխա մի կենդանի է բռնել, թող նրանք հերթով ցույց տան իրենց կենդանիները և ասեն, թե ինչ գիտեն դրանց մասին:

4. Պատրաստեք կրծքանշաններ, որ երեխաները իրենց վրա կրեն տանը, որոնց վրա գրված է՝ Ես բարի կլինեմ կենդանիների հանդեպ:

5. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ մատերով խաղի շարժումները.

   Իմ փոքրիկ փիսիկը

   Իմ փոքրիկ փիսիկը ծառը ելավ (աջ ձեռքի մատերով «վազեք» ձախ թևի վրայով)
   Եվ նստեց ճյուղին ինձ նայելով (աջ ձեռքը դրեք ձախ ուսի վրա):
   Ես ասացի. «Արի, փիսիկ», և նա ցած իջավ (մատերով ներքև վազեք թևի վրայով)
   Եվ ամանի մեջ լցրած կաթը կերավ (ձախ ձեռքի ափը կիսակլոր արեք, և իբր աջ ձեռքը փիսիկն է, որը կաթ է ուտում):

6. Խնդրեք երեխաներին կանգնել և ձեզ հետ միասին կատարել շարժումները, երբ կարտասանեք հետևյալ ոտանավորը.

   Նոյը

   Նոյը մեծ տապան էր կառուցում (լայն բացեք ձեռքերը),
   Նա գիտեր, ինչ էր անում (մատը դրեք ճակատի քունքի մոտ):
   Նա մեխում էր, սղոցում ու չափում (կատարեք նշված գործողությունները),
   Ինչպես պատվիրված էր, նա դա էր անում (գլխով հաստատող շարժում կատարեք):

   Եվ Նոյն իր ընտանիքին կանչեց (ձեռքով նշան արեք)
   Որ տապան մտնեն (հանգիստ տեղում)—
   Զույգ-զույգ կենդանիներն եկան (երկու մատեր ցույց տվեք)
   Որ միասին տապանով նավարկեն (ձեռքերով լողալու շարժում կատարեք):

Մութ-մութ ամպեր հավաքվեցին (ձեռքերը գլխավերևում դրեք),
Սկսեց անձրև տեղալ (մատերը շարժեք անձրև ներկայացնելով)—
Ողջ երկիրը ջուրը պատեց (ձեռքով և բազկով արագ շարժում կատարեք),
Եվ հողն այլևս չերևաց (գլուխը մի կողմից մյուս կողմ թեքեք):

Տապանն ապահով նավարկեց (ձեռքերով լողալու շարժում կատարեք),
Օրեր ու գիշերներ անցան (երկու ձեռքերը դրեք երեսի մի կողմը),
Մինչև որ արևը կրկին ծագեց (ձեռքերով գլխավերևում շրջան կազմեք)
Եվ իր տաք ճառագայթներով ջերմացրեց:

Եվ ջուրը սկսեց չորանալ (ձեռքերը խաչեք կրծքի վրա),
Հողը կրկին երևաց (բացեք և տարածեք ձեռքերը):
Նոյի ընտանիքը գոհացավ (խոնարհեք գլուխը և ձեռքերը ծալեք),
Որ միշտ իրենց հետ էր Աստված:

(Վերցված է Բեվերլի Սպենսերի բանաստեղծությունից:)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Թող երեխաները պատմեն տնային կենդանիների մասին, որ ունեն կամ կուզենային ունենալ: Երեխաների հետ քննարկեք, թե ինչպես պետք է վերաբերվենք տնային կենդանիներին և հոգ տանենք նրանց մասին:

2. Երգեք կամ կարդացեք “The World is So Big” (*Children’s Songbook*, p. 235): Կատարեք ստորև տրված գործողությունները.

   Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը (ձեռքերով մեծ շրջան կազմեք),
   Այնտեղ Աստծո ստեղծածներն են գտնվում:
   Լեռներ (գլխավերևում ձեռքերով լեռ ցույց տվեք)
   Հովիտներ (ձեր առջև ձեռքերի ափերով հովիտ ցույց տվեք)
   Բարձրահասակ ծառեր (ձեռքերը ձգեք վեր),
   Մեծ կենդանիներ (բարձարցրեք ձեռքերը)
   Եվ փոքր միջատներ (ձեռքերը իջեցրեք):
   Օ, որքան մեծ և կլոր է աշխարհը:
   Աստված բոլորիս սիրում և լիուլի օրհնում է (ձեռքերով ամուր գրկեք ինքներդ ձեզ):

3. Հերթով ցույց տվեք մի քանի կենդանիների կտրվող նկարներ, և թող երեխաները պատմեն, թե ինչ գիտեն յուրաքանչյուր կենդանու մասին, օրինակ՝ որտեղ է այն ապրում, և ինչն են սիրում տվյալ կենդանու մեջ:



Դաս
36

Ես կարող եմ լավ օրինակ լինել

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի լավ օրինակ ծառայել մյուսների համար՝ հետևելով Հիսուսի օրինակին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մատթեոս Դ.19, Ղուկաս ԺԹ.1–10, Հովհաննես ԺԳ.15 և 3 Նեփի 17.11–24:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Թղթից կտրված մի քանի ոտնահետքեր:
   գ. Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240, 62572), նկար 1-63՝ Զաքարիան ծառի վրա, նկար 1-64՝ Հիսուսն աղոթում է Նեփիացիների հետ (62542):
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Երեխաների հետ երգեք կամ կարդացեք “Do as I’m Doing” (*Children’s Songbook*, p. 276): Խնդրեք երեխաներին ձեզ հետևելով կատարեն նույն շարժումները, օրինակ՝ ձեռքերը պտտեք, ծափ տվեք կամ ձևացրեք թռչունի պես թռչում եք:

Արա ինչպես ես,
Ինձ հետևիր:
Արա ինչպես ես,
Ինձ հետևիր:
Թռնում եմ բարձր, թե ցածր,
Վազում եմ արագ, թե դանդաղ,
Արա ինչպես ես,
Ինձ հետևիր:
Արա ինչպես ես,
Ինձ հետևիր:

(© 1963 by D. C. Heath and Company. Վերատպվել է թույլտվությամբ:)

Երեխաներին բացատրեք, որ երբ կրկնում են ձեր շարժումները, նրանք հետևում են ձեր օրինակին: Երբ մենք հետևում ենք ինչ-որ մեկի օրինակին, մենք կատարում ենք այն, ինչ նրանք են անում: Ասեք երեխաներին, որ Հիսուսն ասաց. «Ինձ հետևիր» (տես Մատթեոս Դ.19):

Երկնային Հայրը Հիսուս Քրիստոսին երկիր ուղարկեց, որ մեզ համար օրինակ լինի

Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը: Բացատրեք, որ պատճառներից մեկը, որ Հիսուսը եկավ երկիր այն է, որ օրինակ լինի մեզ համար և ցույց տա ինչպես ապրել: Հիսուսը կատարյալ էր: Դա նշանակում է, որ նա ամեն ինչ ճիշտ էր անում: Մենք պետք է ձգտենք ապրել այնպես, ինչպես Հիսուսն ապրեց երկրի վրա:

Բացեք Աստվածաշունչը և երեխաների համար կարդացեք Հովհաննես ԺԳ.15: Ասեք երեխաներին, որ սրանք Հիսուսի խոսքերն են: Շեշտեք, որ մենք ուզում ենք լինել Հիսուսի պես և նրա օրինակին հետևել:

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ "I'm Trying to Be like Jesus" երգի առաջին տունը (*Children's Songbook*, p. 78):

Ես փորձում եմ Հիսուսի պես լինել,
Եվ ձգտում եմ նրան հետևել:
Ես փորձում եմ Նրա պես սիրել,
Իմ ամեն գործով և խոսքով:

(© 1980 by Janice Kapp Perry. Օգտագործվել է թույլտվությամբ:)

- Ի՞նչ պետք է մենք անենք, եթե փորձում ենք Հիսուսին նմանվել:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-63՝ Զաքեոսը ծառի վրա, և պատմեք Հիսուսի և Զաքեոսի պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս ԺԹ.1–10-ում: Բացատրեք, որ Հիսուսը լավ օրինակ ծառայեց մեզ համար, երբ բարի գտնվեց Զաքեոսի հանդեպ: Թեև մյուսները չէին սիրում Զաքեոսին, Հիսուսը ցանկացավ նրա տուն գնալ և նրա ընկերը լինել:

- Ի՞նչ բարություն ցուցաբերեց Հիսուսը Զաքեոսի հանդեպ: (Տես Ղուկաս ԺԹ.5:)
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր Զաքեոսն իրեն զգում, երբ Հիսուսը բարի գտնվեց նրա հանդեպ:

Երգ

Երգեք կամ կարդացեք "Jesus Said Love Everyone" (*Children's Songbook*, p. 61), կատարելով ստորև տրված շարժումները.

Հիսուսն ասաց՝ բոլորին սիրիր (ձեռքերը լայն տարածեք),
Նրանց հանդեպ բարի եղիր (գլուխը վերև և ներքև շարժեք):
Երբ սիրտդ սիրով լի է լինում (ձեռքերը դրեք սրտի վրա),
Մյուսներն էլ քեզ են սիրում (գրկեք ինքներդ ձեզ):

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-64՝ Հիսուսն աղոթում է Նեփիացիների հետ, և պատմեք ինչպես Հիսուսն աղոթեց Նեփիացի երեխաների համար, որը գտնվում է 3 Նեփի 17.11–24-ում: Բացատրեք, որ Հիսուսն իր օրինակով ցույց տվեց, որ մենք պետք է աղոթենք մյուսների համար:

- Ո՞ւմ համար աղոթեց Հիսուսը: (Տես 3 Նեփի 17.21:)
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս երեխաները զգացին, երբ Հիսուսն աղոթեց իրենց համար:
- Ո՞ւմ համար կարող ենք մենք աղոթել:

Քննարկեք, թե ում համար կարող ենք մենք աղոթել, օրինակ՝ ընտանիքի անդամների, հիվանդների, միսիոներների և մեր Եկեղեցու ղեկավարների համար:

Վարժություն

Ցուցադրեք նկար 1-63՝ Զաքեոսը ծառի վրա, և նկար 1-64՝ Հիսուսն աղոթում է Նեփիացիների հետ, սենյակի տարբեր կողմերում, և դեպի յուրաքանչյուր նկար տանող թղթե ոտնահետքեր շարեք հատակին: Խնդրեք երեխաներին կրկին երգել կամ կարդալ «Ես փորձում եմ Հիսուսի պես լինել» երգի առաջին տան խոսքերը, քայլելով դեպի յուրաքաչյուր նկար տանող ոտնահետքերով:

Կանգ առեք յուրաքանչյուր նկարի մոտ և խնդրեք երեխաներին պատմել այդ պատմությունը՝ որքան կարող են: Օգնեք երեխաներին մտածել, թե ինչպես կարող են Հիսուսի նման լավ օրինակ լինել յուրաքանչյուր իրավիճակում: Օրինակ՝ նրանք կարող են կիսվել իրենց խաղալիքներով կամ խաղալ այն երեխայի հետ, որը ընկերոջ կարիք ունի (Զաքեոսի), կարող են աղոթել նրանց համար, ովքեր հիվանդ են կամ հատուկ օգնության կարիք ունեն (Նեփիացի երեխաների համար աղոթելը):

Օգնեք երեխաներին հասկանալ, որ երբ մյուսների հանդեպ սեր են դրսևորում բարի լինելով և նրանց համար աղոթելով, նրանք հետևում են Հիսուսի օրինակին: Նրանք նաև լավ օրինակ են ծառայում մյուսների համար:

Երգ

Երգեք կամ կարդացեք “I’m Trying to Be Like Jesus” երգի կրկներգը (*Children’s Songbook*, p. 78), օգտագործելով ստորև տրված շարժումները.

Սիրեք միմյանց, ինչպես Հիսուսն է ձեզ սիրում (գրկեք ինքներդ ձեզ):
Բարի եղեք ձեր բոլոր գործերում (սեղմեք մյուս անձնավորության ձեռքը):
Քնքուշ ու սիրող եղեք ձեր ամեն գործում (ձևացրեք ձեր մի ձեռքը կենդանի է, և մյուս ձեռքով շոյեք նրան),
Քանզի այս ամենը Հիսուսն է պատվիրում (ձեռքի ափերը վերև միասին պահեք, ասես սուրբ գիրք է):

(© 1980 by Janice Kapp Perry. Օգտագործվել է թույլտվությամբ:)

Մենք կարող ենք լավ օրինակ լինել մյուսների համար

Բացատրեք, որ ճիշտ ինչպես երեխաներն են հետևում Հիսուսի օրինակին, մյուսներն էլ նայում են իրենց և հետևում իրենց օրինակին:

Վարժություն

Խնդրեք մի երեխայի գալ դասարանի կենտրոն և լինել առաջնորդ: Խնդրեք այդ երեխային առաջնորդել մյուս երեխաներին շարժումներ կատարելով, օրինակ՝ ծափ տալով, պտտվելով կամ ցատկոտելով: Կրկնեք վարժությունը՝ թույլ տալով մյուս երեխաներն էլ առաջնորդ լինեն:

Բացատրեք, որ օրինակ լինելու համար ավելի կարևոր եղանակներ կան, քան մեր մարմինը շարժելը: Երեխաներին ասեք, որ կարող են լավ օրինակներ լինել լավ գործեր անելով, օրինակ՝ ճշմարտությունն ասելով, իրենց մայրիկներին և հայրիկներին հնազանդվելով, կիսվելով իրենց խաղալիքներով, եկեղեցում ակնածալից լինելով և իրենց ընտանիքներին օգնելով:

- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի լավ օրինակ ծառայեք մյուսների համար:

Թող յուրաքանչյուր երեխա մտածի, ինչպես կարող է լավ օրինակ լինել և ասի դասարանին, թե ինչ է պատրաստվում անել:

Վկայություն

Պատմեք ինչ-որ մեկի լավ օրինակին հետևելու մասին: Ասեք, թե որքան կարևոր է Հիսուսի օրինակին հետևելը: Խրախուսեք երեխաներին լավ օրինակ ծառայել մյուսների համար՝ անելով այն, ինչ Հիսուսը կաներ:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Յուրաքանչյուր երեխայի համար թղթից մի հասարակ թագ կամ գլխարկ պատրաստեք, և վրան գրեք՝ Ես կարող եմ լավ օրինակ լինել: Քննարկեք, թե ինչպես կարող են երեխաները լավ օրինակ լինել այս շաբաթվա ընթացքում:
2. Երգեք "Jesus Once Was a Little Child" (*Children's Songbook*, p. 55), "Jesus Wants Me for a Sunbeam" (*Children's Songbook*, p. 60), կամ "I Am like a Star" (*Children's Songbook*, p. 163):
3. Ցույց տվեք ձեռքի լապտեր կամ փոքր լույս: Միացրեք այն և քննարկեք, թե ինչպես է օգնում մարդկանց լապտերի լույսը, երբ այն լույսավորում է: Բարձրաձայն կարդացեք 3 Նեփի 12.16-ի առաջին մասը: Բացատրեք երեխաներին, որ նրանք փոքր լույսերի նման են, երբ լավ օրինակ են ծառայում, որովհետև մյուսները տեսնում են և հետևում են իրենց: Թող մի երեխա բռնի ձեռքի լապտերը և մյուսներին առաջնորդի սենյակում շրջելիս: Կրկնեք, մինչև բոլոր երեխաները, ցանկության դեպքում, կուզենան առաջնորդ լինել:
4. Խնդրեք երեխաներին կանգնել և կատարել հետևյալ ոտանավորի շարժումները:

   Հիսուսը սիրում է փոքր երեխաներին

   Երեխաները վազում են փոշոտ փողոցով (վազեք տեղում),
   Արագ վազում են բոբիկ ոտքերով (ցույց տվեք ոտքերը),
   Մարդկանց միջով շտապ անցնելով (ձևացրեք հրելով անցնում եք ամբոխի միջով)
   Մոտենում են Հիսուսին, նրան տեսնելու (կանգնեք ոտնաթաթերին և շուրջը նայեք):
   Մեծերից ոմանք ասում են. «Նրանց տարեք հեռու (ձեռքը այնպես պահեք, կարծես թույլ չեք տալիս մոտենալ),
   Նա ժամանակ չունի երեխաներով զբաղվելու» (խոժոռվեք և գլուխը տարուբերեք):
   Սակայն Հիսուսն ասաց. «Թողեք ինձ մոտ գան» (ձեռքով կանչեք):
   Նրանք կարևոր են, ես սիրում եմ նրանց» (գրկեք ինքներդ ձեզ):

   (Վերցված է Margaretta Harmon in Bible Story Finger Plays and Action Rhymes [Cincinnati: Standard Publishing, 1964], p. 27.)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Խնդրեք երեխաներին կրկնել օրինակ բառը: Նրանց ասեք, որ լավ օրինակ է հանդիսանում նա, ում դուք ցանկանում եք մեծանալով նմանվել: Մեզ համար լավ օրինակներ կարող են լինել մեր ծնողները: Խնդրեք երեխաներին ասել, թե ինչ են անում իրենց ծնողները, որպեսզի հոգ տանեն իրենց համար կամ ուրախացնեն իրենց:

2. Խնդրեք երեխաներին ձեռքերը բռնել և շրջանով քայլել, մինչ դուք կերգեք կամ կկարդաք “When We’re Helping” (*Children’s Songbook*, p. 198)։ Կրկնեք երգը որքան ցանկանում եք, մայրիկի փոխարեն ասելով հայրիկ, եղբայր, քույր, տատիկ կամ պապիկ։

3. Երեխաների հետ խաղացեք «Հետևիր առաջնորդին»։ Խնդրեք երեխաներին կանգնել շարքով։ Առաջին երեխան վազում, ցատկոտում կամ մեկ այլ շարժում է անում մինչև սենյակի մյուս ծայրը։ Մյուս երեխաները հետևում են առաջին երեխային՝ անելով այն, ինչ նա է անում։ Այնուհետև առաջին երեխան գնում է շարքի վերջը և մյուս երեխան է դառնում առաջնորդ։ Շարունակեք այդպես մինչև յուրաքանչյուր երեխա առաջնորդ լինելու հնարավորություն ունենա։

Ես կարող եմ ազնիվ լինել

Դաս
37

ՆՊԱՏԱԿ

Ամրացրեք յուրաքանչյուր երեխայի ազնիվ լինելու ցանկությունը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ելից Ի.15–16, Ալմա 53.16–22, 56.44–57 և Հավատո հանգանակներ 1.13: Տես նաև Ավետարանի Սկզբունքներ (31110), գլուխ 31:
2. Յուրաքանչյուր երեխայի համար գլխի ժապավեն պատրաստեք թղթի կամ կտորի շերտից և վրան գրեք՝ Ես կարող եմ ազնիվ լինել:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Կոճակ կամ մեկ այլ փոքր առարկա:
   գ. Նկար 1-13՝ Ջոզեֆ Սմիթ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 400, 62449), նկար 1-65՝ Երկու հազար պատանի զինվորներ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 313, 62050):
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի գալ դասարանի կենտրոն: Ձեռքի ափերն ամուր սեղմեք իրար՝ ափերի մեջ ունենալով կոճակ կամ մեկ այլ փոքր առարկա: Խնդրեք մյուս երեխաներն էլ միացնեն ձեռքերը՝ ափերն իրար սեղմելով: Հերթով մոտեցեք երեխաներին զգույշ նրանց ձեռքերի միջով անցկացնելով ձեր ձեռքերը: Կոճակը զգույշ գցեք մի երեխայի ձեռքերի մեջ: Խնդրեք երեխաներին ձեռքերը միասին սեղմած պահել, ձևացնելով թե իրենց մոտ է կոճակը: Ասեք՝ «Կոճակ, կոճակ, ո՞ւմ մոտ է կոճակը»: Խնդրեք կենտրոնում կանգնած երեխային գուշակել, թե ում մոտ է կոճակը՝ հարցնելով. «(Անուն), քեզ մո՞տ է կոճակը»: Ասեք երեխաներին, որ նրանք պետք է ճիշտ պատասխանեն, ասելով՝ «Ոչ, ինձ մոտ չէ կոճակը» կամ «Այո, ինձ մոտ է կոճակը»:

Այս խաղը մի քանի անգամ խաղացեք, այլ երեխաների ընտրելով, որ գուշակեն և փոխանցեն կոճակը: Գովասանքի խոսքեր ասեք երեխաներին ազնիվ լինելու համար:

Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք ազնիվ լինենք

Ցույց տվեք նկար 1-13՝ Ջոզեֆ Սմիթ: Ասեք երեխաներին, որ Հավատո տասնեռեքերորդ հանգանակում Մարգարե Ջոզեֆ Սմիթը գրել է. «Մենք հավատում ենք ազնիվ լինելուն»: Օգնեք երեխաներին մտապահել այս խոսքերը:

- Ի՞նչ է նշանակում ազնիվ լինել:

Բացատրեք, որ ազնիվ լինել նշանակում է ճշմարտությունն ասել, չվերցնել այն, ինչ պատկանում է ուրիշին և արդար վերաբերվել մյուս մարդկանց:

Ցույց տվեք Աստվածաշունչը և ասեք երեխաներին, որ Մովսեսը իր ժողովրդին բերեց Տաս Պատվիրանները (տես Ելից Ի): Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը Մովսեսին ազնվության վերաբերյալ երկու պատվիրան տվեցին. «Մի գողացիր» և «Սուտ վկայություն մի անիր»: Բարձրաձայն կարդացեք Ելից Ի.15–16:

- Ի՞նչ է նշանակում գողանալ:

Բացատրեք, որ սուտ վկայություն բերել նշանակում է ճիշտը չասել:

Երգ

Երգեք կամ կարդացեք «Ես հավատում եմ ազնիվ լինելուն» երգի առաջին տունը (“I Believe in Being Honest,” *Children’s Songbook*, p. 149):

Ես հավատում եմ ազնիվ լինելուն,
Ես հավատում եմ ճշմարիտ լինելուն,
Ես նախ պետք է ազնվ լինեմ,
Իմ խոսքով և գործով ամեն:

Վարժություն

Երեխաներին ներկայացրեք որոշ արարքներ: Խնդրեք երեխաներին կանգնել, երբ տվյալ արարքը ազնիվ է, և նստել, երբ այդ արարքը ազնիվ չէ: Օգտագործեք ստորև տրված օրինակները կամ ձեզանից ասեք որոշ օրինակներ.

- Օգտվում եք հյուրասիրությունից, երբ ձեր մայրիկն արգելել է ձեզ:
- Ասում եք ճշմարտությունը, թե ինչ եք անում:
- Վերցնում եք մի բան, որ ձեզ չի պատկանում:
- Ընդունում եք, որ ինչ-որ բան սխալ եք անում:
- Ասում եք, որ մեկ ուրիշն է սխալ արարքը կատարել, երբ իրականում դուք եք այն կատարել:
- Փող կամ ուրիշին պատկանող որևէ իր եք գտնում և վերադարձնում եք տիրոջը:

Խնդրեք երեխաներին ներկայացնել իրավիճակներ, երբ իրենք են ազնիվ եղել:

- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ազնիվ եք:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ ազնիվ չեք:
- Ինչո՞ւ եք երբեմն վախենում ազնիվ լինել: (Հնարավոր է ձեզ պատժեն կամ ինչ-որ մեկին վշտացնեք:)

Օգնեք երեխաներին հասկանալ, որ մենք ավելի լավ ենք զգում, երբ ազնիվ ենք, թեպետ երբեմն դժվար է ազնիվ լինել:

Մենք օրհնվում ենք, երբ ազնիվ ենք

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-65՝ Երկու հազար պատանի զինվորներ: Պատմեք երկու հազար պատանի զինվորների պատմությունը, ինչպես տրված է Ալմա 53.16–22 և 56.44–57, հատկապես Ալմա 53.20–21-ում: Բացատրեք, որ այս պատանիներն աչքի էին ընկնում իրենց ազնվությամբ: Բարձրաձայն կարդացեք Ալմա 53.20-ի վերջին մասը (սկսած՝ նրանք տղաներ էին, որոնք հավատարիմ էին): Բացատրեք, որ լինել հավատարիմ նշանակում է լինել ազնիվ: Քանի որ պատանի զինվորները ազնիվ էին, նրանք պաշտպանվեցին ճակատամարտում: Նրանք օրհնվեցին իրենց

ազնվության, հավատքի և քաջության համար: Մենք նույնպես կօրհնվենք, եթե ազնիվ լինենք:

- Ինչպե՞ս օրհնվեցին երկու հազար պատանի զինվորները ազնիվ լինելու համար: (Տես Ալմա 56.54–56:)

Վարժություն

Երեխաների գլխին կապեք ձեր պատրաստած ժապավենները: Թող նրանք ձևացնեն իբր երկու հազար պատանի զինվորներն են և քայլեն սենյակում՝ ձեր ռիթմիկ ծափերի ներքո: Թող նրանք կանգ առնեն, երբ դուք դադարեցնեք ծափ տալը, և խնդրեք մի երեխայի ասել, թե ինչպես կարող է նա ազնիվ լինել: Կրկին սկսեք ծափ տալ, և կրկնեք վարժությունը, մինչև որ բոլոր երեխաները պատասխանեն ձեր հարցին:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը, որ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք ազնիվ լինենք, իսկ ազնիվ լինելու դեպքում մենք երջանիկ կլինենք:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Ձեր խոսքերով պատմեք Ջեյքոբ Համբլինի և նրա որդու մասին հետևյալ պատմությունը.

   Ջեյքոբ Համբլինը հարավային Յուտա եկած առաջին պիոներներից էր: Նա սիրում էր այնտեղ բնակվող հնդկացիներին և սովորել էր նրանց լեզուն: Նա միշտ ազնիվ էր հնդկացիների հետ, և նրանք սովորել էին վստահել նրան: Մի օր Ջեյքոբն իր որդուն ուղարկեց մի հնդկացու մոտ, որպեսզի փոխանակի իրենց պոնին մի քանի ծածկոցներով: Հնդկացին ուշադիր զննեց պոնիին և մի կապ ծածկոցներ բերեց: Ջեյքոբի որդին ասաց. «Սա բավական չէ»: Հնդկացին մի քանի ծածկոց ևս ավելացրեց: Երբ Ջեյքոբի որդին մտածեց, որ արդեն բավականաչափ ծածկոցներ էր վերցրել, եկավ տուն հպարտանալով, որ մեկ պոնիի դիմաց այդքան շատ ծածկոցներ է բերել: Երբ Ջեյքոբը տեսավ, թե որքան շատ ծածկոցներ է որդին բերել տուն, նա տխրեց: Պոնին այդքան շատ ծածկոցներ չարժեր: Ջեյքոբը ստիպեց, որ իր որդին ծածկոցների կեսը վերադարձնի հնդկացուն: Երբ տղան վերադարձավ, հնդկացին ծիծաղեց և ասաց. «Ես գիտեի, որ Ջեյքոբը կեսը ետ կուղարկի» (տես Jacob Hamblin Jr., as told to Louise Lee Udall, in A Story to Tell [Salt Lake City: Deseret Book Co., 1945], 359–60):

   Բացատրեք, որ հնդկացին գիտեր, որ Ջեյքոբ Համբլին ազնիվ մարդ էր և ետ կուղարկեր ավել ծածկոցները: Հնդկացին վստահում էր Ջեյքոբին, որովհետև նա միշտ ազնիվ էր եղել: Թող երեխաները դերերով ներկայացնեն կամ վերապատմեն այս պատմությունը:

2. Երգեք կամ կարդացեք “Jesus Loved the Little Children” (*Children’s Songbook*, p. 59) կամ “Jesus Once Was a Little Child” (*Children’s Songbook*, p. 55):

2. Օգտագործեք պարզ տիկնիկներ, օրինակ՝ գուլպայից կամ թղթե պարկից պատրաստված տիկնիկներ, դերերով ներայացնելով իրավիճակներ, որտեղ ինչ-որ մեկը ազնիվ և անազնիվ լինելու ընտրության հնարավորություն ունի: Օգտագործեք ստորև տրված օրինակները կամ ինքներդ ստեղծեք ձեր օրինակները.

- Դուք կոտրել եք ափսեն և մայրիկը հարցնում է, թե ով է կոտրել այն:
- Դուք օգնում եք հավաքել թափված փողերը և գայթակղվում եք վերցնել մի մասը:
- Դուք կերել եք երկու թխվածքաբլիթ, երբ ձեր հայրը զգուշացրել էր, որ չուտեք այն: Ձեր հայրիկը հարցնում է, արդյոք կերել եք թխվածքաբլիթ:

Խնդրեք երեխաներին օգտագործելով տիկնիկները հերթով ասել, թե ինչ պետք է անեն յուրաքանչյուր իրավիճակում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Հարցրեք երեխաներին՝ ձի կա՞ այս սենյակում: Նրանց ասեք, որ եթե նույնիսկ շատ ուշադիր նայեն, չեն կարող ձի գտնել սենյակում, որովհետև ձի չկա: Ազնիվ չի լինի ասել, որ ձի կա սենյակում: Հարցրեք, արդյոք տեսնո՞ւմ են (ասեք մի բան, որ երեխաները կարող են ամիջապես տեսնել): Բացատրեք, որ ազնիվ կլինի ասել, որ այդ առարկան սենյակում է: Ասեք երեխաներին, որ նրանք ազնիվ են լինում, երբ ասում են մի բան, որը ճշմարիտ է կամ իրական:
2. Խնդրեք երեխաներին բարձրացնել երկու ձեռքերը, եթե ձեր ասածը ճիշտ է, և թող իջեցնեն ձեռքերը, եթե ձեր ասածը ճիշտ չէ: Ասեք պարզ, սակայն ակնհայտ բաներ, օրինակ՝ «Իմ մազերի մեջ ծաղիկ է դրված», «Իմ հագին զգեստ կա», «Հովհաննեսի տաբատը կարմիր է» կամ «Դուք նստած եք աթոռին»:
3. Երգեք կամ կարդացեք “Dare to Do Right” երգը (Children’s Songbook, էջ 64):

Ես կարող եմ ակնածալից լինել

Դաս
38

ՆՊԱՏԱԿ

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի ակնածալից լինելով սեր ցուցաբերել Երկնային Հոր և Հիսուսի հանդեպ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ելից Գ.1–10:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-19՝ Քրիստոսը մանուկների հետ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 216, 62467), նկար 1-66՝ Մովսես և այրվող թուփը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 107, 62239), նկար 1-67՝ Ակնածալից դասարան:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք երեխաներին ձեռքերը ծալել և հանգիստ նստել, մինչ դուք մեղմ ձայնով կերգեք կամ կկարդաք “Reverently, Quietly” (*Children’s Songbook*, p. 26): Եթե երեխաները գիտեն այդ երգը, կարող են ձեզ հետ միասին երգել:

Ակնածանքով, հանգիստ ու սիրով քո մասին ենք մտածում,
Ակնածանքով, հանգիստ ու մեղմ մեր երգն ենք երգում:
Ակնածանքով, հանգիստ ու հեզ մենք աղոթում ենք,
Որ քո Սուրբ Հոգին այսօր մնա մեր սրտերում:

Երբ ավարտեք, շնորհակալություն հայտնեք երեխաներին հանգիստ նստելու համար:

Մենք կարող ենք ակնածանքով լինել Եկեղեցում

Ցույց տվեք նկար 1-67՝ Ակնածալից դասարան:

- Որտե՞ղ են այս երեխաները:
- Ի՞նչ են նրանք անում:
- Ձեր կարծիքով, ինչի՞ մասին են նրանք մտածում:
- Ի՞նչ եք անում գալով Երեխաների խումբ:

Բացատրեք, որ երբ գալիս ենք եկեղեցի, մենք պետք է հատուկ ձևով մեզ պահենք: Դա կոչվում է ակնածանք:

Խնդրեք երեխաներին մի քանի անգամ կրկնել ակնածանք բառը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել ակնածալից:

Բացատրեք, որ ակնածալից լինել նշանակում է մեր սերն ու հարգանքը ցույց տալ Երկնային Հոր և Հիսուսի հանդեպ: Մենք կարող ենք նրանց հանդեպ մեր սերը հետևյալ կերպ արտահայտել (թող երեխաները ցուցադրեն այս գործողությունները, երբ դուք կկարդաք դրանք).

- Քայլում եք հանգիստ և խոսում եք մեղմ:
- Հանգիստ նստում եք և դասերն ու աղոթքներն եք լսում:
- Ձեռք եք բարձրացնում, երբ ցանկանում ենք ինչ-որ բան ասել:
- Ծալում եք ձեռքերը:
- Հավաքատունը մաքուր եք պահում:

Բացատրեք, որ երբ մեզ այդպես ենք պահում, Երկնային Հայրը և Հիսուսը կիմանան, որ մենք սիրում ենք իրենց և մենք ուրախ ենք եկեղեցի գալու համար:

Երգ

Երեխաների հետ երգեք կամ կարդացեք “I Want to Be Reverent” երգի բառերը (*Children’s Songbook*, p. 28): Ցանկության դեպքում կրկնեք:

Ես ուզում եմ ակնածալից լինել,
Իմ սերը քեզ հայտնել:
Ես հանգիստ կլսեմ,
Քանզի ես պետք է նախ ակնածալից լինեմ:

- Ինչո՞ւ պետք է մենք ակնածալից լինենք Երեխաների խմբում:

Հիշեցրեք երեխաներին, որ երբ ակնածալից ենք, մենք կարող ենք լսել մեր ուսուցիչներին և սովորել Երկնային Հոր և Հիսուսի մասին: Երբ ակնածալից ենք, մենք օգնում ենք մյուսներին ևս ակնածալից լինել:

- Ի՞նչ շենքում ենք մենք այժմ գտնվում:
- Ո՞ւմ տուն է սա:

Բացատրեք, որ հավաքատունը պատկանում է Երկնային Հորը և Հիսուսին: Մենք գալիս ենք այստեղ սովորելու նրանց մասին և այն, թե ինչ են նրանք ուզում, որ մենք անենք:

Վարժություն

Երեխաների հետ կատարեք հետևյալ մատերով ոտանավորը: Մատերով շարժումներ կատարեք հավաքատան մասերը ցույց տալու համար:

Հավաքատուն

Սրանք պատերն են այս հրաշալի տան,
Սա սրածողն է բարձր այսքան:
Այս պատուհաններից լույսն է թափանցում
Եվ այս դռները բոլորի առաջ են բացվում:
Սիրող ձեռքերով է այս շենքը կառուցվել,
Որտեղ երգում և աղոթում են:
Եկեք ձեռքերը ծալենք, գլուխը խոնարհենք (ձեռքերը ծալեք և գլուխը խոնարհեք),
Եվ այսօր այս տան համար գոհություն հայտնենք:

- Ի՞նչ պետք է դուք անեք հավաքատանը:

- Ի՞նչ չպետք է անեք հավաքատանը:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ հավաքատանը կան տեղեր և ժամեր վազելու և խաղեր խաղալու համար, սակայն հիմնականում այս շենքում և կիրակի օրերին մենք պետք է ակնածալից լինենք: Նշեք, որ Երեխաների Խմբում և ժողովատանը հանգիստ նստելուց բացի, մենք սրահներում քայլում ու խոսում ենք հանգիստ:

Պատմություն

Պատմեք ձեր դասարանի երեխաների մասին, երբ նրանք գալիս են Երեխաների Խումբ: Ասեք, թե որքան ոգևորված են լինում, որ վազում ու թռչկոտում են հավաքատուն գալու ճանապարհին, և որքան հանգիստ են քայլում, երբ ներս են մտնում, և ինչ են անում հաղորդության ժողովին և Երեխաների Խմբում, ինչպես նաև սրահներում: Շեշտեք, թե որքան ակնածալից են երեխաները, երբ եկեղեցի են գալիս:

Երգ

Երգեք կամ կարդացեք “Two Happy Feet” (*Children’s Songbook*, p. 270) երգը, իսկ երեխաները թող հանգիստ ու զգույշ քայլեն սենյակում, որպեսզի նրանց կոշիկները ձայն չհանեն:

Ես երկու ուրախ ոտքեր ունեմ,
Որ իմ ուզած տեղն են տանում:
Նրանց օգնությամբ ես թռչկոտում եմ,
Եվ, իհարկե, աղմկում:
Իսկ երբ իմ Երկնային Հոր տանն եմ,
Շատ հանգիստ են նրանք մնում,
Ու թեև իմ ոտքերով քայլում եմ,
Դուք երբեք դրանց չեք լսում:

- Ձեր ոտքերով ի՞նչ եք անում եկեղեցու սրահներում, ժողովատանը, դասարանում:
- Ի՞նչ եք անում ձեր ձեռքերով:
- Ի՞նչ եք անում ձեր ձայնով:

Մենք կարող ենք ակնածանք ունենալ

Ցույց տվեք նկար 1-19՝ Քրիստոսը մանուկների հետ, և հայտնեք, թե ինչպիսի զգացմունքներ ունեք, երբ Հիսուս Քրիստոսի մասին եք մտածում, և թե որքան է նա մեզ սիրում: Բացատրեք, որ դրանք ակնածանքի զգացումներ են: Խնդրեք երեխաներին արտահայտել իրենց զգացումները Հիսուսի մասին:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-66՝ Մովսեսը և այրվող թուփը, և պատմեք Ելից Գ.1–10-ում տրված պատմությունը: Շեշտեք, թե ինչպիսի ակնածանք զգաց Մովսեսը, երբ Տերը խոսեց նրա հետ այրվող թփի միջից և կանչեց նրան դուրս բերելու Իսրայելի որդիներին Եգիպտոսից: Բարձրաձայն կարդացեք Աստվածաշունչը և բացատրեք 5-րդ հատվածը. «Կոշիկներդ հանիր ոտքերիցդ, որովհետև այն տեղը, որի վրա դու կանգնել ես, սուրբ երկիր է»:

- Ինչո՞ւ Մովսեսը հանեց իր կոշիկները:

Բացատրեք, որ դա ակնածալից լինելու մի ձև էր: Համոզվեք, որ երեխաները հասկացել են, որ ակնածալից լինելու համար կարիք չկա, որ մեր կոշիկները հանենք: Ակնածալից լինելու շատ այլ ձևեր կան:

- Ինչպե՞ս կարող եք ակնածալից լինել:

Մենք կարող են ակնածալից լինել տանը

Ասեք երեխաներին, որ հավաքատունը միակ վայրը չէ, որ մենք պետք է ակնածալից լինենք:

- Ի՞նչ եք անում տանը աղոթքի ժամանակ:
- Ի՞նչ եք անում տանը ընտանեկան երեկոյի ընթացքում:

Բացատրեք, որ երբ տանը հանգիստ լսում ենք աղոթքների և դասերի ժամանակ, մենք ակնածալից ենք լինում: Դա Երկնային Հորը և Հիսուսին ցույց է տալիս, որ մենք սիրում ենք նրանց:

Վկայություն

Ձեր սերը հայտնեք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ, և՝ ձեր երախտագիտությունը, որ կարող եք այդ սերը ցույց տալ ակնածալից լինելով: Խրախուսեք երեխաներին իրենց սերը ցուցաբերել Երկնային Հոր և Հիսուսի հանդեպ՝ ակնածալից լինելով Երեխաների Խմբում, հաղորդության ժողովին, տանը աղոթքների ժամանակ և ընտանեկան երեկոյին:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երեխաներին տարեք հավաքատան սրահներով ակնածալից շրջագայության: Հնարավորության դեպքում, գնացեք ժողովարան: Դասարան վերադառնալով գովացեք երեխաներին իրենց ակնածալից վարքի համար և քննարկեք, թե ինչպես է հավաքատանը իրենց ակնածանքն օգնել մյուսներին ակնածալից լինել իրենց դասարաններում:
2. Երգեք կամ կարդացեք “I Will Try to Be Reverent” (*Children’s Songbook*, p. 28), “Father, I Will Reverent Be” (*Children’s Songbook*, p. 29), կամ “Our Chapel Is a Sacred Place” (*Children’s Songbook*, p. 30):
3. Թղթերի վրա նկարեք երեխաների ոտքերը և վրան գրեք «Երկու ուրախ ոտքեր» (տես էջ 126): Թող յուրաքանչյուր երեխա գունավորի իր ոտքերի նկարները և տանի տուն:
4. Թող երեխաները հերթով ցույց տան, ինչպես կարող են ակնածալից լինել դասարանում, օրինակ՝ հանգիստ նստելով, ձեռքերը ծալելով կամ ինչ-որ բան ասելու համար ձեռք բարձրացնելով: Խոսեք այն մասին, թե ինչու պետք է ակնածալից լինենք Երկնային Հոր տանը:
5. Օգնեք երեխաներին արտասանել հետևյալ ոտանավորները: Խոսքերին համապատասխան շարժումներ կատարեք:

   Բացեք և փակեք [ձեռքերը]

   Բացեք և փակեք,
   Բացեք և փակեք,
   Ծափ տվեք:
   Բացեք և փակեք,
   Բացեք և փակեք,
   Ծնկներին դրեք:

Ձեռքերս թափահարում եմ
Ձեռքերս թափահարում եմ:
Ձեռքերս պտտում եմ:
Եվ ծափ եմ տալիս:
Ձեռքերս բարձրացնում եմ,
Ապա իջեցնում եմ,
Ու դնում եմ ծնկներիս:

Ոտքերիս սաստում եմ:
Եվ դրանք չեն շարժվում:
Աթոռին ուղիղ նստում եմ:
Գլուխս խոնարհում եմ:
Աչքերս փակում եմ:
Աղոթքին պատրաստ եմ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երգեք կամ արտասանեք “The Chapel Doors” (*Children’s Songbook*, p. 156): Խնդրեք երեխաներին ամեն անգամ մատը դնել շուրթերին, երբ ասում եք «Սուս մնացեք»:

2. Խնդրեք երեխաներին փակել իրենց աչքերը: Թող ձեռք բարձրացնեն, եթե լսում են կոպեկի կամ կոճակի ընկնելու ձայնը: Կոպեկ կամ կոճակ գցեք հատակին կամ սեղանի վրա: Այնուհետև կոճակը կամ կոպեկը փաթաթեք թաշկինակով կամ փոքր կտորով: Խնդրեք երեխաներին իրենց աչքերը փակ պահել, ուշադիր լսել և ձեռք բարձարցնել, եթե լսում են կոպեկի կամ կոճակի ընկնելու ձայնը: Փաթաթած կոճակը կամ կոպեկը գցեք հատակին կամ սեղանի վրա: Օգնեք երեխաներին հասկանալ, որ շատ բաներ կարող ենք լսել, եթե ուշադիր լինենք:

Դաս
39

Երգն ինձ ուրախություն է պարգևում

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ լավ երգը մեզ ուրախություն է պարգևում և մեզ հիշեցնում է Երկնային Հոր և Հիսուսի մասին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ա Թագավորաց ԺԶ.19–23, Եթեր 6.2–12, և Վարդապետություն և Ուխտեր 25.12:
2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ, Մորմոնի Գիրք և Վարդապետություն և Ուխտեր:
   բ. Նկար 1-61՝ Սավուից մեկնումը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 410, 62493), նկար 1-68՝ Դավիթը նվագում է Սավուղ թագավորի համար, նկար 1-69՝ Հարեղացիների բեռնանավերը:
3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

Ի գիտություն ուսուցչի. Կարող եք Երեխաների Խմբի երաժշտության ղեկավարին հրավիրել, որպեսզի ձեզ օգնի այս դասին:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք երեխաներին շրջան կազմել և մի քանի անգամ երգել “If You’re Happy” (*Children’s Songbook*, p. 266), օգտագործելով այսպիսի խոսքեր, օրինակ՝ «ծափ տվեք», «ոտքերով դոփեք» և «աչքերը թարթեք»: Խոսքերին համապատասխան շարժումներ կատարեք.

Եթե ուրախ եք ու գիտեք դա, ծափ տվեք,
Եթե ուրախ եք ու գիտեք դա, ծափ տվեք,
Եթե ուրախ եք ու գիտեք դա,
Ձեր ոտքերից կերևա դա:
Եթե ուրախ եք ու գիտեք դա, ծափ տվեք:

- Այս երգը երգելիս ինչպե՞ս էիք ձեզ զգում:

Լավ երգը կարող է օգնել մեզ ուրախ լինել

Բացատրեք, որ ուրախ, գեղեցիկ կամ հանգիստ երգից ներքուստ մեզ լավ ենք զգում: Երբ մենք տխուր ենք, բարկացած կամ վախեցած, լավ երգը կարող է օգնել մեզ կրկին ուրախ լինել:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-68՝ Դավիթը նվագում է Սավուղ թագավորի համար: Պատմեք, որ Դավիթը նվագում էր իր քնարը Սավուղ թագավորի համար, երբ թագավորն իրեն լավ չէր զգում: Այս պատմությունը տրված է Ա Թագավորաց ԺԶ.19–23-ում:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Դավթի երաժշտությունից Սավուղ թագավորն իրեն ավելի լավ զգում:
- Ի՞նչ երաժշտական գործիքներ եք սիրում լսել:

Կարճ մնջախաղով ցույց տվեք հիշատակվող երաժշտական գործիքները:

Վարժություն

Թող յուրաքանչյուր երեխա ձևացնի մի երաժշտական գործիք նվագում, օրինակ՝ դաշնամուր, ջութակ, կիթառ, սրինգ կամ տավիղ, մինչ դուք ցածր կերգեք Երեխաների Խմբի ծանոթ երգ կամ օրհներգ:

Երգ

Բացատրեք, որ երգելը նաև օգնում է մեզ ուրախ լինել: Երգեք “Happy Song” (*Children’s Songbook*, p. 264), օգտագործելով ստորև նշված շարժումները.

Բադիկները լճակում ուրախ երգում են (բութը և մատերը բացեք և փակեք բադի կտուցի նման):
Ամբողջ օրը մայր հավերը կչկչում են (ձեռքերը դրեք թևերի տակ հավի թևեր ներկայացնելով):
Թռչուններն իրենց բներից (ձեռքերը միացրեք՝ բուն ներկայացնելով) և քամին ծառի կատարին (ձեռքերը թափահարեք գլխավերևում, ինչպես ծառերն են շարժվում քամուց)
Միանում են ուրախ երգին:

(© 1963 by Դ. Գ. Heath և Company. Reprinted by permission.)

- Ո՞ր մանկական երգերն են ձեզ ուրախություն պատճառում:

Երգ

Թող երեխաներն ընտրեն իրենց սիրելի երգը, նրանց հետ երգեք այդ երգը:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-61՝ Սավուից մեկնումը, և ձեր խոսքերով պատմեք հետևյալ պատմությունը.

Երբ պիոներները հեռացան Սավույից թողնելով իրենց տները և շարժվեցին դեպի արևմուտք, նրանք իրենց ունեցվածքից վերցրեցին միայն այն, ինչ կարող էին տեղավորել ծածկով սայլակներում կամ ձեռնասայլակներում: Սրանք թողեցին իրենց ունեցվածքի մեծ մասը, քանի որ տեղ չունեին վերցնելու: Ճամփորդությունը դժվար էր, և պիոներները օրվա վերջում սովորաբար շատ հոգնած էին լինում:

Գիշերը նրանք հավաքում էին իրենց անասուններին և սայլակները շրջան կազմելով, և շրջանի մեջտեղում խառույկ էին վառում: Մարգարե Բրիգամ Յանգը գիտեր, որ մարդիկ ավելի ուրախ կլինեն, եթե երաժշտություն լիներ: Սա խրախուսում էր նրանց երգել ու պարել: Պիոներները, ովքեր իրենց հետ վերցրել էին ջութակներ, շեփորներ և թմբուկներ, երգեր էին նվագում: Բոլորը երգում էին ու խառույկի շուրջը պարում: Սրանց սիրելի երգերից էր «Եկեք Սրբեր»: Երգերը պիոներներին ուժ ու քաջություն էին պարգևում: Երգելուց ու պարելուց հետո գիշերը նրանք ուրախ անկողին էին մտնում:

Երգ

Խնդրեք երեխաներին շրջանով նստել և ձևացնել, որ պիոներներն են նստած խառույկի շուրջը: Երեխաների հետ երգեք “Pioneer Children Sang As They Walked” (*Children’s Songbook*, p. 214) կամ Երեխաների Խմբի մեկ այլ սիրելի երգ:

Երգն օգնում է մեզ հիշել Երկնային Հորը և Հիսուսին

Բացատրեք, որ եկեղեցում երգը հիշեցնում է մեզ Երկնային Հոր և Հիսուսի մասին: Խնդրեք երեխաներին փակել իրենց աչքերը և ձևացնել, իբր լսում են հաղորդության ժողովից առաջ հնչող երաժշտությունը:

- Ինչպե՞ս կարող է երաժշտությունն օգնել ձեզ ակնածալից լինել եկեղեցում:

Բացատրեք, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են լսել մեր երգը: Բարձրաձայն կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 25.12-ի առաջին երկու մասերը (մինչև աղոթք է ինձ համար): Բացատրեք, որ եկեղեցու երգերը երգելը նման է առ Երկնային Հայր աղոթքի: Մենք շնորհակալություն ենք հայտնում Երկնային Հորը մեզ տված օրհնությունների համար: Երկնային Հոր և Հիսուսի մասին երգեր երգելը մեզ հիշեցնում է, որ նրանք սիրում են մեզ և ցանկանում են մեզ օգնել: Բացատրեք, որ երգերը, որ մենք երգում ենք հաղորդության ժողովին, կոչվում են օրհներգեր:

- Ինչո՞ւ ենք մենք եկեղեցում երգեր և օրհներգեր երգում:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-69՝ Հարեդացիների բեռնանավերը, և պատմեք խոստացված երկիր Հարեդացիների գալու պատմությունը, ինչպես տրված է Եթեր 6.2–12-ում: Բացատրեք, որ Հարեդացիները երգերով էին գովաբանում Երկնային Հորը և Հիսուսին, երբ նրանք գտնվում էին իրենց բեռնանավերի, կամ նավերի մեջ:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին Հարեդացիները երգեր երգում իրենց ծովային ճամփորդության ընթացքում:
- Ձեր կարծիքով, ինչպե՞ս էին Հարեդացիներն իրենց զգում, երբ քամին ու ալիքները հարվածում էին իրենց բեռնանավերին:
- Ինչպե՞ս էր երգն օգնում նրանց, երբ նրանք վախենում էին:
- Երբևէ երգե՞լ եք, երբ վախեցել եք: Ինչպե՞ս է այն օգնել ձեզ:

Վկայություն

Պատմեք այն ժամանակի մասին, երբ երգն ուրախություն է պարգևել ձեզ: Հիշեցրեք երեխաներին, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են լսել իրենց՝ լավ երգեր երգելիս: Երբ նրանք երգում են, կարող են երջանիկ լինել և հիշել, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են իրենց:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երգեք “Fun to Do” (*Children’s Songbook*, p. 253), “Sing a Song” (*Children’s Songbook*, p. 253), կամ “I Think the World Is Glorious” (*Children’s Songbook*, p. 230):
2. Եթե դասարանը փոքր է, թող յուրաքանչյուր երեխա ընտրի իր սիրելի երգը, և ապա դասարանով միասին երգեք այդ երգերը:
3. Թղթե բաժակներից պատրաստեք թափահարելու գործիքներ, որ երեխաները օգտագործեն ռիթմիկ ձայներ ստանալու համար: Մի բուռ բրինձ կամ ավազ լցրեք թղթե բաժակի մեջ, և կպչուն ժապավենով երկրորդ բաժակը ամրացրեք առաջին բաժակին այնպես, որպեսզի բրինձը կամ ավազը չթափվի միջից: Մանկական երգ երգեք, իսկ երեխաները թող գործածեն իրենց բաժակները:

Դուք նաև կարող եք այլ առարկաներ բերել որպես ռիթմիկ գործիքներ օգտագործելու համար, օրինակ՝ զանգեր, բութ փայտիկներ կամ փայտե բլոկներ իրար հարվածելու համար:

4. Միացրեք երգեր *Children's Songbook* աուդիոերիզներից (52505 կամ 52428) կամ կոմպակտ սկավառակներից (50505 կամ 50428), և խնդրեք երեխաներին ձայնակցել այդ երգերի հետ կամ շարժվել այդ երաժշտության ներքո:

5. Ձեր խոսքերով պատմեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Եկեղեցու այլ ղեկավարների Քարթեջի բանտում գտնվելու պատմությունը: Զարակամ մարդիկ նրանց բանտ էին գցել, թեպետ նրանք ոչ մի վատ բան չէին արել: Մարգարեն գիտեր, որ իր կյանքը վտանգված է, և նա շատ տխուր էր: Նա խնդրեց իր ընկեր Ջոն Թեյլորին իր համար երգել: Ջոնը նույնպես տխուր էր, և նա ասաց Ջոզեֆին, որ ինքը երգելու տրամադրություն չունի, սակայն Ջոզեֆը նրան քաջալերեց: Երբ Ջոնը երգեց Հիսուսի մասին, բանտում բոլորն իրենց ավելի լավ զգացին: Երգը նրանց հիշեցրեց, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են իրենց: Նրանք ուժ ու քաջություն ստացան:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երեխաների հետ երգեք նրանց սիրելի երգերից: Խնդրեք երեխաներին երգելիս հանգիստ ծափ տալ: Երեխաների հետ խոսեք, թե ինչպես է երաժշտությունը իրենց ուրախություն պարգևում:

2. Պատրաստեք տարբեր տեսակի երաժշտությունների ձայնագրություններ, որպեսզի երեխաները լսեն: Հավաստիացեք, որ երաժշտությունը համապատասխանում է Կիրակի օրվան: Կարող եք օգտագործել այս ձեռնարկի հետ եկող աուդիոերիզների ընտրանիներից:

3. Ասեք երեխաներին, որ Երկնային Հայրը մեզ տվել է տարբեր տեսակի երգեր: Որոշ երգեր ստեղծում են մարդիկ, իսկ որոշ երգեր էլ ստեղծում են մեր շրջապատող աշխարհի երևույթները: Նշեք բնության մեջ մի քանի երևույթներ, որ երաժշտական ձայներ են աաջացնում, օրինակ՝ քամին, անձրևը, թռչունները, մեղուները և ամպրոպը: Խնդրեք երեխաներին կրկնօրինակել յուրաքանչյուր ձայնը:

Դաս
40

Հաղորդությունն օգնում է ինձ Հիսուսի մասին մտածել

ՆՊԱՏԱԿ

Խրախուսել յուրաքանչյուր երեխայի հաղորդության ժամանակ Հիսուս Քրիստոսի մասին մտածել:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ԻԲ.19–20 և 3 Նեփի 18.1–11: Տես նաև Ավետարանի Սկզբունքներ (31110), գլուխ 23:
2. Ձեր Երեխաների Խմբի նախագահի թույլտվությամբ, խնդրեք եպիսկոպոսին կազմակերպել, որ դասի սկզբում քահանաների քվորումի մի անդամ մի քանի րոպեով գա ձեր դասարան: Քահանաների քվորումի անդամը պետք է պատրաստվի երեխաներին պատմել հաղորդությունը սպասավորելու իր պարտականությունների և այս սուրբ արարողության վերաբերյալ իր զգացումների մասին:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ և Մորմոնի Գիրք:
   բ. Նկարներ Հիսուսի կյանքից, օրինակ՝ նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 201, 62495), նկար 1-17՝ Պատանի Հիսուսը Տաճարում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 205, 62500), նկար 1-19՝ Քրիստոսը մանուկների հետ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 216, 62467), նկար 1-43՝ Հիսուսը բուժում է կույրին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 213, 62145), և այլ նկարներ, որ կցանկանայիք օգտագործել:
   գ. Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240, 62572), Նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը (62021), նկար 1-44՝ Հիսուսը ուսուցանում է արևմտյան կիսագնդում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 316, 62380), նկար 1-70՝ Վերջին Ընթրիքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 225, 62174):
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Ցույց տվեք նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը: Ասեք երեխաներին, որ կիրակնօրյա ժողովը, որի ժամանակ մենք սովորաբար հավաքվում ենք ընտանիքներով, կոչվում է հաղորդության ժողով:

- Ինչո՞ւ ենք այս ժողովն անվանում հաղորդության ժողով:

Քահանայության քվորումի անդամին ներկայացրեք երեխաներին: Խնդրեք նրան պատմել հաղորդության վերաբերյալ Ահարոնյան Քահանայության պարտականությունների մասին: Թող նա կիսվի, թե ինչպես է վերաբերվում այս սուրբ արարողու-

թյան մեջ ունեցած իր դերին: Շնորհակալություն հայտնեք նրան գալու համար, և նա կարող է վերադառնալ իր քվորումի ժողովին կամ Կիրակնօրյա դպրոցի դասին:

Հիսուսը մեզ տվեց հաղորդությունը, որ օգնի մեզ հիշել Իրեն

Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը: Հիշեցրեք երեխաներին, որ Հիսուսը Երկնային Հոր որդին է: Որովհետև Հիսուսը մեզ շատ է սիրում, նա եկավ երկիր մեր Փրկիչը լինելու համար: Նա բժշկեց հիվանդներին, ուսուցանեց ավետարանը և ցույց տվեք ճիշտ ապրելակերպը: Այնուհետև նա մահացավ մեզ համար:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-70՝ Վերջին Ընթրիքը: Պատմեք Վերջին Ընթրիքի պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս ԻԲ.19–20: Աստվածաշնչից բարձրաձայն կարդացեք 19-րդ հատվածի վերջին մասը. «Այս արեք իմ հիշատակի համար»: Բացատրեք, որ Հիսուսն ասաց իր Առաքյալներին, որ ամեն կիրակի հավաքվեն և հաղորդությունն ընդունելով իրեն հիշեն:

Ցույց տվեք նկար 1-44՝ Հիսուսն ուսուցանում է արևմտյան կիսագնդում: Բացատրեք, որ երբ Հիսուսն այցելեց Նեփիացիներին, նաև նրանց պատվիրեց ամեն կիրակի միասին հավաքվել և հաղորդությունն ընդունելով իրեն հիշել (տես 3 Նեփի 18.1–11):

- Հաղորդությունն ընդունելիս ո՞ւմ մասին պետք է մտածեին Առաքյալները:
- Հաղորդությունն ընդունելիս ո՞ւմ մասին պետք է մտածեին Նեփիացիները:
- Հաղորդությունն ընդունելիս ո՞ւմ մասին պետք է մտածենք մենք:
- Ե՞րբ ենք մենք հաղորդություն ընդունում:

Վարժություն

Երեխաների հետ կատարեք հետևյալ ոտանավորը.

Ես ուրախ եմ, որ այսօր եկեղեցի եմ եկել

Ես ուրախ եմ, որ այսօր եկեղեցի եմ եկել (ձեռքերը միացրեք մատերն իրար մեջ հագցնելով և ցուցամատերը միացնելով իրար՝ ներկայացրեք եկեղեցու սրածողը):
Ես սիրում եմ լսել (ձեռքի ափը կլորացրած դրեք ականջի մոտ)
Եվ աղոթել (ձեռքերը ծալեք և գլուխը խոնարհեք):
Ես Հիսուսի մասին եմ սովորում (մատով վերև ցույց տվեք),
Հիսուսի և նրա սիրո մասին մտածում (գրկեք ինքներդ ձեզ):

Պատմություններ

Հերթով ցույց տվեք Հիսուս կյանքի դրվագներից նկարներ: Եթե երեխաները ճանաչում են նկարը, թող պատմեն այնտեղ ներկայացված պատմությունը: Եթե չգիտեն պատմությունը, հակիրճ պատմեք այն: Թող որքան հնարավոր է շատ երեխաներ մասնակցեն պատմություններ պատմելուն:

- Հաղորդության ժամանակ Հիսուսի մասին ի՞նչ պատմություններ կարող եք հիշել:

Թող երեխաները Հիսուսի մասին այլ պատմություններ պատմեն, որոնք կարող են հիշել հաղորդության ժամանակ: Եթե չեն կարողանում որևէ պատմություն հիշել, նրանց Հիսուսի մասին մեկ կամ երկու պատմություն պատմեք, որ դուք սովորաբար մտածում եք հաղորդության ժամանակ:

Մենք կարող ենք ակնածալից լինել հաղորդության ժամանակ

Վարժություն

Օգնեք երեխաներին արտասանել հետևյալ ոտանավորը՝ օգտագործելով նկարագրված շարժումները.

Ձեռքերս ծալում եմ (ձեռքերը ծալեք),
Գլուխս խոնարհում եմ (գլուխը խոնարհեք),
Հանգիստ ու հանդարտ նստում եմ (շշնջացեք այս տողը)։
Երբ հաղորդությունն է օրհնվում,
Ես Քեզ եմ հիշում։

Բացատրեք, որ քանի որ Հիսուսը տվել է հաղորդությունը, որ օգնի մեզ հիշել իրեն, կարևոր է, որ Հիսուսի մասին մտածենք և օգնենք մյուսներին նս նրա մասին մտածել։ Մենք կարող ենք դա անել հաղորդության ընթացքում ակնածալից լինելով։

Վարժություն

Շշնջացեք հետևյալ արտահայտություններից մեկը մի երեխայի ականջին, և թող նա բարձրաձայն կրկնի այն դասարանի համար։ Շարունակեք նույնկերպ մյուս երեխաների հետ՝ շշնջալով մյուս արտահայտությունները։

1. Մենք պատրաստվում ենք հաղորդությանը՝ երգելով մի ակնածալից օրհներգ, որը հիշեցնում է մեզ Հիսուսի մասին։
2. Մենք ուշադիր լսում ենք հացի օրհնության աղոթքը։
3. Երբ հացը բաժանվում է մեզ, մենք միայն մեկ կտոր ենք վերցնում։
4. Մենք ուշադիր լսում ենք ջրի օրհնության աղոթքը։
5. Մենք ակնածանքով ենք խմում ջուրը և բաժակները ետ դնում սկուտեղի մեջ։
6. Մենք երբեք չենք խաղում հացի կամ հաղորդության բաժակների հետ։

Բացատրեք, որ այս ամենին հետևելը ցույց է տալիս, որ մենք ակնածալից ենք հաղորդությունն ընդունելիս։

- Ինչպե՞ս կարող ենք ակնածալից լինել հաղորդության ժամանակ։

Վարժություն

Խնդրեք երեխաներին ուշադիր լսել հետևյալ պահելաձևերը։ Ասեք նրանց, որ կանգնեն, եթե նշում եք մի բան, ինչ նրանք պետք է անեն կամ մտածեն հաղորդության ընթացքում։ Ասեք նրանց, որ նստեն, եթե դուք նշում եք մի բան, ինչ նրանք չպետք է անեն կամ մտածեն հաղորդության ընթացքում։ Օգտագործեք հետևյալ օրինակները կամ ձեզանից ասեք որոշ պահելաձևեր.

- Ուշադիր լսում ենք, երբ հաղորդության աղոթքներն են ասվում։
- Հիշում ենք, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են մեզ։
- Մտածում եք պիկնիկ գնալու մասին։
- Հիշում ենք, որ Հիսուսն առողջացրեց հիվանդներին։
- Խոսում եք ձեր եղբոր կամ քրոջ հետ։
- Օրորվում եք։
- Մտածում եք, որ Հիսուսն օրհնեց երեխաներին։

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը, թե դուք որքան երախտապարտ եք հաղորդության համար, որն օգնում է մեզ հիշել Հիսուս Քրիստոսին և մեզ համար նրա կատարածը։ Բացատրեք, որ հատկապես երախտապարտ եք, երբ բոլորն ակնածալից են

հաղորդության ժամանակ, և դուք կարողանում եք կենտրոնանալ Հիսուսի մասին մտածելու վրա:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երգեք կամ կարդացեք “Before I Take the Sacrament” (*Children’s Songbook*, p. 73) կամ “To Think about Jesus” (*Children’s Songbook*, p. 71):
2. Թող յուրաքանչյուր երեխա նկարի իրեն հաղորդությունն ընդունելիս: Յուրաքանչյուր նկարի վերևում գրեք՝ Հաղորդությունն ընդունելիս ես կարող եմ մտածել Հիսուսի մասին:
3. Դասարան բերեք հաղորդության հացի և ջրի դատարկ սկուտեղներ: Թող երեխաները նայեն և ձեռքի մեջ բռնեն այդ սկուտեղները: Խնդրեք երեխաներին նկարագրել, թե հաղորդության ժողովին ինչ է տեղի ունենում հաղորդությունը սպասավորելիս:
4. Խնդրեք երեխաներին դերերով ներկայացնել Հիսուսի կյանքից իրենց սիրելի պատմությունները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Պարզ ձևով բացատրեք հաղորդությունը: Ցույց տվեք Հիսուսի նկարը և ասեք երեխաներին, որ կիրակի օրը կա մի պահ, երբ մենք հատուկ ձևով ենք հիշում Հիսուսին: Դա այն ժամանակ է, երբ հաղորդության ժողովին մենք հացի փոքր կտոր ենք ուտում և փոքր բաժակով ջուր խմում: Բացատրեք, որ հաղորդության ընթացքում մենք հիշում ենք, թե որքան է Հիսուսը սիրում մեզ և մտածում ենք, թե որքան շատ բաներ է նա մեզ համար արել, որպեսզի օգնի մեզ երջանիկ լինել:
2. Երգեք կամ կարդացեք “Tell Me the Stories of Jesus” (*Children’s Songbook*, p. 57) կամ “Jesus Wants Me for a Sunbeam” (*Children’s Songbook*, p. 60):
3. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, մինչ դուք կարտասանեք խոսքերը.

   Արարում

   Հիսուսն ասաց՝ թող արևը շողա (ձեռքերով մեծ շրջան կազմեք գլխավերևում),
   Թող անձրև գա (ձեռքերն իջեցրեք մատերը շարժելով),
   Թող ծաղիկները ծաղկեն (ձեռքի ափերը կլորացրեք՝ ափերը վերև):
   Թող թռչունները երգեն (մատերը բացեք և փակեք թռչնի կտուցի նման),
   Եվ այդպես եղավ (ծալեք ձեռքերը):

   (Johnie B. Wood, in Sing, Look, Do, Action Songs for Children, ed. Dorothy M. Peterson [Cincinnati: Standard Publishing Co., 1965].)

   Հիշեցրեք երեխաներին, որ Հիսուսը շատ բաներ է տվել, որ մեզ երջանկացնի: Հաղորդության ժամանակ մենք կարող ենք ցույց տալ մեր երախտագիտությունը Հիսուսի մասին մտածելով:

Դաս 41

Երկնային Հայրը և Հիսուսը մեզ տվել են սուրբ գրություններ

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ սուրբ գրությունները պարունակում են Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի խոսքերը, և ուսումնասիրելով սուրբ գրությունները մենք կարող ենք սովորել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ԻԲ.19–20, 3 Նեփի 18.21, Վարդապետություն և Ուխտեր 59.6, և Մովսես 7.11: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 10:
2. Պատրաստվեք պատմել սուրբ գրություններից ձեր սիրելի պատմություններից մեկը, հնարավորության դեպքում օգտագործելով մի նկար:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Սուրբ գրություններ (Աստվածաշունչ, Մորմոնի Գիրք, Վարդապետություն և Ուխտեր, և Թանկագին Մարգարիտ):
   բ. Կտոր, որ ծածկեք սուրբ գրությունները կամ թուղթ, որ փաթաթեք սուրբ գրքերը:
   գ. Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240, 62572), նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 208, 62133), նկար 1-44՝ Հիսուսը ուսուցանում է արևմտյան կիսագնդում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 316, 62380), նկար 1-70՝ Վերջին Ընթրիքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 225, 62174):
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը, հակառակ կողմով դրեք ձեր ծնկներին: Ասեք երեթով: Ծածկված սուրբ գրությունները դրեք սեղանի կամ աթոռի վրա, որտեղ երեխաները կարող են տեսնել դրանք: Բացատրեք, որ դուք ծածկել եք մի բան, որը կարևոր է ձեր և բոլորի համար: Թող երեխաները գուշակեն, թե ինչ եք ծածկել:

Մի քանի գուշակություններից հետո, թող երեխաները շոշափեն կտորի կամ թղթի վրայից: Եթե որևէ մեկը կասի, որ դա գիրք է կամ գրքեր են, ասեք երեխաներին, որ ճիշտ է, և բացեք գրքերը: Ասեք երեխաներին, որ այս գրքերը կոչվում են սուրբ գրություններ: Խնդրեք երեխաներին մի քանի անգամ արտասանել *սուրբ գրություններ*:

Սուրբ գրությունները սուրբ գրքեր են

Բացատրեք, որ սուրբ գրությունները կարևոր գրքեր են և տարբերվում են մյուս գրքերից: Դրանք սուրբ գրքեր են: Հիշեցրեք երեխաներին, որ այն, ինչ սուրբ է, օգնում է մեզ մտածել Երկնային Հոր և Հիսուսի մասին: Բացատրեք, որ սուրբ գրությունները պատմում են Երկնային Հոր և Հիսուսի մասին և, թե որքան շատ են նրանք մեզ սիրում: Դրանք մեզ ասում են, թե ինչ են Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում, որ մենք անենք, որպեսզի երջանիկ լինենք:

Հերթով ցույց տվեք չորս ստանդարտ աշխատությունները և ասեք անունները: Եթե դրանցից մի քանիսը միացած են մեկ գրքում, ցույց տվեք գրքի կազմը, որտեղ նշված են վերնագրերը, կամ բացեք յուրաքանչյուր ստանդարտ աշխատության տիտղոսաթերթը:

Վարժություն

Ասեք երեխաներին, որ մենք պետք է հոգատար վերաբերվենք սուրբ գրություններին և զգուշորեն թերթենք թերթերը: Խնդրեք երեխաներին հերթով գալ դասարանի կենտրոն և ցույց տալ, թե որքան զգույշ կարող են վերաբերվել սուրբ գրություններին և հանգիստ թերթել դրանք:

Բացատրեք, որ սուրբ գրությունները պարունակում են իրական պատմություններ: Դրանք օգնում են մեզ իմանալ, թե ինչ են Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում, որ մենք անենք: Սուրբ գրությունների պատմությունները կարող են օգնել մեզ մեր կյանքում:

Պատմություն

Երեխաներին պատմեք սուրբ գրություններից ձեր սիրելի պատմություններից մեկը, հնարավորության դեպքում օգտագործելով մի նկար: Շեշտեք, թե սուրբ գրքյան այդ պատմության մեջ նշված ուսմունքները ինչպես են օգնել ձեզ: Ասեք, թե որքան շատ եք սիրում կարդալ սուրբ գրությունների պատմությունները:

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Tell Me the Stories of Jesus” երգը (*Children’s Songbook,* p. 57): Հիշեցրեք երեխաներին, որ սուրբ գրքյան պատմությունները, որ իրենք սովորում են Երեխաների Խմբում, իրական պատմություններ են:

Պատմիր Հիսուսի մասին իմ սիրելի պատմությունները,
Այն, ինչ կուզենայի նա կպատմեր, եթե այստեղ լիներ:
Ճամփեզրի տեսարաններ, ծովի պատմություններ,
Պատմիր ինձ Հիսուսի մասին պատմություններ:

Սուրբ գրությունները պարունակում են Հիսուսի ուսմունքները

Բացատրեք, որ որոշ սուրբ գրություններ գրվել են մարդկաց կողմից, ովքեր ճանաչել են Հիսուսին և ապրել նրա ժամանակներում: Նրանք տեսել են Հիսուսին և լսել նրան՝ ուսուցանելիս: Այդ մարդիկ գրել են սուրբ գրությունները, որպեսզի բոլորը սովորեն Հիսուսի և նրա ուսմունքների մասին, և իմանան, որ նա Երկնային Հոր որդին էր:

Ցույց տվեք նկար 1-70՝ Վերջին Ընթրիքը: Թող երեխաները պատմեն, թե ինչ գիտեն այս նկարի մասին: Ցույց տվեք Աստվածաշունչը և խնդրեք երեխաներին կրկնել այս գրքի անունը: Բացեք Աստվածաշունչը՝ Ղուկաս ԻԲ: Բացատրեք, որ

Հիսուսն ուսուցանում է Աստվածաշնչում, որ մենք պետք է ընդունենք հաղորդությունը, որ հիշենք Նրան: Հիսուսը վերցրեց հացը, օրհնեց այն և տվեց իր աշակերտներին (օգնականներին): Նա վերցրեց բաժակը և տվեց Նրանց՝ խմելու: Կարդացեք 19-րդ հատվածի մի մասը, որտեղ Հիսուսն ասաց. «Այս արեք իմ հիշատակի համար»: Նշեք, որ սրանք Հիսուսի խոսքերն են:

Ցույց տվեք նկար 1-44՝ Հիսուսն ուսուցանում է արևմտյան կիսագնդում, և հիշեցրեք երեխաներին, թե ինչ է տեղի ունենում այս նկարում: Ցույց տվեք Մորմոնի Գիրքը և խնդրեք երեխաներին մի քանի անգամ կրկնել այդ գրքի անունը: Բացեք Մորմոնի Գիրքը՝ 3 Նեփի 18: Բացատրեք, որ Հիսուսը շատ բաներ էր սովորեցնում մարդկանց: Կարդացեք 21-րդ հատվածի մի մասը, որտեղ Հիսուսն ասում է՝. «Աղոթեք ձեր ընտանիքներում»:

- Ի՞նչ է Հիսուսը պատվիրում մեզ, որ անենք մեր ընտանիքներում:

Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը: Ցույց տվեք Վարդապետություն և Ուխտերը, և խնդրեք երեխաներին կրկնել այդ սուրբ գրության անունը: Բացեք Վարդապետություն և Ուխտեր, բաժին 59: Բացատրեք, որ Հիսուսն ուսուցանում էր, որ մենք պետք է սիրենք բոլորին: Կարդացեք 6-րդ հատվածի մի մասը, որտեղ Հիսուսն ասում է. «Սիրիր քո մերձավորին»:

- Ի՞նչ պատվիրեց Հիսուսն անել:
- Ո՞վ է ձեր մերձավորը:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ բարի եք և սեր եք ցուցաբերում մյուսների հանդեպ:

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ "Jesus Said Love Everyone" (*Children's Songbook,* p. 61), օգտագործելով ստորև նշված շարժումները.

Հիսուսն ասաց՝ բոլորին սիրիր *(ձեռքերը լայն տարածեք),*
Նրանց հանդեպ բարի եղիր *(գլուխը վերև և ներքև շարժեք):*
Երբ սիրտդ սիրով լի է լինում *(ձեռքերը դրեք սրտի վրա)*,
Մյուսներն էլ քեզ են սիրում *(գրկեք ինքներդ ձեզ):*

Ցույց տվեք նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին: Թող երեխաները պատմեն այս նկարի մասին: Շեշտեք, որ Հիսուսը մկրտվեց, և նա ցանկանում է, որ ամեն ոք մկրտվի: Ցույց տվեք Թանկագին Մարգարիտը և խնդրեք երեխաներին կրկնել այս գրքի անունը: Բացեք Թանկագին Մարգարիտը, Մովսես 7 և պատմեք, թե ինչպես Հիսուսն ուսուցանեց Ենովք անունով մարդուն, որ գնա մարդկանց մեջ և մկրտի Նրանց: Կարդացեք 11-րդ հատվածի մի մասը, որտեղ Հիսուսն ասում է. «Մկրտիր անունով Հոր, և Որդու ....և Սուրբ Հոգու»:

Ցույց տվեք չորս ստանդարտ աշխատությունները: Շեշտեք, որ դրանցում Հիսուսի ուսմունքներն են:

- Ի՞նչ են այս գրքերը:
- Ո՞ւմ ուսմունքներն են գրված սուրբ գրություններում:
- Ինչո՞ւ են գրվել սուրբ գրությունները:
- Ի՞նչ եք զգում իմանալով, որ Երկնային Հայրը և Հիսուսը սիրում են մեզ և մեզ են տվել սուրբ գրությունները:

Վկայություն

Ձեր երախտագիտությունն ու սերը հայտնեք սուրբ գրությունների համար: Բերեք վկայություն, որ սուրբ գրությունները Երկնային Հոր և Հիսուսի խոսքերն են, և ուսումնասիրելով դրանք մենք կարող ենք սովորել, թե ինչ են Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում, որ մենք անենք:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Ծալեք թղթի կտորները ստանալով չորս ստանդարտ աշխատությունների կազմերի փոքր կրկնօրինակները՝ յուրաքանչյուր երեխայի համար մեկ հավաքածու: Կազմերի վրա տպատառ գրեք այդ չորս ստանդարտ աշխատությունների անունները: Դակիչով ծակ բացեք յուրաքանչյուր կազմի անկյունում և թելով իրար միացրեք յուրաքանչյուր երեխայի չորս սուրբ գրությունների կազմերը:

   Յուրաքանչյուր կազմի ներսում գրեք այս դասի ընթացքում ուսուցանված սուրբ գրությունը.

   Աստվածաշունչ՝ *Հիսուսը մեզ ուսուցանեց հաղորդության մասին (Ղուկաս ԻԲ.19):*
   Մորմոնի Գիրք՝ *Հիսուսը մեզ ուսուցանեց՝ աղոթել մեր ընտանիքներում (3 Նեփի 18.21):*
   Վարդապետություն և Ուխտեր՝ *Հիսուսը մեզ ուսուցանեց՝ սիրել մեր մերձավորին (ՎևՈւ 59.6):*
   Թանկագին Մարգարիտ՝ *Հիսուսը մեզ ուսուցանեց, որ պետք է մկրտվել (Մովսես 7.11):*

   Բաժանեք այդ կազմերի հավաքածուները երեխաներին, որ տուն տանեն: Բաժանելիս կրկնեք դասի ժամանակ քննարկված Հիսուսի ուսմունքները:

2. Օգնեք երեխաներին մտապահել հավատո ութերորդ հանգանակի մի մասը. «Մենք հավատում ենք, որ Աստվածաշունչը Աստծո խոսքն է» և «մենք հավատում ենք նաև, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է»:

3. Ձեռք բերեք Մորմոնի Գրքի պատմությունների նկարներ այն նկարներից, որոնք գալիս են այս ձեռնարկի հետ կամ ձեր հավաքատան գրադարանից: Ցույց տվեք յուրաքանչյուր նկարը և հակիրճ քննարկեք այն ներկայացնող պատմությունը: Հիշեցրեք երեխաներին, որ սուրբ գրությունները պարունակում են իրական պատմություններ: Խնդրեք երեխաներին երգել “The Book of Mormon Stories” (*Children’s Songbook,* p. 118) երգը:

4. Երեխաներին պատմեք, թե ձեր կյանքում երբ են սուրբ գրությունները հատուկ նշանակություն ունեցել: Բացատրեք, թե ինչպես են սուրբ գրություններն օգնել ձեզ և ինչպես է դա ուրախություն պարգևել ձեզ:

5. Գտեք կարճ սուրբ գրություններ, որոնք պարունակում են Հիսուսի խոսքերը, օրինակ՝ դասի մեջ տրված սուրբ գրությունները: Արտասանեք յուրաքանչյուր սուրբ գրությունը, սկսելով՝ *Հիսուսն ասաց* խոսքերով: Օրինակ, «Հիսուսն ասաց՝ ինձ հետևիր»: Լոբով տոպրակը կամ փափուկ առարկան նետեք կամ տվեք մի երեխայի և թող այդ երեխան ձեր ետևից կրկնի այդ սուրբ գրությունը և ապա նետի լոբով տոպրակը ետ: Լոբով տոպրակը շարունակեք նետել երեխաներին, մինչև որ բոլոր երեխաները կմասնակցեն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երգեք կամ կարդացեք “Book of Mormon Stories” (*Children’s Songbook,* p. 118), մինչ դուք ձեռքում կպահեք Մորմոնի Գիրքը կամ “Tell Me the Stories of Jesus” (*Children’s Songbook,* p. 57) ձեռքում պահելով Աստվածաշունչը:

2. Հակիրճ պատմեք տաս բորոտների պատմությունը (տես Ղուկաս ժէ.11–19), և ապա երեխաների հետ կատարեք հետևյալ մատերով ոտանավորը.

   Տաս մարդ հիվանդ էր *(ցույց տվեք տաս մատերը),*
   Մի օր Քրիստոսը նրանց բժշկեց:
   Նա պարզապես խոսեց և նրանց ցավն բուժվեց *(ձեռքով թափահարեք):*
   Արդյոք անսովոր ու տարօրինակ չէ՞ *(մատը դրեք քունքին և զարմացած տեսք ընդունեք)*
   Որ միայն մեկը նրանցից *(ցույց տվեք մեկ մատը)*
   Սրան շնորհակալություն ասեց
   Եվ Աստծուն փառաբանեց *(երկու ձեռքերը բարձրացրեք վեր):*

   (Adapted from Jean Shannon in *Bible Story Finger Plays և Action Rhymes* [Cincinnati: Standard Publishing Co., 1964], p. 27.)

   Ցույց տվեք երեխաներին, թե Աստվածաշնչում որտեղ է տրված այս պատմությունը:

3. Հարցրեք երեխաներին, թե որոնք են իրենց սիրելի սուրբ գրությունների պատմությունները: Եթե կարող եք, նրանց ցույց տվեք, թե սուրբ գրություններում որտեղ են գտնվում այդ պատմությունները:

Ես պատկանում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն

Դաս
42

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ ինքը պատկանում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մարկոս Ա.9–11, Վարդապետություն և Ուխտեր 115.4, և Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.5, 10–19: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 17:
2. Մի մեծ թղթի կտոր կամ ստվարաթուղթ կտրեք բաժանելով մեծ մասեր կազմող պատկեր-հանելուկի, որը կունենա այնքան մասեր, որքան մարդ կա ձեր դասարանում (երեխաներ և ուսուցիչ): Պատկեր-հանելուկի յուրաքանչյուր մասի վրա գրեք դասարանի մեկ անդամի անունը:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Սուրբ գրությունները:
   բ. Նկար 1-4՝ Առաջին տեսիլքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 403, 62470), Նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը (62021), նկար 1-12՝ Հաստատվող աղջիկը (62020), նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 208, 62133), նկար 1-39՝ Երեխային օրհնելը, նկար 1-40՝ Հիվանդներին սպասավորելը (62342), մեր օրերի ապրող մարգարեի նկար:
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը, հակառակ կողմով դրեք ձեր ծնկներին: Ասեք երեխաներին, որ այն պատկանում է պատկեր-հանելուկին: Երեխաներին բաժանեք մյուս մասերը և օգնեք հավաքել ողջ պատկերը: Մատնանշեք պատկեր-հանելուկի յուրաքանչյուր անունը և կարդացեք երեխաների համար: Բացատրեք, որ ճիշտ ինչպես յուրաքանչյուր մասն է պատկանում ողջ պատկեր-հանելուկին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրը պատկանում է այս դասարանին: Բացատրեք, որ պատկանել նշանակում է մաս կազմել:

- Ուրիշ ի՞նչ խմբի եք դուք պատկանում:

Բացատրեք, որ մենք պատկանում ենք այլ խմբերի, օրինակ՝ ընտանիքի կամ հարևանության: Մենք նաև պատկանում ենք Հիսուսի եկեղեցուն:

Ցույց տվեք նկար 1-39՝ Երեխային օրհնելը:

- Ի՞նչ է կատարվում այս նկարում:

Երեխաներին բացատրեք, որ նրանցից շատերը նորածին ժամանակ ստացել են անուն և օրհնություն: Այդ անվանակոչության և օրհնության շնորհիվ նրանց անունները գրանցվել են Եկեղեցու գրառումներում, և նրանք կարող են ասել. «Ես պատկանում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն»:

Օգնեք երեխաներին մի քանի անգամ ասել «Ես պատկանում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն»:

Վարժություն

Երեխաների հետ կատարեք «Ես ուրախ եմ, որ այսօր եկեղեցի եմ եկել» ոտանավորը.

Ես ուրախ եմ, որ այսօր եկեղեցի եմ եկել *(ձեռքերը միացրեք մատերն իրար մեջ հագցնելով և ցուցամատերը միացնելով իրար ներկայացրեք եկեղեցու սրահը):*
Ես սիրում եմ լսել *(ձեռքի ափը կլորացրած դրեք ականջի մոտ)*
Եվ աղոթել *(ձեռքերը ծալեք և գլուխը խոնարհեք):*
Ես Հիսուսի մասին եմ սովորում *(մատով վերև ցույց տվեք),*
Հիսուսի և նրա սիրո մասին մտածում *(գրկեք ինքներդ ձեզ):*

Երեխաներին բացատրեք, որ մենք գալիս ենք Եկեղեցու մեր ժողովներին՝ ավելին սովորելու Հիսուսի մասին և այն, թե ինչ է նա ուզում, որ մենք անենք: Ասեք երեխաներին, որ այս դասին նրանք կսովորեն Հիսուսի եկեղեցու մաս կազմող մի քանի կարևոր բաների մասին:

Հիսուսի Եկեղեցին Քահանայություն ունի

Ցույց տվեք նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը, նկար 1-12՝ Հաստատվող աղջիկը, և նկար 1-40՝ Հիվանդներին սպասավորելը: Թող երեխաներն ասեն, թե ինչ է կատարվում յուրաքանչյուր նկարում: Բացատրեք, որ քահանայություն է անհրաժեշտ այս յուրաքանչյուր ծառայությունը կատարելու համար: Քահանայությունը զորություն է, որ Երկնային Հայրը և Հիսուսն ունեն: Նրանք տալիս են այդ զորությունը արդար մարդկանց, որպեսզի մարդիկ օգնեն կատարելու Երկնային Հոր և Հիսուսի գործը երկրի վրա: Յուրաքանչյուր նկարում ցույց տվեք քահանայություն կրողներին: Խնդրեք երեխաներին մի քանի անգամ ասել՝ *քահանայություն* բառը:

- Ո՞ւմ գիտեք, որ քահանայություն է կրում:

Օգնեք երեխաներին հասկանալ, որ մարդիկ, ովքեր քահանայություն են կրում, կարող են օրհնել և բաժանել հաղորդությունը, մկրտել, օրհնություններ տալ մարդկանց և այլ կարևոր բաներ անել: Կրկին ցույց տվեք նկար 1-39՝ Երեխային օրհնելը, և ասեք երեխաներին, որ նորածինները օրհնություն են ստանում քահանայություն կրող տղամարդկանց կողմից:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-18՝ Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին: Թող երեխաներն ասեն, թե ինչ են հիշում այս նկարի մասին: Հակիրճ վերանայեք պատմությունը, որը տրված է Մարկոս Ա.9–11-ում:

- Ո՞վ է մկրտում Հիսուսին: (Տես Մարկոս Ա.9:)
- Ի՞նչ զորություն պետք է ունենար Հովհաննեսը, որ մկրտեր Հիսուսին: (Քահանայություն:)

Բացատրեք, որ Հիսուսի եկեղեցուն պատկանելու համար կարևոր դեր ունի քահանայությունն կրողի կողմից մկրտվելը: Ասեք երեխաներին, որ երբ լրանա իրենց ութ տարին, կարող են մկրտվել դառնալով Հիսուսի եկեղեցու անդամ:

Հիսուսի Եկեղեցին մարգարե ունի

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-4՝ Առաջին տեսիլքը, և պատմեք Ջոզեֆ Սմիթի և Առաջին տեսիլքի պատմությունը, ինչպես տրված է Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.5, 10–19:

- Ո՞վ եկավ խոսելու Ջոզեֆ Սմիթի հետ պուրակում: (Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17:)

Բացատրեք, որ քանի որ Երկնային Հայրը և Հիսուսը խոսեցին Ջոզեֆ Սմիթի հետ, մենք Ջոզեֆ Սմիթին մարգարե ենք կոչում: Մարգարեն ասում է մեզ, թե ինչ են Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում, որ մենք իմանանք:

- Ի՞նչ է մարգարեն: (Մարդ, որը հատուկ կոչում ունի Երկնային Հոր և Հիսուսի հետ խոսելու և մեզ ասելու, թե ինչ են նրանք ցանկանում, որ մենք իմանանք:)

Ցույց տվեք մեր օրերի ապրող մարգարեի նկարը: Երեխաներին պատմեք նրա մասին: Բացատրեք, որ Հիսուսի եկեղեցին միշտ ունեցել է մարգարե, որ ուսուցանի մեզ, թե ինչ են Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում, որ մենք իմանանք և անենք:

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Follow the Prophet” (*Children’s Songbook,* p. 110) երգի կրկներգը: Բացատրեք, որ *մոլորվել* նշանակում է սխալ գործել: Խնդրեք մի երեխայի ցուցադրել մեր օրերի ապրող մարգարեի նկարը, մինչ դուք կերգեք:

Հետևիր մարգարեին, հետևիր մարգարեին, հետևիր մարգարեին, մի մոլորվիր:
Հետևիր մարգարեին, հետևիր մարգարեին, հետևիր մարգարեին, նա ճանապարհը գիտի:

Հիսուսի Եկեղեցին ունի սուրբ գրություններ

Բարձր պահեք սուրբ գրությունները:

- Ի՞նչ եմ ես պահում իմ ձեռքում:

Թող երեխաներն ասեն, թե ինչ գիտեն սուրբ գրությունների մասին: Հիշեցրեք երեխաներին, որ սուրբ գրությունները պարունակում են Երկնային Հոր և Հիսուսի ուսմունքները: Սուրբ գրությունները պարունակում են բազմաթիվ իրական պատմություններ Հիսուսի, մարգարեների և այլ մարդկանց մասին: Սուրբ գրությունները Հիսուսի եկեղեցու կարևոր մասն են:

Մենք պատկանում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն

- Ո՞ւմ եկեղեցուն ենք մենք պատկանում:
- Ի՞նչ է եկեղեցու անունը, որին մենք պատկանում ենք:

Երեխաների համար կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 115.4: Բացատրեք, որ այս անունը նշանակում է, որ սա Հիսուսի եկեղեցին է մեր ժամանակներում, որտեղ մենք ենք ապրում: Օգնեք երեխաներին հասկանալ, որ ողջ աշխարհում բազմաթիվ մարդիկ են պատկանում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն:

Կարող եք բացատրել, որ այսօր երկրի վրա կան այլ եկեղեցիներ, որոնք սովորեցնում են Հիսուսի մասին և մարդկանց ուսուցանում են ճիշտ ապրելակերպ, սակայն չունեն քահանայություն, կենդանի մարգարե կամ բոլոր սուրբ գրությունները:

Վարժություն

Խնդրեք կանգնեն բոլոր նրանք, ովքեր պատկանում են Հիսուսի եկեղեցուն: Հիշեցրեք երեխաներին, որ իրենք բոլորը պետք է կանգնեն: Խնդրեք երեխաներին կրկնել՝ «Ես պատկանում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն»:

Հակիրճ վերանայեք օգտագործելով նկարները և սուրբ գրությունները, որ քահանայությունը, ապրող մարգարեն և սուրբ գրությունները Հիսուսի եկեղեցու կարևոր մասերն են:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը ավետարանի ճշմարտացիության մասին: Օգնեք երեխաներին զգալ, թե որքան կարևոր է և հրաշալի, Հիսուսի ճշմարիտ եկեղեցուն պատկանելը:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեք կրծքանշան, որ տանը իր վրա կրի, որի վրա գրված է՝ *Ես պատկանում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն:* Թող երեխաները գունավորեն իրենց կրծքանշանները:

2. Երեխաների հետ կատարեք հետևյալ մատերով խաղը.

   Ահա Եկեղեցին

   Ահա եկեղեցին *(ձեռքերը միացրեք մատերն իրար մեջ հագցնելով)*,
   Եվ ահա սրածողը *(ցուցամատերը ձգեք՝ ցուցամատերի ծայրերը միացնելով իրար):*
   Դռները բացեք *(բացեք ձեռքերի ափերը՝ մատերը միասին պահելով)*
   Բոլոր մարդկանց տեսեք *(մատերը շարժեք):*
   Դռները փակեք և աղոթքը լսեք *(փակեք ձեռքերը մատերը ներսում, և ձեռքերը միասին մոտեցրեք մի ականջին):*
   Դռները բացեք և նրանք բոլորը կգնան *(բացեք ձեռքերը, մատերով «գնացեք»):*

3. Պատմեք եկեղեցի հաճախող մի երեխայի մասին, որը պատկանում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն: Ընդգրկեք, ինչ են անում ձեր դասարանի երեխաները եկեղեցում, օրինակ՝ իրենց ընտանիքների հետ նստում են հաղորդության ժողովին, հաղորդություն են ընդունում, ակնածանքով նստում են Երեխաների Խմբում, աղոթում և երգում են:

   Կարող եք նաև խնդրել երեխաներին մտածել հետևյալ մտքերի մասին նրանց տալով, օրինակ այսպիսի հարցեր՝ «Ի՞նչ պետք է անեն Եկեղեցուն պատկանող երեխաները Կիրակի օրը», «Ի՞նչ պետք է նրանք անեն հաղորդության ժողովին, Երեխաների Խմբում», «Ի՞նչ պետք է անեն կիրակի օրը տանը», «Ի՞նչ պետք

է անեն ընտանեկան երեկոյի ժամանակ», «Ինչպե՞ս պետք է նրանք վերաբերվեն իրենց ընտանիքներին, ընկերներին»: Օգնեք երեխաներին հասկանալ, թե ինչ պետք է անեն Հիսուսի եկեղեցուն պատկանող տղաներն ու աղջիկները:

4. Խնդրեք երեխաներին մտածել, թե ինչ տարբեր խմբերի են նրանք պատկանում, օրինակ՝ ընտանիքի կամ Երեխաների Խմբի դասարանի: Թող երեխաներն ասեն, թե ինչն է իրենց դուր գալիս յուրաքանչյուր խմբին պատկանելու մեջ: Ավարտեք այս քննարկումը ամփոփելով, թե ինչ է իրենց (և ձեզ) դուր գալիս Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն պատկանելու մեջ:

5. Երգեք կամ կարդացեք “The Church of Jesus Christ” (*Children’s Songbook,* p. 77):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Դասից առաջ, առանձին թղթերի վրա նկարեք պարզ նկարներ՝ աչք, ձեռք, ականջ և բերան:

   Ասեք երեխաներին, որ մենք շատ բաներ կարող ենք անել եկեղեցում: (Կախեք նկարը, որի վրա աչք է նկարված:) Մենք կարող ենք կարդալ սուրբ գրությունների պատմությունները: (Կախեք նկարը, որի վրա ձեռք է նկարված:) Մենք կարող ենք սիրալիր խաղալ մեր ընկերների հետ: (Կախեք նկարը, որի վրա ականջ է նկարված:) Մենք կարող ենք ուշադիր լսել մեր ուսուցիչներին: (Կախեք նկարը, որի վրա բերան է նկարված:) Մենք կարող ենք մեղմորեն խոսել, երբ եկեղեցում ենք: Թող յուրաքանչյուր երեխա մոտենա և ցույց տա նկարներից մեկը, ապա կրկին անգամ երեխաներին ասեք, թե ինչ էր նշանակում այն:

2. Օգնեք երեխաներին երգել “The Book of Mormon Stories” (*Children’s Songbook,* p. 118), խոսքերին համապատասխան շարժումներ կատարելով: Կամ խնդրեք երեխաներին երգելիս շարքով քայլել սենյակում:

Դաս
43

Մենք ունենք կենդանի մարգարե

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ մենք օրհնվում ենք մարգարեին հետևելով:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ա Թագավորաց Գ.1–10, 19–20: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 9:
2. Առանձին թղթերի վրա գրեք ապրող մարգարեի մի քանի ուսուցումներից, վերցնելով համաժողովի ելույթներից կամ Եկեղեցու ամսագրերից: Պատրաստեք առնվազն դասարանի երեխաների թվին համեմատ թղթեր: Ծալեք այդ թղթերը և դրեք տարայի կամ զամբյուղի մեջ: Ուսուցումները կարող են ներառել՝
   - Ամեն օր սովորեք սուրբ գրություններից:
   - Սուրբ պահեք Կիրակին:
   - Ամեն օր աղոթեք:
   - Հաճախեք հաղորդության ժողովին և Երեխաների Խումբ:
   - Եղեք ազնիվ:
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-4՝ Առաջին տեսիլքը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 403, 62470), նկար 1-29՝ Տապանի կառուցումը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 102, 62053), նկար 1-42՝ Պատանի Սամուելը կանչվում է Տիրոջ կողմից (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 111, 62498), նկար 1-66՝ Մովսեսը և այրվող թուփը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 107, 62239), ապրող մարգարեի մի նկար:
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը, հակառակ կողմով դրեք ձեր ծնկներին: Ասեք երե(նկար 1-4) նկարները: Խնդրեք երեխաներին պատմել, թե ինչ է տեղի ունենում յուրաքանչյուր նկարում:

Երբ կքննարկեք, որպեսզի պարզեք, թե ինչ գիտեն երեխաներն այդ նկարների մասին, հակիրճ բացատրեք, որ Հիսուսը պատվիրեց Նոյին, որ տապան կառուցի, որպեսզի իր ընտանիքը փրկվի ջրհեղեղից: Հիսուսը պատվիրեց Մովսեսին, որ գերությունից ազատի Իսրայելցիներին: Հիսուսը պատվիրեց Ջոզեֆ Սմիթին, որ նա չպետք է միանա այն ժամանակ երկրի վրա գոյություն ունեցող ոչ մի եկեղեցու:

Մարգարեները խոսում են Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ

Բացատրեք, որ Նոյը, Մովսեսը և Ջոզեֆ Սմիթը մարգարեներ էին: Մարգարեն մարդ է, որը խոսում է Երկնային Հոր և Հիսուսի հետ: Քանի որ Երկնային Հայրը և Հիսուսը երկրի վրա չեն, որ մեզ ուսուցանեն, նրանք մարգարեներ ունեն, որ իրենց օգնեն: Երկնային Հայրը և Հիսուսը ուսուցանում են մարգարեին, իսկ մարգարեն ուսուցանում է մեզ, թե ինչ պետք է մենք անենք, որպեսզի օրհնվենք և երջանիկ լինենք:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-42՝ Պատանի Սամուելը կանչվում է Տիրոջ կողմից, և պատմեք ինչպես է Սամուելը կանչվում լինելու մարգարե, ինչպես տրված է Ա Թագավորաց Գ.1–10, 19–20-ում: Երեխաների համար կարդացեք Ա Թագավորաց Գ.10:

- Ո՞վ կանչեց Սամուելի անունը, երբ նա անկողին էր մտել: (Հիսուս: Տես Ա Թագավորաց Գ.4:)
- Սամուելի կարծիքով, ո՞վ էր կանչում իրեն: (Տես Ա Թագավորաց Գ.5:)
- Ի՞նչ ասաց Հեղին Սամուելին, որ անի: (Տես Ա Թագավորաց Գ.9:)
- Ի՞նչ ասաց Սամուելը Հիսուսին: (Տես Ա Թագավորաց Գ.10:)

Բացատրեք, որ Սամուելը փոքր տղա էր, երբ Հիսուսն առաջին անգամ խոսեց նրա հետ: Երբ նա մեծացավ, նա իր ժողովրդին ուսուցանում էր այն, ինչ Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում էին, որ նրանք անեին:

Վարժություն

Խնդրեք երեք երեխաների կատարել Սամուելի, Հեղիի և Հիսուսի դերերը և ներկայացնել այս պատմությունը: Կրկնեք, մյուս երեխաներին էլ հնարավորություն տալով դերերը կատարել, եթե ցանկանում են:

Մենք այսօր երկրի վրա մարգարե ունենք

Ցուցադրեք ապրող մարգարեի նկարը: Երեխաներին պատմեք մարգարեի մասին մի բան:

Խնդրեք երեխաներին կանգնել և ասել. «(Տվեք ապրող մարգարեի անունը) Աստծո մարգարե է»:

- Ինչո՞ւ է մեզ անհրաժեշտ ապրող մարգարե: (Որպեսզի կարողանանք իմանալ, ինչ են Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում, որ մենք անենք:)

Բացատրեք, որ մարգարեն ուսուցանում է համաժողովներին ելույթ ունենալով: Համաժողովները մեծ հավաքներ են, որոնց շատ մարդիկ են հաճախում: Մենք կարող ենք մարգարեին լսել հեռուստացույցով, ռադիոյով կամ տեսագրությունները դիտելով: Նրա խոսքերը նաև տպագրվում են Եկեղեցու ամսագրերում, որպեսզի մեր ծնողները կամ մյուսները կարդան մեզ համար:

Վարժություն

Թող յուրաքանչյուր երեխա տարայից կամ զամբյուղից ընտրի ձեր պատրաստած թղթերից մեկը: Կարդացեք յուրաքանչյուր թղթի վրա գրված ուղերձը և երեխաների հետ հակիրճ քննարկեք այն: Ասեք երեխաներին, որ այդ ուղերձները խորհուրդներ են ապրող մարգարեի կողմից, որոնց մենք պետք է հետևենք:

Վարժություն

Խնդրեք երեխաներին մտածել, թե ինչպես կարող են հետևել մարգարեին: Լոբով տոպրակը կամ փափուկ առարկան նետեք կամ տվեք մի երեխայի և ասեք՝

«Ես կհետևեմ մեր մարգարե _____ »: Թող յուրաքանչյուր երեխա ավարտի նախադասությունը նշելով, թե ինչպես ինքը կարող է հետևել մարգարեին:

Մենք օրհնվում ենք, երբ մարգարեին ենք հետևում

Կրկին անդրադարձեք Նոյի, Մովսեսի, Ջոզեֆ Սմիթի և ապրող մարգարեի նկարներին: Բացատրեք, որ որովհետև Նոյի ընտանիքը հետևեց նրան, նրանք փրկվեցին ջրհեղեղից: Որովհետև Իսրայելցիները հետևեցին Մովսեսին, նրանք դուրս եկան Եգիպտոսից գալով ավելի լավ երկիր: Որովհետև մարդիկ հետևեցին Ջոզեֆ Սմիթին, նրանք դարձան Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ:

Բացատրեք, որ այդ մարդիկ օրհնվեցին, որովհետև հետևեցին մարդիկ մարգարեին: Մենք նույնպես օրհնվում ենք, երբ հետևում ենք մարգարեին:

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Follow the Prophet” (*Children’s Songbook,* p. 110) երգի կրկներգը: Բացատրեք, որ մոլորվել նշանակում է սխալ գործել: Խնդրեք մի երեխայի ցուցադրել մեր օրերի ապրող մարգարեի նկարը, մինչ դուք կերգեք:

Հետևիր մարգարեին, հետևիր մարգարեին, հետևիր մարգարեին, մի մոլորվիր: Հետևիր մարգարեին, հետևիր մարգարեին, հետևիր մարգարեին, նա ճանապարհը գիտի:

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը կենդանի մարգարեի մասին: Երեխաներին ասեք, որ դուք գիտեք, որ երբ մենք հետևում ենք մարգարեին, մենք օրհնվում ենք և երջանիկ ենք լինում:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Ձեռք բերեք աուդիոերիզ կամ տեսաերիզ, որտեղ ձայնագրված կամ տեսագրված է կենդանի մարգարեն, որպեսզի ցույց տաք երեխաներին, կամ ցույց տվեք նրա նկարները Եկեղեցու ամսագրերից:
2. Երեխաների համար երգեք կամ կարդացեք «Փառք քեզ Տեր, մարգարեի համար» (*ՀՄԵ*, էջ 36):
3. Պատմեք Նախագահ Լորենզո Սնոուի տեսիլքը, որի ժամանակ նա Փրկչին էր տեսել (տես Դաս 26): Բացատրեք, որ Հիսուսը հայտնվեց Նախագահ Սնոուին, որպեսզի ասի նրան, թե ինչպես պետք է ղեկավարի Եկեղեցին: Հիսուսն ասաց Նախագահ Սնոուին, թե ինչ պետք է ուսուցանի Եկեղեցու անդամներին:
4. Մտածեք մի քանի իրավիճակներ, որոնց ժամանակ երեխաները կարող են հետևել մարգարեի ուսմունքերին: Դասարանին ներկայացրեք յուրաքանչյուր իրավիճակը և խնդրեք երեխաներին ասել կամ դերերով ցույց տալ, թե ինչ կանեին յուրաքանչյուր իրավիճակում հետևելով մարգարեին: Օրինակ, «Դուք փող եք տեսնում խոհանոցում: Կուզենայիք վերցնել այն, սակայն դա ձեր մայրիկի գումարն է: Ի՞նչ կանեք, որպեսզի հետևեք մարգարեի ազնիվ լինելու մասին խորհրդին»:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ամբողջ դասաժամին ցուցադրեք ապրող մարգարեի նկարը: Ժամանակ տրամադրեք, որ երեխաներին պատմեք, թե ով է նա: Բացատրեք, որ նա սիրում է իրենց և ցանկանում է օգնել իրենց վերադառնալ Երկնային Հոր և Հիսուսի մոտ: Դասի ընթացքում երկու կամ երեք անգամ կրկնեք սա:

2. Երեխաների հետ խաղացեք «Հետևիր առաջնորդին»: Խնդրեք երեխաներին կանգնել շարքով: Առաջին երեխան վազում, ցատկոտում կամ մեկ այլ շարժում է անում մինչև սենյակի մյուս ծայրը: Մյուս երեխաները հետևում են առաջին երեխային՝ անելով այն, ինչ նա է անում: Այնուհետև առաջին երեխան գնում է շարքի վերջը, և մյուս երեխան է դառնում առաջնորդ: Շարունակեք այդպես մինչև յուրաքանչյուր երեխա առաջնորդ լինելու հնարավորություն ունենա:

   Խաղից հետո բացատրեք, որ մարգարեն Եկեղեցու ղեկավարն է: Եթե մենք հետևենք նրա խոսքերին, նա մեզ կառաջնորդի ետ՝ դեպի Երկնային Հայրը և Հիսուսը:

Դաս
44

Մենք բոլորս կարող ենք օգնել Եկեղեցում

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Ծխի կամ ճյուղի յուրաքանչյուր անդամ կարող է օգնել եկեղեցում:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք 1 Նեփի 17.7–15, 18.1–4:
2. Պատրաստեք սովորական շնորհակալական բացիկներ երեխաների համար, որ գունավորեն և նվիրեն Երեխաների Խմբի նախագահին կամ նրան, ով օգնում է երեխաներին եկեղեցում: Կարող եք ծալված թղթի երեսին նկարել ծաղիկ, իսկ ներսում գրել՝ *Շնորհակալություն:*
3. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Մորմոնի Գիրք:
   բ. Չկնորսական կարթ և ձկներ՝ դաս 11-ից: Յուրաքանչյուր ձկան վրա գրեք մի հուշում եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի մասին, օրինակ՝ «Սա եկեղեցում նստում է բեմահարթակին», «Սա օգնում է մեր Ծխի [կամ ճյուղի] մարդկանց», կամ «Մենք կարող ենք մեր տասանորդը նրան տալ»:
   գ. Մատիտների տուփ:
   դ. Նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը (62021), նկար 1-67՝ Ակնածալից դասարան, նկար 1-71՝ Նավ կառուցելը:
4. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Դասարանի կենտրոնում աթոռ դրեք և մի ոտքից բռնելով փորձեք բարձրացնել այն: Բացատրեք, որ կան շատ բաներ, որ մենք չենք կարող անել, եթե միասին չաշխատենք: Խնդրեք երեք երեխաների, որ ամեն մեկը բռնելով ոտքերից մեկը օգնեն ձեզ հատակից մի քանի սանտիմետր բարձրացնել աթոռը: Բացատրեք, որ միասին աշխատելով մենք կարող ենք շատ բաներ անել, որ միայնակ չենք կարող անել:

Երկնային Հայրը և Հիսուսը ցանկանում են, որ մենք միասին աշխատենք

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-71՝ Նավ կառուցելը, և հակիրճ պատմեք, ինչպես Նեփին և նրա ընտանիքը նավ կառուցեցին, որը գտնվում է 1 Նեփի 17.7–15 և 18.1–4-ում: Շեշտեք, որ նավ կառուցելու համար Նեփիին անհրաժեշտ էր Տիրոջ (Հիսուսի) և իր ընտանիքի օգնությունը:

- Ինչո՞ւ Նեփին չէր կարող առանց օգնության նավ կառուցել:
- Ինչպե՞ս Տերն օգնեց Նեփին: (Տես 1 Նեփի 17.8–10, 18.1:)

- Ինչպե՞ս Նեփիի ընտանիքն օգնեց: (Տես 1 Նեփի 18.1:)
- Ի՞նչ տեղի ունեցավ, երբ բոլորը միասին աշխատեցին: (Տես 1 Նեփի 18.4:)

Թող երեխաները խոսեն մյուսների հետ միասին աշխատելու իրենց փորձառությունների մասին:

Վարժություն

Բացատրեք, որ մենք նաև միասին աշխատում ենք եկեղեցում: Ծխի (կամ ճյուղի) յուրաքանչյուր անդամ օգնում է մյուսներին: Խոսքով կամ շարժումներով ներկայացրեք մեկին, ով եկեղեցում ամեն շաբաթ օգնում է ձեր դասարանի անդամներին, օրինակ՝ խմբավարին, դաշնակահարին, ուսուցչին կամ Երեխաների Խմբի նախագահին: Խնդրեք երեխաներին գուշակել, թե ում եք դուք դերով ներկայացնում: Երբ երեխաները գուշակեն, թե ով եք դուք, բացատրեք այդ անձնավորության կոչման պատասխանատվությունները: Կրկնեք որքան ցանկանում եք:

Ցույց տվեք նկար 1-8՝ Հաղորդություն բաժանելը:

- Ի՞նչ է այս սարկավագն անում:
- Գիտե՞ք ինչ-որ մեկի, որը հաղորդություն է բաժանում:

Բացատրեք, որ երիտասարդ տղամարդիկ, ովքեր Ահարոնյան Քահանայություն են կրում, կարող են պատրաստել, օրհնել և բաժանել հաղորդությունը: Այսպես կարող են երիտասարդ տղամարդիկ օգնել եկեղեցում:

Վարժություն

Բացատրեք, որ ձեր ծխում կամ ճյուղում կա մեկը, ով օգնում է բոլորին եկեղեցում: Երկնային Հայրն այդ անձնավորությանը տվել է կարևոր աշխատանք: Խնդրեք երեխաներին հուշումների համար հերթով ձուկ բռնել: Բարձրաձայն կարդացեք յուրաքանչյուր հուշումը: Շարունակեք, մինչև բոլոր հուշումները կկարդաք, և ապա թող երեխաները գուշակեն, թե ով է այդ անձնավորությունը:

- Ի՞նչ է մեր եպիսկոպոսի (կամ ճյուղի նախագահի) անունը:
- Ի՞նչ կարևոր բաներ է նա անում, որ օգնի մեզ:

Քննարկեք, ինչ աշխատանք են կատարում մյուսները ձեր ծխում կամ ճյուղում, օրինակ՝ տնային ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ: Կարող եք խոսել երեխաների ընտանիքի անդամների կոչումների մասին:

Մենք կարող ենք օգնել Եկեղեցում

Վարժություն

Տուփից մատիտները լցրեք հատակին: Խնդրեք երեխաներից մեկին հավաքել դրանք, և ժամանակ պահեք, որպեսզի տեսնեք, թե որքան է դա կտևի: Կրկին մատիտները շաղ տվեք գետնին: Այս անգամ խնդրեք, որ ողջ դասարանն օգնի, և տեսեք, թե որքան կտևի: Բացատրեք, որ միասին աշխատելով մենք կարող ենք աշխատանքն ավելի լավ կատարել:

- Ի՞նչ կարող եք անել եկեղեցում օգնելու համար:

Օգնեք երեխաներին մտածել, ինչպես կարող են օգնել եկեղեցում, ներառյալ՝ հավաքատունը մաքուր պահել, բարի լինել մյուսների հետ, օգնել երեխաներին, ովքեր տխուր են կամ վախեցած, և ակնածալից լինել ժողովների ժամանակ:

- Ինչպե՞ս կարող ենք օգնել մաքուր պահելմեր դասարանն ու հավաքատունը:
- Ինչպե՞ս կարող ենք օգնել մյուսներին եկեղեցում:

Ցույց տվեք նկար 1-67՝ Ակնածալից դասարան:

- Ինչպե՞ս են այս երեխաներն օգնում եկեղեցում:
- Ինչպե՞ս է դասընկերներին օգնում մեր ակնածանքը:
- Ինչպե՞ս է երեխաների ակնածանքն օգնում ուսուցչին:
- Ինչպե՞ս ենք մեզ զգում, երբ ամեն ոք ակնածալից է:

Վարժություն

Բացատրեք, որ եկեղեցում օգնելու մեկ այլ եղանակ է՝ «շնորհակալություն» ասել մարդկանց, ովքեր օգնում են մեզ: Խնդրեք երեխաներին գունավորել ձեր պատրաստած շնորհակալական բացիկները, և հնարավորության դեպքում, դասի ժամին բաժանել դրանք:

Վկայություն

Ձեր երախտագիտությունը հայտնեք բոլոր մարդկանց համար, ովքեր օգնում են ձեր ծխում կամ ճյուղում: Ասեք, թե ինչպես եք ձեզ զգում որպես Երեխաների Խմբի ուսուցիչ կատարելով Երկնային Հոր աշխատանքը:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Երգեք կամ կարդացեք “Our Bishop” (*Children’s Songbook,* p. 135) երգը: Խնդրեք երեխաներին սեղմել միմյանց ձեռքը, երբ եպիսկոպոս բառն է հիշատակվում:
2. Հնարավորության դեպքում, երեխաներին տարեք ժողովարան և ցույց տվեք, թե հաղորդության ժողովին որտեղ է նստում եպիսկոպոսությունը (կամ ճյուղի նախագահությունը): Թող երեխաները հերթով նստեն այդ աթոռներին: Այնուհետև ցույց տվեք երեխաներին, թե որտեղ է գտնվում եպիսկոպոսի (կամ ճյուղի նախագահի) գրասենյակը:
3. Մի փափուկ առարկա, օրինակ՝ գնդակ կամ լոբով տոպրակ նետեք կամ տվեք մի երեխայի, և խնդրեք նրան ծխից (կամ ճյուղից) տալ մեկի անունը, ով օգնում է եկեղեցում և բացատրել, թե ինչպես է այդ անձնավորությունն օգնում: Այնուհետև թող այդ երեխան ետ՝ ձեզ նետի այդ առարկան: Շարունակեք, մինչև յուրաքանչյուր երեխա առնվազն մեկ անգամ մասնակցելու հնարավորություն ունենա:
4. Ձեր Երեխաների Խմբի նախագահի թույլտվությամբ, հրավիրեք եպիսկոպոսության անդամի կամ մեկ այլ ծխի ղեկավարի, որպեսզի այցելի դասարան և երեխաներին պատմի, թե ինչ է անում նա, որպեսզի օգնի եկեղեցում:
5. Յուրաքանչյուր երեխայի համար թղթե ափսեի կամ կլոր թղթի վրա նկարեք մի պարզ դեմք: Երեխաներին մատիտներ բաժանեք, և թող յուրաքանչյուր երեխա ավելացնի մազեր՝ իր մազերի գույնի: Ասեք երեխաներին, որ եթե դուք ասում եք մի բան, որ նրանք կարող են օգնել եկեղեցում, պետք է բարձրացնեն իրենց

թղթե դեմքերը: Եթե ձեր ասածը եկեղեցու համար օգնություն չի լինում, պետք է թղթից դեմքերը թողնեն իրենց ծնկների վրա դրված: Օգտագործեք արտահայտություններ, օրինակ՝

- Ես պետք է թուղթը գցեմ իմ աթոռնի տակ:
- Ես պետք է շնորհակալություն ասեմ մարդկանց, ովքեր օգնում են եկեղեցում:
- Ես պետք է վազելով գնամ դասարան:
- Ես պետք է ակնածալից լինեմ եկեղեցում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Երեխաների հետ խաղացեք «Հետևիր առաջնորդին»: Խնդրեք երեխաներին կանգնել շարքով: Առաջին երեխան վազում, ցատկոտում կամ մեկ այլ շարժում է անում մինչև սենյակի մյուս ծայրը: Մյուս երեխաները հետևում են առաջին երեխային՝ անելով այն, ինչ նա է անում: Այնուհետև առաջին երեխան գնում է շարքի վերջը և մյուս երեխան է դառնում առաջնորդ: Շարունակեք այդպես մինչև յուրաքանչյուր երեխա առաջնորդ լինելու հնարավորություն ունենա:

   Խաղից հետո հիշեցրեք երեխաներին, որ եպիսկոպոսը ծխի ղեկավարն է: Նա ցանկանում է, որ մենք այնպես ապրենք և գործենք, որը մեզ կուղղորդի ետ՝ Երկնային Հոր մոտ:

2. Երգեք “Do As I’m Doing” (*Children’s Songbook,* p. 276), օգտագործելով գործողություն, որ դասարանի երեխաներից մեկը կառաջարկի: Կրկնեք երգն այնքան անգամ, որ բոլոր երեխաներն առնվազն մեկ գործողություն առաջարկելու հնարավորություն ունենան:

Դաս
45

Հիսուս Քրիստոսի Հարությունը (Զատիկ)

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի հասկանալ, որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Ղուկաս ԻԳ.33–ԻԴ.12, 36–40, 51: Տես նաև *Ավետարանի Սկզբունքներ* (31110), գլուխ 12:

2. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 240, 62572), նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 201, 62495), նկար 1-55՝ Սարի վրայի քարոզը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 212, 62166), նկար 1-59՝ Խաչելություն (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 230, 62505), նկար 1-72՝ Հիսուսն աղոթում է Գեթսեմանում (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 227, 62175), նկար 1-73՝ Հիսուսի թաղումը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 231, 62180), նկար 1-74՝ Հիսուսը ցույց է տալիս իր վերքերը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 234, 62503):

3. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը, հակառակ կողմով դրեք ձեր ծնկներին: Ասեք երեխաներին, որ խոսելու եք մի շատ կարևոր անձնավորության մասին: Թող երեխաները գուշակեն, թե ով է այդ անձնավորությունը, տալով նրանց հետևյալ հուշումները.

1. Այս անձնավորությունը շատ է սիրում բոլորին:

2. Նա շատ վաղուց է ապրել երկրի վրա և կազմակերպել է իր եկեղեցին:

3. Նա մեզ ուսուցանել է՝ ինչպես պետք է ապրել և երջանիկ լինել:

4. Նա օրհնել է մարդկանց և պատվիրել, որ լինեն բարի և սիրող:

Երբ երեխաները գուշակեն (կամ դուք կասեք նրանց), որ այդ անձնավորությունը Հիսուսն է, ցույց տվեք նկարը:

Հիսուսը սիրում է մեզ

Հիշեցրեք երեխաներին, որ Հիսուսը Երկնային Հոր որդին է: Երկնային Հայրն կարևոր նպատակով ուղարկեց Հիսուսին երկիր:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-16՝ Սուրբ Ծնունդ: Հակիրճ պատմեք Հիսուսի ծննդյան մասին: Կարող եք երեխաներին խնդրել, որ ձեզ օգնեն այդ պատմությունը պատմելիս: Հիշեցրեք նրանց, որ Հիսուսը առանձնահատուկ մանուկ էր:

Ցույց տվեք նկար 1-55՝ Սարի վրայի քարոզը: Բացատրեք, որ երբ Հիսուսը մեծացավ, նա կազմակերպեց իր եկեղեցին և մարդկանց ուսուցանեց, ինչպես պետք է ապրել և սիրել միմյանց:

Երգ

Խնդրեք երեխաներին կանգնել և երգել կամ կարդալ "Jesus Said Love Everyone" (*Children's Songbook,* p. 61), օգտագործելով հետևյալ շարժումները.

Հիսուսն ասաց՝ բոլորին սիրիր *(ձեռքերը լայն տարածեք),*
Նրանց հանդեպ բարի եղիր *(գլուխը վերև և ներքև շարժեք):*
Երբ սիրտդ սիրով լի է լինում *(ձեռքերը դրեք սրտի վրա)*,
Մյուսներն էլ քեզ են սիրում *(գրկեք ինքներդ ձեզ):*

Ցույց տվեք նկար 1-72՝ Հիսուսն աղոթում է Գեթսեմանում:

- Ի՞նչ է Հիսուսն անում այս նկարում:

Բացատրեք, որ նախքան մահանալը, Հիսուսը գնաց աղոթելու Գեթսեմանի այգի կոչվող վայրում: Այնտեղ Հիսուսը տառապեց մեր մեղքերի համար, որ մենք կարողանանք ապաշխարել և ներվել մեր կատարած սխալների համար: Հիսուսը միակ անձնավորությունն էր, որը զորություն ուներ անելու դա մեզ համար: Նա արեց դա, որովհետև մեզ շատ է սիրում:

Հիսուսը հարություն առավ

Բացատրեք, որ Հիսուսի ժամանակներում երկրի վրա ապրող շատ մարդիկ սիրում էին նրան: Ինչևէ, ոմանք չէին սիրում Հիսուսին: Նրանք չէին հավատում, որ նա Երկնային Հոր որդին էր:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-59՝ Խաչելություն: Պարզ խոսքերով բացատրեք Խաչելությունը, ինչպես նկարագրվում է Ղուկաս ԻԳ.33–46-ում: Բացատրեք, որ մարդիկ, ովքեր չէին սիրում Հիսուսին, շատ դաժան էին նրա հանդեպ: Զինվորները մեխեր գամեցին Հիսուսի ձեռքերի և ոտքերի մեջ և նրան կախեցին խաչից: Նրանք թողեցին Հիսուսին խաչի վրա, մինչև մահանա: (Զգուշությամբ պատմեք այս պատմությունը և ստորև տրված ոտանավորի կատարումը: Որոշ երեխաներ կարող են ազդվել այն փաստից, որ մարդիկ չարչարել են Հիսուսին:)

Բացատրեք, որ երբ Հիսուսը մահացավ, նրա հոգին դուրս եկավ նրա մարմնից և գնաց երկինք: Հիշեցրեք երեխաներին, որ մեզանից յուրաքանչյուրը հոգի ունի: Մեր հոգիները չեն երևում, սակայն դրանք են մեզ կենդանի պահում:

Ցույց տվեք նկար 1-73՝ Հիսուսի թաղումը: Բացատրեք, որ մարդիկ, ովքեր սիրում էին Հիսուսին, վերցրեցին նրա մարմինը և կտորով զգուշորեն փաթաթեցին: Նրանք Հիսուսի մարմինը տարան գերեզման (քարանձավանման վայր, որտեղ մարդկանց էին թաղում) և զգույշ նրա մարմինը դրեցին այնտեղ (տես Ղուկաս ԻԳ.50–56):

Ցույց տվեք նկար 1-74՝ Հիսուսը ցույց է տալիս իր վերքերը: Բացատրեք, որ մահանալուց երեք օր անց Հիսուսը հարություն առավ: Նա վերակենդանացավ: Երբ Հիսուսը մահացավ, նրա հոգին հեռացավ մարմնից: Երբ նա հարություն առավ, նրա հոգին վերադարձավ նրա մարմնի մեջ: Հիսուսն առաջին մարդն էր, որ հարություն առավ:

Բացատրեք, որ շատ մարդիկ տեսան հարություն առած Հիսուսին (տես Ղուկաս ԻԴ)։ Հիսուսն ուսուցանեց իր ընկերներին և նրանց ցույց տվեց իր հարություն առած մարմինը (տես Ղուկաս ԻԴ.36)։ Նա թույլ տվեց, որ իր ընկերները դիպչեին իրեն և համոզվեին, որ իր հարություն առած մարմինը կազմված էր մսից ու ոսկորներից (տես Ղուկաս ԻԴ.39–40)։ Մարդկանց ուսուցանելուց հետո, Հիսուսը վերադարձավ կրկին ապրելու Երկնային Հոր հետ (տես Ղուկաս ԻԴ.51)։

- Ինչո՞ւ Հիսուսը ցանկացավ, որ մարդիկ դիպչեն իրեն։ (Տես Ղուկաս ԻԴ.36–40։)
- Ո՞ւր գնաց Հիսուսը մարդկանցից հեռանալուց հետո։ (Տես Ղուկաս ԻԴ.51։)

Բացատրեք, որ այն օրը, երբ Հիսուսը հարություն առավ առաջին Զատիկն էր։ Մենք ամեն տարի տոնում ենք Զատիկը հիշելով Հիսուսի հարությունը։

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և ձեզ հետ կատարել հետևյալ ոտանավորի շարժումները.

Հիսուսը վերակենդանացավ
Մահանալուց երեք օր անց *(ցույց տվեք երեք մատ),*
Իր ձեռքերին և ոտքերին մեխերի հետքերը գամված *(ցույց տվեք ձեռքերի ափերն ու ոտնաթաթերը)*
Եվ իր կողի մեջ նիզակի տեղը դրոշմված *(ցույց տվեք կողը)։*
Հիսուսն եկավ և բոլորիս սովորեցրեց *(ձեռքերը տարածեք)*
Ավետարանով ապրել *(ձեռքերը ծալեք)։*
Քանի որ Հիսուսը հարություն առավ,
Մենք էլ հարություն կառնենք *(գլխով հաստատող շարժում արեք)։*

Մենք հարություն կառնենք

Օգնեք երեխաներին հասկանալ, որ մահանալուց հետո Հիսուսը վերակենդանացավ։ Հիսուսն այժմ ապրում է երկնքում, և նա այլևս չի մահանա։ Բացատրեք, որ Հիսուսը հնարավոր դարձրեց, որ մենք էլ հարություն առնենք, ինչպես նա։ Դա նշանակում է, որ մեզանից յուրաքանչյուրը մահանալուց հետո կրկին կապրի։

- Դուք ճանաչո՞ւմ եք ինչ-որ մեկին, որ մահացել է։

Բացատրեք, որ երբ մարդիկ մահանում են, նրանց հոգիները դեռևս ապրում են։ Մի օր նրանք հարություն կառնեն, որը նշանակում է, որ նրանց մարմինները և հոգիները կրկին կմիանան, ինչպես՝ Հիսուսինը։ Կարող եք երեխաներին բացատրել, որ Հիսուսի պես մենք երեք օրից հետո հարություն չենք առնի, սակայն մենք բոլորս մի օր հարություն կառնենք։

Խնդրեք երեխաներին մի քանի անգամ կրկնել *հարություն* բառը և ասել՝ ինչ է այն նշանակում։

Նշեք, թե որքան հրաշալի է իմանալ, որ բոլոր մարդիկ, ում մենք ճանաչում և սիրում ենք,- մեր ծնողները, եղբայրները, քույրերը, տատիկներն ու պապիկները, և ընկերները,- հարություն կառնեն։ Մահանալուց հետո մենք կրկին կապրենք։ Հիսուսը դա հնարավոր դարձրեց։

Վկայություն

Բերեք ձեր վկայությունը, որ Հիսուսը սիրում է մեզանից յուրաքանչյուրին։ Մեր հանդեպ նրա մեծ սիրո շնորհիվ նա տառապեց ու մահացավ, և հարություն

առավ, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը նույնպես կարողանա մի օր հարություն առնել:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Հակիրճ քննարկեք Զատիկի հետ կապված փորձառություններ և երեխաներին ծանոթ սովորույթներ: Հավաստեք, որ Զատկի աշխարհիկ սովորույթները զվարճալի են, սակայն օգնեք երեխաներին զատել դրանք Զատկի իրական իմաստից:
2. Ցույց տվեք երեխաներին ձեռնոց: Մեր երկրային մարմինը նմանեցրեք ձեռնոց հագած ձեռքի: Ցույց տվեք, ինչպես է ձեռքը (հոգին) ձեռնոցին (մարմնին) շարժում: Հանեք ձեռնոցը և բացատրեք, որ դա նման է ֆիզիկական մահին: Հոգին և մարմինը բաժանվում են, և մարմինը չի կարողանում շարժվել: Ձեռնոցը կրկին հագեք ձեռքի վրա և բացատրեք, որ սա նման է հարություն առնելուն: Այժմ հոգին և մարմինը վերամիավորվել են: Հիշեցրեք երեխաներին, որ որովհետև Հիսուս Քրիստոսը հարություն առավ, բոլոր մարդիկ մի օր հարություն կառնեն:
3. Դաս 6-ի վերջում գտնվող «Հիսուսը մեր սիրող ընկերն է» վերնագրով էջը բազմացրեք և թող երեխաները գունավորեն այն:
4. Նետեք կամ տվեք լոբով տոպրակը կամ այլ փափուկ առարկա մի երեխայի և թող նա պատասխանի ստորև տրված հարցերից մեկին (կամ նմանատիպ հարցին), նախքան լոբով տոպրակը ետ ձեզ նետելը կամ տալը: Շարունակեք, մինչև բոլոր երեխաները հարցին պատասխանելու հնարավորություն կունենան:
   - Ինչո՞ւ ենք մենք տոնում Զատիկը:
   - Ո՞վ էր հարություն առած առաջին անձնավորությունը:
   - Ի՞նչ է նշանակում հարություն առնել:
   - Մահանալուց հետո որտե՞ղ դրվեց Հիսուսի մարմինը:
   - Հիսուսի հարությունից հետո, շա՞տ մարդիկ տեսան Հիսուսին:
   - Ինչո՞ւ Հիսուսը թույլ տվեց, որ մարդիկ դիպչեն իր հարություն առած մարմնին:
   - էլ ո՞վ հարություն կառնի, որովհետև Հիսուսը հարություն առավ:
5. Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Did Jesus Really Live Again?“ (*Children’s Songbook,* p. 64) կամ “Jesus Has Risen” (*Children’s Songbook,* p. 70) երգերը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, երբ դուք կարտասանեք խոսքերը.

   Հիսուսը հարություն առավ:

Այստեղ էր Հիսուսը դրված *(ցույց տվեք),*
Տես քարը մի կողմ է գլորված:
Կռացիր ու նայր ներս *(թեքվեք և ձեռքերը դրեք աչքերի վերևում):*
Սա այստեղ չէ, տես *(կանգնեք):*
Ցնծացեք ուրախ, Հիսուսը հարություն առավ *(ծափ տվեք):*

(Dana Eynon, in *Bible Story Finger Plays and Action Rhymes* [Cincinnati: Standard Publishing Co., 1964], p. 29.)

2. Բացատրեք, որ Հիսուսը մահացավ և հարություն առավ գարնանը: Գարունը նոր կյանքի խորհրդանիշն է: Ծառերն ու ծաղիկները սկսում են կրկին ծաղկել: Շատ կենդանիներ են ծնվում գարնանը: Թող յուրաքանչյուր երեխա նկարի ծաղիկներ կամ փոքր կենդանիներ: Ցույց տվեք նկար 1-3՝ Հիսուս Քրիստոսը, և բացատրեք, որ մահանալուց հետո մենք բոլորս էլ կրկին կապրենք, քանի որ Հիսուսը հարություն առավ:

3. Երգեք կամ կարդացեք “Jesus Loves Little Children” (*Children’s Songbook,* p. 59) կամ «Հիսուսը մեր սիրող ընկերն է» (*Children’s Songbook,* p. 58): Հիշեցրեք երեխաներին, որ մենք տոնում ենք Զատիկը, որպեսզի հիշենք Հիսուսին և նրա հարությունը:

Հիսուս Քրիստոսի Ծնունդը (Սուրբ Ծնունդ)

Դաս
46

ՆՊԱՏԱԿ

Օգնել յուրաքանչյուր երեխայի երախտապարտ լինել Հիսուս Քրիստոսի ծննդի համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏՈՒԹՅՈՒՆ

1. Աղոթքով ուսումնասիրեք Մատթեոս Բ.1–12 և Ղուկաս Ա.26–35, Բ.1–20:
2. Տեղեկացեք ձեր դասարանի երեխաների ծննդյան հետ կապված մի քանի մանրամասներ, օրինակ՝ որտեղ են ծնվել, ինչ գույնի մազեր ունեին, և որտեղ են ապրել իրենց կյանքի առաջին շաբաթը: Նրբանկատ եղեք որդեգրած երեխաների նկատմամբ:
3. Կտրեք թղթից շերտիկներ (մոտ 20սմ երկարությամբ և 4սմ լայնությամբ) Սուրբ Ծննդյան շղթաների համար: Կտրեք այնքան շերտիկներ, որ բոլոր երեխաները կարողանան մի քանի օղակներից շղթաներ պատրաստել:
4. Երեխաների ծնողներին գրություն գրեք, որտեղ կբացատրեք Սուրբ Ծննդյան շղթայի իմաստը (տես դասը), որպեսզի նրանք քաջալերեն իրենց երեխաներին բարի գործեր կատարել:
5. Անհրաժեշտ նյութեր՝
   ա. Աստվածաշունչ:
   բ. Սուրբ Ծննդյան փոքր տեսարան: Կարող եք օգտագործել ծածկոցով փաթաթված տիկնիկ՝ փոքր տուփի մեջ պառկած: Թղթից աստղ կտրեք, որպեսզի կախեք Սուրբ Ծննդյան տեսարանի վերևում: Եթե հնարավոր չէ ստեղծել Սուրբ Ծննդյան տեսարան, օգտագործեք նկար 1-75՝ Հիսուսի ծնունդը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 200, 62116):
   գ. Մատիտներ և սոսինձ:
   դ. Նկար 1-75՝ Հիսուսի ծնունդը (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 200, 62116), նկար 1-76՝ Սենյակ չկա հյուրանոցում (62115), նկար 1-77՝ Քրիստոսի ծննդյան ավետումը հովիվներին (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 202, 62117), նկար 1-78՝ Իմաստուններ (Ավետարանն արվեստում նկարների հավաքածու 203, 62120):
6. Ինչպես հարկն է նախապատրաստվեք նյութն ամրապնդող վարժությունների համար, որոնք ցանկանում եք օգտագործել:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրեք մի երեխայի ասել բացող աղոթքը:

Ուշադրությունը կենտրոնացնող վարժություն

Խնդրեք մի երեխայի կանգնել ձեզ մոտ, նրան ասեք իր ծննդյան հետ կապված մանրամասներ: Նույնը կրկնեք դասարանի յուրաքանչյուր երեխայի հետ:

Սուրբ Ծննդին մենք տոնում ենք Հիսուս Քրիստոսի ծնունդը

Բացատրեք, որ քանի որ հիմա Սուրբ Ծննդյան օրեր են, մենք տոնում ենք ծնունդը նրա, ում բոլորս սիրում ենք:

- Ո՞ւմ ծնունդն ենք մենք տոնում:

Պատմություն

Պատմեք Մարիամին հրեշտակի այցելելու պատմությունը, ինչպես տրված է Ղուկաս Ա.26–35: Բացատրեք, որ հրեշտակը Մարիամին ասաց, որ նա լինելու էր Աստծո Որդու՝ Հիսուսի մայրը:

- Ի՞նչ էր Հիսուսի մոր անունը: (Տես Ղուկաս Ա.27:)
- Ո՞վ էր Հիսուսի հայրը: (Երկնային Հայրը: Տես Ղուկաս Ա.35:)

Բացատրեք, որ Հովսեփը Հիսուսի հայրը չէր: Նա լավ մարդ էր, ընտրված, որ հոգ տանի Հիսուսի մասին: Հրեշտակը երազում հայտնվեց Հովսեփին և ասաց նրան, որ Մարիամն յուրահատուկ երեխա է ունենալու: Հրեշտակը հայտնեց Հովսեփին, որ Մարիամը պետք է իր կինը լինի:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-76՝ Սենյակ չկա հյուրանոցում, և պատմեք Նազարեթից Բեթլեհեմ Հովսեփի և Մարիամի ճամփորդության մասին, ինչպես տրված է Ղուկաս Բ.1–7-ում: Բարձրաձայն կարդացեք Ղուկաս Բ.7 և բացատրեք երեխաներին անծանոթ բառերը:

Վարժություն

Խնդրեք երեխաներին նստել կամ ծնկների վրա նստել Սուրբ Ծննդյան տեսարանի դիմաց: Կարող եք ծածկոց տալ, որ նրանք նստեն վրան: Միմյանց փոխանցեք նկար 1-75՝ Հիսուսի ծնունդը, և թող յուրաքանչյուր երեխա ասի մի բան, որ ինքը տեսնում է նկարում:

- Ինչո՞ւ Մարիամն ու Հովսեփը չքնեցին հյուրանոցում: (Տես Ղուկաս Բ.7:)
- Որտե՞ղ ծնվեց Հիսուսը: (Ախոռում:)
- Մարիամն ինչպիսի՞ անկողին ուներ մանուկ Հիսուսի համար: (Տես Ղուկաս Բ.7:)

Երգ

Օգնեք երեխաներին երգել կամ կարդալ “Away in a Manger” (*Children’s Songbook,* p. 42) երգի խոսքերը: Խոսքերին համեմատ ձեռքերով և մատերով համապատասխան շարժումներ կատարեք:

Հեռու մի ախոռում, մսուրի մեջ պառկած,
Մանուկ Տեր Հիսուսն էր անուշ քնած,
Աստղերը երկնքից նայում էին նրան,
Մանուկ Տեր Հիսուսն էր չոր խոտի վրա քնած:

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-77՝ Քրիստոսի ծննդյան ավետումը հովիվներին, և պատմեք հովիվների այցելության մասին, ինչպես նկարագրված է Ղուկաս Բ.8–20-ում:

- Ինչո՞ւ հովիվները վախեցան: (Տես Ղուկաս Բ.9:)
- Ի՞նչ ասաց հրեշտակը հովիվներին: (Տես Ղուկաս Բ.10–12:)
- Ի՞նչ արեցին հովիվները մանուկ Հիսուսին այցելելուց հետո: (Տես Ղուկաս Բ.17, 20:)

Պատմություն

Ցույց տվեք նկար 1-78՝ Իմաստունները, և պատմեք իմաստունների այցի մասին, ինչպես տրված է Մատթեոս Բ.1–12-ում:

Վարժություն

Խնդրեք երեխաներին կանգնել և ցույց տալ սենյակում իբր ուղտ են քշում, հետևելով աստղին, որը առաջնորդում է նրանց մանուկ Հիսուսի մոտ:

Սենյակում մի քանի շրջան կատարելուց հետո, խնդրեք երեխաներին իջնել իրենց ուղտերից և մոտենալ սուրբ ծննդյան տեսարանին: Բացատրեք, որ այն ժամանակ, երբ իմաստունները գտան մանուկ Հիսուսին, Հովսեփն ընտանիքի համար ավելի լավ տեղ էր գտել, և նրանք այլևս ախոռում չէին: Հիշեցրեք երեխաներին, որ իմաստունները բերել էին նվերներ՝ ոսկի, կնդրուկ և զմուռս: Յուրաքանչյուր երեխայի հարցրեք, թե ինչ ձևական նվեր է բերել՝ ոսկի, կնդրուկ, թե զմուռս, և ապա թող նվիրի այն մանուկ Հիսուսին:

Մեր նվերն է Հիսուսին՝ Նրան նմանվել

Բացատրեք, որ յուրաքնաչյուր Սուրբ Ծննդին, երբ տոնում ենք Հիսուսի ծնունդը, մենք կարող ենք նվերներ տալ նրան: Մենք չենք կարող իմաստունների պես ոսկի, կնդրուկ կամ զմուռս նվիրել, սակայն կարող ենք այլ նվեր տալ: Մենք նվեր ենք մատուցում Հիսուսին, երբ փորձում ենք նմանվել նրան: Մենք նմանվում ենք Հիսուսին, երբ բարի ենք մեր ընտանիքի և ընկերների հանդեպ:

Վարժություն

Օգնեք երեխաներին մի քանի օղակներից պատրաստել Սուրբ Ծննդյան շղթա: Խնդրեք նրանց գունավորել իրենց օղակները և ապա օղակները սոսնձել միմյանց (տես նկարը դասի վերջում): Երեխաներին ասեք, որ շղթաները տանեն իրենց տուն, որոնք կհիշեցնեն իրենց որպես նվեր Հիսուսին ուրիշների համար բարի գործեր կատարելու մասին: Երեխաներին խրախուսեք մինչև Սուրբ Ծնունդ ամեն օր առնվազն մեկ բարի գործ կատարել:

Օգնեք երեխաներին մտածել, թե ինչպիսի բարի գործեր կարող են իրենք անել: Հիշեցրեք նրանց, որ երբ բարի գործեր են կատարում նրանք հրաշալի նվեր են մատուցում Հիսուսին: Յուրաքանչյուր երեխայի մի գրություն տվեք, որտեղ շղթայի մասին բացատրություն կգրեք նրա ծնողներին:

Վկայություն

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի ծնունդը երկրի վրա տեղի ունեցած ամենակարևոր իրադարձություններից մեկն է: Ձեր սերը հայտնեք Հիսուսի հանդեպ և ձեր ցանկությունը՝ նմանվել նրան ոչ միայն Սուրբ Ծննդյան օրերին, այլև ամբողջ տարին:

ՆՅՈՒԹՆ ԱՄՐԱՊՆԴՈՂ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրեք այս վարժություններից մի քանիսը դասի ընթացքում օգտագործելու համար:

1. Կրկին պատմեք Հիսուսի ծննդյան պատմությունը, մինչ երեխաները դերերով կներկայացնեն Հովսեփին, Մարիամին, հյուրանոցի տիրոջը, հովիվներին և իմաստուններին: Հնարավորության դեպքում, օգտագործեք օրինակ՝ տիկնիկ, փոքր ծածկոց և շալ: Բոլոր երեխաներին մասնակցելու հնարավորություն տվեք: Կարող եք կրկնել այս վարժությունը, թույլ տալով, որ երեխաները տարբեր դերեր կատարեն:
2. Օգնեք երեխաներին կտրել կամ նկարել հասարակ աստղ զարդարանք: Թող երեխաները գունավորեն իրենց աստղերը, և մի թել սոսնձեք յուրաքանչյուր աստղից, որ երեխաները կախեն այն իրենց տանը:

3. Քննարկեք Սուրբ Ծննդի հետ կապված այն առևտրային նախապատրաստությունները, որ նկատել են երեխաները: Օգնեք նրանց հասկանալ, որ նվերներն ու խնջույքները հաճելի են, սակայն Սուրբ Ծնունդը իրականում կապված է Հիսուս Քրիստոսի ծննդյան հետ և պետք է կենտրոնանալ նրա և նրա կյանքի վրա:
4. Քննարկեք տեղական Քրիստոսակենտրոն Սուրբ Ծննդյան սովորույթները, որ դուք հաճույքով եք պահում կամ որոնց տեղյակ եք: Խնդրեք երեխաներին պատմել, թե Սուրբ Ծննդին Քրիստոսակենտրոն ինչպիսի ավանդույթներ են իրենց ընտանիքները պահում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Խնդրեք երեխաներին ներկայացնել դաշտում հանգստացող հովիվներին: Օգնեք նրանց արտահայտել վախը, երբ նրանք տեսան հրեշտակին, ապա ուրախությունը, երբ լսեցին բարի լուրը: Օգնեք նրանց պատկերացնել, որ լսում են հրեշտակների երգը և դիտում են գիշերային գեղեցիկ երկինքը և նայում են աստղին: Միասին քայլեք սենյակում՝ գտնելու մանկանը: Ծնկի իջեք մսուրում գտնվող մանուկ Հիսուսի առաջ և գոհաբանության երգ երգեք:
2. Օգնեք երեխաներին կատարել հետևյալ ոտանավորի շարժումները, երբ դուք կարտասանեք խոսքերը.

   Մանուկը մսուրում *(ձեռքերը շարժեք կարծես երեխա եք օրորում)*,
   Սիրող մայրը կողքին *(ձեռքերը պարզեք)*,
   Աստղն է փայլում երկնքում *(պատկառանքով ցույց տվեք երկինքը)*,
   Այստեղ է Աստծո Որդին *(ուրախ ծափ տվեք)!*

3. Երգեք կամ կարդացեք “Little Jesus” (*Children’s Songbook,* p. 39) կամ “Jesus Said Love Everyone” (*Children’s Songbook,* p. 61): Հիշեցրեք երեխաներին, որ Սուրբ Ծննդին մենք տոնում ենք Հիսուսի ծնունդը:
4. Պատրաստեք խանձարարուրով մանուկ Հիսուսի հասարակ թղթե կտրվող նկարներ: Հավաքեք չոր խոտ կամ ծղոտ, և բերեք, որ երեխաները սոսնձեն «մսուրի» վրա (քառակուսի թղթի վրա): Խնդրեք երեխաներին մանուկ Հիսուսի կտրվող նկարը սոսնձել խոտի կամ ծղոտի անկողնու վրա:



Ցուցիչ Երեխաների Խումբ 1-ում ուսանավորների և շարժումներով երգերի համար

A Baby in a Manger . . . 212
A Happy Family . . . 107, 114
A Prayer Song . . . 16
A Smile Is Very Catchy . . . 158
A Song of Thanks . . . 18
Adam and Eve . . . 64
All Things Bright and Beautiful . . . 59
Away in a Manger . . . 21, 210

Because Today Is Sunday . . . 69
Beehive . . . 60
Birds in the Tree . . . 60, 109
Book of Mormon Stories . . . 195
Busy Little Fingers . . . 131, 144

Children, Put Your Pants On . . . 148
Clap Your Hands . . . 80
Counting Fingers . . . 79

Dear Little Friend . . . 152
Do As I'm Doing . . . 74, 103, 164, 203

Eency Weency Spider . . . 61
Five Little Fishes . . . 49
Fun to Do . . . 35, 39, 79, 103, 112, 144, 151

God's Creation . . . 13, 35, 65
Grandmother . . . 115

Happy Song . . . 179
Head, Shoulders, Knees, and Toes . . . 71
Heavenly Father Knows Me . . . 2, 27
Helping Makes Me Happy . . . 97
Here Is the Church . . . 194
Here We Are Together . . . 109
Hinges . . . 74
Home . . . 142
How Long Is Forever? . . . 121

I Am a Helper . . . 121
I Am Thankful for My Eyes . . . 12, 18, 88
I Dig . . . 45
I Have a Nose . . . 92
I Have a Wonderful Body . . . 7, 72, 85
I Have Two Little Hands . . . 78
I Like My Hands . . . 78, 132
I Love to See the Temple . . . 119
I Pray in Faith . . . 16
I Reach Up High . . . 79
I Shake My Hands . . . xxi, 176
I'll Fold My Arms . . . 184
I'm Glad I Came to Church Today . . . 68, 183, 192
I'm Trying to Be like Jesus . . . 165
If You're Happy . . . 97, 178
If You're Very, Very Tall . . . 4, 26

Jesus Came Alive Again . . . 206
Jesus Is Risen! . . . 207
Jesus Loves All Children . . . 25
Jesus Loves Little Children . . . 167
Jesus Said Love Everyone . . . 154, 165, 108, 205
Joseph Knelt among the Trees . . . 8

Little Baby Moses . . . 4, 113
Little Seeds Lie Fast Asleep . . . 44

Make Happy Days . . . 99, 153
My Family (1) . . . 109
My Family (2) . . . 109
My Feelings . . . 97
My Hands . . . 78
My Heavenly Father Loves Me . . . 24
My Legs Like to Run . . . 129
My Little Kitten . . . 161

Noah . . . 53, 161

Once I Was a Baby . . . 22, 75, 104
One Little Butterfly . . . 58
Open, Shut Them . . . xxi, 175
Our Arms We Fold . . . 19

Popcorn Popping . . . 43

Saturday . . . 69
Seeds Are Buried Deep . . . 146
Smiles . . . 95
Sometimes I'm Tall, and Sometimes I'm Small . . . xxi

Ten Men Were Sick . . . 190
The Chapel Doors . . . 177
The Creation . . . 70, 185
The Goldfish . . . 47
The Little Turtle . . . 49
The Meetinghouse . . . 174
The Pioneer Children . . . 142
The Raindrops . . . 40
The Still Small Voice . . . 32
The World Is So Big . . . 35, 54, 59, 65, 126
This Is My Mother . . . 126
This Is What the Baby Does . . . 80
This Little Fellow . . . 35
Touch Your Eyes . . . 86, 90, 94
Two Happy Feet . . . 175
Two Little Friends . . . 140
Two Little Tweety Birds . . . 60

We All Lived Together with Heavenly Father . . . 14, 122
We Fold Our Arms . . . 19
When I Do Something Wrong . . . 134
When We're Helping . . . 117, 144

Young Jesus Went to the Temple . . . 21

Մսուրային խմբի երգեր
Children's Songbook-ից

Children's Songbook -ից հետևյալ երգերը հատկապես հարմար են մսուրային խմբում օգտագործելու համար: Տրված են նաև խոսքերը հարմարեցնելու առաջարկություններ: Հնարավոր է դուք ունենաք այլ մտքեր այս կամ *Children's Songbook*-ի երգերը մսուրային խմբին հարմարեցնելու համար:

էջ

A Happy Family (© 1975 Pioneer Music Press, Inc.) 198

Կարող եք քառյակ հորինել ձեր ուրախ մսուրային խմբի կամ Երեխաների Խմբի մասին: Օգտագործեք որպես ողջույն. «Ես տեսնում եմ Սյուզիին, նա տեսնում է ինձ ...»:

Do As I'm Doing 276

Օգտագործեք հրահանգներ տալու համար. «Մաքրեք դասասենյակը, հետևեք, հետևեք ինձ ...» կամ «Հավաքվեք երգելու ...»:

For Health and Strength 21

Նշեք այն, ինչի համար երեխաները ցանկանում են շնորհակալություն հայտնել. «Փառք քո անունին, Օ՞ Տեր, ծառերի, ծաղիկների, թափվող անձրևի համար»:

Fun to Do 253

Head, Shoulders, Knees, and Toes 275

Երգեք հիմնական շարժումների մասին. «Կգաս քայլենք (վազենք, թռնենք, ցատկոտենք) ... սենյակում»:
Օգտագործեք հրահանգներ տալու համար. «Այժմ ժամանակն է խաղալիքները հավաքելու ... և տուփի մեջ դնելու (պահարանում, դարակի մեջ)»:

Hello Song 260

Here We Are Together 261

I Wiggle 271

If You're Happy 266

My Hands 273

Once There Was a Snowman (© 1981 Pioneer Music Press, Inc.) 249

Հորինեք քառյակներ բնության այլ բաների մասին. «Կար մի կանաչ ծառ ... բարձր, բարձր, բարձր: Դրա ստվերում ես հանգստացա ... ցածր, ցածր, ցածր»: Կամ «Կար մի սար ... բարձր, բարձր, բարձր: Սարի գագաթը մագլցեցի ամպերով ծածկված»:

Rain Is Falling All Around 241

Sing a Song 253

«Երգելու» փոխարեն օգտագործեք հիմնական շարժումներ՝ «Ցատկ, ցատկ, ցատկ»:
Երգեք հագուստի, գույների կամ ձեր մասին՝ «Կոշիկներ, կոշիկներ, կոշիկներ, ես սիրում եմ իմ կոշիկները: Ես դրանք հագնում եմ ոտքերիս, կոշիկներ, կոշիկներ, կոշիկներ»:

Smiles 267

Thanks to Our Father 20

We Bow our Heads 25

Children's Songbook-ի երգերից բացի դուք կարող եք օգտագործել մանկական երգեր ձեր մշակույթից: Հավաստիացեք, որ այդ երգերը բավարարում են հետևյալ չափանիշներին՝

Դրանք կարճ ու պարզ են:
Դրանք օգտագործում են նեղ դիապազոնով նոտաներ (5-8 տոն):
Խոսքերը կրկնվում են (նույն բառերն օգտագործվում են մի քանի անգամ) և հեշտ է սովորել:
Խոսքերը նկարագրում են այն, ինչ երեխաները կարող են տեսնել, լսել, շոշափել, հոտ քաշել կամ զգալ:
Խոսքերը չեն հակադրվում ավետարանի ուսմունքներին:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ

ARMENIAN
4 02349 69201 2
34969 201